1760-ԱԿ Printed in Tur[key]

# ԲՈՒՆ ՏՕՄԱՐ

## Հայոց և Հռովմայեցւոց ։

Շարադրեալ յառաջնոց իմաստասէր տօմարագիտաց, զոր այժմ նորոգ սրբագրեալ և շարակարգեալ դիւրին ոճիւ յաւելուածովք օրինակաց ըստ հարկաւոր խրատուց՝ հանդերձ երկու պարզատօմարական աղիւսակօք ։

Ընդ որս պարունակի շրջան մշտնջենաւոր գուշակութեանց տարեկան պատահմանց, և ամսական եղանակացն փոփոխութեանց, և նշանակութիւնք երկոտասան ամսոց իւրաքանչիւր աւուրց բազմադիմի ներգործութեանց ։

—

Նաև տաղ յովասափու, մարմնախաղաց, և երազահան, այլև օգտակար բանք ինչ իմաստասիրաց, և տաղայն հանճարեղութիւնք ։

Ի Պատրիարգութեան կոստանդնուպօլսոյ՝ Տեառն Ստեփաննոսի ամենապատիւ և վեհափառ Արքեպիսկոպոսի ։

1831 ՏՊԵԱԼ ՌՄՁ

ՅՕՐԹԱԳԻՒՂ

Ի Տպարանի Պօղոսի արապեան աղուչեկցւոյ ։

1128 9208-57

| Անուանք ամսոց հայոց : | Արկնակի թւոյն ձգ. | Կիրակէի թւոյն ձգ. | Եօթներեակք : | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ա ամսամուտք | Բ ամսամուտք | Գ ամսամուտք | Դ ամսամուտք | Ե ամսամուտք | Զ ամսամուտք | Է ամսամուտք |
| Նաւասարդ 30 | ոչ | ոչ | Բշ | Գշ | Դշ | Եշ | ուր | շբ | կիր |
| Հոռի 30 | բ | ‖ | Դշ | Եշ | ուր | շբ | կիր | Բշ | Գշ |
| Սահմի 30 | գ | ա | ուր | շբ | կիր | Բշ | Գշ | Դշ | Եշ |
| Տրէ 30 | դ | ա ‖ | կիր | Բշ | Գշ | Դշ | Եշ | ուր | շբ |
| Քաղոց 30 | ա | բ | Գշ | Դշ | Եշ | ուր | շբ | կիր | Բշ |
| Արաց 30 | գ | բ ‖ | Եշ | ուր | շբ | կիր | Բշ | Գշ | Դշ |
| Մեհեկան 30 | ե | գ | շբ | կիր | Բշ | Գշ | Դշ | Եշ | ուր |
| Արեգ 30 | ոչ | գ ‖ | Բշ | Գշ | Դշ | Եշ | ուր | շբ | կիր |
| Ահեկան 30 | բ | դ | Դշ | Եշ | ուր | շբ | կիր | Բշ | Գշ |
| Մարերի 30 | գ | դ ‖ | ուր | շբ | կիր | Բշ | Գշ | Դշ | Եշ |
| Մարգաց 30 | դ | ե | կիր | Բշ | Գշ | Դշ | Եշ | ուր | շբ |
| Հրոտից 30 | ա | ե ‖ | Գշ | Դշ | Եշ | ուր | շբ | կիր | Բշ |
| Աւելեաց 5 | գ | դ | Եշ | ուր | շբ | կիր | Բշ | Գշ | Դշ |

Առ ՚ի գտանել զամսամուտս տարւոյ ինչ՝ Նախ գիտ ՚ի վերուստ զեօթներեակն նոյն տարւոյն, և ապա զամիսն ՚ի կողմանց առեալ մուտ ՚ի խորանն աղիւսակին. որով հեշտ գտանես զաւուրս ամսամտից, որք եդեալք են ՚ի ներքոյ եօթներեկաց:

# ԲԱԺԻՆ ՏՕՄԱՐԻ
## ՀԱՅՈՑ։

### Յաղագս կրկնակի։

Կրկնակն է աւելի մնացեալ աւուրքն ՚ի չորից շաբաթուց ամսոյն։ Ապա կա՛լ զաւուրս նաւասարդի ամսոյն, և բա՛րձ անտի 7, 7, այսինքն՝ առ շաբաթ՝ շաբաթ. և որ ինչ յաւելանայ՝ կրկնակ է հոռի ամսոյն։ Այնպէս կա՛լ զաւուրս հոռի ամսոյն և զիւր կրկնակն ՚ի միասին, և բա՛րձ անտի 7, 7. և որ ինչ յաւելանայ՝ կրկնակ է սահմի ամսոյն։

Զո՛ր օրինակ. ՚ի նաւասարդի ամսոյն 30 օրէն ՚ի բաց հանեալ 7, 7, մնայ 2. որ է կրկնակ հոռի ամսոյն։ Նմանապէս ՚ի հոռի ամսոյն հանդերձ կրկնակաւն իւրով 32 օրէն ՚ի բաց հանեալ 7, 7, մնայ 4. որ է կրկնակ սահմի ամսոյն։ Նոյնպէս յամենայն ամսոց յաւելեալքն յեօթանց, այսինքն՝ ՚ի շաբաթուց, կրկնակք են հետևեալ ամսոց իւրեանց. որպէս ցուցանէ քեզ աղիւսակն։



Printed in Turkey

## Յաղագս կիսակի :

Կիսակն է որ յաւուրց ամսոյն՝ զաւուրս լուսնոյ ամսոյն, այսինքն՝ քսան և ինն օր և կէս ՚ի բաց հանեալ՝ մնացեալ կէս օրն տայ հետևեալ ամսոյն, և լինի կիսակ նմա : Արդ կա՛լ զաւուրս Նաւասարդի ամսոյն, և բարձ անտի 29 և կէս . և որ ինչ յաւելանայ՝ կիսակ է Հոռի ամսոյն : Այնպէս կա՛լ զաւուրս Հոռի ամսոյն և զիւր կիսակն ՚ի միասին, և բարձ անտի 29 և կէս . և որ ինչ յաւելանայ՝ կիսակ է Սահմի ամսոյն :

Որ օրինակ . ՚ի Նաւասարդի ամսոյն 30 օրէն ՚ի բաց հանեալ 29 և կէս՝ մնայ կէս . որ է կիսակ Հոռի ամսոյն : Նմանապէս ՚ի Հոռի ամսոյն հանդերձ կիսակաւն իւրով 30 և կէս օրէն ՚ի բաց հանեալ 29 և կէս՝ մնայ 1 . որ է կիսակ Սահմի ամսոյն : Այսպէս յամ ամսոց աւուրց յաւելեալքն ՚ի 29 և կէս լուսնոյ ամսոյն օրէն՝ կիսակք են հետևեալ ամսոց իւրեանց . որպէս յայտ առնէ քեզ աղիւսակն :

## Յաղագս Թուականի հայոց :

Թուականն Հայոց սկսանի ՚ի Նաւասարդի ամսոյն առաջին օրէն՝ որ է տարեմուտ և



առա

առաջին ամիս ամսոյն հայոց։ Մ՚՚յ կամ_
նաս գծիւ մի յարացի ամսոյն, բայց ՚ի նա_
հանջի ամին զերկու թիւսն. և տուր սկսեալ ՚ի
մեհեկանի ամսոյն առաջին օրէն՝ մինչև ցօրն
ծննդեան և յայտնութեան քո թուել. և
զայնքան առուր թիւն զհետ միոյն՝ կամ
երկուցն գումարեա. և տես թէ քանի օր
լինի թիւ գումարին, զայնքան օրն չորեք_
պատկեա. և որ ինչ լինի գումարն, այն է
թուականն հայոց։ Սակայն եթէ յառա_
ջին ամի իցես, ո՞ր՝ նոյն ամն զորոց թուա_
կանն կամիս գիտել՝ թէ նահանջ է, յետ
չորեքպատկելոյդ բարձ անտի 3. և թէ զինի
նահանջին յերկրորդի ամի իցես՝ 2. և թէ
յերրորդի ամի իցես՝ 1. իսկ եթէ ՚ի չոր_
րորդի ամի իցես որ է վերջին ամն՝ որոյ
զինի եկեալ ամն է նահանջ, մի՛ ինչ ՚ի
բաց հանցես։

Որ օրինակ. կամեցայ գիտել 1280
թուականն հայոց, ՚ի մեհեկանի ամսոյն առա
ջին օրէն մինչև ՚ի ծննդեան քո թուեալ որ
է 319 օր, և գումարեալ զհետ 1 թուոյն
արացի ամսոյն՝ լինի 320. և չորեքպատկեալ
զայն՝ լինի 1280 որ է թուականն հայոց,
ոչինչ ՚ի բաց հանեալ ՚ի սմանէ. զի զինի
եկեալ ամն է նահանջ։



Դար

Դարձեալ՝ այլ դիւրին կերպ ՚ի գըտանել զԹուականն Հայոց . որ կարգեցաւ ՚ի Նորոգումն տոմարիս մերոյ, յորում Թուականն Քի էր 551 . վնյ առաջին ամն Թուականին Հայոց սկսանի ՚ի 552 Թուականէն Քի . Արդ կալ զԹուականն Քի, և բարձ ասցես 551 ամն . և որ ինչ յաւելանայ՝ այն է Թուականն Հայոց .

Որ օրինակ . ՚ի 1831 Թուականէն Քի՝ բարձեալ 551, մնայ 1280 որ է Թուականն Հայոց . և կամ ՚ի վր 551 Թուոյն յաւելեալ 1280, լինի 1831 որ է Թուականն Քի .

—

Իսկ եթէ կամիցիս գիտել թէ որ ամ իցէ նահանջ՝ և որն հաստատուն, և կամ ՚ի շինել Թուականիդ քանի նահանջ իցէ, արա այսպէս . կալ զԹուականն Հայոց, և բարձ ասցես զիւրաքանչիւր 4 . եթէ յայն-մնանէ յաւելանայ 1, յայտ առնէ թէ յառաջին ամն իցէ որ է նահանջ . և եթէ 2, յերկրորդի ամն իցէ . և եթէ 3, յերրորդի ամն իցէ . բայց եթէ ոչինչ յաւելանայ, յայնժամ զնին եկեալ ամն է նահանջ .

Որ օրինակ . 1280 Թուականն Հայոց իցէ՝ նահանջ թէ հաստատուն, և կամ քանի նահանջ իցէ ՚ի նմա . ՚ի բաց հանեալ առաւ զիւրաքանչիւր 4, ոչինչ յաւելանայ . զի



ու-

ունի յինքեան 320 ամբողջ նահանջս ամ՝ ոչ աւելի և ոչ պակաս. ապա յայտ է թէ զկնի եկեալ ամն է նահանջ.

## Յաղագս ինննեւտասներեկին.

Ինննեւտասներեակն է փոքրիկ շրջան լուսնի, որ է 19 ամ. և մինչ կամիցիս իմանալ զամըս փոքրիկ շրջանի լուսնի, Առ զթուականն Հայոց, և բարձ անտի 1. և 'ի մնացելոյն 'ի բաց հան ևս զիւրաքանչիւր զմեծ շրջանսն արեգական՝ որ է 532 ամն. և ապա յայն մնացեալ յաւելեալ թուոյն 19, 19 'ի բաց հան. և որ ինչ յաւելանայ՝ այն է ինննեւտասներեակ տարւոյն. Իսկ եթէ ոչինչ յաւելանայ, վերջին ամ է շրջանի լուսնի, և ինննեւտասներեակն է 19.

Օր օրինակ. 'ի 1280 թուոյն Հայոց 'ի բաց հանեալ զթիւն 1, և զմեծ զշրջանըն երկիցս 'ի բաց հանեալ յի՝ 1064 ամն, մնայ 215. յորմէ բարձեալ 19, 19, մնայ 6. որ է ինննեւտասներեակ նոյն տարւոյն.

## Յաղագս եւթներեկին.

Եօթներեակն է նշանակիչ 'ի շաբաթուց ամաց յաւելուածոց աւուրց պատկերն.

կերն, ըստ կրկնակին որ 'ի չորից շաբաթուց ամսոյն յաւելլանայ. և սոյնա գտանի պատ_կեր աւուրն խնդրեցեալ աւուրցն մերոց։ Մ՟շ՟ կալ զթուականն Հայոց, և 'ի վ՟ր՟ ն՟ր՟ յաւել 3, և կամ բարձ անտի 4. և զիւրա_քանչիւր զմեծ շրջանսն ես 'ի բաց Հան. և յետոյ յայնմանէ յաւելեալ թուոյն բարձ 7, 7, յ՟ն՟՝ որա՛ շաբաթ՝ շաբաթ. և որ ինչ յաւելլանայ անտի՝ եօթներեակ է այնր տարւոյն։

Որ օրինակ. 'ի վ՟ր 1280 թուոյն Հայոց յաւելեալ 3 ; լինի 1283. և տանի զմեծ շրջանսն երկիցս 'ի բաց Հանեալ՝ մնայ 219. և յայսմանէ ես 7, 7 բարձեալ՝ մնայ 2. որ է եօթներեակ նոյն տարւոյն։

## Յաղագս Վերադրաց։

Վերադիրն է յառաջ եկեալ 'ի կիսա_կաց, յ՟ն՟՝ 'ի 11 յաւելեալ աւուրց երկոտա_սան ամսոց արեգական. զի յաւելեացն 5 և կիսակն 6, երկուքն 'ի միասին լինին 11. և այս 11 աւուրքս ամ՟ ի՟ն՟ ամէ յաւելեալ ան_ցանեն քան զթիւն 30. յայնժամ 'ի բաց թողեալ զաւելին, մնացեալն է վերադիր տարւոյն։ Աստի կալ զթուականն Հայոց, և 11 թուով բազմապատկեա. և տես թէ



քանի

քանի՛ կատարեալ և թերի նաՀանջ անցէ 'ի նմա, զայնքան նաՀանջն անտի 'ի բաց Հան. և 'ի վ՛ր յաւելեալ թուոյն՝ որքան կատարեալ և թերի իննևտասներեակ իցէ անցեալ, զայնքան թիւ յաւել. և ապա Համապաղ բարձ անտի 8. և յայնմանէ յաւելեալ թուոյն՝ 30, 30 եւս բարձ, և որ ինչ յաւելանայ՝ վերադիր է այնր տարւոյն. և եթէ ոչինչ յաւելանայ՝ մնայ միայն 30, այն է վերադիր տարւոյն.

Ո՛ր օրինակ. 1280 թուականն Հայոց՝ 11 թուով բազմապատկեալ լինի 14080. և անտի 'ի բաց Հանեալ 320 թերի նաՀանջ ամն, մնայ 13760. և 'ի վ՛ր սորա յաւելեալ թերի 68 անցեալ իննևտասներեակն՝ լինի 13828. և յայսմանէ բարձեալ 8՝ մնայ 13820. յորմէ 30, 30 եւս 'ի բաց Հանեալ՝ մնայ 20, որ է վերադիր նոյն տարւոյն.

Յաղագս տանուտէրան.

Տանուտէր տարւոյն այսպէս արա. Կա՛լ զթուականն Հայոց, և 'ի վ՛ր նո՛ր յաւել 7, և կամ՛ բարձ անտի 5. և 'ի մնացելոյն 'ի բաց Հան 12, 12. և որ ինչ յաւելանայ, սկիզբն արարեալ 'ի Խոյէն՝ տուր 'ի կենդանակերպսն. և յորում կենդանակերպի



վեր

վերջանայ, այն է տանուտէր տարւոյն։

Զոր օրինակ. ՚ի վր 1280 թուոյն հայոց յաւելեալ 7, լինի 1287. յորմէ ՚ի բաց հանեալ 12, 12, մնայ 3. զոր սկիզբն արարեալ ՚ի Խոյէն, դադարի յԵրկուորն՝ որ է տանուտէր տարւոյն։

—

Եւ տանուտէրք են այսոքիկ։

| | |
|---|---|
| 1 Խոյ. | 7 Կշիռ. |
| 2 Ցուլ. | 8 Կարիճ. |
| 3 Երկաւոր. | 9 Աղեղնաւոր. |
| 4 Խեցգետին. | 10 Այծեղջիւր. |
| 5 Առիւծ. | 11 Ջրհոս. |
| 6 Կոյս. | 12 Ձուկն. |

## Յաղագս ամսամտից։

Գիտել ամսամտից այսպէս արա։ Կալ թիւ մի, և զկրկնակ նորին ամսոյն, և զեօթներեակ նոյն տարւոյն, և ՚ի միասին գումարեա. բայց եթէ գումարն քան զթիւն 7 աւելի լինի, բարձ անտի զայն. և որ ինչ յաւելանայ՝ ցուցանէ զօրն ամսամտին յորում աւուր լինիցի։

Զոր օրինակ. ՚ի թուին հայոց 1280 կամեցաք իմանալ թէ յորում աւուր է մուտն

արտացի ամսոյն․ կալեալ 1, և զկրկնակ նո–
րին՝ որ է 3, և զեօթներեակն նոյն տար–
ւոյն՝ որ է 2, և՛ի միասին գումարեալ լինի
6, որ ցուցանէ զօրն ուրբաթու՝ յորում
է մուտն արտացի ամսոյն․

## Յաղագս Օրակէտից։

Գիտել աւուրց այսպէս արա․ Առ՛ զաւուրս ամսոյն, և զկրկնակ նորին ամսոյն, և զեօթներեակ նոյն տարւոյն, և՛ի միասին գումարեա․ և ապա բարձ ՛ի գումարէ 7, 7․ յորժամ եթէ 1 յաւելանայ, ցուցանէ զօրն կիւրակէի․ եթէ 2, զօրն երկուշաբաթու․ եթէ 3, զօրն երեքշաբաթու, և այլն ի կարգի․ բայց եթէ ոչինչ յաւելանայ, ցուցանէ զօրն շաբաթու՝ որ է 7 թիւ․

Ո՛ր օրինակ․ ՛ի թուին Հայոց 1280 կալեալ զօրն բարեկենդանի առաջաւորաց՝ որ է ՛ի 17 արտացի ամսոյն, և զկրկնակ նորին՝ որ է 3, և զեօթներեակն նոյն տարւոյն՝ որ է 2, և՛ի միասին գումարեալ լինի 22․ յորժամ 7, 7 ՛ի բաց հանեալ մնայ 1, որ ցուցանէ զօրն կիւրակէի։

## Յաղագս բարեկենդանին առաջաւորաց։

Բարեկենդանն առաջաւորաց այսպէս առա՛. Կալ հանապազ 36. առ այն ՚ի 19, 114, 209, 456 ամս մեծի շրջանի արեգական՝ կալ Թիւ մի պակաս, որ՝ 35. և բաժանեա զվերադիրն նոյն տարւոյն. զոր ինչ յաւելեալ Թիւն եԹէ ՚ի վեր քան զյայտնուԹն առուր ամսոյ Թիւն՝ 4 Թիւ աւելի է, ՚ի նոյն ամսեան է բարեկենդանն առաջաւորաց, ուր է յայտնուԹիւն. և եԹէ պակաս է, յառաջիկայ ամսեան է։ Այլ զկրկնակըն նոյն ամսոյն և զեօԹներեակն նոյն տարւոյն յաւել ՚ի վերայ ՚ի վերադրեն մնացեալ Թուոյն. և այս զօրագիւս առա՛, որ՝ 7, 7 ՚ի բաց հան ՚ի նմանէ. զոր ինչ եԹէ ոչինչ յաւելանայ՝ ցուցանէ օրն շաբաԹու. յայն ժամ կալ վն առուր կիւրակէի 1. ԵԹէ յաւելանայ 2, ցուցանէ զօրն երկուշաբաԹու. և եԹէ 3, զօրն երեքշաբաԹու, ևն ըն կարգի. մին մինչև ՚ի կիւրակէ Թուեա՛, և զայնքան առուր Թիւն յառաջադոյն ՚ի 36 կալեալ Թուոյդ. զոր ինչ բարձեր զվերադիրն, զհետ յայնմանէ յաւելեալ Թուոյն միաւորեա՛. որոյ զումարն ցուցանէ յայս ինչ աւուր ամսոյն լինելն բարեկենդանի առաջաւորաց։ Նայց Թէ յաւելանայ 1 որ է օրն

կիւրակէի , յայնժամ մինչև ցմիւս կիւրակէ թուեա , ևն որպէս 'ի վերոյ .

Զոր օրինակ 'ի թուին հայոց 1280 . 'ի 36 թուոյն 'ի բաց հանեալ զվերադիրն նոյն տարւոյն՝ որ է 20 , մնայ 16 . բայց քան զկայանութիւն աւուր ամսոյ թիւն՝ որ է 'ի 14 քաղոցի ամսոյն , 2 թիւ աւելի է և ոչ 4 . վն զի զերկնակն առաջիկայ ամսոյն յոր արացի՝ որ է 3 , և զեօթներեակն նոյն տարւոյն՝ որ է 2 , յաւելեալ 'ի վր 16 թուոյն՝ լինի 21 . և առաւ 'ի բաց թողեալ երիցս 7 , ոչինչ յաւելանայ , զի է օրն շաբաթու . Այս վս աւուր կիւրակէի կալեալ 1 , և զհետ 'ի վերադրեն մնացեալ 16 թուոյն միաւորեալ՝ լինի 17 . որ ցուցանէ 'ի նոյն ամի լինելն բարեկենդանի առաջաւորաց՝ 'ի 17 արացի ամսոյն .

—

Դարձեալ դիւրին եղանակ 'ի գտանել զօրն բարեկենդանի առաջաւորաց . Կալ զօրն ամսոյն ծննդեան և յայտնութեան քն , յորոյ վր յաւել 4 , և զգիրս տարւոյ թիւն ես յաւել , և այս գումարեա . բայց եթէ թիւն գումարի քան 30 աւելի լինի որ է ամբողջ ամիս մի , բարձ զայն 'ի նմանէ . յորմէ յաւելեալն ցուցանէ յայս ինչ աւուր ամսոյն լինելն բարեկենդանի առաջաւորաց .



Զոր

Զոր օրինակ ՚ի Թուին Հայոց 1280 ․ ՚ի վ՜ր աւուր յայտնութե՜ն ք՜ի՝ որ է ՚ի 14 քա֊
ղոցի ամսոյն , յաւելեալ 4՝ լինի 18 ․ և ՚ի վ՜ր սորա յաւելեալ զնոյն ամին Ա գրոյ
տարւոյ թիւն՝ որ է 29 , լինի 47 ․ յորմէ ՚ի բաց հանեալ 30 , մնայ 17 ․ որ ցուցանէ
լինելն բարեկենդանի առաջաւորաց ՚ի 17
արացի ամսոյն ։

---

## Յաղագս Լրման զատկի ։

Զլրումն զատկի այսպէս արա ։ Կա՛լ
հանապազ 46 ․ բաց ՚ի 19 , 114 , 209 , 456
ամն մեծի շրջանի արեգականն՝ կա՛լ թիւ մի
պակաս , այ՜ն՝ 45 ․ և զնոյն տարւոյն վերա֊
դիրն բա՛րձ անտի ․ յորմէ յաւելեալ թիւն
եթէ քան զգարնանամտի և հասարակածի
ամսոյն թիւն աւելի է , բա՛րձ զայն ՚ի նը֊
մանէ ․ և որ ինչ յաւելանայ՝ է այն առա֊
ջիկայ ամսոյն յորում՝ է զատիկն ․ և եթէ
պակաս է քան զայն , նմանապէս յառաջի֊
կայ ամիսն է զատիկն ։ Այ՜ն զկրկնակն նոյն
ամսոյն և զեօթներեակն նոյն տարւոյն յա֊
ւել ՚ի վ՜ր ՚ի վերադրեն մնացեալ թուոյն ․
և ապա զօրադիւտ արա՛ , այ՜ն՝ 7 , 7 ՚ի բաց
հա՛ն ՚ի նմանէ ․ Եւ՜ արա՛ ըստ կարգի խորա֊
տու բարեկենդանի առաջաւորացն ։

 Զոր

Օր օրինակ ՚ի Թուին Հայոց 1280 . ՚ի 46 Թուոյն ՚ի բաց հանեալ զվերադիրն նոյն տարւոյն որ է 20 , մնայ 26 . բայց է պակաս քան զհաստատականի ամսոյն Թիւն , որ է ՚ի 16 մեհեկանի ամսոյն ։ Նոյ առաջիկայ ամի ային որ է տրեգ՝ ոչ ունելով զկրկնակ , միայն զեօթներեակն նոյն տարւոյն որ է 2 , յաւելեալ ՚ի վերայ ՚ի վերադրեն մնացեալ 26 Թուոյն՝ լինի 28 . յորմէ ՚ի բաց հանեալ 7 , 7 , ոչինչ յաւելանայ՝ զի է օրն շաբաթու . Ապա վն աւուր կիւրակէի յաւելուլ 1 եւ ՚ի վերայ 26 Թուոյն՝ լինի 27 . որ ցուցանէ ՚ի նոյն ամի ՚ի 27 տրեգի ամսոյն լինիլն զատկի ։

Դարձեալ՝ յառաջիկայ Թուին Հայոց 1281 . ՚ի 46 Թուոյն ՚ի բաց հանեալ զվերադիրն նոյն տարւոյն որ է 30 , մնայ 16 . բայց է պակաս քան զհաստատականի ամսոյն Թիւն , որ է ՚ի 17 մեհեկանի ամսոյն ։ Նոյ առաջիկայ ամիան որ է տրեգ՝ ոչ ունելով զկրկնակ , միայն զեօթներեակն նոյն տարւոյն որ է 3 , յաւելեալ ՚ի վն ՚ի վերադրեն մնացեալ 16 Թուոյն՝ լինի 19 . յորմէ ՚ի բաց հանեալ 7 , 7 , յաւելանայ 5 զի է օրն հինգշաբաթու . յորմէ մինչեւ ՚ի կիւրակէ Թուեալ լինի 3 օր , զոր ՚ի վն 16 Թուոյն եւ յաւելեալ լինի 19 . որ ցուցանէ ՚ի նոյն ամի ՚ի 19 տրեգի ամսոյն լինելն զատկի ։

## Յաղագս գրոց տարւոյն.

Գիր տարւոյն է նշանակիչ շարժական տօնից, որք շարժին ԼԵ աւուրբք. վասն գիւտ տարեգրոյ այսպէս արա. Առ զօրն ծննդեան և յայտնութեան քո, և տես թէ մինչև ցբարեկենդանն առաջաւորաց քանի օր միջոց իցէ, բարձ անտի 5. և զմնացեալն ի Ա գրոց տարւոյն սկսեալ թուել մինչև ուր դադարի, այն է գիր տարւոյն.

Օր օրինակ ի թուին Հայոց 1280. ի յայտնութեան քո՝ որ է ի 14 քաղոցի ամսոյն, մինչև ցառաջաւորն՝ որ է ի 17 արացի ամսոյն, լինին աւուրք 34. յորմէ ի բաց թողեալ 5՝ մնայ 29. զոր Ա գրոց տարւոյն սկսեալ դադարի ի Ս գիրն. որ է գիր տարւոյն նոյն ամին. Բայց յորժամ տարին նահանջ է, յայնժամ գիր տարւոյն լինի երկու զոյգ. վասն պատճառ է զառաջին գիրն ի յայտնութենէն մինչև ցգարնանամուտն ի գործ ածել, և զերկրորդն՝ ի գարնանամտէն մինչև ի վերջն տարւոյն.

---

## Յաղագս տեառնընդառաջին.

Զօրն տեառնընդառաջին գիտ այսպէս. Եթէ Ա լինի գիր տարւոյն, ի 13 մեհեկի պահոց յառաջ շաբաթու է տեառնընդառաջին.

առ

ջըն. եթէ Բ լինի, ՚ի 12 մեծի պահոց յա-
ւուր ուրբաթու է. եթէ Գ լինի, ՚ի 11
մեծի պահոց յաւուր հինգշաբաթու է։
Այսպէս կարգաւ ՚ի Ա գրոյ տարւոյն յա-
ռաջ ընթացեալ մինչև ՚ի Ք գիրն՝ յետադարձ
հաշուօք աւուրց դադարի յաւուր շաբա-
թու պահոց բարեկենդանի առաջաւորաց։

Զոր օրինակ ՚ի թուին հայոց 1280. ՚ի
Ա գրոյ տարւոյն սկսեալ և յետադարձ
հաշուօք ՚ի 13 օրէն մեծի պահոց թուեալ
մինչև ՚ի Ս գիրն նոյն տարւոյն՝ դադարի
յաւուր շաբաթու բարեկենդանի առա-
ջաւորաց, յորում է տեառնընդառաջն։

---

## Յաղագս աւետման։

Զտօն աւուր աւետմանն գիտ այսպէս.
Եթէ Ա լինի գիր տարւոյն, ՚ի 17 զատկի
յաւուր երեքշաբաթու է. եթէ Բ լինի,
՚ի 16 զատկի յաւուր երկուշաբաթու է.
եթէ Գ լինի, ՚ի 15 զատկի յաւուր աշխար-
համատրան կիւրակէի է։ Այսպէս կար-
գաւ ՚ի Ա գրոյ տարւոյն յառաջ ընթա-
ցեալ մինչև ՚ի Փ գիրն՝ յետադարձ հաշ-
ուօք աւուրց դադարի ՚ի 31 աւուր մեծի
պահոցն, ՚ի բաց թողեալ զՔ գիրն՝ զի է
միշտ նահանջ.

Որ օրինակ ՚ի թուին հայոց 1280 ․ ՚ի Ա գրոյ տարւոյն սկսեալ և յետադարձ հաշուօք ՚ի 17 օրէն զատկի թուեալ մինչև ՚ի Ս գիրն նոյն տարւոյն՝ դադարի ՚ի 37 մեծի պահոց աւուր երեքշաբաթու ․ յորում է տօն աւետման ․

---

## Յաղագս միջոցի վարդավառի և ա̅ծածնի.

Ո միջոց շաբաթուն ուտից վարդավառի և ա̅ծածնի հանդերձ պահօքն գիտ այսպ̃ ․

՚ի Ա գրոյ տարւոյն մինչև ՚ի Դ գիրն՝ միջոցն է 7 շաբաթ ․

՚ի Դ գրոյ տարւոյն մինչև ՚ի Ժ գիրն՝ միջոցն է 6 շաբաթ ․

՚ի Ի գրոյ տարւոյն մինչև ՚ի Ջ գիրն՝ միջոցն է 5 շաբաթ ․

՚ի Ղ գրոյ տարւոյն մինչև ՚ի Ո գիրն՝ միջոցն է 4 շաբաթ ․

՚ի Ջ գրոյ տարւոյն մինչև ՚ի Տ գիրն՝ միջոցն է 3 շաբաթ ․

՚ի Ր գրոյ տարւոյն մինչև ՚ի Փ գիրն՝ միջոցն է 2 շաբաթ ․

Որ օրինակ ․ ՚ի թուին հայոց 1280 գիր տարւոյն է Ս ․ միջոց ուտիքն վարդավառի և ա̅ծածնի հանդերձ պահօքն է 3 շաբաթ ․

## Յաղագս ամանահանջից։

Ամանահանջն է յաւելուած 'ի 30 նահանջից. զի 'ի շինմանէ տոմարին մերոյ մինչև 'ի 1280 թուականն հայոց՝ 320 նահանջ լինի. որոյ երեք հարիւրն՝ տասն անգամ 30 է, այսինքն՝ ամբողջ 10 ամիս. որ 'ի գարնանամտեն անցեալ՝ 20 նահանջ յաւելեալ է։ Նաև 'ի չորից ամաց՝ 'ի 4 ամ թիւ մի եւ յաւելեալ մինչև 'ի 30 թիւն, ամիս մի եւ անցանէ 'ի գարնանամտէ։ Այս գործածումն յաւելեալ ամանահանջից որ 'ի գարնանամտէ 'ի գարնանամուտն՝ լինի այսպիսի թուահամարք՝ որ կոչին Ածէք. եւ եդեալք են 'ի ներքոյ 'ի մէջ աղիւսակի, զորս ըստ կարգի ածեալ 'ի վր յաւելեալ ամանահանջից՝ գտանին նշանակեալ աւուրք։

### Աղիւսակ ածէից։

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 26 | 3 | 13 | 9 | 6 | 5 | 1 |
| 14 | 27 | 6 | 27 | 6 | 17 | 25 | 4 |

Օր օրինակ 'ի թուին հայոց 1280, յորում էր 20 նահանջ. բայց 19 նահանջն կատարեալ գոլով՝ 'ի վր նորա

8 Ածեալ լինի 27, զոր յաւելցէ 'ի վր 19 աւուրցն ամսոյն՝ լինի 46, յորմէ 30 օրն նոյն

ամ

ամսոյն 'ի բաց հանեալ՝ 'ի 16 մեհեկանի
ամսոյն է Գարնանամուտ. Նմանապէս

26 Ածեալ լինի 45, յորմէ 30 օրն նոյն
ամսոյն 'ի բաց հանեալ՝ 'ի 15 արեգի ամսոյն
է Աւետումն.

3 Ածեալ՝ 'ի 22 արեգի ամսոյն է Ան–
կաստեղ.

13 Ածեալ լինի 32, յորմէ 30 օրն ահե–
կանի ամսոյն 'ի բաց հանեալ՝ 'ի 2 մարերի
ամսոյն է Լըլաստեղ.

9 Ածեալ լինի 28, զոր յաւելեալ 'ի վր 21
ահեկանի ամսոյն՝ լինի 49, յորմէ 30 օրն
նոյն ամսոյն 'ի բաց հանեալ՝ 'ի 19 մարերի
ամսոյն է Ամառնամուտ.

6 Ածեալ՝ 'ի 25 հրոտից ամսոյն Աստ–
ուածածին է.

5 Ածեալ լինի 24, զոր յաւելեալ 'ի վր 27
հրոտից ամսոյն՝ լինի 51, յորմէ 35 օրն
նոյն ամսոյն հանգերձ աւելեացն աւուրբ–
քըն 'ի բաց հանեալ՝ 'ի 16 նաւասարդի
ամսոյն Աշնանամուտ է.

1 Ածեալ՝ 'ի 20 նաւասարդի ամսոյն Ծը–
Խաչ է.

14 Ածեալ լինի 33, յորմէ 30 օրն նա–
ւասարդի ամսոյն 'ի բաց հանեալ՝ 'ի 3 հո–
ռի ամսոյն Պապանձումն զաքարիայի է.

27 Ածեալ լինի 46, յորմէ 30 օրն նա–



ւա

ւասարդի ամսոյն 'ի բաց հանեալ՝ 'ի 16 հոռի ամսոյն Յղութիւն եղիսաբեթի է.

6 Մնեալ՝ 'ի 25 սահմի ամսոյն Յիսնա-կաց բարեկենդան է.

27 Մնեալ լինի 46, յորմէ 30 օրն հո-ռի ամսոյն 'ի բաց հանեալ՝ 'ի 16 տրէի ամ-սոյն սուրբ Յակոբայ բարեկենդան է.

6 Մնեալ լինի 25, զոր յաւելեալ 'ի վր̅ 22 սահմի ամսոյն՝ լինի 47, յորմէ 30 օրն նոյն ամսոյն 'ի բաց հանեալ՝ 'ի 17 տրէի ամսոյն Ձմեռնամուտ է.

17 Մնեալ լինի 36, յորմէ 30 օրն տրէի ամսոյն 'ի բաց հանեալ՝ 'ի 6 քաղոցի ամսոյն Ծննդեան բարեկենդան է.

25 Մնեալ լինի 44, յորմէ 30 օրն տրէի ամսոյն 'ի բաց հանեալ՝ 'ի 14 քաղոցի ամ-սոյն Ծնունդ յ̅ի ք̅ի է.

4 Մնեալ՝ 'ի 23 արացի ամսոյն Տեառն ընդառաջ է.

—

Մայցէս մինչև 'ի 1281 ամի գարնանա-մուտն 'ի գործ ածել 19 կատարեալ նահան-ջըն. և 'ի նոյն ամի գարնանամտին 20 նա-հանջըն կատարել լինի, և 21 նահանջըն գոյ-անալ սկսանի: Օ է Ծնունդն յ̅ի ք̅ի և

Րմանահանջն ՚ի հասարակածէ մի՝ ՚ի գար-
նանամտէ ՚ի գարնանամուտ սկսանի ․ իսկ
Վերադիրն եւ Եօթներեակն ը̅ Թուակա-
նաւ ՚ի Նաւասարդի ամսոյն առաջին օրէն։

Օ ա̃ծածնին, Օ ̀ոք խաչին, Օ ̀յու-
նակամարին, Օ ̀ոք յակոբայն օրագրուան
ամ յետադարձ̃ հաշուոք յորէ չորեք-
շաբաթու, եւ անդր առաւք կիւրակէի։
Իսկ յորէ հինգշաբաթու յառաջ ընթա-
ցեալ՝ նմանապէս անդր առաւք կիւրակէի։

| Անուանք ամսոց հռոմէից եղելոց. | Ըստ պատկերին Յ. | Կրկնակիքն նոցա. | Կիսակիքն նոցա. | Ա ամսամտաւոր | Բ ամսամտաւոր | Գ ամսամտաւոր | Դ ամսամտաւոր | Ե ամսամտաւոր | Զ ամսամտաւոր | Է ամսամտաւոր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Յունուար 31 | զ | ոչ | ոչ | Բշ | Գշ | Դշ | Եշ | ուր | շբ | կիր |
| Փետրուար 28 | ե | գ | ա ‖ | Եշ | ուր | շբ | կիր | Բշ | Գշ | Դշ |
| Մարտ 31 | ե | գ | ոչ | Եշ | ուր | շբ | կիր | Բշ | Գշ | Դշ |
| Ապրիլ 30 | զ | զ | ա ‖ | կիր | Բշ | Գշ | Դշ | Եշ | ուր | շբ |
| Մայիս 31 | զ | ա | բ | Գշ | Դշ | Եշ | ուր | շբ | կիր | Բշ |
| Յունիս 30 | ե | գ | գ ‖ | ուր | շբ | կիր | Բշ | Գշ | Դշ | Եշ |
| Յուլիս 31 | ե | զ | գ | կիր | Բշ | Գշ | Դշ | Եշ | ուր | շբ |
| Օգոստոս 31 | գ | բ | ե ‖ | Դշ | Եշ | ուր | շբ | կիր | Բշ | Գշ |
| Սեպտեմբեր 30 | գ | ե | ե | շբ | կիր | Բշ | Գշ | Դշ | Եշ | ուր |
| Հոկտեմբեր 31 | գ | ոչ | ե ‖ | Բշ | Գշ | Դշ | Եշ | ուր | շբ | կիր |
| Նոյեմբեր 30 | բ | գ | թ | Եշ | ուր | շբ | կիր | Բշ | Գշ | Դշ |
| Դեկտեմբեր 31 | բ | ե | թ ‖ | շբ | կիր | Բշ | Գշ | Դշ | Եշ | ուր |

Առ ՚ի գտանել զամսամուտս տարւոյ ինչ՝ նախ գիտ ՚ի վերոյասացեալ զեօթնեկեակն նոյն տարւոյն , և ապա զամիսս ՚ի կողմանց առեալ մտցես ՚ի խորանս աջակողմեան . որով հեշտ գտանես զաւուրս ամսամտից՝ որք եղեալք են ՚ի նշանս եօթնեկեկաց.

Բայց ՚ի նահանջ ամին կրկին են տարեգիրք և եօթնեկեակք . զառաջինն ՚ի յունուարի և ՚ի փետրուարի միայն ՚ի գործ ած , և զերկրորդն ՚ի մարտէ սկսեալ մինչև ՚ի վերջն տարւոյն.

# ՏՕՄԱՐ ՀՌՈՎՄԱՅԵՑՒՈՑ՝

## Յաղագս յարակայի.

Յարակայն է յաւելեալ 6 թիւն 'ի հայոց ամսոյն աւուր թուոյն ծնընդեան և յայտնութեն քի՛ յետադարձ հաշուոք զկնի 'ի բաց ձգելոյ զմիջոց աւուր թիւն հայոց ամսամտին առ հռովմայեցւոց տարեգլուխն և ամսամուտն. որով միօրինակ յամ՛ ամի յաւելեալ 6 թիւն այն՝ լինի յարակայ յունվարի ամսոյն.

Որ օրինակ. 'ի թուին հայոց 1280 հայոց ամսամուտն քաղոցի ամսոյն՝ յետադարձ հաշուոք ունի միջոց 8 օր առ հռովմայեցւոց տարեգլուխն և ամսամուտն յունվարի ամսոյն, և յայտնութին է 'ի 14 քաղոցի ամսոյն. յորմէ 'ի բաց հանեալ 8 օր միջոցն՝ յաւելանայ 6, և լինի յարակայ յունվարի ամսոյն. որով շինին և միւս ամսոց յարակայքն.

Այնպէս յառաջիկայ թուին հայոց 1281,



մի-

միջոցն է 8 օր, և յայտնուածն է 'ի 14 քաղոցի ամսոյն. յորժէ բարձեալ 8 օր միջոցն՝ մնայ 6, և լինի յարակայ յունվարի ամսոյն.

Նմանապէս և 'ի հետևեալ թուին հայոց 1282, միջոցն է 9 օր, և յայտնուածն է 'ի 15 քաղոցի ամսոյն. յորժէ 'ի բաց հանեալ 9 օր միջոցն՝ մնայ ևս 6, և լինի յարակայ յունվարի ամսոյն. զի 'ի յաւելեալ միջոցին՝ յաւելանայ ընդ նմին և աւուր թիւն յայտնուածի, և յարակայն յունվարի ամսոյն յարկայ և մնայ 6 յամ ամի.

—

Եւ մինչ կամիցիս գիտել զյարակայ ամսոյ ինչ, կա՛լ նախ զաւուր ամսոյ թիւն մինչև 30. և 'ի վերայ նորա յաւել զյարակայի թիւն իւր. և ապա բա՛րձ անտի ամբողջ զաւուր ամսոյ թիւն՝ ոչ աւելի և ոչ պակաս. և որ ինչ յաւելանայ յայնմանէ՝ լինի յարակայ հետևեալ ամսոյն. Բայց կա՛լ նախ միայն դեկտեմբերի ամսոյն թիւն 31 համդերձ աւելեացի 5 աւուրբքն, և բա՛րձ անտի միայն 30. և 'ի նմանէ յաւելեալն որ է 6, է յարակայ յունվարի ամսոյն. յորժէ մի զմիոյ լինի հետևեալն յարակայք ամսոց.

Օ՛ր օրինակ. նախ կալեալ միայն ըզդեկտեմբերի ամսոյն աւուր թիւն 31, և 'ի



վերայ

վր նորա յաւելեալ զաւելեացն 5 օրն՝ լինի 36. և արդ ՚ի բաց հանեալ միայն զդեկտեմբերի ամսոյն 30 օրն՝ յաւելեալ մնայ 6, որ է յարակայ յունուարի ամսոյն. Այնպէս ՚ի վր յունուարի ամսոյն 30 աւուրն յաւելեալ զյարակայն իւր՝ որ է 6, լինի 36. յորմէ բարձեալ ամբողջ զյունուարի ամսոյն 31 օրն՝ յաւելեալ մնայ 5, որ է յարակայ փետրվարի ամսոյն: Նմանապէս ՚ի վր փետրվարի ամսոյն 30 աւուրն յաւելեալ զյարակայն իւր՝ որ է 5, լինի 35. յորմէ ՚ի բաց հանեալ ամբողջ զփետրվարի ամսոյն 28 օրն, յաւելեալ մնայ 7. որ է յարակայ մարտի ամսոյն. Նոյնպէս յամ ամսոց յաւելեալքն՝ յարակայք են հետևեալ ամսոց իւրեանց որպէս ցուցանէ քեզ աղիւսակն:

## Յաղագս կրկնակի.

Կրկնակն է աւելի մնացեալ աւուրքն ՚ի չորից շաբաթուց ամսոյն. Այդ կա՛լ զաւուրս յունուարի ամսոյն, և բա՛րձ անոր 7, 7, մի՛՝ արա՛ շաբաթ՝ շաբաթ. և որ ինչ յաւելանայ՝ կրկնակ է փետրվարի ամսոյն. Այնպէս կա՛լ զաւուրս փետրվարի ամսոյն և զիւր կրկնակն ՚ի միասին, և բա՛րձ անոր



7,

7, 7. և որ ինչ յաւելանայ՝ կրկնակ է մարտի ամսոյն։

Զոր օրինակ. ՚ի յունվարի ամսոյն 31 օրէն ՚ի բաց հանեալ 7, 7, մնայ 3. որ է կրկնակ փետրվարի ամսոյն։ ՚Նմանապէս ՚ի փետըր-վարի ամսոյն հանդերձ կրկնակաւն իւրով 31 օրէն ՚ի բաց հանեալ 7, 7, մնայ 3. որ է կրկնակ մարտի ամսոյն։ Եւ յայսպէս յամենայն ամսոց յաւելեալքն յեօթանց, այս՝ ՚ի շաբաթուց, կրկնակք են հետևեալ ամսոց իւրեանց. որպէս ցուցանէ քեզ աղիւսակն։

---

## Յաղագս կիսակի։

Կիսակն է որ յաւուրց ամսոյն՝ զաւուրս լուսնոյ ամսոյն, այս՝ 29 օր և կէս ՚ի բաց հանեալ՝ մնացեալ կէս օրն տայ հետևեալ ամսոյն, և լինի կիսակ նմա։ Այս կալ զաւուրս յունվարի ամսոյն, և բարձ անտի 29 և կէս. և որ ինչ յաւելանայ՝ կիսակ է փետրվարի ամսոյն։ Այնպէս կալ զաւուրս փետրվարի ամսոյն և զիւր կիսակըն ՚ի միասին, և բարձ անտի 29 և կէս. և որ ինչ յաւելանայ՝ կիսակ է մարտի ամսոյն։

Զոր օրինակ. ՚ի յունվարի ամսոյն 31 օրէն ՚ի բաց հանեալ 29 և կէս՝ մնայ 1 և կէս. որ է կիսակ փետրվարի ամսոյն։

Նմանապէս 'ի փետրուարի ամսոյն հանդերձ կիսակաւն խառն 29 և կէս օրէն 'ի բաց հանեալ 29 և կէս՝ ոչինչ յաւելանայ զի չունի կիսակ։ Նոյնպէս յամ՛ ամսոց աւուրց յաւելեալքն 'ի 29 և կէս լուսնոյ ամսոյն օրէն՝ կիսակք են հետևեալ ամսոց խառնանց . որպէս յայտ առնէ քեզ աղիւսակն։

## Յաղագս Բոլորականի հռովմայեցւոց։

Թուականն հռովմայեցւոց սկսանի 'ի յունուարի ամսոյն առաջին օրէն, որ է տարեմուտ և առաջին ամիս ամսոց հռովմայեցւոց։ Առ կալ նախ զԹուականն հայոց, և 'ի վր՟ նր՟ յաւել 304 . և այս գումարեա՛, և որ ինչ լինի գումարն՝ այն է մեծ Թուականն հռովմայեցւոց . յորմէ եթէ բառնաս զմեծ շրջանն արեգական որ է 532 ամն, յաւելեալն լինի փոքր Թուական հռովմայեցւոց։

Օր՛ օրինակ . կալեալ 1280 Թուականն հայոց՝ և 'ի վերայ նորա յաւելեալ 304 , լինի 1584 որ է մեծ Թուական հռովմայեցւոց . յորմէ 'ի բաց հանեալ զմեծ շըրջանն արեգական՝ մնայ 1052 . որ է փոքր Թուականն հռովմայեցւոց։

## Յաղագս եօթներեկաց։

Եօթներեակ տարւոյն այսպէս առ՛։ Ա՛ռ զթուականն հայոց, և բաժա՛նեա անտի զիւրաքանչիւր զմեծ շրջանսն. և 'ի մնացելոյն ևս 'ի բաց հա՛ն 28, 28. և 'ի վ͞ր յայնմանէ յաւելեալ իւրաքանչիւր 4 և կամ քան 4 թիւն աւելի 2 և 3 թուոյն որ է 'ի նմին, յաւե՛լ 1. և ապա բաժա՛նեա անտի 7, 7. և որ ինչ յաւելանայ՝ եօթներեակ է տարւոյն. Իսկ եթէ յաւելեալն իցէ միայն 7, թո՛ղ զայն զի է եօթներեակ տարւոյն.

Օ՛ր օրինակ. 'ի 1280 թուականէն հայոց 'ի բաց հանեալ երկիցս զմեծ շրջանսն, մնայ 216. յորմէ բարձեալ 28, 28, մնայ 20. և 'ի վ͞ր սորա վ͞ս իւրաքանչիւր 4 թուոյն յաւելեալ 5, լինի 25. և աստի 'ի բաց հանեալ 7, 7, մնայ 4. որ է եօթներեակ նոյն տարւոյն.

—

## Աղիւսակ եօթներեկաց։

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| դ | եզ | է | ա | բ | գդ | ե |
| զ | է | աբ | գ | դ | ե | զէ |
| ա | բ | գ | դե | զ | է | ա |
| բգ | դ | ե | զ | էա | բ | գ |



Բայց

Բայց յորժամ կրկին է եօթներեակ տարւոյն, յայնժամ ամն այն է նահանջ. վասն զի 'ի յունվարի և 'ի փետրվարի զառաջին գիրն միայն 'ի գործ ած. և մինչ 'ի մարտն մատնես, զերկրորդն՝ մինչև 'ի վերջն տարւոյն:

Օ՛ր օրինակ. 'ի հետևեալ թուին հայոց, թ՟վ՝ 1281 որ է նահանջ, եօթներեակն է Ե Զ. վասն 'ի գործ ած 'ի յունվարի և 'ի փետրվարի Ե գիրն. և յորժամ 'ի մարտն մատնես, Զ գիրն:

---

## Յաղագս վերադրոյ:

Վերադիր տարւոյն այսպէս առա՛: Կա՛լ զթուականն հայոց, և բաժա՛ անտի զիւրաքանչիւր զմեծ շրջանն արեգական. և 'ի մնացելոյն ևս 'ի բաց հա՛ն 19, 19. բայց եթէ յայնմանէ յաւելեալ թիւն մնայ 1, թո՛ղ 19, որով լինի 20. և 11 թուով բազմապատկեա՛, և ապա բաժա՛ հանապազ 20. յորմէ յաւելեալն եթէ քան զթիւն 30 աւելի իցէ, 'ի բաց հա՛ն զթիւն 30. և որ ինչ յաւելանայ՝ վերադիր է տարւոյն. Իսկ եթէ յաւելեալն իցէ միայն 30, թո՛ղ զայն զի է վերադիր տարւոյն: Բայց եթէ յաւելանայ միայն 20, յաւել 'ի վ՟ր նորա 1. որով լինի վերադիր տարւոյն 21:

Օր՛ օրինակ. ՚ի 1280 թուականին՝ հայոց ՚ի բաց հանեալ երկիցս զմեծ շրջանն, մնայ 216. յորմէ բարձեալ 19, 19, մնայ 7. զոր 11 թուով բազմապատկեալ լինի 77. և սոսա ՚ի բաց հանեալ 20, մնայ 57. յորմէ բարձեալ 30, յաւելեալ մնայ 27. որ է վերադիր նոյն տարւոյն։

—

Եւ կամ այսպէս արա. Ա՛ռ զանցեալ ամի վերադիրն, և ՚ի վր̃ նորա յաւել 11. որով վերադիր լինի առաջիկայ տարւոյն։ Իսկ յորժամ վերադիրն լինի 9, յայնժամ յաւե՛լ ՚ի վերայ նորա 12։

Օր՛ օրինակ. ՚ի 1279 անցեալ թուականին հայոց՝ վերադիրն էր 16. յորոյ վերայ յաւելեալ 11, լինի 27. որ է վերադիր ներկայ տարւոյն։

—

## Աղիւսակ վերադրաց։

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| իէ | ը | ժթ | լ | ժա | իբ | գ | ժդ | իե | զ |
| ժէ | իը | թ | իա | բ | ժգ | իդ | ե | ժզ | |

Արդ՝ գիտել պարտ է. զի 28 խորանք եօթներեկեայց՝ և 19 խորանք վերադրաց՝ և իննևտասներեկեայց՝ շարունակ ըստ կարգի

եղեալք են 'ի յաղիւսակս իւրեանց · որք մի զմիոյ կնի մշտնջենաւորապար հետևին ամ ըստ ամէ։ Իսկ մինչդեռ լինի հասանել 'ի վերջն, յայնժամ դարձեալ լինի սկիզբն 'ի գլխոց խորանաց իւրեանց։

Զո՛ր օրինակ · յայսմ ամի՝ յորում Թուականն հայոց է ՌՄՁ որ է 1280, եօթներեակն է Դ, որ է 4 · և վերադիրն է ԻԷ, որ է 27 · և իննևտասներեակն է Է։ Այդ սոքա 'ի յաղիւսակս իւրեանց եդեալք են 'ի սկիզբն առաջին խորանաց · զի 'ի գալ ամի անմիջապէս հետևեալն սոյին՝ են եօթներեակ, վերադիր և իննևտասներեակ նոյն տարւոյն։ Այսպէս իմա՛ և 'ի միւսում ամի հետևեալքն նոյին՝ մինչև 'ի վերջն։

---

## Հոլովք իննևտասներեկեաց։

Իննևտասներեակ տարւոյն այսպէս արա՛։ Կա՛լ զԹուականն հայոց, և բաժա՛ անտի զիւրաքանչիւր զմեծ շրջանսն · և 'ի մնացելոյն 'ի բաց հա՛ն ևս 19, 19 · և որ ինչ յաւելանայ, իննևտասներեակ է տարւոյն։ Բայց եթէ ոչինչ յաւելանայ՝ վերջին ամ է շրջանին, և իննևտասներեակն է 19։

Զո՛ր օրինակ · 'ի 1280 Թուականէն հայոց 'ի բաց հանեալ երկիցս զմեծ շրջանսն,

Մնայ 216 . յորմէ բարձեալ 19, 19, մնայ 7 . որ է իննեւտասներեակ նոյն տարւոյն .

—

Աղիւսակ իննեւտասներեկաց .

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 17 | 18 | 19 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | |

Յաղագս բարեկենդանի առաջաւորաց .

Բարեկենդանն առաջաւորաց այսպէս արա՛ . Կա՛լ հանապազ ՚ի հասարակ ամին 35, եւ ՚ի նահանջին 36 . եւ բա՛րձ անտի զվերադիր տարւոյն . Բայց եթէ վերադիր տարւոյն լինի 9, 27, 28, 30, յայնժամ թէ ՚ի յառաջաւորն եւ թէ ՚ի յաւագ լրումն թիւ մի յաւե՛լ ՚ի վե՛ր սոցա, ո՛ր 9, 10 արա՛ . 27, 28 . 28, 29 . 30, 31 . եւ այնպէս ՚ի բաց հա՛ն զվերադիրն ՚ի կալեալ թուոյդ . յորմէ յաւելեալն՝ եթէ քան զտասն աւելի է, ՚ի յունվարի է բարեկենդանն առաջաւորաց . եւ եթէ պակաս է, ՚ի փետրվարի է . Եւ այս ՚ի վե՛ր նորա՝ թէ զեօթներեակն նոյն տարւոյն եւ թէ զկրկնակ նոյն ամսոյն յաւե՛լ . եւ զորագիւտ արա՛, ո՛ր 7, 7 ՚ի բաց



հա՛ն

հան 'ի նմանէ · յորմէ եթէ ոչինչ յաւե_
լանայ, ցուցանէ զօրն շաբաթու · յայնժամ
կայ մի աւուր կիւրակէի 1 · և եթէ յաւե_
լանայ 2, ցուցանէ զօրն երկուշաբաթու ·
և եթէ 3՝ զօրն երեքշաբաթու, ևն ըստ կար_
գի։ Այլ մինչև ցկիւրակէ թուեմ, և զայն_
քան աւուր թիւն յառաջագոյն 'ի 35 և
կամ 36 կալեալ թուոյդ յորմէ բարձեր ըզ_
վերադիրն, զհետ այնմանէ յաւելուլ թու_
ոյն միաւորեան · որոյ գումարն յայտ առնէ
յայս ինչ աւուր ամսոյն լինելն բարեկեն_
դանի առաջաւորաց։ Բայց եթէ յաւելա_
նայ 1 որ է կիւրակէ, յայնժամ մինչև ցը_
միւս կիւրակէ թուեմ որպէս 'ի վերոյ ·

Որ օրինակ 'ի թուին հայոց 1280 · 'ի
35 թուոյն 'ի բաց հանեալ թիւ մի յաւել_
մամբ զվերադիրն նոյն տարւոյն՝ որ է 27,
մնայ 7 · յորոյ մի յաւելեալ թէ զեօթնե_
եակն նոյն տարւոյն՝ որ է 4, և թէ զկրկնա_
կըն փետրուարի ամսոյն՝ որ է 3, լինի 14 · և
ապա 'ի բաց հանեալ 7, 7, ոչինչ յաւե_
լանայ՝ զի է օրն շաբաթու։ Աստի մնան
աւուր կիւրակէի կալեալ 1, և զհետ 'ի
վերադրեն մնացեալ 7 թուոյն միաւորեալ
լինի 8 · Արդ 'ի նոյն ամի բարեկենդան_
առաջաւորաց է 'ի 8 փետրուարի ամսոյն։

### Հաղագս լրման զատկին.

Լրումն զատկի այսպէս արա. Կալ միշտ 46. և որչ 'ի բարեկենդանի առաջաւորաց, այնչափ բարձ աստի զվերադիրն. և տես՝ թէ յաւելեալն աւելի է քան զաւուրս գարնանամտի և հասարակածի՝ իա մարտի ամսոյն, բարձ զայն 'ի նմանէ. և որ ինչ յաւելանայ՝ է այն առաջիկայ ամսոյն յորում է զատիկն։ Բայց թէ յաւելեալն աւելի է քան 21 մարտի ամսոյն, 'ի նմին ամսեան է զատիկն. և եթէ պակաս է, յառաջիկայ ամսեան է։ Դու ապա 'ի վր մնացելոյն՝ թէ զկիրակին նոյն ամսոյն և թէ զեօթներեակն աւուրցն յաւել, և զորագիւտ արա որչ 'ի բարեկենդանի առաջաւորացն։

Օր օրինակ 'ի թուին հայոց 1280. 'ի 46 թուոյն բարձեալ յաւելմանն թուոյ միոյ զվերադիր աւուրցն՝ որ է 27, մնայ 18. որ է պակաս քան 21 մարտի ամսոյն։ Արդ 'ի վր 18 թուոյն յաւելեալ զկիրակին ապրիլի՝ որ է 6, և զեօթներեակն աւուրցն՝ որ է 4, լինի 28. յորմէ բարձեալ 7, 7, ոչինչ յաւելանայ՝ զի է օրն շաբաթու։ Ուստի վս կիւրակէի կալեալ 1, և զհետ 'ի վերադրեն մնացեալ 18 թուոյն միաւորեալ լինի 19. Ապա 'ի նոյն ամի է օրն զատկի՝ 'ի 19 ապրիլի ամսոյն։

## Յաղագս Մեծի շրջանի արեգական։

Մեծ շրջանն արեգական է 532 ամբողջ ամս արեգական, յորում պարունակի 28 անգամ փոքրիկ շրջանն լուսնի, որ է 19 ամս իննևտասներեկի։ Որանալի հարկ է բոլորիլ այնչափ ամաց, որչափ փոփոխի շրջանաւ լուսնի, այսինքն` 19 ամի իննևտասներեկի. և փոքր շրջանաւ արեգական որ է 28 ամ, չափեսցի բոլորումն ամաց. ուստի 19 բազմապատկեալ թուովս 28, լինին ամք 532. որ կոչի մեծ շրջան արեգական։
Ապա 'ի լրանալ միոյ մեծի շրջանին` դառնի դարձ արեգական և լուսնի 'ի միում շրջանի. և լուսինն պատկի վերադառնայ անդրէն 'ի նոյն սկիզբն և 'ի նոյն կարգ ամսական։

Արդ` 'ի լրանալ շրջանի եօթներեկաց որ է 28 ամս արեգական, ըստ ամի` ժբ ամաց և ըստ աւուր յորքաներորդի իցէ պատկեր աւուրն և նախանշն և եօթներեակն, նոյնն լինի 'ի միւս շրջանի։ Այնպէս 'ի լրանալ լուսնի փոքրիկ շրջանի որ է 19 ամս իննևտասներեկաց` որքաներորդն նէ կա ժբ ամի` ժբ ամաց և ըստ աւուր յորում ծնանի լուսինն, յամ շրջանի նոյն օրինակ է ըստ վերադարձից։ Ուստի 'ի լրանալ շրջանաց այսոցիկ երկուց լուսաւորաց, այսինքն` 19 անգամ 28

Թու

Թուոց , լինի կատարեալ մեծ շրջան որ է 532 ամի . յորում լուսնի և արեգական աւուրքն ՚ի մի և ՚ի նոյն պատահին , և վերադիրն և պատկեր աւուրն են .

Այս մինչ կամիցիս իմանալ յորքաներորդի ամի լինելն մեծի շրջանի արեգական՝ և կամ որքան մեծի շրջանի անցանելն , կալ զԹուականն Հայոց , և բարձ անտի զիւրաքանչիւր 532 ամի . և յայնմանէ յաւելեալ Թուոյն եւ ՚ի բաց հան 28 , 28 . յորմէ յաւելեալն յայտ առնէ յորքաներորդի ամի լինելն մեծի շրջանի արեգական . Նոյց եԹէ ոչինչ յաւելանայ ՚ի 28 Թուոյն , յայնժամ է լրացեալ փոքր շրջան արեգական որ է 28 ամի .

Օր օրինակ . ՚ի 1280 Թուականէն Հայոց ՚ի բաց հանեալ երկիցս զմեծ շրջանն արեգական՝ որ է 1064 ամի , մնայ 216 . յորմէ բարձեալ 28 , 28 , մնայ 20 . Ապա ՚ի նոյն ամի յետ անցանելոյն երկու մեծի շրջանի արեգական՝ ՚ի քսաներորդի ամի է շրջան տարւոյն արեգական .

## Յաղագս գրոց տարւոյն .

Գիտել տարեգրոյ այսպէս արա . Առ զյունուարի ամսոյն առաջին օրն , և տես



Թէ

թէ մինչև ցբարեկենդանն առաջաւորաց քանի՛ օր միջոց իցէ, բա՛րձ անտի 10. և ըզ_մնացեալն ՚ի նմանէ՝ ՚ի Ա գրոյ տարւոյն սկսեալ թուել մինչև ուր դադարի, այն է գիր տարւոյն ։

Ո՛ր օրինակ ՚ի թուին Հայոց 1280. ՚ի յունվարի ամսոյն առաջին օրէն մինչև ցբարեկենդանն առաջաւորաց՝ լինին ա_ւուրք 39. յորմէ ՚ի բաց հանեալ 10, մնայ 29. զոր ՚ի Ա գրոյ տարւոյն սկսեալ դադարի ՚ի Ս գիրն. որ է գիր տարւոյ նոյն ամին ։

—

Եւ կամ՝ այսպէս արա ։ Կա՛լ զաւուր ամսոյ թիւն բարեկենդանի առաջաւորաց, և տե՛ս՝ թէ ՚ի յունվարի ամիսն է, բա՛րձ անտի 10. բայց եթէ ՚ի փետրվարի է, յա_ւե՛լ ՚ի վ͞ր ն͞ր 21. և որ ինչ լինի գումարն, զայն ՚ի Ա գրոյն սկսեալ թուել մինչև ուր դադարի թիւն, այն է գիր տարւոյն ։

Ո՛ր օրինակ ՚ի թուին Հայոց 1280. ՚ի վ͞ր 8 փետրվարի ամսոյն՝ յորում է բարե_կենդանն առաջաւորաց, յաւելեալ 21՝ լինի 29. զոր ՚ի Ա գրոյն սկսեալ դադարի ՚ի Ս գիրն, որ է գիր տարւոյ նոյն ամին ։

Եւ այսուհետեւ առձեռնեալ տառս այբուբենից եղեալ թուականաւ՝ են գիր տարւոյ.

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա. | Բ. | Գ. | Դ. | Ե. | Զ. | Է. | Ը. | Թ. |
| 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| Ժ. | Ի. | Լ. | Խ. | Ծ. | Կ. | Հ. | Ձ. | Ղ. |
| 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 |
| Ճ. | Մ. | Յ. | Ն. | Շ. | Ո. | Չ. | Պ. | Ջ. |
| 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 |
| Ռ. | Ս. | Վ. | Տ. | Ր. | Ց. | Ւ. | Փ. | Ք. |

—

Բայց յորժամ տարին նահանջ է, որ պատահի միանգամ յիւրաքանչիւր չորրորդ ամին՝ յաւելել լինելով օր մի ՚ի վեր փետրվարի ամսոյն, յայնժամ զոյգ լինի թէ գիր տարւոյն՝ և թէ եօթներեակ տարւոյն, որոց խօսեցաք անդ. վասն զի զառաջինն ՚ի գործ ած միայն ՚ի յունվարի և ՚ի փետրվարի, և զերկրորդն՝ ՚ի մարտէ սկսեալ մինչև ՚ի վերջն տարւոյն։

Որ օրինակ ՚ի հետևեալ թուին հայոց՝ ի 1281 որ է նահանջ, գիր տարւոյն է Յ Մ. Ուստի զսա զՅ գիրն ՚ի գործ ած ՚ի յունվարի և ՚ի փետրվարի. իսկ զՄ գիրն սկսեալ ՚ի մարտէ մինչև ՚ի վերջն տարւոյն։

Վարժք տառից ամսամտից, և փոխից շարժա-
կանաց, և այլոց երից հարևորաց բաժանդակե-
լոց ՚ի պարզաթմակէ տափ, որք տեսցեն հարէն
գտանել ՚ի ցեան վերոյ տարւոյն:

—

Զպատակէր տառից ամսամտից այս-
պէս արա. Առ զթիւ գրոց տար-
ւոյն, եթէ իցէ աւելի քան զթիւն 7, բարձ
անտի 7, 7. և որ ինչ յաւելանայ՝ յետա-
դարձ հաշուք թուեա զայն յիւրաքան-
չիւր տառից ամսոց սահմանելոց. և յոր-
ում տառս դադարի թիւ այն՝ ՚ի նմին տա-
ռն է մուտն նոյն ամսոյն. Բայց եթէ
թիւ գրոց տարւոյն լինի միայն 7, յորմէ ՚ի
բաց հանեալ 7՝ ոչինչ յաւելանայ, յայն-
ժամ ՚ի նոյն ամի սահմանեալ տառք եր-
կոտասան ամսոց՝ են տառք ամսամտից.

Զոր օրինակ, ՚ի թուին հայոց 1280
գիր տարւոյն է Ա որ է 29. յորմէ ՚ի բաց
հանեալ 7, 7, մնայ 1. զոր յետադարձ հաշ-
ուք թուեալ ՚ի սահմանեալ օրէն յունվա-
րի ամսոյն որ է ուրբաթ, դադարի թիւն
այն յաւուրն հինգշաբաթու. յորում է
մուտն յունվարի ամսոյն. Ըստ այսմ իմա և
զայլոց տառից ամսամտից:

Եւ ըստ այսմ կանոնի սահմանեալ աւուրք երկոտասան ամսոց են այսքին.

| | |
|---|---|
| Օրն Յունուարի է | Ուրբաթ. |
| Փետրվարի | Երկուշաբաթի. |
| Մարտի | Երկուշաբաթի. |
| Ապրիլի | Հինգշաբաթի. |
| Մայիսի | Շաբաթ. |
| Յունիսի | Երեքշաբաթի. |
| Յուլիսի | Հինգշաբաթի. |
| Օգոստոսի | Կիրակէ. |
| Սեպտեմբերի | Չորեքշաբաթի. |
| Հոկտեմբերի | Ուրբաթ. |
| Նոյեմբերի | Երկուշաբաթի. |
| Դեկտեմբերի | Չորեքշաբաթի։ |

Յաղագս ծննդեան և յայտնութեան քսի.

Օ պատկեր աւուր ծննդեան և յայտնութեանն քն գիտ այսպէս. Կա՛լ զթիւ գրոց տարւոյն, եթէ իցէ աւելի քան ըզթիւն 7, բարձ անտի 7, 7. և որ ինչ յաւելանայ՝ յետադարձ հաշուոք թուեա՛ զայն միշտ յօրէ չորեքշաբաթու. և ուր դադարի թիւն այն, ՚ի նմին աւուր է տօն ծննդեան և յայտնութեան տեառն.



Օր

Զոր օրինակ, ՚ի թուին Հայոց 1280 գիր տարւոյն է Ս որ է 29. յորմէ բարձեալ 7, 7, մնայ 1. զոր առանց յետադարձ հաշուելոյ առնելոյ՝ դադարի թիւն այն ՚ի նմին աւուր. Այս ՚ի նոյն ամի է օրն Ծննդեան և յայտնութեան յի̅ քի̅՝ յաւուր երեքշաբաթու ։

---

## Յաղագս գիւտի Ծննդեան և Բարեկենդանի առաջաւորաց ։

Զմիջոց աւուրքն Ծննդեան և բարեկենդանի առաջաւորաց հանդերձ աւուր պահօքն գիտ այսպէս. Կալ զթիւ գրոյ տարւոյն, և ՚ի վր նր յաւել 5. և տես՝ թէ որքան լինին թիւքն, այնքան աւուրք են միջոց աւուրքն ։

Զոր օրինակ, ՚ի թուին Հայոց 1280 գիր տարւոյն է Ս որ է 29. յորոց վր յաւելեալ 5, լինի 34. Այս ՚ի նոյն ամի միջոց աւուրքն Ծննդեան և բարեկենդանի առաջաւորաց հանդերձ աւուր պահօքն՝ են աւուրք 34 ։

---

## Յաղագս բարեկենդանի առաջաւորաց ։

Զօրն ամսոյն բարեկենդանի առաջաւորաց գիտ այսպէս. Կալ զյունուարի ամ_
սոյն

տոյն 10, և ՚ի վր̃ նր̃ յաւել զթիւ գրոց տար-ւոյն, և տե՛ս՝ թէ թիւքն աւելի լինին քան զաւուրս ամսոյն, բարձ զաւելին ՚ի նմանէ. և որքան յաւելանայ մնայ՝ յայնքաներորդի աւուր փետրվարի ամսոյն է բարեկենդանն առաջաւորաց։

Օրինակ, ՚ի Թուին Հայոց 1280 գիր տարւոյն է Ս որ է 29. զոր յաւելեալ ՚ի վր̃ 10 յունվարի ամսոյն, լինի 39. յորմէ ՚ի բաց հանեալ 31 օրն նոյն ամսոյն, մնայ 8։ Արդ ՚ի նոյն ամի է օրն բարեկենդանի առաջաւորաց՝ ՚ի 8 փետրվարի ամսոյն։

## Յաղագս բուն բարեկենդանի.

Օրն ամսոյն բուն բարեկենդանի գիտ այսպէս. Առ զթիւ գրոց տարւոյն, և տե՛ս՝ թէ որքան է թիւ նր̃, յայնքաներորդի աւուր փետրվարի ամսոյն է բուն բարեկենդանն. Բայց եթէ թիւ գրոց տարւոյն աւելի լինի քան զաւուրս ամսոյն, բարձ զայն ՚ի նմանէ. և որքան յաւելանայ մնայ՝ յայնքաներորդի մարտի ամսոյն է բուն բարեկենդանն։

Օրինակ, ՚ի Թուին Հայոց 1280 գիր տարւոյն է Ս որ է 29. յորմէ ՚ի բաց հանեալ 28 օրն փետրվարի ամսոյն, մնայ 1։



Արդ

Նաև ՚ի նոյն ամի է օրն բարեկենդանին՝ ՚ի 1 մարտի ամսոյն ։

## Յաղագս զատկին ։

Օրն ամսոյն զատկի գտ՛ա այսպէս ։ Կա՛լ հանապազ զմարտի ամսոյն 21, և ՚ի վե՛ր նո՛ր յաւել զԹիւ գրոց տարւոյն ։ և տե՛ս՝ թէ թիւքն աւելի լինին քան զաւուրս ամսոյն, բարձ զայն ՚ի նմանէ ։ և որքան յաւելանայ անտի՝ յայնքանեւորդի ապրիլի ամսոյն է տօն զատկի ։

Օր օրինակ, ՚ի Թուին հայոց 1280 գիր տարւոյն է Ա որ 29 ։ զոր յաւելեալ ՚ի վե՛ր 21 մարտի ամսոյն, լինի 50 ։ և առաւ ՚ի բաց հանեալ 31 օրն նոյն ամսոյն, մնայ 19 ։ Աւրեմն ՚ի նոյն ամի է օրն զատկին՝ ՚ի 19 ապրիլի ամսոյն ։

## Յաղագս Երևման խաչի ։

Օրն ամսոյն երևման խաչի գտ՛ա այսպէս ։ Կա՛լ հանապազ զապրիլի ամսոյն 18, և ՚ի վե՛ր նո՛ր յաւել զԹիւ գրոց տարւոյն ։ և տե՛ս՝ թէ թիւքն աւելի լինին քան զաւուրս ամսոյն, բարձ զայն ՚ի նմանէ ։ և որ

որքան յաւելանայ անտի՝ յայնքանեորդի մայիսի ամսոյն է տօն երևման խաչի։

Օ՛ր օրինակ, ՚ի Թուին հայոց 1280 գիր տարւոյն է Ա որ է 29. զոր յաւելեալ ՚ի վերայ 18 ապրիլի ամսոյն, լինի 47. յորմէ բարձեալ 30 օրն նոյն ամսոյն, մնայ 17. Արդ ՚ի նոյն ամի է օրն երևման խաչի՝ ՚ի 17 մայիսի ամսոյն։

## Յաղագս համբարձման։

Օրն ամսոյն համբարձմանն քի գիտասցես։ Առ՛ միշտ զապրիլի ամսոյն 29, և ՚ի վե՛ր նո՛ր յաւե՛լ զԹիւ գրոյ տարւոյն. և տե՛ս՝ թէ թիւքն աւելի լինին քան զաւուրս ամսոյն, բա՛րձ զայն ՚ի նմանէ. և որքան յաւելանայ անտի՝ յայնքանեորդի մայիսի ամսոյն է համբարձումն քի։

Օ՛ր օրինակ, ՚ի Թուին հայոց 1280 գիր տարւոյն է Ա որ է 29. զոր յաւելեալ ՚ի վե՛ր 29 ապրիլի ամսոյն, լինի 58. յորմէ բարձեալ 30 օրն նոյն ամսոյն, մնայ 28։ Արդ ՚ի նոյն ամի է օրն համբարձմանն քի՝ ՚ի 28 մայիսի ամսոյն։

## Յաղագս հոգեգալստեան։

Օրն ամսոյն հոգեգալստեան գիտասցես։ Առ՛ հանապազ զմայիսի 9, և ՚ի

վր̄ նր̄ յաւել զթիւ գրոյ տարւոյն. և տես՝ թէ թիւքն աւելի լինին քան զաւուրս ամսոյն, բարձ զայն յայնմանէ. և որքան յաւելանայ անտի, յայնքանեբորդի աւուր յունիսի է հոգեգալուստ։

Օ՛ր օրինակ, ՚ի թուին հայոց 1280 գիր տարւոյն է Ա որ է 29. զոր յաւելեալ ՚ի վր̄ 9 մայիսի ամսոյն, լինի 38. յորմէ բարձեալ 31 օրն նոյն ամսոյն, մնայ 7։ Ապա ՚ի նոյն ամի է օրն հոգեգալստեան՝ ՚ի 7 յունիսի ամսոյն։

## Յաղագս բարեկենդանի լուսաւորչի։

Օրն ամսոյն բարեկենդանի լուսաւորչի գիտ այսպէս. Ա՛ռ միշտ զմայիսի ամսոյն 30, և ՚ի վր̄ նորա յաւել զթիւ գրոյ տարւոյն. և տես՝ թէ թիւքն աւելի լինին քան զաւուրս ամսոյն, բարձ զայն ՚ի նմանէ. և որքան յաւելանայ անտի, յայնքանեբորդի աւուր յունիսի է բարեկենդանն լուսաւորչի։

Օ՛ր օրինակ, ՚ի թուին հայոց 1280 գիր տարւոյն է Ա որ է 29. զոր յաւելեալ ՚ի վր̄ 30 մայիսի ամսոյն, լինի 59. յորմէ բարձեալ 31 օրն նոյն ամսոյն, մնայ 28։ Ապա ՚ի նոյն ամի է օրն բարեկենդանի լուսաւորչի՝ ՚ի 28 յունիսի ամսոյն։

## Յաղագս վարդավառի։

Զօրն ամսոյն վարդավառի գիտ այսպէս։ Նախ հանապազ զյունիսի ամսոյն 27, և 'ի վր նր յաւել զթիւ գրոց տարւոյն. և տես՝ թէ թիւքն աւելի լինին քան զաւուրս ամսոյն, բարձ զայն 'ի նմանէ. և որքան յաւելանայ անտի, յայնքանեորրդի աւուր յուլիսի է վարդավառն։

Օր օրինակ, 'ի թուին հայոց 1280 գիր տարւոյն է Ս որ է 29. զոր յաւելեալ 'ի վր 27 յունիսի ամսոյն, լինի 56. յորմէ բարձեալ 30 օրն նոյն ամսոյն, մնայ 26. Արդ 'ի նոյն ամի է օրն վարդավառի՝ 'ի 26 յուլիսի ամսոյն։

## Յաղագս միջոցի շաբաթուց վարդավառի և աստուածածնի։

Միջոց շաբաթուն ուտեաց վարդավառի և ածածնի հանդերձ պահօքն գիտ այդ զհայոցն. որ է 'ի 18 երեսահամարն։

## Յաղագս վերափոխման աստուածածնի։

Զօրն ամսոյն վերափոխման ածածնի գիտ այսպէս։ Նախ զթիւ գրոց տարւոյն,

Եւ ՚ի վեր նորա յաւել 4 · և այս բաժի՛ն անտի 7, 7 · և զմնացեալն յաւել ՚ի վեր 11 օգոստոսի ամսոյն · և տե՛ս՝ թէ որքան լինին թիւքըն, յայնքաներորդի աւուր օգոստոսի է վերափոխումն ածածնի ·

Օր օրինակ, ՚ի թուին հայոց 1280 գիր տարւոյն է Ա որ է 29 · յորոյ վեր յաւելեալ 4, լինի 33 · և սոսա բաժանեալ 7, 7, մնայ 5 · զոր յաւելեալ ՚ի վեր 11 օգոստոսի ամսոյն՝ լինի 16 · Արդ ՚ի նոյն ամի օրն վերափոխման աստուածածնի՝ է ՚ի 16 օգոստոսի ամսոյն ·

Արդ՝ եթէ ոչ գտցի գծեալ գրոյ տարւոյն միաւորելի 4 թուոյն՝ 7 թիւ ՚ի բաց հանելոյ և կամ գտցի միայն 7, թող զայն · և յաւել ՚ի վեր 11 օգոստոսի ամսոյն · Ըստ այսմ կանոնի արա՛ յամի, յորում ոչ գտցի 7 թիւ ՚ի բաց հանելոյ ·

## Յաղագս միջոց շաբաթուց աստուածածնի և տօնի խաչին ·

Օ միջոց շաբաթուն ուտեաց ածածնի և խաչի հանդերձ պահօքն գիտ այսպէս · Կա՛լ զթիւ գրոյ տարւոյն, և բաժի՛ն անտի 7, 7 · և տե՛ս՝ թէ յաւելեալն՝ 4 կամ 5 թիւ լինի, միջոց ուտիքն հանդերձ պա_

հօրն է 5 շաբաթ։ Իսկ եթէ այլ թիւ լինի, յայնժամ է 4 շաբաթ։

Օրինակ, ՚ի թուին հայոց 1280 գիր տարւոյն է Ա որ է 29. յորմէ բարձել 7, 7, մնայ 1 որ է այլ թիւ։ Արդ ՚ի նոյն ամի միջոց ուտիքն ծածանի և սուրբ խաչի հանգերձ պահօքն է 4 շաբաթ։

## Յաղագս սուրբ խաչի։

Զօրն ամսոյն սրբոյ խաչի գիտ այսպէս։ Նախ գիր գրոյ տարւոյն, և ՚ի վերայ նր յաւել 2. և ապա բարձ անտի 7, 7. և զմնացեալն յաւել ՚ի վր 10 սեպտեմբերի ամսոյն. և տես՝ թէ որքան լինին թիւքն, յայն քանեորորդի աւուր նոյն ամսոյն է սբ խաչ։

Օրինակ, ՚ի թուին հայոց 1280 գիր տարւոյն է Ա որ է 29. յորոց վր յաւելեալ 2, լինի 31. և անտի բարձեալ 7, 7, մնայ 3. զոր յաւելեալ ՚ի վր 10 սեպտեմբերի ամսոյն՝ լինի 13։ Արդ ՚ի նոյն ամի օրն սբյ խաչին՝ է ՚ի 13 սեպտեմբերի ամսոյն։

## Յաղագս բարեկենդանի սբ Գէորգայ։

Զօրն ամսոյս բարեկենդանի սբ Գէորգայ գիտ այսպէս։ Նախ գիր գրոյ տար-



ւոյն,

ւոյն , և 'ի վր նորա յաւել 2 . և ապա բարձ-
անի 7 , 7 . և զմնացեալն յաւել 'ի վր 17 սեպտեմբերի ամսոյն . և տես՝ թէ որքան լի-
նին թիւքն , յայնքաներորդի աւուր նոյն ամսոյն է բարեկենդան սբ գէորգայ .

Որպ օրինակ , 'ի թուին հայոց 1280 գիր տարւոյն է Ա որ է 29 . յորոյ վր յա-
ւելեալ 2 , լինի 31 . և ապա բարձեալ 7 , 7 , մնայ 3 . զոր յաւելեալ 'ի վր 17 սեպտեմբե-
րի ամսոյն՝ լինի 20 . Ապա 'ի նոյն ամի օրն բարեկենդանի սուրբ գէորգայ՝ է 'ի 20 սեպտեմբերի ամսոյն .

Յաղագս գիտելոյ շաբաթուց սուրբ գէորգեայ և բարեկենդանի յիսնակաց .

Միջոց շաբաթուն ուտեաց սբ գէոր-
գայ և բարեկենդանի յիսնակաց գիտ այս-
պէս . Առ զթիւ գրոյ տարւոյն , և բարձ-
անի 7 , 7 . և տես՝ թէ յաւելեալն՝ 6 կամ 7 թիւ լինի , միջոց ուտիքն է 8 շաբաթ . Իսկ եթէ այլ թիւ լինի , յայնժամ է 7 շաբաթ .

Որպ օրինակ , 'ի թուին հայոց 1280 գիր տարւոյն է Ա որ է 29 . ապա 'ի բաց հանեալ 7 , 7 , մնայ 1 որ է այլ թիւ . Ուրե-
մն 'ի նոյն ամի միջոց ուտիքն սբ գէորգայ և բարեկենդանի յիսնակաց՝ է 7 շաբաթ .

## Յաղագս գիւտ խաչի.

Օրն ամսոյն գիւտ խաչի գիտ այսպէս. Առ զԹիւ գրոյ տարւոյն, և՚ի վր նր յաւել 2. և ապա բարձ անտի 7, 7. և ըզմնացեալն յաւել ՚ի վր 22 հոկտեմբերի ամսոյն. և տես՝ թէ որքան լինին թիւքն, յայնքանեորրդի աւուր նոյն ամսոյն է գիւտ խաչ.

Ո՛ր օրինակ, ՚ի Թուին Հայոց 1280 գիր տարւոյն է Ա որ է 29. յորոյ վր յաւելեալ 2, լինի 31. և յայսմանէ ՚ի բաց հանեալ 7, 7, մնայ 3. զոր յաւելեալ վր 22 հոկտեմբերի ամսոյն՝ լինի 25. Արդ ՚ի նոյն ամի օրն գիւտ խաչի՝ է ՚ի 25 հոկտեմբերի ամսոյն.

---

## Յաղագս բարեկենդանի յիսնակաց.

Օրն ամսոյն բարեկենդանի յիսնակաց գիտ այսպէս. Առ զԹիւ գրոյ տարւոյն, և բարձ անտի 7, 7. և զմնացեալն յաւել ՚ի վր 14 նոյեմբերի ամսոյն. և տես՝ թէ որքան լինին թիւքն, յայնքանեորրդի աւուր նոյն ամսոյն է բարեկենդանն յիսնակաց.

Ո՛ր օրինակ, ՚ի Թուին Հայոց 1280 գիր տարւն է Ա որ է 29. յորմէ բարձեալ 7, 7, մնայ 1. զոր յաւելեալ ՚ի վր 14 նոյ-



եմբերի

եմբերի ամսոյն՝ լինի 15։ Այս ՚ի նոյն ամի օրն բարեկենդանի յիսնակաց՝ է ՚ի 15 նոյ-եմբերի ամսոյն։

Վաղագս Բարեկենդանի ՚Սբ Յակոբայ։

Օրն ամսոյն բարեկենդանի ՚սբ յակոբայ գիտ այսպէս․ Առ զԹիւ գրոյ տարւոյն, և բարձ անտի 7, 7. և զմնացեալն յաւել ՚ի վր 5 դեկտեմբերի ամսոյն. և ասա՝ թէ որքան լինին Թիւքն, յայնքանորդի աւուր նոյն ամսոյն է բարեկենդան սուրբ յակոբայ.

Օր օրինակ, ՚ի Թուին Հայոց 1280 գիր տարւոյն է Ս որ է 29. յորմէ բարձեալ 7, 7, մնայ 1. զոր յաւելեալ ՚ի վր 5 դեկտեմբերի ամսոյն՝ լինի 6. Ուրեմն ՚ի նոյն ամի օրն բարեկենդանի ՚սբ յակոբայ՝ է ՚ի 6 դեկտեմբերի ամսոյն.

Վաղագս Միջոցի ուտեաց սուրբ Յակոբայ և Ծննդեան Բարեկենդանի.

Միջոց օրն ուտեաց ՚սբ յակոբայ՝ և Ծննդեան և յայտնութեան բարեկենդանի՝ հանդերձ աւուր պահօքն գիտ այսպէս․



Առ

Կա՛լ զԹիւ գրոց տարւոյն , և բա՛րձ անտի 7 , 7 . և որ ինչ յաւելանայ՝ զայն յետա_ դարձ հաշուօք Թուեա՛ 'ի 18 Թուոյն սկսեալ. և ուր դադարի Թիւն այն , այնչափ է միջոց օրն ուտեաց հանդերձ աւուր պահօքն .

Որ օրինակ , 'ի Թուին հայոց 1280 գիր տարւոյն է Ա որ է 29 . յորմէ բար_ ձեալ 7 , 7 , մնայ 1 . զոր առանց յետադարձ հաշուիս առնելոյ՝ դադարի մնացեալն այն 'ի 18 Թիւն . Այս 'ի նոյն ամի՝ միջոյն ու_ տեաց աւուրք յակոբայ և ծննդեան բա_ րեկենդանի հանդերձ աւուր պահօքն՝ են աւուրք 18 .

## Յաղագս բարեկենդանի ծննդեան և յայտ_ նութեանն է.

Ոպատկեր աւուր բարեկենդանի ծը_ նընդեան և յայտնութեան գիտ այսպէս . Կա՛լ զԹիւ գրոց տարւոյն , և բա՛րձ անտի 7 , 7 . և որ ինչ յաւելանայ՝ զայն յետա_ դարձ հաշուօք Թուեա՛ յօրէն երեքշա_ բաԹու սկսեալ . և ուր դադարի Թիւն այն , 'ի նմին աւուր է օրն բարեկենդանի ծննդեան .

Որ օրինակ , 'ի Թուին հայոց 1280



գիր

գիր տարւոյն է Ա որ է 29 · յորմէ բարձեալ 7, 7, մնայ 1 · զոր առանց յետադարձ հաշիւս առնելոյ՝ դադարի մնացեալն այն 'ի նմին տարւոյ ։ Այս 'ի նոյն ամի՝ պատկեր առուրն բարեկենդանի ծննդեան և յայտնութեան քն՝ է յաւուր երեքշաբաթու ։

Դարձեալ՝ յառաջիկայ թուին հայոց 1281 որ է նահանջ, գիր տարւոյն է Յ Մ · բայց ըստ խրատու տարեգրոյն՝ 'ի Մ գրոյն որ է 20, բարձեալ 7, 7, մնայ 6 · զոր յետադարձ հաշուօք թուեալ յօրէն երեքշաբաթու՝ դադարի թիւն այն յաւուր հինգշաբաթու ։ Այս 'ի նոյն ամի օրն բարեկենդանի ծննդեանն՝ է յաւուր հինգշաբաթու ։

—

Ծանիր և զայս, մինչդեռ բարեկենդանն յայտնութեն հանդիպի յաւուր չորեքշաբաթու՝ և կամ ուրբաթու, որ մի յետամուր · զի յաւուրս պահոց ոչ լինի ։

Որ օրինակ, 'ի թուին հայոց 1282 գիր տարւոյն է Լ որ է 12 · յորմէ բարձեալ 7, մնայ 5 · զոր յետադարձ հաշուօք թուեալ յօրէն երեքշաբաթու՝ դադարի թիւն այն յաւուր ուրբաթու ։ Բայց օր մի յետս տուեալ՝ յաւուր հինգշաբաթու լինի բարեկենդան յայտնութեն ։



Ը-

## Յաղագս անշարժ միջոցաց։

Անշարժ միջոցքն ուստեաց շաբաթուց կան և մնան յամ ամի միօրինակ, և ոչ երբեք շարժին 'ի սահմանեալ շաբաթու իւրեանց. և են այսոքիկ։

Նախ՝ զկնի սրբ սարգսի պահոցն՝ 2 շաբաթ կերեալ լինի, և հետևի մեծ պահն։

Երկրորդ՝ զկնի եղիական պահոցն՝ 2 շաբաթ կերեալ լինի, և հետևի սուրբ լուսաւորչի պահն։

Երրորդ՝ զկնի տօնի սուրբ լուսաւորչին՝ 2 շաբաթ կերեալ լինի, և հետևի վարդավառի պահն։

Չորրորդ՝ զկնի սրբ խաչին՝ 1 շաբաթ կերեալ լինի, և հետևի սրբ գէորգայ պահն։

Հինգերորդ՝ զկնի յիսնակին պահոցն՝ 2 շաբաթ կերեալ լինի, և հետևի սուրբ յակոբայ պահն։

Եւ այսոքիկ բաւ լիցին առ ասացեալսն 'ի ձեռն թուականաց և հաշուից։

Արդ՝ յայտնիկ միջոցի շարժականք նախ զաղիւսակ մշտնջենաւոր մեծի շրջանի, որ է 532 ամն. զի որոց ծանր և դժուարին թուի տոմարական աշխատանօք թուման և



հաշ

հաշուի գտանել զկիրակագիրս՝ զեօթներեակս՝ և զտարեգիրս, կարէն անդ հեշտ գտանել զնոսա՝ գիտելով միայն զամն տն կամ զԹուականն Հայոց։

Իսկ աստ դնեմք տօմարական աղիւսակ մշտնջենաւոր․ որ է այլ համառօտ և դիւրին միջոց առանց հաշուի՝ 'ի ձեռն տարեգրոյն գտանել անսխալ զտօն զատկի, և զայլ ամ շարժական տօնս, զորոց մինչև ցայս վայր գրեցաք։

## ԽՐԱՏ ՎԱՍՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐ ՄԾԻ ՇՐՋԱՆԻՍ։

Աղիւսակաձև շրջանդ որ 'ի յերկուս զոյգ երեսս թղթոց է կարգեալ, մշտնջենաւոր մեծ շրջան մի է պարունակող 532 ամաց․ որ 'ի ձեռն ամի տն կամ Թուականի Հայոց՝ անսխալ ցուցանէ ըզտարեգիրն և զեօթներեակն և զկիրակագիրն հռովմայեցւոց․ զի 'ի լրանալ 532 ամացն, դարձեալ սկսանի 'ի սկզբէն՝ փոխելով միայն զԹուականն։ Նոր 'ի սկզբան առաջին կարգին եդեալ է ամն տն, և յերկրորդի կարգին Թուականն Հայոց։ Իսկ 'ի



գլուխ

գլուխ ամսականին եդեալ երկաթագիրքն՝ են վերագիրք հռովմայեցւոց · և 'ի մէջ եդեալ նոտր գիրքն՝ են եօթներեակք · և 'ի ներքոյ նոյին բոլորագիրքն՝ են տարեգիրք·

Արդ տես՝ զի սկսանի ամսականդ 'ի 1831 ամի տեառն՝ և 'ի ՌՄՁ թուականին հայոց · որք կան 'ի սկզբան ամսականին։ Աստի յայսոցիկ թուոց կալեալ՝ մինչ ուղղակի մտանես 'ի հանդիպակաց յառաջին տումին, գտանես զտարեգիրն նոյն տարւոյն՝ (ա) · և անդ 'ի վր նր եդեալ զեօթներեակն նոյն տարւոյն՝ (դ) · և 'ի գլուխս նոյին եդեալ զվերագիրն նոյն տարւոյն՝ (ԻԵ) ·

Նոյց մինչև հասանիս 'ի 1832 ամի տն՝ կամ 'ի ՌՄՁԱ թուականի հայոց, (որք զօրութ կարգի հաշուի գնին) · մնաւ յերկրորդ տումին առաջին տողին · յորում գտանես զտարեգիրն նոյն տարւոյն՝ (յմ) · և անդ 'ի վր նր զեօթներեակն՝ (եղ) · և 'ի գլուխս նոյին զվերագիրն՝ (Ը) · Եւ այսու կարգաւ՝ որքան անցի թուականն, այնքան թուով երթ յառաջ 'ի նոյն տողն · ուր գտանես զտարեգիր տարւոյն, ընդ նմին և զեօթներեակն, և 'ի վեր անդր ուղղակի զվերագիրն՝ ընդ իւրաքանչիւր ամսոյն։

Եւ մինչ այսպէս հասանիս 'ի վերջին տումին առաջին տողին, յորում ամի տն



մին

լինի 1849 , և Թուականն Հայոց ՌՄՂԸ ·
անդ գտանես զտարեգիրն նոյն ամին՝ (Խ) ·
և ՚ի վերայ նորա զեօթներեակն՝ (Գ) · և ՚ի
գլուխս նոցին զվերադիրն՝ (ԺԶ) ։
Արդ ՚ի վերջանալ նոյն ամին , վերջանայ և
առաջին տողն ՚ի 19 տարին ։

Յայնժամ պարտիս գտանել ՚ի սկիզբն
երկրորդ տողին , յորում գտանես զամն
տն 1850 , և զԹուականն Հայոց ՌՄՂԹ ·
և ՚ի համանգիպակաց յառաջին տուփն զտա_
րեգիրն նոյն ամին՝ (Ց) · և ՚ի վր նր զեօթ
ներեակն՝ (Է) · և ՚ի վեր անդր ուղղակի
զվերադիրն՝ (ԻԷ) ։ Եւ զնոյն խորան ա_
ռաջնոյ տողին՝ պահեա՛ և յայսմ երկրորդ՝
և յերրորդ՝ և ՚ի չորրորդ և յայլ ամ տողսն
մինչև ՚ի վերջն ։

Եւ այսպէս յորժամ հասանիս ՚ի չոր_
րորդ երեսի վերջին տողն , յորում է ամն
տն 2344 , և Թուականն Հայոց ՌՉՂԳ ·
և ՚ի նոցին վերջին տուփն՝ ուր է տարե_
գիրն՝ (Հ) , և ՚ի վր նր եօթներեակն՝ (Կ) ,
և ՚ի վեր անդր ուղղակի վերադիրն՝ (ԺԶ) ,
յորում ամն տն լինի 2362 , և Թուա_
կանն Հայոց ՌՊԺԱ · յայնժամ լրա_
նայ մեծ շրջանն հինգհարիւրեկին , որ՝
532 ամացն ։ Ո ՚ի չորս երեսս աղիւսակիդ
ունիս 28 տողս · և իւրաքանչիւր տող ունի
մին

մինչև 'ի 19 տարի՝ ընդ Թուոյ 19 վերադրացն հոլովմանցելոյ։ Եւ 19 անգամ 28, կամ 28 անգամ 19, է՛ 532. որ է մեծ շրջան մի։

Վասն այսորիկ 'ի լրանալ միոյ մեծի շըրջանի՝ հարկաւորի նորոգ գտանել 'ի նոյն առաջին սկզբան տողն, և սկսանիլ վերստին. յորում ամն տեառն լինի 2363, և Թուականն Հայոց ՌՊԺԲ, և 'ի հանդիպակաց յառաջին տուփն եդեալ տարեգիրն՝ (ա), և 'ի մէջ նորա եօԹերակն՝ (դ), և 'ի գլուխս աղիւսակին վերադիրն՝ (ԻԷ), ըստ առաջին կարգին. զի միայն զԹուականսն պարտիս փոխել, և նման առաջնոյն կարգաւ ընԹանալ։

Զայս մշտնջենաւոր մեծ շրջան յայն սակս եդաք ատամանօք, զի առ ձեռն ունելով զԹուական տարւոյն, նոյնու գտանիցես զգիր տարւոյն. և ապա յերկրորդ հատորի գտեալ զխորան նոյն գրոյն՝ փորեսցես անսխալ և անվրէպ ընդ ցուցման նորին։

Եւ Թէպէտ եօԹներեակքն ոչ էին յոյժ հարկաւոր աստ, բայց եդաք մի յարմար բերելոյ զշրջանն։

| [illegible] | [illegible] | ՎԵՐԱԴԻՐ · ԵՕԹՆԵՐԵԱՆ· Գիր տարւոյ· | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ԻԸ | Ը | ԺԶ | Լ | ԺԱ | ԻԲ | Գ | ԺԴ |
| 1831 | ՌՄՁ | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 1850 | ՌՄՂԹ | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 1869 | ՌՅԺԸ | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 1888 | ՌՅԼԷ | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 1907 | ՌՅԾԶ | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 1926 | ՌՅՀԵ | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 1945 | ՌՅՂԴ | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 1964 | ՌՆԺԳ | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 1983 | ՌՆԼԲ | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 2002 | ՌՆԾԱ | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 2021 | ՌՆՀ | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 2040 | ՌՆՁԹ | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 2059 | ՌՇԸ | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 2078 | ՌՇԻԷ | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |

## ՎԵՐԸԴԻՐ · Ե[illegible] · Գիր տառից ·

| ԻԵ | Զ | ԺԵ | ԻԸ | Թ | ԻԱ | Բ | ԺԴ | ԻԴ | Ե | ԺԶ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ե | շո | թ | ո | յ | ղե | չ | ճ | ր | ոյ | ի |
| ր | ն | ծի | ց | գ | մ | վո | ծ | գ | պ | իմ |
| գ | պ | ի | ով | ն | կ | ջ | ձգ | գ | չ | կ |
| գգ | չ | կ | ա | մձ | ի | ո | հ | րէ | ջ | լ |
| ա | մմ | լ | ր | ճ | թր | ա | խ | ե | շո | հ |
| ե | չ | մթ | ո | յ | գ | ոպ | ճ | ր | ն | ծի |
| ր | ն | ծ | ոց | գ | մ | վ | կծ | գ | պ | ի |
| եգ | պ | ի | ո | շն | կ | ջ | ձ | գգ | չ | կ |
| գ | ոչ | կ | ա | մ | մի | ո | հ | ր | ոջ | լ |
| ա | յ | իւ | ր | ճ | թ | աա | խ | ե | չ | ձհ |
| ե | չ | մ | վո | յ | գ | պ | գճ | ր | ն | ծ |
| գր | ն | ծ | ւ | ձգ | մ | վ | կ | եգ | պ | ի |
| ե | ջպ | ի | ո | հ | րե | ջ | ձ | գ | ոչ | կ |
| գ | ո | հկ | ա | մ | ե | շո | հ | ր | յ | իւ |

| | | ՎԵՐԱԴԻՐ · ԵՕԹՆԵՒՏԱՍՆ. Գիր տառուց ։ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ԻԵ | Ը | ԺԹ | Լ | ԺԱ | ԻԲ | Գ | ԺԻ |
| 2097 | ուշխզ | ր | ո | թ | ոռ | մ | ե | շ | ձհ |
| 2116 | ուշկե | վ | յ | խ | պ | պծ | թ | ս | ծ |
| 2135 | ուշձզ | ւ | ձգ | ժ | վ | կ | եգ | պ | գ |
| 2154 | ուոզ | տ | շ | րե | ջ | ձ | գ | ոշ | կ |
| 2173 | ուոխը | փ | մ | լ | րա | հ | ը | ռ | խլ |
| 2192 | ուոխա | ցր | ո | թ | ս | յմ | ե | շ | ձ |
| 2211 | ուոկ | վ | նյ | խ | պ | գ | մթ | ս | ծ |
| 2230 | ուոհթ | ւ | ձ | խժ | վ | կ | ե | ջպ | գ |
| 2249 | ուոզը | տ | շ | ը | ոջ | ձ | գ | ո | հկ |
| 2268 | ուշժե | քփ | մ | լ | ր | ձհ | ը | ռ | խ |
| 2287 | ուշլգ | ց | ցր | թ | ս | յ | զե | շ | ձ |
| 2306 | ուշծե | վ | ն | ծխ | պ | գ | ժ | վս | ծ |
| 2325 | ուշհգ | ւ | ձ | ի | տվ | կ | ե | ջ | ձգ |
| 2344 | ուշգզ | րա | շ | ը | ռ | մձ | գ | ո | հ |

## ՎԵՐԱԳԻՐ · [illegible] · Գիր [illegible]:

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ա | յ | խ | ցր | ձ | թ | ո | ծխ | կ | չ | ժ |
| գե | չ | ժ | վ | նյ | գ | պ | գ | ջր | ն | ծ |
| գ | շն | ծ | ւ | ճ | խժ | Վ | կ | կ | ջպ | ի |
| կ | մ | լի | ա | հ | ը | ալ | ճ | գ | ո | հկ |
| գ | ո | թ | ու | մ | կ | չ | ճհ | ը | յ | խ |
| ըա | յ | խ | ց | գճ | թ | ո | ծ | գե | չ | ժ |
| գ | պչ | ժ | վ | ն | կգ | պ | գ | գ | շն | ծ |
| գ | շ | կծ | ւ | ճ | ի | ավ | կ | կ | ջ | լի |
| կ | մ | լ | ըա | հ | ը | ռ | մճ | գ | ո | հ |
| կգ | ո | թ | ս | յմ | կ | չ | ճ | թը | յ | խ |
| ր | նյ | խ | ց | գ | ժթ | ո | ծ | գ | պչ | ժ |
| գ | պ | խժ | վ | ն | կ | ջպ | գ | գ | շ | կծ |
| գ | շ | կ | փւ | ճ | ի | ո | հկ | կ | ջ | լ |
| ըկ | մ | լ | ր | ճհ | ը | ռ | խ | կգ | ո | հ |

| Գիր տարւոյ | Օր Յայտնութեան | Մինչեւ առաջ․ օր | Առաջաւորաց Բարէ՛ | Բուն Բարեկենդան | Ս. ԶԱՏԻԿ | Երեւման Խաչ | Համբարձումն | Հոգեգալուստ | ՍԲ Կաթողիկէ Բար՛ | Վարդավառ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | յնվր | փետ | մարտ | ապր | ապր | մայս | մայս | յնիս |
| Ա | դշբ | զ | ժա | ա | իբ | ժթ | լ | ժ | լա | իը |
| Բ | եշբ | է | ժբ | բ | իգ | ի | մա ա | ժա | յն ա | իթ |
| Գ | ուր | ը | ժգ | գ | իդ | իա | բ | ժբ | բ | լ |
| Դ | շբթ | թ | ժդ | դ | իե | իբ | գ | ժգ | գ | յլ ա |
| Ե | կիր | ժ | ժե | ե | իզ | իգ | դ | ժդ | դ | բ |
| Զ | բշբ | ժա | ժզ | զ | իէ | իդ | ե | ժե | ե | գ |
| Է | գշբ | ժբ | ժէ | է | իը | իե | զ | ժզ | զ | դ |
| Ը | դշբ | ժգ | ժը | ը | իթ | իզ | է | ժէ | է | ե |
| Թ | եշբ | ժդ | ժթ | թ | լ | իէ | ը | ժը | ը | զ |
| Ժ | ուր | ժե | ի | ժ | լա | իը | թ | ժթ | թ | է |
| Ի | շբթ | ժզ | իա | ժա | ապ ա | իթ | ժ | ի | ժ | ը |
| Լ | կիր | ժէ | իբ | ժբ | բ | լ | ժա | իա | ժա | թ |

| Սկզբոյ շաբթուն պահոցն. | Լապառաժամանակին. | Սկզբոյ շաբթուն պահոցն. | Սուրբ խաչ. | Սբ Վարդանանց բար". | Սկզբոյ ամսոյն շաբթուն. | Վարագայ խաչ. | Յիսնակաց բարեկենդն". | Սբ Յակոբայ բարեկ". | Սկզբոյ ամսոյն, օր. | Օր բարեկենդն" յայտ". |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | օգս | | ամս | ամս | | Հոկ | Նոյե | դեկ | | |
| է | մդ | գ | մդ | ի | է | իէ | մէ | դ | մը | Դշբ |
| է | մէ | գ | մգ | իա | է | իգ | մգ | է | մէ | Եշբ |
| է | մը | գ | մէ | իբ | է | իէ | մէ | ը | մգ | Ուր |
| գ | մը | ե | մգ | իգ | է | ին | մը | թ | մե | Շբթ |
| գ | մգ | ե | մէ | իդ | է | իթ | մթ | ժ | մդ | Կիր |
| գ | մդ | գ | մա | մը | ը | իգ | ի | մա | մգ | Բշբ |
| գ | մե | գ | մբ | մթ | ը | իդ | իա | մբ | մբ | Գշբ |
| գ | մգ | գ | մգ | ի | է | իէ | մե | դ | մը | Դշբ |
| գ | մէ | գ | մդ | իա | է | իգ | մգ | է | մէ | Եշբ |
| գ | մը | գ | մե | իբ | է | իէ | մէ | ը | մդ | Ուր |
| ե | մը | ե | մգ | իգ | է | ին | մը | թ | մե | Շբթ |
| ե | մդ | ե | մէ | իդ | է | իթ | մթ | ժ | մդ | Կիր |

| Գիր տարոյ . | Օր Յայտնութեան . | Աւելոց ամսէ , օր . | Առաջաւորաց բարե″ . | Բուն բարեկենդան . | Զ. Ա. Տ. Ի. Կ. . | Երեւման խաչ . | Համբարձման . | Հոգեգալուստ . | ԱԷ Վարդավառ բար″ . | Ս. Աստուածածին . |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | յունվ | փետր | ապր | մայս | մայս | մայս | յունս | յունս |
| Խ | եշբ | ժը | իգ | ժգ | գ | ա | ժը | իը | ժը | ժ |
| Ծ | գշբ | ժթ | իգ | ժգ | դ | ը | ժգ | իգ | ժգ | ժա |
| Կ | դշբ | ի | իե | ժե | ե | գ | ժգ | իգ | ժգ | ժը |
| Հ | բշբ | իա | իզ | ժգ | գ | գ | ժե | իե | ժե | ժգ |
| Ձ | կիր | իը | իե | ժե | ե | ե | ժգ | իգ | ժգ | ժգ |
| Ղ | շբթ | իգ | իը | ժը | ը | գ | ժե | իե | ժե | ժե |
| Ճ | ուր | իգ | իթ | ժթ | թ | ե | ժը | իը | ժը | ժգ |
| Մ | եշբ | իե | ւ | ի | ժ | ը | ժթ | իթ | ժթ | ժե |
| Յ | գշբ | իգ | ըա | իա | ժա | թ | ի | ւ | ի | ժը |
| Ն | դշբ | իե | դ ա | իը | ժը | ժ | իա | ըա | իա | ժթ |
| Շ | բշբ | իը | ը | իգ | ժգ | ժա | իը | դ ա | իը | ի |
| Ո | կիր | իթ | գ | իգ | ժգ | ժը | իգ | ը | իգ | իա |

| Միջոց շաբթու պահօք. | Աստուածածին. | Միջոց շաբթու պահօք. | Սուրբ Խաչ. | Ս̄բ Գէորգայ բար". | Միջոց առաջին շաբ. | Վարագ խաչ. | Յինանց բարեկենդան". | Ս̄բ Յակոբայ բարեկ". | Միջոց առաջի, օր. | Օր բարեկենդան" յայտ". |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | օգս | | սեպ | սեպ | | հոկ | նոյե | դեկ | | |
| ե | ժգ | գ | ժա | ժը | ը | իգ | ի | ժա | ժգ | Բշբ |
| ե | ժե | գ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | Գշբ |
| ե | ժզ | գ | ժգ | ի | է | իե | ժե | զ | ժբ | Դշբ |
| ե | ժէ | գ | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | Եշբ |
| ե | ժը | գ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | Ուրբ |
| գ | ժբ | ե | ժզ | իգ | է | իը | ժը | թ | ժե | Շբթ |
| գ | ժգ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | Կիր |
| գ | ժդ | գ | ժա | ժը | ը | իգ | ի | ժա | ժգ | Բշբ |
| գ | ժե | գ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | Գշբ |
| գ | ժզ | գ | ժգ | ի | է | իե | ժե | զ | ժբ | Դշբ |
| գ | ժէ | գ | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | Եշբ |
| գ | ժը | գ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | Ուրբ |

| Գիրք տարւոյ | Որ Յայտնութեան | Մինչեւ ամսէ, օր | Բ. առաջաւորաց բարէ" | Բուն բարեկենդանն | Օ. Շ. Տ. Ի. Կ | Լուսնին բոլ | Համբարձման | Հոգեգալուստ | Սէ Վարդավառ բարէ" | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | փետ | փետ | մարտ | մայս | մայս | յուն | յուն | յուլ. |
| Զ | շՌՌ | ու | դ | իե | ժե | ժդ | իդ | դ | իդ | իբ |
| Գ | ոոր | ուա | ե | իզ | ժզ | ժդ | իե | դ | իե | իդ |
| Ջ | եշՌ | ուբ | զ | իէ | ժէ | ժէ | իզ | ե | իզ | իդ |
| Ռ | էշՌ | ուդ | է | իբ | ժբ | ժդ | իէ | զ | իէ | իե |
| Ս | ԹշՌ | ուդ | ը | ի ա̄ | ժԹ | ժէ | իբ | է | իբ | իզ |
| Վ | ՌշՌ | ուե | Թ | բ | ի | ժբ | իԹ | բ | իԹ | իէ |
| Տ | ՅՌՌ | ուզ | ժ | դ | իա | ժԹ | ու | Թ | ու | իբ |
| Ր | շՌՌ | ուէ | ժա | դ | իբ | ի | ուա | ժ | լա ա̄ | իԹ |
| Ց | ոոր | ուբ | ժբ | ե | իդ | իա | յա ա̄ | ժա | բ | ու |
| Ւ | եշՌ | ուԹ | ժդ | զ | իդ | իբ | բ | ժբ | դ | ուա |
| Փ | էշՌ | ի | ժդ | է | իե | իդ | դ | ժդ | դ | օգ ա̄ |
| Ք | ԹշՌ | իա | ժե | Զինաչելուն 'ի փիլուն տես։ | | | | | | |

| Մինչև շաբթ պահոց | Լուսնական աճին | Մինչև շաբթ պահոց | Սուրբ Խաչ | Մէ Պետրոսի բար | Մինչև առաջին շաբթ | Գիւտ Խաչ | Յինանց կիրակէին | Մէ Յովհաննու բարէ | Մինչև առաջին օր | Օր բարեկենդանի յայտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | [illegible] | | մրտ | մրտ | | ապր | [illegible] | [illegible] | | |
| դ | ժը | է | ժզ | իզ | է | իը | ժը | թ | ժե | շբբ |
| դ | ժզ | է | ժէ | իզ | է | իթ | ժթ | ժ | ժզ | ոոբ |
| դ | ժզ | զ | ժա | ժը | ը | իզ | ի | ժա | ժզ | բշբ |
| դ | ժե | զ | ժբ | ժթ | ը | իզ | իա | ժբ | ժբ | գշբ |
| դ | ժզ | զ | ժզ | ի | է | իե | ժե | զ | ժը | դշբ |
| դ | ժէ | զ | ժզ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | եշբ |
| դ | ժը | զ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | ուր |
| բ | ժը | է | ժզ | իզ | է | իը | ժը | թ | ժե | շբբ |
| բ | ժզ | է | ժէ | իզ | է | իթ | ժթ | ժ | ժզ | ոոբ |
| բ | ժզ | զ | ժա | ժը | ը | իզ | ի | ժա | ժզ | բշբ |
| բ | ժե | զ | ժբ | ժթ | ը | իզ | իա | ժբ | ժբ | գշբ |

## Խրատ փոփոխական աղիւսակիս ։

Աշանջենաւոր աղիւսակդ՝ որ յերկիս առաջադիր զոյգ երեսս թղթոց պարունակեալ է, այսպէս 'ի կիր արկցես ։ Կամ զամս տն՝ կամ զթուականն հայոց յորում ամի և իցես, յաղիւսականաձև շրջանէ առնի՝ որ յառաջ քան զայս յերկուս զոյգ երեսս թղթոց եդեալ է ․ և գտեալ 'ի կարգի այնր թուականի զտառագիրն նոյն տարւոյն ․ և անտի եկեալ 'ի սոյն աղիւսակ՝ գտցես զնոյն տառագիրն, որ ա կարգի այբուբենից եդեալ կայ գլխագրով ․ և 'ի շարս նորին գրեալ գտցես յառաջին տունն զօրն յայտնութեան, յերկրորդումն՝ զմիջոց ուտիքն ․ և այսու կարգաւ յառաջ գնասցես մինչև ցօր բարեկենդանի յայտնութեան ։

Օ՛ր օրինակ ․ յամի տեառն 1831, և 'ի թուին հայոց ՌՄՁ, գիր տարւոյն է Ա ․ զոր գտեալ յերրորդում աղիւսակի՝ 'ի նմին կարգի եդեալ տուփն առ ձեռն պատրաստ գտանես զօրն յայտնութեան՝ որ է (գշբ), և զմիջոց ուտիքն՝ որ է (ժդ) օր, և զառաջաւորաց բարեկենդանն՝ որ է 'ի փետրվարի (ը), և զայլն ամ ա վերոյգրեալ խրատու մինչև ցօր բարեկենդանի յայտնութեան ։



Եօթն են աստեղք մոլորա կան ·
կենդանակերպք երկոտա սան ։
Յորոց հասին յամենեն սեան ·
դէպադէս արարք զարմանա զան ։

# ՇՐՋԱՆ
# ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐ
## ՏԱՐԵԿԱՆ ԳՈՒՇԱԿՄԱՆՑ·

---

### Նախերգութիւն:

Գիտելի է եղբայր բանասէր՝ զի յայսմ աստեղաբաշխական գիտութեն այլ և այլ աստեղաց անուանք որին· քանզի են՝ որք մոլորականք ասին, և են՝ որք անմոլորք առձայնին:

Մոլորականք աստեղք ասին, որք յոյժ փոփոխին, և մոլորին ՚ի սեպհական տեղեացն· երբեմն դէպ ՚ի հիւսիս, և երբեմն դէպ ՚ի հարաւ· և են եօթն այսոքիկ, որք Արաբի և Հայոց լեզուաւ հետևեալքն:

| | | |
|---|---|---|
| Զօհալ · | ♄ Երևակ · | արճիճ· |
| Մուշթարի · | ♃ Լուսնթագ · | կլայեկ· |
| Մառէխ · | ♂ Հրատ · | երկաթ· |
| Շէմս · | ☉ Արեգակն · | ոսկի· |
| Զօհրէ · | ♀ Լուսաբեր · | պղինձ· |
| Ոտարիտ · | ☿ Փայլածու · | սնդիկ· |
| Քամէր · | ☽ Լուսին · | արծաթ: |



Եօթն

Եօթն այսոքիկ մոլորականքս ունին իւր_
եանց ընտանական աթոռս, և տունս. ուր
ասին գոլ հզօրագոյնս, և իշխանաւորս.

Եւ տունքն եւթն մոլորակաց են այսոքիկ.

Արեգական տունն է առիւծն. Լուս_
նոյն՝ խեցգետինն. Երևակին՝ ջրհոսն, և
այծեղջիւրն. Լուսնթագին՝ աղեղնա_
ւորն, և ձուկն. Հրատին՝ խոյն, և կա_
րիճն. Լուսաբերին՝ կշիռն, և ցուլն.
Փայլածուին՝ երկաւորն, և կոյսն.

Իսկ աթոռք կամ բարձրութիւնք մոլորա_
կանացն են. Խոյն՝ արեգական. Ցուլն՝
լուսնոյն. Կշիռն՝ երևակին. Խեցգետինն՝
լուսնթագին. Այծեղջիւրն՝ հրատին.
Ձուկն՝ լուսաբերին. Կոյսն՝ փայլածուին.

—

Երևակն է արտաքագոյն. յոյժ ցուրտ,
և միջակօրէն չոր. Եւ պետ այծեղջեր, ուր
իսկապէս իշխէ. թագաւորէ ՚ի կշիռն.
Տիրէ հողայնոց, փայծեղաց, ոսկերաց,
ծերուն՟, աշնան եղանակի, թանձր իրաց,
թթուայնոց, և ցրտայնոց. Եւ բարեկամ
լուսնթագին, արեգական, և լուսնոյն. և
թշնամի հրատին, և լուսաբերին.

Եթէ միայն իշխէ, պատճառէ զդ-ժնեայ



ցըր

ցրտուն, թանձրուն ամպոց. ուստի մառա_
խուղ, ձիւն, հողմահոսութին, ալեկոծուն
ծովու, մեռս մրգոց, ծնունդ զեռնոց,
սողնոց, որդանց, և գորտանց: Յամն 30
լնու զընթաց իւր:

Լուսնթագն՝ որև Ալյաշեան ասի, է
պայծառ, բարեխառն, միջակ խոնաւ, և
ջերմ. մանաւանդապես իշխէ, երբ է յա_
զեղնուր կենդանակերպի: Նիւթ ար_
եան, շնչոյ, երիտասարդութե, թռչոց, կո_
զից, անուշուն, և կարմրուն. 'ի հնդետա
սան աստիճանի խեցգետնին ունի զիւր
բարձրութին: Ի բարեկամ երեւակին, արե
գական, լուսաբերին, և լուսնոյն. թշնամի
է հրատին:

Եթէ միայն իցէ տանուտէր տարւոյն,
նշանակէ զառողջութն գարնան, շահաւէտ
մրգս, յանդորրութն ծովու, և յաջողնա_
ւարկութիւն: Շրջէ զընթաց իւր իբր
զամս 12:

Հրատն է կարմրաշող, ջերմ, և չոր. իշ
խէ մանաւանդ՝ երբ է 'ի կարիճ կենդանա
կերպի. ունի զբարձրագահութիւն իւր
'ի 28 աստիճանի ցլոյն: Ի բարեկամ լու_
սաբերին միայն:

Երբ տիրէ որպէս տանուտէր տարւոյ,
պատճառէ սաստիկ ջերմունս և չորութն՝ ջերմ

քամիս, փայլակունս, կայծակս, կատաղութիւն ալեաց, ցամաքութիւն ջրոց, և զնուազութիւն պտղոց, կամ վասն խորշակահարութեան՝ կամ չորութեան և ցամաքութեան՝ և կամ սակս մարախահարութեան: Կատարէ զընթաց իւր իբր զամս 2.

Արեգակն՝ որև Փիեբոս ասի, ունի ջերմութիւն, և չորութիւն. բարեխառն, ցերեկեայ, արական, և բարեբախտ բնութիւն.

Երբ ունի զվեցանկիւնի, և զեռանկիւնի հայեցուած ընդ լուսնոյն՝ է բարեբախտութիւն. իսկ երբ հայի ՚ի լուսինն Սուղաբէլոյ, Մուրբէլ, կամ քառանկիւնի հայեցուածով, եւ՝ ծննդեանն, նշան է վատաբախտութեան.

Երբ է ՚ի խոյն, ՚ի ցուլն, և յերկուորն. յաւելու զառողջութիւն, և զջերմութիւն. տաստուատ է գարունն.

Երբ է ՚ի խեցգետինն, յառիւծն, և ՚ի կոյսն. պատճառէ զջերմութիւն, և զչորութիւն. ուստի է ամառն.

Երբ շրջի ՚ի կշիռ, ՚ի կարիճ, և յաղեղնաւոր կենդանակերպսն. պատճառէ զչորութիւն, և զցրտութիւն. և լինի աշունն.

Իսկ երբ է յայծեղջիւրն, ՚ի ջրհոսն, և ՚ի ձուկն. յաւելու զցրտութիւն, և զխոնաւութիւն. ուստի յառաջանայ ձմեռն. Աշխե



ար_

արիութիւն , սրտի , կենդանութիւն , ազգ ազգաց , ընջերականաց , և մեղրագունաց ։

Երբ է ՚ի 19 աստիճանի խոյին , ասի լինիլ ՚ի գահոյսի իւրում ։ Բարեկամ է լուսնթագին , և լուսաբերին . Թշնամի հրատին , փայլածուին , և լուսնոյն ։ Ունի կենդանագործ բնութիւն . և երբ բարձրանայ յերկնամիջակ կէտն՝ բնաւ արարածք զուարթանան , կայտառին , ընծիւղին , շառաւիղին , բուսանին , և բողբոջին ։

Իսկ երբ ՚ի սուզական կէտն ցածնայ՝ բնաւք թալկանան , թարշամին , թառամին , նքթին , և նուաղին ։ Ուղղիչ և լուսաւորիչ է երկնից , ժամանակաց , և տարեաց ։ Է մեծագոյն քան զերկիր՝ իբր 166 անգամ . Թանձրութիւն գնտի արեգական ունի մղոն՝ իբր 339202 ։ Շրջան , և պարասութիւն արեգական պարունակէ իբր մղոն՝ 27361875 ։ Հեռաց կայ յերկրէ իբր մղոն՝ 4353025 ։ Յիւրաքանչիւր ամ կատարէ զընթացս իւր ։

Լուսաբերն՝ որ և Արուսեակ ձայնի , է ցուրտ , և գէճ բարեխառնօրէն ։ Իշխէ սերմանց , ցանկութեանց , համոց , հոտոց , և շոշափմանց , կանացութեան , և ազխատակութեան . Թշնամի է միայն երևակին . է փոքրագոյն քան զերկիր ։ Կատարէ զընթացս իւր ընդ արե



գա—

գական․ յորմէ ոչ հեռանայ առաւել քան 44 կամ 60 աստիճանս ։

Փայլածուն է երկարնակ․ այսինքն՝ ը̄ բարեաց է բարի, և ը̄ վատթարացն՝ վատթար․ ընդ բաջաբախտից է բարեբախտ, և ընդ վատաբախտիցն՝ թշուառաբախտ ։

Երբ է յարևելս՝ ջեռուցանէ․ երբ է յարևմուտս՝ ցրտացուցանէ ։ Ինչպէս փոփոխմանց օդոյն, և մարմնոյն․ եւս՝ յիշողութե̄, երևակայութե̄, լեզուի, կոկորդի, և ջլից ։ Է բարեկամ երևակին, լուսնթագին, և լուսաբերին․ թշնամի է արեգական, և լուսնոյն ։

Եթէ միայն իցէ՝ պատճառէ յանկս զրոտս, զփայլակս, և զկայծակս ։ Ի ծագիլ փայլածուին՝ առատանան ջուրք, իսկ յաներևութանալն նուազին ։ Կատարէ զընթաց իւր ընդ լուսաբերին․ ոչ հեռանայ յարեգականէն առաւել քան զերեսուն աստիճանս ։

Լուսինն է ցուրտ, և խոնաւ․ ջրային, գիշերային, իգական, և չարաչար ։ Ինչպէս մաղասին, ուղղոյ, կղակին, ձախ աչացն, փոքրափորին, և այլ տամուկ և ցուրտ իրաց ։

Յերրորդ աստիճանի ցյոն ունի զիւր դաշն ։ Է բարեկամ երևակին, լուսաբերին, և լուսնթագին․ իսկ հրատին, փայլածուին, և արեգական՝ է թշնամի ։ Ի յա_

ծիլ լուսնոյն մինչև ցհնգետասանն՝ աճին հիւթք ՚ի ծառս, ՚ի բոյսս, և ՚ի կենդանիս. մեծանայ, ուռի, և փքանայ ծովն. և ՚ի նուազելն լուսնոյն՝ նուազին ուռձացեալք. է հեռի յերկրէ իբր մղոնս՝ 229687. Շուրջընթաց իւր իբր 27 օրս, և 7 ժամս:

## Յաղագս անմոլար աստեղաց.

Են և անմոլար աստեղք, որք ոչ վրիպին, ոչ մոլորին, և ոչ թիւրին ՚ի սեպհական շաւղացն որպէս մոլորականքն. այլ միշտ զմի, և զնոյն ճանապարհն ընթանալով կատարեն զընթացս իւրեանց. Յայսցանէ երկոտասանքն են գլխաւորք, և ասին կենդանակերպք. որոց անուանքն երկ լեզուաւ ենթագրին.

| | | | |
|---|---|---|---|
| Խոյ , | Համել . | ♈ | Գլուխ. |
| Ցուլ , | Սեւր . | ♉ | Պարանոց. |
| Երկաւոր , | Ջեվզա . | ♊ | Բազուկ , ուս. |
| Խեցգետին , | Սերեթան . | ♋ | Կուրծ , ստամոքս |
| Առիւծ , | Էսետ . | ♌ | Սիրտ , փայծեղ. |
| Կոյս , | Սիւմպիւլէ . | ♍ | Փորքրակող. |
| Կշիռ , | Միզան . | ♎ | Երիկամունք. |
| Կարիճ , | Աքրեպ . | ♏ | Ամորձիք. |
| Աղեղնաւոր , | Կավս . | ♐ | Սրունքն. |

| | | | |
|---|---|---|---|
| Այծեղջիւր , | Ճէտի . | ♑ | Ծունկք . |
| Ջրհոս , | Դէլվ . | ♒ | Ոլոքն . |
| Ձուկն , | Հութ . | ♓ | Ոտքն . |

---

Խոյն է ջերմ, և չոր. հրային, մաղձոտ, արևելեան, արական, ցերեկեայ, և դառն.

Ցուլն է ցուրտ, և չոր. հողային, սևամաղձ, իգական, միջօրեայ, գիշերային, սուր, և թթու.

Երկուորն է ջերմ, և խոնաւ. օդային, արիւնաւոր, արական, արևմտեայ, ցերեկեայ, հասարակ, քաղցր, և թթու.

Խեցգետինն է ցուրտ, և խոնաւ. ջրային, հիւսիսային, շարժուն, մաղասոտ, իգական, գիշերային, անհամ, և ուղիղ.

Առիւծն է ջերմ, և չոր. հրային, շէկամաղձ, արևելեան, արական, սևեռուն, ուղիղ, ցերեկեայ, գիշերային, և դառն.

Կոյսն է ցուրտ, և չոր. հողային, սևամաղձ, գիշերային, հասարակ, իգական, սուր, միջօրեայ, և ուղիղ.

Կշիռն է ջերմ, և խոնաւ. օդային, արիւնոտ, արևմտեան, արական, դժուար, շարժելի, ուղիղ, և քաղցր.

Կարիճն է ցուրտ, և տամուկ. ջրային, մաղասոտ, հիւսիսային, իգական, սևեռուն,

տուն, գիշերւոյ, անհամ, և ուղիղ:

Աղեղնաւորն է ջերմ, և չոր. հրային, շեկամորթ, արևելեան, արական, ցերե-կւոյ, հասարակ, ուղիղ, և դառն:

Այծեղջիւրն է ցուրտ, և չոր. հողայ-ին, սեւամորթ, միջօրեայ, իգական, շար-ժուն, թիւր, գիշերւոյ, և սուր:

Ջրհոսն է ջերմ, և տամուկ. օդային, արիւնոտ, արևմտեան, արական, ցերեկւոյ, սեւեռուն, թիւր, և քաղցր:

Ձուկն է ցուրտ, և խոնաւ. ջրային, մաղասոտ, իգական, գիշերւոյ, հասարակ, անհամ, և թիւր:

## Առանձինք համառօտեցուցք եւ յաղագս հայ-եցուածոյն մոլորականաց:

Արդ՝ հայեցուած մոլորականացն՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ կերպ իմն. ո-րով մոլորական աստեղք առ միմեանս հային մերձաւորութե իւիք, կամ հեռաւորութե. Հինգ են թուով հայեցուածքն. այս՝ Համ-նունդ. Տրուին. Վեցանկիւնի. Քառան-կիւնի. և Եռանկիւնի:

Համնունդն՝ որև բոլորք ասի, մերձաւո-րութիւն, զուգաւորութիւն, և կապակցութիւն. լինի



երբ

երբ միայն կամ յոլով աստեղքն ընդ այլում աստեղ ՚ի մի և ՚ի նոյն տեղւոջ՝ ՚ի մի և ՚ի նոյն աստիճանի գտանին. նշանի այսպէս՝ ☌.

Լրումն, կամ հակադիր, տրամաչափ, և լրականն հայեցուածն համարի. երբ աստեղք 180 աստիճանօք ՚ի միմեանց հեռանան. Եւրոպերէն՝ Օբբօզիցիօն ձայնի. որ և այսպէս նշանի՝ ☍.

Վեցանկիւնի հայեցուածն՝ որ և Սէքսդիլ ասի, է՝ յորժամ աստեղք՝ 60 աստիճանօք հեռի կան ՚ի միմեանց. այսպէս նշանի՝ ⚹.

Քառանկիւնի հայեցուածն՝ որ և Քուատրէ ասի, երբ 90 աստիճանօք ՚ի միմեանց զատ կան. այսպէս նշանի՝ □.

Եռանկիւնի հայեցուածն՝ որ և Դրիգոն ասի, երբ 120 աստիճանօք ՚ի միմեանց հեռանան աստեղք. նշանի այսպէս՝ △.

Յայսցանէ՝ Քառանկիւնին է անհաշտ թշնամութեան, և ատելութեան հայեցուած. Լրումն՝ կատարեալ թշնամութեան, և ատելութեան. Եռանկիւնին՝ կատարեալ բարեկամութեան. Վեցանկիւնին՝ անկատար սիրելութեան. Ծնունդն՝ երկդիմի. ընդ լաւացն է բարի, և ընդ վատթարացն՝ վատ.

՚Ի հայեցուածոց այլքն ասին աջակողմեանք, և այլքն ձախակողմեանք. Աջա-



կող

կողմանցն հային առ իւրեարս ընդդէմ կենդանակերպից կարգին. որք յերկաւորէն 'ի խոյն հային։ Զձախակողմանցն հային առ իւրեարս ըստ կենդանակերպից կարգին. որք յերկաւորէն յառիւծն, կամ 'ի կոյսն, և 'ի կշիռն։ Աջակողմանցն ուժեղագոյնք են քան զձախակողմանն հայեցուածս։

## Հայեցուած 12 կենդանակերպից առ իւրեարս։

Խոյն յաջկոյս՝ 'ի ջրհոսն վեցանկիւնի, յայծեղջիւրն քառանկիւնի, և յաղեղնաւորն եռանկիւնի հայեցուածով հայի. 'Ի ձախ կոյս՝ յերկաւորն վեցանկիւնի, 'ի խեցգետինն քառանկիւնի, և յառիւծն եռանկիւնի հայեցուածով. իսկ 'ի կշիռն հակադիր, և լրական հայեցուածով հայի։

Ցուլն յաջկոյս՝ 'ի ձուկն վեց, 'ի ջրհոսն քառ, և յայծեղջիւրն եռանկիւնի հայեցուածով հայի։ 'Ի ձախ կոյս՝ 'ի խեցգետինն վեց, յառիւծն քառ, և 'ի կոյսն եռանկիւնի. իսկ 'ի կարիճն հակադիր հայեցուածով հայի։

Երկաւորն յաջկոյս՝ 'ի խոյն վեց, 'ի ձուկն քառ, և 'ի ջրհոսն եռ։ 'Ի ձախ կոյս՝ յառիւծն

իւծն վեց, ՚ի կոյսն քառ, և ՚ի կշիռն եռանկիւնի. իսկ յաղեղնաւորն լրական հայեցուածով հայի.

Խեցգետինն յաջկոյս՝ ՚ի ցուլն վեց, ՚ի խոյն քառ, և ՚ի ձուկն եռ։ ՚Ի ձախ կոյս՝ ՚ի կոյսն վեց, ՚ի կշիռն քառ, և ՚ի կարիճն եռ. իսկ յայծեղջիւրն հայի հակադիր, և լրական հայեցուածով։

Առիւծն յաջկոյս՝ յերկաւորն վեց, ՚ի ցուլն քառ, և ՚ի խոյն եռ։ ՚Ի ձախ կոյս՝ ՚ի կշիռն վեց, ՚ի կարիճն քառ, և յաղեղնաւորն եռ. իսկ ՚ի ջրհոսն լրակի.

Կոյսն յաջկոյս՝ ՚ի խեցգետինն վեց, յերկաւորն քառ, և ՚ի ցուլն եռ։ ՚Ի ձախ կոյս ՚ի կարիճն վեց, յաղեղնաւորն քառ, և յայծեղջիւրն եռ. իսկ ՚ի ձուկն լրակի, և Ս՛ողոփէլոյ հայեցուածով հայի.

Կշիռն յաջկոյս՝ յառիւծն վեց, ՚ի խեցգետինն քառ, և յերկաւորն եռ։ ՚Ի ձախ կոյս՝ յաղեղնաւորն վեց, յայծեղջիւրն քառ, և ՚ի ջրհոսն եռ. իսկ ՚ի խոյն հակադիր, և լրական հայեցուածով հայի.

Կարիճն յաջկոյս՝ ՚ի կոյսն վեց, յառիւծն քառ, և ՚ի խեցգետինն եռ։ ՚Ի ձախ կոյս՝ յայծեղջիւրն վեց, ՚ի ջրհոսն քառ, և ՚ի ձուկն եռ. իսկ ՚ի ցուլն լրակի, և հակադիր հայեցուածով հայի։



Աղեղնա

Աղեղնաւորն յաջկոյս՝ ՚ի կշիռն վեր, ՚ի կոյսն քառ, և յառիւծն եռ. ՚ի ձախ կոյս ՚ի ջրհոսն վեր, ՚ի ձուկն քառ, և ՚ի խոյն եռ. Իսկ լուսին հայեցուածով յերկաւորն հայի։

Այծեղջիւրն յաջկոյս՝ ՚ի կարիճն վեր, ՚ի կշիռն քառ, և ՚ի կոյսն եռ. ՚ի ձախ կոյս՝ ՚ի կոյսն վեր, ՚ի խոյն քառ, և ՚ի ցուլն եռ. Իսկ ՚ի խեցգետինն լուսին հայեցուածով հայի։

Ջրհոսն յաջկոյս՝ յաղեղնաւորն վեր, ՚ի կարիճն քառ, և ՚ի կշիռն եռ. ՚ի ձախ կոյս՝ ՚ի խոյն վեր, ՚ի ցուլն քառ, և յերկաւորն եռ. Իսկ յառիւծն լուսին հայի։

Ձուկն յաջկոյս՝ յայծեղջիւրն վեր, յաղեղնաւորն քառ, և ՚ի կարիճն եռ. ՚ի ձախ կոյս՝ ՚ի ցուլն վեր, յերկաւորն քառ, և ՚ի խեցգետինն եռ. Իսկ ՚ի կոյսն հայի լուսին, և Մ՝ուշտրիւս հայեցուածով։

—

Խոյն, Առիւծն, և Աղեղնաւորն՝ հրայինք են. արականք, և ցերեկեայք, ջերմ, և չոր. են ընդ իշխանութ̄ արեգական, և լուսնթագին։

Ցուլն, Կոյսն, և Այծեղջիւրն՝ են հողայինք. իգականք, և գիշերեայք, ցուրտ, և չոր. ը̄ իշխանութ̄ լուսնոյն, և լուսաբերին։

Երկաւորն, Կշիռն, և Ջրհոսն՝ են օ-



դայ

դայինք․ արականք, և ցերեկեայք․ ջերմ, և խոնաւ․ ընդ իշխանութեամբ երեակին, և փայլածուին։

Խեցգետինն, Կարիճն, և Ձուկն՝ են ջրայինք․ իգականք, և գիշերեայք․ ցուրտ, և խոնաւ․ ընդ իշխանութբ հրատին, լուսաբերին, և լուսնոյն։

—

Մենդամատեանկ Պտօղին՝ յերկոտասան զուգահաւասար մասունս բաժանի․ և այսպիսի մասունք՝ յորջորջին նշանք, և կենդանակերպք․ զի ձևակերպեն զպատկերս կենդանեաց։ Իւրաքանչիւր կենդանակերպ զերեսուն մասունս, բաժինս՝ կամ աստիճանս ունի, և զերիս տասնապետս մեղրակս․ այսու կարգաւ՝ սկսեալ ՚ի Խոյէն։

Խոյի առաջին 10 աստիճանքն են հրատին․ երկրորդ՝ 10 աստիճանքն արեգական․ երրորդ՝ 10 աստիճանքն լուսաբերին։

Ցուլն ունի առաջին տասնապետ փայլածուն․ երկրդ՝ լուսինն․ երրդ՝ երեւակն։

Երկաւորին՝ առաջին տասնապետն է լուսնթագն․ երկրորդն՝ հրատն․ երրորդն՝ արեգակն։

Խեցգետնոյն՝ առաջին տասնապետն է լուսաբերն․ երկրորդն՝ փայլածուն․ երրորդն՝ լուսինն։

Առիւծոյն՝ առաջին տասնապետն է երեւակն · երկրորդն՝ լուսնթագն · երրորդն՝ հրատն ։

Կուսին՝ առաջին տասնապետն է արեգակն · երկրորդն՝ արուսեակն · երրորդն՝ փայլածուն ։

Կշռին՝ առաջին տասնապետն է լուսինն · երկրորդն՝ երեւակն · երրորդն՝ լուսնթագն ։

Կարճին՝ առաջին տասնապետն է հրատն · երկրորդն՝ արեգակն · երրորդն՝ արուսեակն ։

Աղեղնաւորին՝ առաջին տասնապետն է փայլածուն · երկրորդն՝ լուսինն · երրորդն՝ երեւակն ։

Այծեղջերին՝ առաջին տասնապետն է լուսնթագն · երկրորդն՝ հրատն · երրորդն՝ արեգակն ։

Ջրհոսին՝ առաջին տասնապետն է արուսեակն · երկրորդն՝ փայլածուն · երրորդն՝ լուսինն ։

Ձկանն՝ առաջին տասնապետն է երեւակն · երկրորդն՝ լուսնթագն · երրորդն՝ հրատն ։

## Չորրորդ երկնային համաստեղութեանց:

Համաստեղութիւնք և աստեղազարաշխական ձևակերպմունք բևեռայ աստեղաց՝ առ հնագունիւքն էին 48 · իսկ առ նորագունիւք են 73 · Որոց երկոտասանքն ասին Զոդիակոսեանք, զորս մեք ասեմք Կենդանակերպս:

Երեսուներեքն կոչին Հարաւայինք, և քսան և ութքն Հիւսիսայինք: Անուանքն իւրաքանչիւրոց, կազմն, և յորքան աստեղաց բաղադրին՝ ցուցանի բանասիրաց հետևաբար:

—

## Երկոտասան համաստեղութիւնք Զոդիակոսեանք, որք և կոչին Կենդանակերպք:

Խոյն կազմի և բաղադրի ՚ի 20 աստեղաց · յորոց 6 են պայծառք և երևելիք:

Ցուլն կազմի և բաղադրի ՚ի 53 աստեղաց · յորոց 12 են պայծառք և երևելիք:

Երկուորն կազմի և բաղադրի ՚ի 33 աստեղաց · յորոց 13 են պայծառք և երևելիք:

Խեցգետինն կազմի և բաղադրի ՚ի 41 աստեղաց · յորոց 8 են պայծառք և երևելիք:



Առիւ

Առիւծն կազմի և բաղադրի ՚ի 44 աստեղաց · յորոց 12 են պայծառք և երևելիք ·
Կոյսն կազմի և բաղադրի ՚ի 50 աստեղաց · յորոց 9 են պայծառք և երևելիք ·
Կշիռն կազմի և բաղադրի ՚ի 27 աստեղաց · յորոց 8 են պայծառք և երևելիք ·
Կարիճն կազմի և բաղադրի ՚ի 36 աստեղաց · յորոց 14 են պայծառք և երևելիք ·
Աղեղնաւորն կազմի և բաղադրի ՚ի 32 աստեղաց · յորոց 12 են պայծառք և երևելիք ·
Այծեղջիւրն կազմի և բաղադրի ՚ի 35 աստեղաց · յորոց 12 են պայծառք և երևելիք ·
Ջրհոսն կազմի և բաղադրի ՚ի 86 աստեղաց · յորոց 10 են պայծառք և երևելիք ·
Ձուկն կազմի և բաղադրի ՚ի 66 աստեղաց · յորոց 9 են պայծառք և երևելիք ·

—

Հետևին մնացեալ 61 համաստեղութիւնք · յորոց 33 կոչին հարաւայինք · իսկ 28 հիւսիսայինք · Եւ թէ յորքանեաց աստեղաց բաղկանան , ծանուցանի ՚ի ձեռն թուագրաց ·

| | | | |
|---|---|---|---|
| Հարաւայինք · | 33 · | Հիւսիսայինք · | 28 · |
| Կէտ Ձուկն · | 38 · | Փոքր արջ · | 18 · |
| Հայկ · | 63 · | Մեծ արջ · | 39 · |
| Երասխ · | 45 · | Վիշապ · | 38 · |
| Նապաստակ · | 13 · | Կեփեոս · | 33 · |
| Մեծ շուն · | 19 · | Ընձուղտ · | 29 · |


Աղու

| | | | |
|---|---|---|---|
| Աղաւնի . | 11 : | Յորդանան . | 31 : |
| Շնիկ . | 11 : | Արջպան . | 37 : |
| Միեղջերու . | 23 : | Պսակ հիւս" . | 19 : |
| Օձ ջրային . | 55 : | Վահագն . | 53 : |
| Տակառ . | 11 : | Քնար . | 17 : |
| Ագռաւ . | 11 : | Տիգրիս գետ . | 37 : |
| Խաչ . | 04 : | Կարապ . | 41 : |
| Ձիացուլ . | 35 : | Գաւառագան . | 15 : |
| Գայլ . | 21 : | Կասսիոպէ . | 38 : |
| Սեղան . | 09 : | Պերսէոս . | 15 : |
| Պսակ հարաւ" . | 12 : | Կառավար . | 41 : |
| Ձուկն հարաւ" . | 17 : | Օձակալ . | 27 : |
| Կռունկն . | 13 : | Օձ . | 41 : |
| Փիւնիկ . | 15 : | Նետ . | 08 : |
| Հնդիկ . | 13 : | Արծուի . | 24 : |
| Սիրամարգ . | 15 : | Անդինոս . | 12 : |
| Հնդկահաւ . | 12 : | Դելփին . | 11 : |
| Ճանճիւն . | 05 : | Փոքր ձի . | 07 : |
| Գետնառիւծ . | 10 : | Երիվար . | 22 : |
| Եռանկիւնի հա" . | 05 : | Անդրոմեդա . | 34 : |
| Ձուկն թռուց" . | 08 : | Եռանկ" հիւս" . | 05 : |
| Թրաձուկն . | 06 : | Շուշան . | 07 : |
| Ամպ մեծ . | 03 : | Հերշելեան . | 12 : |
| Հաւալուսն . | 09 : | | |
| Հիդրայ . | 13 : | Ուրեմն ամ՛ համաստեղութիւնք այսոքիկ կազմին ՚ի 1832 աստեղաց։ | |
| Ամպ փոքրիկ . | 03 : | | |
| Քառանկիւնի . | 04 : | | |
| Նաւ արգոսեան . | 56 : | | |

## Յաղագս արեգական և լուսնոյ խաւարմանն։

Ով որ ցանկայ կերպիւ իւիք վերահաս լինել արեգական, և լուսնոյ խաւարմանն, թէ զինչ իցէ։ Գիտասցէ նախ՝ զի արեգակն է մեծագոյն քան զերկիրն՝ 166 անգամ, փոքր ինչ աւելի։ Լուսինն է փոքրագոյն քան զերկիր՝ 39 անգամ, գոյզն ինչ աւելի։

Երկրորդ՝ արեգակն լուսաւոր, և լուսատու մարմին ՚ի մէջ վեց մոլորակացն. բաշխէ զլոյս աստեղաց, մանաւանդ լուսնոյն. որ է լուսաղօտ, լուսազուրկ, և լուսառու յարեգակնէն։

Երրորդ՝ գիտասցէ զի ամ լուսատու մարմին՝ երբ լուսաւորէ զայլ քան զինքն փոքրագոյն մարմին, որ իցէ անլուսանցոյց, և խաւարամած. որքան մերձ գոյ խաւարածոծ մարմնոյն, այնքան մեծ բաժինն խաւարչուտ մարմնոյն լուսաւորի. բայց յետակոյս անլուսանցոյց մարմնոյն նուրբ Պիրամիդէայ ստուեր պատահարի։

Իսկ որքան ՚ի միմեանց հեռանան մարմինքն երկոքեան՝ լուսատուն, և լուսառուն. այնքան փոքր մասն խաւարչուտ

մար

մարմնոյն լուսաւորի · այլ թանձր ստուե-
րածութի պատճառի։

Իսկ երբ լուսատու մարմին ինչ լուսա-
ւորէ զայլ քան զինքն մեծագոյն մարմին,
որ իցէ լուսատու և անլուսանցոյց · որքան
միմեանց մերձ կան մարմինքն երկոքեան ,
այնքան փոքր մասն անլուսանցոյց մարմնոյն
լուսաւորի · և յետուստ լուսատու մար-
մնոյն՝ պատարուն և թանձր ծայրասուր
ստուեր պատճառի։

Այլ որքան իրերաց հեռաւորք են լու-
սատու և լուսաւոր մարմինքն, այնքան մե-
ծաժին խաւարչուտ մարմնոյն լուսաւորի ·
իսկ յետակոյս անլուսանցոյց մարմնոյն՝ սուղ,
նուրբ, և Պիրամիդեայ ստուեր, որ՝ հրաձև,
բոցաձև , և ծայրասուր շուք պատճառի։

Արդ՝ արեգակն ուրեք ուրեք ՚ի ժա-
մու ծննդեան լուսնոյն՝ ստուերածին խա-
ւարա, երբեմն ընդունի մասամբ իւրք ·
բայց ոչ ուրեք, և ոչ երբեք բոլորովին։
Զի լուսինն փոքրագոյն գոլով քան զեր-
կիր , ոչ կարէ բոլորովին բաւանալ յերկրէ
զարեգակեան շառաւիղս։

Արեգակն ուրեմն (որ է ինքնին՝ լուսա-
նոյ և արևու ակն) իւրովի՝ ինքեամբ՝ ոչ
երբեք խաւարի · այլ յորժամ լուսինն ՚ի

 ժամու

ժամու ծննդեան ընդ արեգական՝ հաւաս
գլխոյ կամ ագոյ վիշապին, տրամագծօրէն
և ուղղակի 'ի ներքոյ արեգական գտանի.
զիւր թանձրամած և զանլուսանց մարմինն
միջարկէ ընդդէմ արեգական, և երկրա_
բնակաց. որով նոյն ինքն խաւարչուտ լու_
սինն՝ ինքնաբուն խաւարաւն խափանէ
զանց արեգականային շառաւղացն 'ի վերայ
երկրաբնակաց ոմանց, բայց ոչ երբէք 'ի վ̃ր
ամենեցուն.

Նոյնպէս արեգակն մթանայ, նսե_
մանայ, ստուերանայ, և խաւարի՝ ոչ ինքն
ինքեան. այլ միայն երկրաբնակաց ոմանց.
Խաւարումն ուրեմն արեգական է ուղղա_
գիծ միջարկութիւն լուսնոյն 'ի մէջ մեր,
և արեգական.

Խաւարումն լուսնոյն՝ է ուղղագիծ մի_
ջարկութիւն երկրի 'ի մէջ արեգական, և լուս_
նոյն. Քանզի լուսինն 'ի ժամանակի իւ_
րոյ լման՝ երբ տրամագծօրէն և ուղղակի
'ի ներքոյ արեգական և երկրի գտանի,
երբեմն բոլորովին՝ և երբեմն մասամբ
իւիք խաւարի.

Ոչ է արեգակն՝ որ միշտ անշէջօրէն
թաւալի 'ի կենդանակերպեայ գօտւոջ, և
լուսաւորէ զկիսագունդն երկրի. երբեմն
յաւէտ, և երբեմն նուազ. Նաև այլ մնա_



ցեալ

ցեալ կիսատրամանն երկրի՝ որ է հակակայ, և դէմ յանդիման շառաւղացն արեգական, արձակէ Պերիգէեայ՝ բազմանէ՝ և ծայրասուր ստուերն իւր մինչև 'ի լուսաբերի կամարն.

Արդ լուսինն հեռացեալ յարեգակնէն վեց կենդանակերպիւք՝ կամ 180 աստիճանօք, եթէ իցէ ուղղակի հանդէպ արեգական, բայց չիցէ մերձ գլխոյ՝ կամ ագոյ վիշապին, ոչ խաւարի կերպիւ իւիք. Եթէ իցէ լուսինն մերձ գլխոյ՝ կամ ագոյ վիշապին, խաւարի. Որքան մերձ գլխոյ՝ կամ ագոյ վիշապին իցէ, այնքան մեծ երևի խաւարումն լուսնոյ. 'Ի ձմեռան յեղանակին՝ սուղ, և յամառան ժամանակին՝ երկար լինի խաւարումն.

Եւ յորժամ արեգակն իցէ մերձ գլխոյ, և լուսինն մերձ ագոյ վիշապին. և հակադարձօրէն՝ արեգակն մերձ ագոյ, և լուսինն մերձ գլխոյ վիշապին. յայնժամ լուսինն բոլորովին խաւարի. Զի լուսինն բոլորովին մտանէ, ընկղմի, և սուզանի 'ի թանձրամած կիսագնդոյ ստուերն. զոր կոչեն այն կիսագնդոյն՝ որ է դէմ ընդդէմ՝ շառաւղացն արեգական, ձգէ՝ արձակէ՝ և հասուցանէ մինչև ցլուսաբերի կամարն.

Երկրաքանչիւր ստուերաց խաւարումն,

եթէ արեգակն և թէ լուսնոյն՝ ոչ հանդի պի, եթէ ոչ՝ ՚ի գլխոյ կամ մերձ գլխոյ կամ տտոյ վիճակին. իբր՝ յերկուս կէտս, կիրճս, և ՚ի կապս արեգակնաշաւղին. զորս միջակարէ հաւասարընթաց բոլորակն լուսնոյ։

Կէտն այն՝ զոր լուսնոյ անուանէ բոլորակն միջակաւր առնէ, և բարձրանայ ՚ի հիւսիս կոյս՝ աւսի, կիրճ, կապ, և հանգոյց բարձրութեան, կամ գլուխ վիճակին։

Իսկ այն կէտն՝ զոր լուսնոյ անուանէ շրջանակն միջակաւր առնէ, և ՚ի հարաւ խոնարհի՝ կիրճ, կապ, և հանգոյց ցածութեան յորջորջի, կամ տուտ վիճակին։

Խաւարումն լուսնոյ երբեմն է ընդհանուր. և հանդիպի միայն ՚ի ժամանակի լրմանն։

Ընդունումն արեգական՝ է միշտ միայն ըստ մասին, և հանդիպի միայն ՚ի ժամանակի ծննդեան լուսնոյն։ Աւասիկ խաւարումն արեգական, որ եղև ՚ի ժամանակի Խաչելութեան ՚Քի, որովհետև էր ՚ի լրման լուսնոյն, ոչ էր բնական. այլ մանաւանդ հրաշական. զի որում զարմացեալ էր այս Դիոնեսիոսի արիսպագացւոյն՝ ասաց.

* Կամ Հեղինակ բնութեան չարչարի, կամ
շինուած աշխարհիս եղծանի||.

## Ներգործութիւն գուշակմանց խաւարման արեգական և լուսնոյ.

Ի խաւարին արեգական կամ լուսնոյ՝ պարտ է զերիս կերպ իրս նկատել և իմանալ ի մէ գուշակմանց. Նախ՝ պարտ է գիտել զկենդանակերպն զայն յորում լինի խաւարումն: Երկրորդ՝ զքաղաքն զայն, թէ որ կենդանակերպ իշխէ նմա. Երրորդ՝ զժամն խաւարման, թէ յայնմ ժամու զինչ աստղ գտանի ընկեր՝ կամ հայեցիկ նմա, զոր վկայ ըմբռնիցէ. զի թէ աստղ չգտանիցի ի տեսութի, խաւարումն արեգական կամ լուսնոյ՝ լինի անզօր. և ոչ կարէ առնել ինչ. իսկ զաստղն այսպէս տես.

Յորժամ Երևակն յուժեղ տեղւոջ լինի. յաւելու զցուրտն, հիւանդութիւն՝ որ ի հովութե և ի չորութե յառաջանայ. գուշակէ զտրամութիւն, ահ և վախ՝ անգորր մարդկանց.

Յորժամ Լուսնթագն յուժեղ տեղւոջ լինի, յաւելու զբարիս ամ օգտակարութի. գուշակէ զխաղաղութի, զիրաւնութիւն, լաւութի և յաջողութի ամ բանից մարդկան.

Յորժամ Հրատն յուժեղ տեղւոջ լինի,

նի , գուշակէ զահ , վախ , պատերազմունս , արիւն , գողութի , հրդեհումս , և հիւանդութիս՝ որ 'ի տաքուէ և 'ի չորուէ յառաջանայ։

Յորժամ Լուսաբերն յուժեղ տեղւոջ լինի՝ (որ է բնութ՟ նման լուսնթագին) , յաւելու զբարիս ա՟մ օգտակարութ՟ . գուշակէ զխաղաղութի , ևն։

Յորժամ Փայլածուն յուժեղ տեղւոջ լինի , ինքեան զոր աստղն հայեցիկ ունի՝ զնորա բնութ՟ գործսն գուշակէ։

Այլ տես զկենդանակերպսն՝ թէ ինչ բնութ՟ ա՟ր են . հրային իցէ՝ թէ օդային , ջրային՝ թէ հողային . և համեմատէ ըստ բնութ՟ աստեղացն։ Բայց թէ մարդակերպ կենդանակերպ լինի , գուշակէ զազդումն մարդկանց .

Այլ թէ անասնակերպ կենդանակերպ լինի , գուշակէ զազդումն եզանց , ոչխարաց , ուղտուց և գրաստուց .

Այլ թէ ջրային կերպով կենդանակերպ լինի , գուշակէ զնուազուի ջուրց , ջրային կենդանեաց և ա՟մ իրաց՝ որ 'ի ջրոյ գտանան ։

Այլ թէ հողային կերպով կենդանակերպ լինի , գուշակէ զնուազուի պտղոց , սերմանեաց , ծառոց , բուսոց և այլ ա՟մ իրաց՝ որ 'ի հողոյ գտանան ։

Սակայն ծանիր՝ զի գուշակէ այնմ աշ-



խար

խարհի , որ է յայնմիկ կենդանակերպի . և այնմ մարդկանց , որք լինին ծնեալք յայնմ կենդանակերպի , և յայնմ աստեղն , և յայնըմ անդամն մարմնոյն մարդկան ։

Նաւեսցի այժմ այսքան առ այս ։

## Պատճառն ինչ գիտութեանն՝ ամէն փառաւոր առ- տեղւոյ ։

Գիսաւորն գոյանայ և բորբոքի 'ի կուտակեալ գոլորշեաց 'ի բարձրագոյն դաւառն օդոյ · որպէս աստղին արփիատաւել , և այլք ։ Նա ոչինչ է կարծիքն ումանց , թէ գիսաւորն ծնանի 'ի վեր քան զլուսնական երկինսն ։

·Բանզի երկինք՝ հաստատ և անապական մարմինք են · վնյ ոչ կարէ հաւաքիլ և բորբոքիլ 'ի նոսա գոլորշիք՝ առ 'ի լինիլ նիւթ գիսաւորին ։

Սակայն մինչ ասեն ոմանք զգիսաւորն անցեալ 'ի վեր քան զլուսինն , այսու՝ կամ տեսողքն էին պատրեալք , և կամ անցեալքն ոչ էին ճշմարիտ գիսաւորք · այլ թերևս էին նորաձև երևեալ աստեղք ոմանք ։

Իրք՝ չորս որք նկատին 'ի տատաւորն, են
Ձեւ․ Շարժումն․ Գոյն և Նշանակութիւն։

Ձեւն այլայլի ըստ տրամադրութեան նիւթոց, որք յատկապէս համաձայնութիւն է․ Քանզի նրբագոյն նիւթն՝ որ կայծուցանէ զհերս տատաւորին 'ի յերկար, մինչ միակերպապէս կարկառի՝ յայնժամ ասի տատաւոր։ Եւ մինչ երբեմն այնպէս տարածի գոլորշին 'ի մի կողմն, մինչ զի կայի հանգոյն մօրուաց, յայնժամ ասի մօրուաւոր․ (Թէպէտ ոմանք զայսոսիկ զերկուս ոչ զանազանեն 'ի միմեանց։) Նաև երբեմն շուրջ զմարմնով տատաւորին սփռին յամ ուստեք նրբագոյն գոլորշիք ըստ կերպի հերաց․ և յայնժամ ասի վարսաւորեալ, կամ գիսաւորել։ Կոչին նաև այլ բազում ձեւք տատաւորաց․ որք ասեն աստեղագէտք բազումք։

Շարժումն տատաւորաց մանաւանդ է յարևելից յարևմուտս․ Քանզի որովհետև են 'ի վերնագոյն մասին օդոյ, յափշտակին միշտակայ շարժմամբն հաստատութեան․ որոյ ուժգնութիւն հասանի մինչև առ այն գաւառն օդոյ։ Այլ երբեմն վերանան, և կորանան, նաև հակին առ բևեռսն․ ըստ որում պահանջէ յօժարութիւն նոցին՝ առ 'ի խնդրել զնիւթ։

Եւ գոյն տատաւորաց՝ է զանազան ըստ



յատ

յատկութեն նիւթոյ նոցին․ որպէս և ՚ի մեզ_ զանազան է գոյն բոցոյ, ըստ որում այրի ՚ի զանազան նիւթս։ Աստի որպէս բոցն ե_րևի ՚ի ծծումբ՝ կապոյտ․ և ՚ի ռետինն՝ սեաւ․ և ՚ի մարմուր իւղս՝ սպիտակ․ Նմա_նապէս և այնք լուսաւորք՝ որք ունին՞ զհաստ և զմարմնեղապատ նիւթս, երևին ագեղք։ Որք ունին զնիւթ անօսր, երևին արծա_թագոյնք․ Եւ այնք որք թէպէտ ունին զնուրբ նիւթս՝ բայց խառնեալք գոլով ընդ մեգական գոլորշեաց, տեսանին արիւ_նագոյնք․

Նոյց որքան առ նշանակութի․ Փլինիոս կոչէ զնս զարհուրելի աստեղք․ որք նշա_նակեն զալէկոծութիս, զհողմունս, զփոփոխմունս կացութեց, և զայլ ձախորդակի պա_տահմունս․ Եւ այսպիսի գուշակիլ կարեն ՚ի յերևելին լուսաւորին՝ մասն ինչ բնակա_նաբար, և մասն ինչ ՚ի բարեհաճութեն այ․

Բնականաբար․ Քանզի լուսաւոր աստ_ղըն առնուցանի ՚ի մեծ յոլովութե պարարտ տամկացութեց և գոլորշեաց․ Աստի այնու_ծծէ զպարարտութի երկրի․ նաև ծախէ և վատնէ զայնս տամկացութիս՝ որք են ամպոց, և են անձրևային ջուրց խառնեալք՝ պարարտ էին պատճառք էր առնել զերկիր․ յաղագս



որոյ

որոյ պատճառէ զամլութիւն։

Եւ չորագոյն մասունքն այսպիսեաց տամ՛կացութեանց և գոլորշեաց՝ դառնան ՚ի հողմունս և ՚ի մրրիկս, յորոց ծնանին ալեկոծութիւնք։ Իսկ այնք գոլորշիք՝ որք են հաստագոյնք, ապականեն զօդն. յորմէ հիւանդութիւնք և մահք հետևին։

Նաև յորժամ յառաջածի տաւուրն, նշանէ՝ թէ իշխէ ջերմ և չոր առող. յորմէ գրգռին մաղձոտ մարդիկ. վայ ծնանին կռիւք, և պատերազմունք։ Եւ զի այնքան այլայլումն բնութեան՝ ներածէ ևս ՚ի մարդիկ զայլայլմունս և զփոփոխմունս խնասութեանց, յօժարութեանց, և ջանից. առաւուտ հետևի ցանկութիւն փոխելոյ զկացութիւն. Նաև ծնանին փոփոխմունք թագաւորութեանց

և բարուց։

Այլ նաև մասն ինչ ՚ի բարեհաճունն ոյէ. որք զայսպիսի դիպուածս նախագուշակեն աստուորքն, և մանաւանդ զմահ մեծամեծաց, որք հաւատացեալք լինին գուշակել թարց ուրուք ճշմարտանման հիման բնականի։

Ս՟ զի այս ներհակի օրինաց բնութ՟, թէ վ՟ն էր արդեօք մահաբեր գոլորշիքն այն՝ մանաւանդ զթագաւորս և զիշխանս առնէ մեռանել քան զայլ մարդիկս։



Ուստի

Ուստի զոր օրինակ ընտրեաց Ած զերկնային աղեղն ՚ի նշան հաշտութե և ուխտի ՚ի մէջ երկնի և երկրի։ Նոյնպէս պատշաճագոյ տեսանի, զի զայնս նշանս զարհուրելիս՝ որպիսիք են տատաւոր աստեղքն, տանուցու ՚ի նշան բարկութե իւրոյ՝ նաև մերձեցեալ պատժոցն։ Զորև ցուցանէ արքունի մարգարէն յասելն * Ետուր երկիւղածաց քոց նշան․ զի ապրեսցին յերեսաց աղեղան || սաղ․ 59․ 6։

Նաև յայտնապէս ուսուցանէ Յօհան դամասկացի * Թէ յառաջ քան զաւերումն երուսաղէմի՝ երևեցաւ տատաւոր աստղ ինչ, որև տևեաց երկարապէս՝ նախագուշակ ապառնւոյ աւերութեան ||։



՚Ի դիտել քո զաստեղս երկ նից,
կազմեա՛ հոգւոյդ սանդուղ ե լից.

Ըստ՝ հորդեւորաց ամս չըշտաճշէնաւոր տալէ-կան գոճարինաց գուշակութեան.

# Ի ԹՈՒԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ.

1831 1859 1887 1915

Յայսմ ամի՝ երբ արեգակն ՚ի մարտի Ձ մտանէ յառաջին կէտն Խոյին, իշխէ Լուսնթագն ընդ կարիճ նշանաւն, որ է տուն հրատին։

Յառաջիկայ տարիս է առատութի ցորենոյ, գինւոյ, ձիթոյ, աղբրշի, և ձկան։ Իսկ վս զօրութե կարմրին՝ ձմեռն լինի բազմաձիւն, կատարուած անձանց, որք յանդգնայս արտածին. մէջն ձմեռան բարեխառն, և քամոտ. և վերջն՝ դէջ, եղեմնոտ, խաւարչուտ, և ցաւագարութե խառն. ամառն լինի նման գարնան։ Տարիս է կասկածոտ վասն յղի կանանց. առատութի մրգաց։

Ըստ Դեմոկրիտոսի՝ թէ յայսմ ամի շատանան գետք, և կարկուտք նուազանան։ Աշունն ջրային. ձիթապտուղն և ձէթն լինի ի բաւականութե. սակաւ մեղր, և քըթանն.

Թանն • գուշակի պատերազմ, որոտմունք եւ
յամառան եղանակին •

Որոտն գտանի 'ի տասներորդում տան երկնից • ուստի բազում կոտորածք , սաստիկ պատերազմ, և հիւանդութի • իսկ ստէպս հաւատարմութի 'ի մէջ մարդոց •

Լուսաբերն 'ի մէջ երկնից և շառաւղաբորբոք յարեգակնէն՝ ցուցանէ զմահ Թագաւորի • ընդոյնն ցուցանէ հրատն ընդ նըշանին 'ի մէջ երկնից :

Լուսնթագն յութերորդում տան երկնից՝ Թուի Թէ պատճառէ զյանկարծական մահ • և զի է նոյն լուսնթագն կցեալ ընդ փայլածուին՝ ցուցանէ զփոփոխական բարս վաճառականաց : Մահուամբ հարկանին երեխայք , ըստ որում նշանակէ փայլածուն յութերորդում տան երկնից • լինին զանազան հիւանդութիք , հարուածք անտանոց , և վնաս ծառոց և պտղոց :

Ժողովուրդք տաժանս կրեսցեն 'ի տերանց • հողն ոչ բարւոք պտղաբերէ , և ամ խոպանութի երեւի միջակօրէն • ըստ որում ցուցանէ լուսինն կցեալ ընդ երեւակին • և երեւակս այս կայ 'ի վեցերորդում տան երկնից • եւ լուսաբերն՝ յիններորդում տան երկնից • և առիւծ կենդանակերպն՝ 'ի ժամադէտ տեղւոջ :

Երբ արեգակն ՚ի մարտի 9 մտանէ յառաջին աստիճան Խոյին, Լուսաբերն լինի իշխան տարւոյն ըստ Կարծին, որ է տուն Հրատին։

Յառաջիկայ տարին լինի յոյժ պարարտ և առատ՝ ցորենով, և այլ պտղովք։ Սկիզբն ձմեռան լինի ցուրտ ընդ հարկաւոր. միջին՝ տաք, և վերջին՝ բարեհաճոյ։ Գարունն մինչև ՚ի յունիսի ամիսն ցուրտ. սաստիկ եւս անձրևս, և որոտմունս. բայց յետոյ պակասին ջուրք յաղբերաց. վասն որոյ ձմեռանին շատ եղինք։

Իսկ Դեմոկրիտոս՝ թէ յաշնանն առնին գետք, և լիցին հիւանդութիւնք. աղաչեմ զքեզ, զի չիցէ մահտարաժամ։ Պարտ է լինիլ սակաւակեր, և շատախումն գինւոյ. ՚ի սկիզբն ձմեռան՝ անձրև է, և ձիւն աւելի քան զչափն։

Յայսմ ամի շատանայ տենդն, և այլ հիւանդութիւն ՚ի ջերմուէ պատահեսցէ. ըստ որում Լուսնթագն ՚ի վեցերորդում տանն երկնից նշանակէ։

Դարձեալ՝ տեսանի մեծ հարուած, մանաւանդ ծերոց, և երեխայից. կանանց աւերումն, այլ հրաման կցեալ ըստ Երևակին՝



և

և քառանկիւնի հայեցուածով ընդ արե-
գական. փայլածուն շառաւղաբորբոք յա-
րեգակնէն՝ և քառակուսի հայեցուածով
ընդ հրատին, այլև 'ի վեցերորդում տան
երկնից. լուսաբերն կցեալ ը̅ տուտան վիշա-
պին, և լուսինն եղեալ յութերորդում
տան երկնից, խրատապէս գուշակեն:

Յարիցեն վիճմունք, և կռիւք՝ յայլ և
յայլ տրանց ը̅ դէմ իւրեանց Թագաւորին:
Եւս անկցի տարաձայնութի̅ 'ի մէջ եղբարց,
և սիրելեաց. ո̅զ ցուցանէ հրատն կցեալ ը̅
երևակին, և քառակուսի հայեցուածով ը̅
արեգական՝ յերրորդում տան երկնից:

Տիրեն նենգութի̅, և խաբէութի̅ք 'ի մէջ
գրագրաց, և վաճառականաց. որ պատճա-
ռի հանդիպի նոցա մեծ դժուարութի̅, և
նեղութի̅. ըստ որում ցուցանէ փայլածուն
շառաւղաբորբոք յարեգակնէն՝ և քառան
կիւնի հայեցուածով ընդ հրատին:

Ըմբունի սպասաւորաց լինի մեծ վնաս,
և նեղութի̅. զի տէրն՝ տասներորդ տան է
փայլածուն, որ քառանկիւնի հայեցուա-
ծով և մնանակի հայի 'ի հրատն:

—

1833 1861 1889 1917

Յորժամ 'ի մարտի 9 արեգակն յա-
ռաջին կէտն Խոյին մտանէ, իշխան



տար

տարւոյն լինի նոյն արեգական ը̅ Աղեղնաւորին, որ է տուն լուսնթագին։

Յառաջիկայ տարին լինի պարարտութ̅ի ցորենոյ, և այլ թեթևացին իրաց. Սկիզբն ձմեռան բարեխառն լինի, և ջրային. միջն՝ յորդութ̅ի գետորէից. վերջն՝ ցուրտ, և քամի։ Գարունն հարաւային և անձրևային։ Ամառն բարեխառն՝ հով՝ և զով. կանուխ հասանել պարտիս զպտուղս, զի մի՛ ւերիցին յանձրևաց։

Աշունն է հաստատ հնչելոյ զտարեկան հողմն. պտուղք լինին բարեհամք, և գիրահասք. Ճաշաքաղութին է մնացական. և այլ ծառք պարարտաւորք լինին։ Ծնելոյ ըղտունկս լաւ է. մեռանին մեծամեծ անասունք, և շատ շունք։ Ոչխն ալեծվի. տկարութ̅ի երեխայից երբեի. յետս քայլէ շրջան տարւոյս։

Յայսմ ամի տեսանի բաղում արեան հեղութ̅ի, և զանազան ախտակրութ̅ի. զի երևակն գտանի ը̅ տուան վիճակին, և նոյն երևակն երբեի յառաջնում տան երկնից. վ̅յ լինին պատերազմունք, սպանութ̅ք, և փախուստ թագաւորաց. վիճմունք են, խռովութ̅իք, տարաձայնութ̅իք, և ճեաւք 'ի վաճառականութ̅ի։ Օնոյնն գուշակէ հրաւն ընդ լուսնթագին կցեալ՝ և քառանկիւնի

հայեց

հայեցուածով ընդ երեւակին եղեալ եւ յանկեան երկրի:

Մարդիկք կազմեցին ճանապարհս տանելոյ ՚ի հեռի ծ̃, եւ չուեցին ՚ի հայրենեացն վաճառականութեան աղագաւ. ԻԸ որում փայլածուն յերրորդում տան, եւ լուսինն յիններորդում տան երկնից նշանեն. զի փայլածուն եւ լուսինն իշխեն ՚ի վ̃ր ճանապարհորդաց, նաւորդաց, եւ վաճառական արանց:

—

1834 1862 1890 1918

Իմանել տարեգական յառաջին աստիճան Խոյին ՚ի 9 մարտի ամսոյն, իշխան տարւոյն լինի Լուսինն ընդ Ի՛ջեղնաւորին, որ է աւուն լուսնթագին.

Յառաջիկայ ամն է պարարտ միջակօրէն. զի ոչ անձրեւ է քան զչափն աւելի:

Ձմեռն լինի բարեխառն. մէջն՝ գէջ, տղմոտ, եւ քամոտ. վերջն՝ յորդութի̃ ջրոց, կարկուտք, եւ ձիւնք. զինի եղանելոյն չորեք ամսեղն՝ երեւի ջերմութի̃, եւ ցաւահարութի̃. տարեկան քամիք հնչեսցեն: Պատուշակի երկրաշարժութի̃. դաշտայինք առաւել պարարտաբերք իցեն քան զմայրիս՝ ցորենով, ձիթով, գինւով, եւ այլ պտղովք:

Ծարիս է աստղակ մի փոքր անանուն , բայց ձախորդ երևի մի մեծամեծ անանուն։ Յաշնան ժամանակին երևին գլխացաւունիք, և աչացաւունիք։ Ըզգուշեա՛ զայն , զի սառն պաղ ոչ ճաշակեսցէ պտղոց . ևս՝ զի յամառան եղանակին ոչ լիցէ մեծ հիւանդութի։

Լուսնթագն յառաջնում տան երկնից նշանակէ զառողջութի մարդկային անդամոց։ Երևակն ՚ի տասներորդում տան , և տուան վիշապին կցեալ ընդ հրատին . և ասացեալ հրատս ՚ի շարժուն կենդանակերպի՝ է նշան արիւնահեղ պատերազմաց , և կոտորուածոց։

Թագաւորք և իշխանք զանտանելի հարկըս դիցեն ՚ի վե՛ր ժողովրդեան , և զայլ անհաճոյ և զանիրաւ արարս ցուցցեն։ Երևին աւազակք և գողք այնքան՝ մինչ զի ճանապարհորդք ոչ լիցեն անհանք , և անկասկածք . ով հրատն յիններորդում տան երկնից ընդ տուան վիշապին ցուցանէ։

Եւ զի ասացեալ հրատն գտանի յերևակի տանն , և Երևակն ոչ հայի հրատին . ուստի կարծի թէ՝ բանտք բանութ բանայցին , և բազումք ելցեն ՚ի բանտից։

Փայլածուն յերկոտասաներորդում տան երկնից՝ նշանակէ զանկումն վաճառականաց և իմաստնոց յառաջին . փառացն , և յառաջին պատուոյն։

Յորժամ արեգակն ՚ի 9 մարտի մտա-նէ յառաջին կէտն Խոյին, իշխան տարւոյն է Հրատն, ընդ Այծեղջերին. որ է տուն երևակին։

Յառաջիկայ տարիս լինի ցամաք, և ան-հուն պատերազմունք։ Ձմեռն անձրևայ-ին, և առատութի մարախի. զամն բոլոր հիւսիսային, և քամոտ՝ ՚ի տեղիս տեղիս։ Օ լինի գարնանամուտն երկրի մնհատարա-ժամ, մշտակայ անձրևք, յորդուն և թանձ-րութի գետոց։ Ամառն բարեխառն, և առողջարար։ Աշունն քամոտ, և ջերմ. ցաւահարութք, գլխացաւութք, և իջուածք, հաղբ՝ մանաւանդ ՚ի լեռնային տեղիս։ Հայցեսցուք լոյս, զի չիցէ պատերազմ։

Իմաստասէրն Դեմոկրիտոս ասէ, թէ գինիքն լինին բարեհամք, և բոլոր տարին առողջակ. կանխեալ զհաւաքումն պտղոց՝ սակս անձրևաց։

Երևակն է յանկեան եօթներորդ տան երկնից. ուստի թուի՝ թէ լինին կոխք, և կոտորուածք. նոյն երևակն կցեալ ընդ լուսաբերին՝ ցուցանէ զմահ անուանի և հարուստ տիկնոջ։ Լուսինն կցեալ ընդ գլուխ վիշապին՝ գուշակէ մահ արանց գո-



վուն

վուԹեան արժանեաց, աւերումն և վնաս պողոց։ Արեգակն է յիններորդումն տան երկնից, ուստի Թագաւոր մի արասցէ ըղձանապարհ. լինին (ոչ կարծի,) ահագին երկրաշարժք, զի հրամանէ ընդ լուսնոյն։

---

1836 1864 1892 1920

Յորժամ ՚ի 9 մարտի ամսոյն՝ արեգական յառաջին կէտն Խոյին մտանէ, իշխան տարւոյն լինի փայլածուն ընդ Այծեղջեր, որ է տուն ղօհալին։

Յառաջիկայ ամն է երաշտ, և ցամաք. խռովուԹի մարդոց. կոտորումն մեծամեծ ամանց. աղջղակ մանր շորքոտանի կենդանեաց. սակաւ ձէԹ. շատ գինի, և միրգ։

Սկիզբն ձմեռուան ցուրտ. միջն՝ անոյշ. վերջն՝ հողմակոծ։ Գարունն ջրառատ, ցուրտ, և եղեմնահար։ Ամառն շատ անձրև վն սաստիկ հողմահոսուԹեն. բամբին ինչ ցորենոյն, և արմատրէկոցն վնասի. ուղխք, և հեղեղք ջրոց։ Յաշնան հնչեն ջրածին քամիք. Հայցեսցուք յԱյ, որ չիցէ սաստիկ տենդ տղայոց, և տղամարդոց։

Եղեամն որ է սառուցեալ ցօղ՝ ՚ի բազում տեղիս վնասէ խաղողոյ. յարտորայս գայցեն գազանք անտառի, և Թռչունք։



Առ

Աղօթեսցուք առ ած, մի՛ գուցէ երևիցի մահտարաժամ, երկրաշարժութի, և կայ-ծակնահարութիւն.

Յայսմ ամի արեգակն է 'ի վեցերոր-դում տան երկնից. ուստի սաստիկ հիւան-դութի, ցաւագարութի՝ մանաւանդ 'ի քաղս. հարուածք, և կոտորուածք անասնոց. պա-կասութի ձիթոյ, զի կշիռն է ժամանակեա.

Փայլածուն արևելեան և կցեալ ընդ երևակին՝ ցուցանէ զնշան մեծ, և զառա-ժանս հանդիպելի թագաւորին և արքունի գործոց. առատութ՛ ամ, և ցնծան երա-ժիշտք ընդ գուսանաց.

Լուսաբերն յեօթներորդ տան երկնից է, նշանակէ յաջողութի մեծ վ՟ս կանանց, և խղաղարաց արանց. բայց լրակի ցուցանէ զհարուածս ռամկաց, ընդ որում զօհալն 'ի հինգերորդում տան երկնից նշանակէ.

'Ի վախճանի՝ լինելոց է մեծ կռիւ, ըս-պանութի, և հեղումն արեան. մեծ բաժին բանտարգելոցն փախիցէ. ընդ որում հրա-ողն յանկեան երկրի 'ի տան զօհալին՝ ա-ռանց սորա հայեցուածոյն առ հրատն՝ գուշակութի ցուցանէ.

—

1837 1865 1893 1921

Երբ արեգակն 'ի 9 մարտի ամսոյն մտանէ յառաջին աստիճան Խոյին,

իշխօղ տարւոյն լինի Լուսաբեր մոլորակն ընդ Այծեղջեր կենդանակերպին, որ է օթեւան երեւակին։

Յառաջիկայ տարիս լինի շատ առատութիւն ցորենոյ, գինւոյ, ապրշմի, և այլ մրգաց։ Սկիզբն ձմեռան լինի ցուրտ ընդ կարկտով. մէջն՝ տաք, վերջն՝ բարեխառն։ Գարունն ցուրտ մինչև Յունիսի 21։ Ամառն երբեմն անձրևէ, և որոտայ։

Ասէ Պտղոմէոս իմաստասէրն, թէ յաշնան ժամանակին լինի առատութիւն աղբերաց, և երեւին հիւանդութիւնք։ Պարտիք զգուշանալ ՚ի շատակերութենէ, և գինարբութեամբ առաւելով։

Յայսմ տարւոջ՝ զի լուսնթագն յետաքայլ և ողջոյն գտանի, և վատաբախտ յերեւակէն. է նշան՝ թէ Թագաւորն պատժիցէ զիւր սպասաւորսն. և՝ է նշան, թէ լինելոց են մեծամեծ պատերազմունք. զի լուսնթագն գտանի յութերորդում տան երկնից։

Դարձեալ՝ հրաման քառանկիւնի հայեցողութեան ընդ երեւակին և լուսնթագին՝ նշանակէ յոլով պատերազմունս, և զինուորական կործանմունս։ Նաև՝ քանզի առացեալ հրաման է լուսնթագին տիրեն տաներորդ տան երկնից. է նշան՝ թէ Թագա



ւորն

ւորն վասն պատերազմի ելցէ յիւր երկ_րէն, և արասցէ ճանապարհս.

Դարձեալ՝ զի հրատն է հայեցեալ 'ի լուսնոյն քառանկիւնի հայեցողութ̃. ցու_ցանէ զանազան հիւանդութիւնս մարդոց, հանդիպիլ տապուն, և չորուն. և սով, և մահտարաժամ, սատակումն կենդանեաց.

Ռամկական ժողովուրդք միասին 'ի տե_րանց, ըստ որում ցուցանէ լուսինն կցեալ ընդ երևակին. Նա՝ զի արեգակն գտա_նի յերրորդում տան երկնից, նշանակէ՝ թէ թագաւորն առեալ ընդ ինքեան զօրս կռուարարս՝ առնելոց է ճանապարհս.

—

1838 1866 1894 1922

Երբ արեգակն 'ի 9 մարտի մտանէ յառաջին աստիճան Խոյին, տանու_տէր տարւոյն լինի Երևակն Է. Մ_րհաւին.

Նաւաջինեաց աճն լինի միջակ, առատ ըն_չիւք, ուրախութ̃ 'ի մէջ մարդկան. մահ անասնոց, և թռչնոց. բոլոր տարին հիւսէն հարաւային հողմունք.

Սկիզբն ձմեռան լինի քամոտ. միջն՝ բա_րեխառն վերջն՝ սառնամանիք, և հողմունք. Գարունն լինի բարեխառն, և թեթև անձ_րև. Ամառն ևս բարեխառն, զի անցչ_

հողմունք հնչեն . լինի առատութի պտղոց , բայց մրգքն ապականին : Յաշնան երևին տկարութիք՝ մանաւանդ երիտասարդաց . և ՚ի մէջ կանանց ջրհոսութիք աչաց , որով մեռանին ոչ սակաւք : Լինին և՝ ըստ կարծեացն Դեմոկրիտոսի , Հիասաքեր կարկուտք : Տէր ած փրկեսցէ զմեզ ՚ի տարաժամ մահուանէ , ամէն :

Յայսմ ամի թուի՝ թէ ռամիկք կրեսցեն ՚ի տերանց իւրեանց բազում ծանրութիս և բռնութիս : Նաև՝ ծանր տկարութիս սակս արեան ապականութէ : Մահ արանց այնոցիկ՝ որք ընդ երևակաւն ծնան , և որք անցեալ են ամօք . ըստ որում ցուցանէ երևակն կցեալ ընդ արեգակն :

Նաև՝ գտանի ընդ գլխոյ վիշապին , որ աղագաւ նշանակէ զոչխարաց և զայլ անասնոց մահս : Պարզեալ՝ լուսնթագն գը տանի ընդ տուտն վիշապին , և ընդ Հրատակար գիրս զետեղեալ՝ ցուցանէ զմահ մարդոց . տկարութի . անհաւատարմութի . աղքատութի . տենդ , և ջերմեռանդ ախտ :

Նաև՝ զի արեգակն գտանի յերկոտասաներորդում տան երկնից , նշանակէ՝ թէ թագաւորք ունիցին զնեղութիս , և ընտանիքն զանազան խորհուրդս դիմակցութե ընդ թագաւորաց : Ի վախճանի՝ զի

փայ

փայլածուն գտանի 'ի միատասաներորդում տան երկնից, նշանակէ՝ թէ թագաւորն հրաւիրէ, և պատուէ զայս իմաստունս։

—

1839 1867 1895 1923

Յորժամ արեգակն 'ի 9 մարտի մտանէ յառաջին տունն Խոյին, իշխան տարւոյն լինի Արեգակն Է. Գ. րհոս կենդանակերպին։

Տարին լինի առատ ցորենով, գինւով, և այլ թեթևագին ընչիւք. յորդ անձրև. մահ թռչնոց՝ յարևելեան ձմեռնային կողմունս. զի լինին յայնկոյս կողմունս ցուրտ մառախլապատ, և հեղեղք ջուրց։

Ձիւնի գարնանամուտին 'ի խիստ և 'ի լեռնային տեղիս տեսանին կարկուտք. բայց պտղաբերութիւն առատ։ Բոլոր տարին լինի առողջարար՝ բայց 'ի յաշնանային եղանակին։ Պարտ է կանուխ քաղել զպտուղս, զի մի՛ ապականեսցին յանձրևաց։

Յայսմ ամի՝ պտուղք և միրգք լինին բարեհամք, յոլովածուծք, փութահասք, և մնացականք զկնի պտղաքաղութեանն. ծառք պարարտք, և պտղալիցք. բարւոք է անկելն. մահ մեծամեծ կենդանեաց. ոչ սակաւ ալէկոծութի ծովու. ուժգին, և

 սաս

սաստիկ հողմունք․ Ծանրագնաց թուի ա-
ռաջիկայ տարիս՝ քան զհասարակն, և ըզ-
սովորականն։

Հայսմ ամի բազում ասպատակք եղեն․ և ՚ի մարդս ոչինչ բարեպաշտութ գտանի․ ըս̃ որում երեւակն ցուցանէ յիններորդում տան երկնից։ Նաև զի է հայեցեալ քառան-կեանի հայեցողութ̃ ՚ի հրատէն՝ զինուորք վիճեսցեն ընդ միմեանս, և փոփոխեսցին ՚ի տեղ-ւոջէ միոյ յայլ տեղիս։

Նաև ՚ի պատճառէ՝ զի տասցեալ հրատն գտանի յերկոտասաներորդում տան երկ-նից, նշանակէ զբազմաց գանձակս և սրով սպանումն։ Նաև՝ զի արեգակն զը-տանի յիններորդում տան երկնից՝ և կցե-ալ ընդ գլուխ վիշապին, ցուցանէ՝ թէ թագաւոր մի առնէ զձանապարհ․ ցուցանէ և՝ զմահ հզօր արանց, և այլ մարդոց։ Զքաղցին թագաւորքն՝ որք բռնութ̃ կա-մեցին թագաւորել, և զայլ իշխանութիւն ընդ տէրութ̃ առնել։

Պարձեալ՝ լուսաբերն և փայլածուն բախտաղուրկք և այրեցեալք, նշան է՝ որ մեռս ինչ հանդիպի ումեքաց ՚ի թագաւո-րէն, և թագաւորն մեռանի ՚ի ումեքաց։ ՚Ի վախճանի՝ տասներորդ տան իշխողն է անբախտ․ և մինչ այրեցեալ ես գտանի



յան

յանկեալ տան, ցուցանէ զանձկութիւն, վշտա-
կրութիւն և զհիւս արքունական պաշտօնէից։

—

1840 1868 1896 1924

Երբ արեգակն ՚ի մարտի 9 մտանէ յա-
ռաջին աստիճան Խոյին, իշխօղ
տարւոյն լինի Լուսինն։ Սա ՚ի պատճա-
ռէ՝ զի լուսինն գտանի ՚ի մէջ երկնից՝ ՚ի
տան լուսնթագին, որ է ձուկն։

Յառաջակայ ամն լինի առատութի ցորե-
նոյ, և գինւոյ. յաճախ կարկուտ՝ յաղա-
ռած և ՚ի լեռնային կողմունս. պտուղք
առատանան. գետք յորդանան. տարին բո-
լոր է առողջարար՝ բայց յաշնան եղանա-
կին, յորում գուշակի մահ կանանց։

Ըստ Պտղոմէոսեան՝ ծնանին շուրջ ըղ-
բերականին ծորակք. ուստի պարտին մա-
նաւանդ երիտասարդք՝ ըմպել զգինի, և
ոչ զջուրն միայն՝ ՚ի գարնան եղանակին.
ձիթենիք ոչ առատ երեւին։

Յայսմ ամի ՚ի պատճառէ՝ զի լուսնթա-
գըն գտանի յերրորդում տան երկնից՝ նը-
շանակէ զբարեբախտութի, և զաջողութի
մարդկան. զի կչիռն գտանի ընդ բախտի
կիտուածն, նշան է ձիթոյ նուազութե։

Սա՝ զի հրատն կցեալ երեւի Ը գլուխ



վիշա

վիշապին, ցուցանի՝ թէ մարդիկք ասցեն զչէնս, և ընդ միմեանս վիճեսցեն։ 'Ի վախճանի՝ զի երևակն գտանի յանկիւնոջն, ցուցանէ զսաստիկ պատերազմ, և զսուժգին կոտորուած։

—

1841 1869 1897 1925

Յորժամ 'ի 9 մարտի ամսոյն արեգակըն յառաջին աստիճան Խոյին մըտանէ, իշխող տարւոյն լինի Փայլածուն. վասն զի գտանի 'ի մէջի երկնից 'ի տան լուսընթագին որ է ձուկն, յիւրում բարձրութեն, և յիւրում յառաջնում հայեցողութե։ Այս տարին է. յայսմ ամի գուշակի կատարեալ հաւասարումն ցորենոյ, և մահ մեղուաց. ախտ ժանտաբեր, և պտղոց ապականութի։

Սկիզբն ձմեռան անձրևային՝ հանդերձ որոտմամբ, և ցրտով. մէջն՝ բարեհաճոյ. վերջն՝ սաստկութի սառանց, անձրևաց, և գետոց։ Գարունն անձրևային, և խոնաւակար ծառոց մինչև ցաւարտն. 'ի տեղիս տեղիս լինին կարկուտք։ Ամառն անձրևային, և մառախլապատ. պարտիմք կանխել 'ի հունձսն, զի մի՛ ապականեսցին։ Աշունն հողմաշատ, և առողջարար. որթք լիցեն բազմախաղողք. է բարուք անկեան զծառս, և



ղար

զարմաս • ցորեանն դիւրաւ ապականի ։ Պարտ է աղաչել զա̃ծ վասն պտղոց , և զի չիցէ խռովու̃թի 'ի մէջ իշխանաց ։

Յայսմ ամի՝ տեսցի սաստիկ մահ մե_ծամնուն և հարուած կանանց • զի երեւակն և լուսաւորքն գտանին կցեալք ։ Դարձեալ՝ լուսնթագն յառաջնում տան երկնից՝ նը_շանակէ զազատու̃թի մարդոց յոմն հիւան_դութենէ մարմնոյ ։

Պատահեսցին սաստիկ պատերազմունք՝ և սպանմունք • մանաւանդ 'ի Թագաւորս՝ և 'ի յօգնիչս իւրեանց • ըստ որում ցուցա_նէն երեւակն յանկեան , և հրատն յութե_րորդ տան երկնից ։

—

1842 1870 1898 1926

Մտանել արեգական յառաջին աստի_ճան Խոյին 'ի 9 Մարտի ամսոյն , իշ_խող տարւոյն լինի Լուսնթագն ։ Քանզի սա գտանի 'ի մէջի երկնից՝ 'ի տան հրա_տին որ է Խոյն , ուր գոյ իւր բարձրու̃թի յիւրում առաջնում հայեցողու̃թ ։

Այս կարելի է ասել , թէ առաջիկայ տարիս լինի պտղաբեր , և առատ ցորենով , գինւով , մեղրով , ձիթով , վշով , ապրշմաւ , ձկամբ , և այլ բարեհամ պտղովք ։ Ձա̃ն

բոլոր լինի բարի , և խաղող՝ բաց ՚ի բօ-
թից պատերազմի ։

Սկիզբն ձմեռան ցուրտ՝ հանդերձ կարկտօք ։ միջին՝ տաք , վերջին՝ հանդարտ ։ Գարունն ցուրտ՝ մինչև ց յունիսի 22 ։ Նշան է անձրևաց՝ և որոտմանց ։ պակասին ջուրք յաղբերաց ։ մեռցին եզինք ոչ սակաւք ։ Օ լինի աշնան՝ ածին գեղջկայք ։ եղիցին հիւանդութիւնք ։ Աղաչեցուք զնա , զի չիցէ մահհարուած ։ Պարտիք լինել սակաւակերք , և զգուշանալ ՚ի ջրոց ։

Արդ՝ զի յայսմ ամի արեգակն գտանի յերկոտասաներորդում տան երկնից՝ ընդ հրատին , ցուցանէ թէ թագաւոր ոմն յոյժ նեղիցի յիւրոց թշնամեաց , գուցէ և ՚ի նոցանէ սպանցի ընդ սատակմանս բազում զինուորաց ։

Այս՝ զի երևակն է յեղն և ՚ի քառակուսի հայեցողուէ ընդ լուսնթագին , ցուցանեն արինահեղ պատերազմունս ։ վայ ՚ի կողմանէ թագաւորին հասանիցին մարդոց սաստիկ նեղութիւնք , և տրտմութիւնք ։ Այս՝ նըշանակին վասն թագաւորաց , վիճմունք , տարաձայնութիւնք , և վնասք վաճառականութեան ։

Յայսմ ամի՝ երբ արեգակն յառաջին աստիճան Խոյին՝ ՚ի 9 մարտի մտա_ նէ, իշխող տարւոյն լինի Փայլածուն, որ գտանի ՚ի մէջ երկնից. իբ՝ ՚ի մէջ Խոյին, որ է տուն հրատին, եւ յառաջնում հայե_ ցողութեան.

Աստի յառաջակայ ամն է լիութի՛ ամ իրաց, ցորենոյ, խաղողոյ, ձիթապտղոյ, կը_ տաւահատի, աբրըշմի, մսոյ, եւ ձկան.

Սկիզբն ձմեռան լինի ցուրտ, եւ կար_ կուտ. մէջն՝ տաք, վերջն՝ քաղցր. Գարու_ նըն ցուրտ մինչեւ ցակիզբն ամառան. Ամառն յոյժ ջերմ. Աշունն սառնոտ, անձրեւոտ, եւ հիւանդոտ. հանդիպին մանա_ ւանդ մանկամարդաց ցաւք աչաց.

Դաշտայինք լինին առաւելապտուղք՝ քան թէ տեղիք լեռնայինք. Գինիք ընտ_ րին, եւ նուազին. պարտ է յամեցուցանել զխաղողաքաղութին. Պտուղք ծառոց առա_ տասցին, բարւոք է նաւարկութ՟ ուղեւորել.

Ասէ Գեմինիթոս, թէ յաճախին կար_ կուտք, եւ հողմունք ուժգնակի հնչեսցեն. Պարտ է աղաչել զԱծ, զի մի՛ երեւեսցին երկրաշարժք. Ցուցանին սաստիկ պատե_ րազմունք, եւ մարդասպանութիք.

Թագաւորք եւ իշխանք դիցեն հարկս ծառայութեան 'ի վր̅ ժողովրդեանն , զի կատարեսցեն զարարս անիրաւս ։ Հարիցեն մարդիք վատթարք , եւ վճռունք · ըստ որում ցուցանէ արեգակն ներհակ հայեցողութ̅ ընդ հրատին եւ երեւակին՝ յանկեան տասներորդ տան երկնից ։

Ի վախճանի՝ հրատն եւ ներհակ հայեցողութ̅ հայի յարեգակն յերրորդ տան երկնից , եւ թաւալումն է ցերեկոյ · վա̅յ ցուցանի մեծ եւ արիւնահեղ պատերազմ , անհնարանդութ̅ ռամկաց առ թագաւորն , եւ կորուստ թագաւորութ̅ իւրոց ։ Երեւեսցին եւ վիճմունք , խռովութիւնք , եւ խնդիրք 'ի մէջ եղբարց , եւ սիրելեաց , ընկերաց , եւ ընտանեաց ։

—

1844 1872 1900 1928

Ի մտանել արեգական յառաջին աստիճան Խոյի՝ 'ի Գմարտի , իշխող տարւոյ լինի Երեւակն ։ Արդ՝ զի երեւակն գըտանի 'ի մէջ երկնից՝ 'ի մէջ խոյին որ է տուն հրատին , ուր է բարձրութ̅ իւր · եւ գտանի յառաջնում հայեցողութ̅ ։

Վասն այսորիկ ասելի է , թէ յառաջիկոյ ամ̅ն լինի մեծաւ առատութ̅ ցորենոյ ,



եւ

և ոռձկի ։ Ի բարութեն խոյին տատանեան ոչխարք , բայց պակասին ձկունք ։ մեջակ խուղ ձիթատողոյ , և մեղր ։ երկքօրեայ և քառօրեայ տենդք տիրեսցեն ։ զամենայն հնչեն հարաւային հողմունք ։

Սկիզբն ձմեռան հողմառատ ։ մեջն՝ բարեխառն, վերջն՝ ջրառատ և սառնամանեայ ։ Գարունն՝ թեթև անձրևաւ լինի բարեխառն ։ Նոյնպէս և ամառն ։ բայց թուիթէ՝ հողմն անոյշ շնասիցէ մրգոց ։ Աշունըն գուշակէ զտկարութիւն՝ մանաւանդ մամաշոտ կանանց , որոց ոչ սակաւ լիցի մահ ։ Կայ կասկած կարկտահարութե , և տարաժամ մահու ։

Յայսմ ամի բազում աւազակք երևեսցին ։ ով որ է ընդ երևակիւն ծննեալ՝ լինի սակաւահասատ , և փոքրագութ ։ ըստ որում երևակն յիններորդում տան երկնից ցուցանէ ։

Իսկ՝ հրատն կցորդ ընդ լուսնթագին (և համաստեղութեն) յեօթներորդում տան երկնից , է նշան արիւնահեղ պատերազմաց , և մուէլութեց , մահ փարթամ արանց , և համբաւաւորաց ։ Լուսաբերն յեօթներորդի տան երկնից անկեանն , զեկուցանէ զանձողութիւն կանանց , և կնոտ արանց ։

Արդ ՚ի 9 մարտի ամսոյն արեգակն յառաջին աստիճան Խոյին մտանէ, իշխող տարւոյն լինի Լուսինն։ Արդ՝ զի լուսինն գտանի ՚ի մէջ երկնից ՚ի ցուլ կենդանակերպի՝ որ է տուն լուսաւորերին, ուր գոյ իւր բարձրութին՝ առաջին աստիճանն և առաջին հայեցողութին։

Այս ասելի է՝ թէ տարիս այս լինի առատ ցորենով, գինւով, պտղով, ձիթով, ապրշմաւ, քթանիւ, և ձկամբ։ Եղանակն յոյժ մեղմ, և անոյշ։ առատութի ջրոյ։ Ոչ աղտգաւ ոչխարք և մեղուք ոչ ապականին։

Ամառն եղիցի բազմանձրև, և խօթաբեր։ Ձմեռն հասարակ։ Գարունն բարեխառն։ Աշունն ջրառատ։ Յարևելեան կողմանէ՝ առաւել քան թէ յարևմտեան կողմանէ ապականին որայք ՚ի կալի։ Առողջութի մարմնոց է, զի լուսնթագն գտանի յառաջնում տան երկնից։

Սա՝ երևակն ՚ի տասներորդում տանն, և տեսան վերջապէն կցորդ ընդ հրատին, և գոլով նոյն հրատն ՚ի շարժելի նշանի՝ ցուցանի արիւնարգանդ պատերազմ, և կոտորածք։

Թագաւորք և իշխանք գտցեն հնազան

դեղոյն և պաշտօնէիցն զհարկս ծանուանս ,
և զայլ ինչ հրաման , և կարգ անհաճոյ ամ
կաց . Արեւելին աւազակք հզօրք և գողք ,
մինչ զի Ճանապարհորդք կասկածանօք ուղե
ւորիցին . ըստ որում յայտնէ հրատն լինել
բորբոքում տան երկնից՝ հանդերձ ատամբ
վիշապին .

Իսկ զի ասացեալ հրատն գտանի յերե_
ւակի տանն , և լուսնթագն ոչ հայի նմա .
տարի նշմարի՝ թէ բանք բռնութե բա_
նայցին , և բազումք ՚ի բանտարգելոցն ել_
ցեն . Իսկ՝ զի փայլածուն յերկոտասանե_
րորդ տան գտանի , գուշակի՝ թէ վաճա_
ռականք և իմաստասէրք անկանիցին յա_
ստիճանացն իւրեանց .

---

1846 1874 1902 1930

Երբ արեգակն ՚ի 9 մարտի յառաջին
աստիճան Խոյին մտանէ , իշխող
տարւոյն լինի Հրատն . Արդ՝ զի սա գտա
նի ՚ի մէջ երկնից Ժ ցլոյն , և առաջին հայե
ցողութն ցուցանէ մեզ զառաջիկայ ամն
լինել ցամաք , յոյժ ցուրտ , և ձիւն . միջակ
պտուղ , ապրշում , ձէթ , գինի , և ձուկն .

Գարունն , և ամառն դէջ . աշունն չոր ,
և ցամաք . ձմեռն սաստ , և արգասանդ ,

խոկ և թաղմահողմ․ ցորեանն ձմեռագին․ ոչխարք սակաւաբերք, ևս՝ մեղուքն․ քթա-նըն, միսն, թանկագինք․ ունոց մեջակք․ Հրատն զկուխ շնորհէ․ Ած ազատեսցէ ըզ-մեզ յերկրաշարժէ։

Երեւակն է յեօթներորդ տան անկեանն․ վնչ լինին պատերազմունք, և կոտորուածք․ Երեւակն է կցորդ ընդ լուսաբերին, որ ասացաւ՝ է նշան մահուան անկինոյ ու-րուք՝ հարստի և մեծահամբաւորի։

Լուսինն լծորդ ընդ գլուխ վիշապին, ցուցանէ զմահ գործելի արանց․ զիշխանա-տութի, և զմեծ մեծաս ազգաց։ Երեւակն յիններորդում տան երկնից՝ նշանակէ զմա-նաւորս թագաւորի միոյ։ Հրատն ընդ լուսինն պատահեսցեն զերկրաշարժս մե-ծամեծս։

—

1847 1875 1903 1931

Եթէ արեգակն ՚ի 9 մարտի մտանէ յառաջին աստիճան Խոյին, փայ-լածուն լինի իշխող տարւոյն՝ հանդերձ Երկաւորաւն, որ է տուն և օթևան տան ձին փայլածու մոլորակին։

Այս պատգամաւորութիւն տարւոյս լինի ամիր նուազ․ նշանակէ ևս կռիւս պատե-



րազ

բաղմակամս , կատարուածս , և հարուածս չորքոտանեաց , պիծակաց , մեղուաց . և ցաւ ժանտամահ .

Սկիզբն ձմեռան լինի ցրտային . մէջն՝ բարեխառն . վերջն՝ բազմասառն , անձրևային , և յորդութի գետօրէից . Գարունն՝ անձրևաշատ , որք ծառոց վնասեն . վերջն՝ ՚ի տեղիս տեղիս անկանին կարկուտք . Ամառըն անձրևոտ , և մառախլապատ . պա՛րտ է շուտով քաղել զցորեանս , զի մի՛ ապականիցին . Աշունն եղիցի քամոտ , և առողջարար . որթք՝ բազում խաղողս բերցեն . Նորիս այս է բարի անկելոյ , տեղափոխելոյ , և պատուաստելոյ . ցորեանն դիւրաւ ապականի . Աղաչեսցուք զնա վն պտղոց .

Յայտմամբ ցուցանի աներումն , և խառն դարունն գաւառի կամ քաղաքի մէջ , և վատաբախտութի ցեղի մարդկային . Նա զի հրատն յեօթներորդումն տան երկնից , և քառակուսի հայեցուածով փայլածուին , և երևակն յութերորդումն տան երկնից ևս քառանկիւնի հայեցողութ՟ ընդ արեգական դառնի , նշանակէ զանթիւ մարդոց մահն .

Սատեալ ևս բազմանան նենգագործք , որք այլոց զխորհուրդս փորեն . բայց ինքեանք անկցին ՚ի նոյն գուբն , զոր այլոց փորեցին . տեսանի ամանևս զերունի մարդոց .

 Խաս

Խռովութիւնք և կռիւք ՚ի մէջ պարոնաց, և զանազան գաւառաց. այնպէս՝ զի ՚ի մէջ սիրականաց և բարեկամաց՝ հաւատարմագոյնն ոչ մնասցէ։

—

1848 1876 1904 1932

Երբ տարեգլուխն ՚ի 9 մարտի յառաջին կէսն Խոյին մտանէ, իշխող տարւոյն լինի Լուսնթագն ընդ երկաւոր Նշանաւն, որ է տուն փայլածուին։ Եւ զի գտանի սա ՚ի մէջ երկնից, ուր գոյ իւր բարձրութեան. և՝ յիւր յառաջին հայեցողութեան. վասն այս լինի տատ՝ ՚ի մեղմութեան լուսնթագին։

Սկիզբն ձմեռան՝ ջրաւէտ. մէջն՝ բարեխառն, և քամոտ. վերջն՝ գէջ, և եղեմնոտ։ Գարունն լինի խառն ընդ հիւանդութեան։ Ամառն նման գարնան։ Աշունն գէջ, և սկիզբն տակաւ ինչ հիւանդութեան։

Վարիս այս լինի կասկածոտ վասն յղի կանանց։ Զէյթունն լինի բաւականապէս. միւսն, և կթանն քիչ մի թանկագին երևի։

Հայսմ ամի՝ զի տարեգլուխն յերկոտասան երրորդում տան գտանի ընդ հրատին, և նշան՝ զի թագաւոր ումն սատակապէս նեղիցի յիւր թշնամեացն, և գուցէ ՚ի նոցանէ



տացէ

տացէ զմահն՝ հանդերձ արիւնահեղ կո_
տորածովք զինուորացն ։

Եւ երեւակն ՚ի բարձրանալն և քառան_
կիւնի հայեցողութ ընդ լուսնթագին՝ ցու_
ցանէ սաստիկ պատերազմ , որով տիր նե_
ղանան և տրտմին մարդիկք յիւրեանց թա_
գաւորէն ։ Ցուցանէ ևս՝ զվտանգ ինչ
թագաւորաց ․ վէմս , խռովութիւնս , և զանկու_
մըն վաճառականութեանց ։ Եւ զի գտանի ՚ի
սեւեռեցելոյ նշանի՝ տարին լինի միջակ ․
արմտեացն կուիք ․ ցուք ոմանք և ծաղիկք ։

—

1849 1877 1905 1933

Արեգակն երբ ՚ի 9 մարտի մտանէ
յառաջին աստիճան Խոյին , իշխող
տարւոյն լինի Երեւակն ․ որ գտանի ՚ի մէջ
երկնից ՚ի կշռի՝ որ է տուն լուսաւո_
րին , ուր ունի զիւր բարձրութիւն , և յիւր
յառաջին հայեցողութեամբ ․ վասն առաջիկայ
տարիս լինի միջակ , և ուրախութիւն ՚ի մէջ
մարդոց ․ և զտարին բոլոր հարաւային
հողմն փչէ ։

Սկիզբն ձմեռան լինի քամոտ ․ մէջն՝ բա_
րեխառն ․ վերջն՝ սառնաշատ , և քամոտ ։
Գարունն լինի միջակ ընդ թեթև անձրևաւ ։
Ամառն միջակ , և բարեխառն ․ բայց զի

 հող

հողմունք անուշակի հնչեցին . վայ որտուղք ապականին . Աշունն գուշակէ ըզհիւանդութի՛ ՚ի մէջ փափաշոտ կանանց , յորոց բազումք ամուսնացին .

Ասէ Դեմոկրիտոս , թէ լինի մեծատակար կարկուտ . և աղաչեսցուք զՏՐ , զի մի՛ երևեսցի մահտարաժամ .

Յայսմ ամի բազմանան ուտաղակք . և որք ծնան ՚ի ներքոյ երևակին՝ ունիցին փոքըր հաւատ , և բարեպաշտութի . ով երևակն յիններորդում տան երկնից ցուցանէ . Եւս՝ հրատն կցեալ ընդ լուսնթագին և յեօթներորդում տան երկնից՝ ցուցանէ լինիլ սաստիկ կռիւս , և կոտորուածս . մեռանիլ մեծահամբաւ և հարուստ արանց . բայց տարին լինի քաղցր .

Դարձեալ՝ լուսաբերն յեօթներորդում անկեան երկնից՝ ցուցանէ զաջողութի կանանց , և խգաբարոյ արանց .

—

1850 1878 1906 1934

Երբ ՚ի 9 մարտի արեգակն յառաջին աստիճան Խոյին մտանէ , իշխան տարւոյն լինի Արեգակն ընդ Խեցգետին կենդանակերպին , որ է տուն լուսնին . Արեգակն գտանի ՚ի մէջ երկնից . ուր ունի

նի զիւր բարձրութիւնն , և զիւր առաջին հայեցուածն ։

Մ՟եզ ցուցանի՝ թէ այս տարիս լինի յոյժ առատ , բերրի , և պարարտ ամ թե- թևագին ընչից ․ լաւ հնձաքաղութի , շատ պը- տուղ ․ գինի , ապրշում , ձէթ , մեղր , և ձուկն ։ Օ՟դն բոլոր լինի առողջ , և խաղաղ ։ Ձմեռն առք ․ գարունն գէջ ․ ամառն , և աշունն քամոտ , առատութի ոչխարաց , մե- ղեր , և ընտոց ։ Մ՟ականին պտուղք պակ- սիցաց ․ մահ , և հարուած երեխայից ։

Հ՟այսմ ամի գտանին գողք բազումք , և՞ի մարդս ոչ տեսանի բարեպաշտու․ ընդ որում ցուցանէ երևակն յիններորդ տան երկ- նից ․ զի ունի քառանկիւնի հայեցուած ը հրատին ․ զինուորք ընդ իրեարս ունիցին խռովութիս , և փոխիցեն զառաջին տեղիս ։

Եւ զի ասացեալ հրատն գտանի յերկրա- տասաներորդում տան երկնից , է նշան՝ որ բազումք դանակաւ և թրով անկցին ։ Եւ՝ արեգակն յիններորդում տան երկ- նից և կցեալ ընդ գլուխ վիշապին , ցու- ցանէ՝ թէ թագաւորն արասցէ զճանա- պարհս ․ և՝ զմահ մեծամեծաց , և այլ ա- ռանց ․ և՝ երևեին նոր թագաւորք , որք բռնութե կամիցին իշխել և տիրել այլոց իշխանու․ ։ Ս՟ակաւին լուսաւորն և փայ



լածուն

լածուն վատաբախտք և կիզեցեալք՝ նչ
նակեն զինաս ինչ գալ ժողովրդեանն
Թագաւորէն, նմանապէս ձեռավիլ Թագա-
ւորէն ՚ի ժողովրդենէ ։

՚Ի վախճանի՝ տասներորդ տան տէրն վա-
տաբախտ և յանկեալ տան գոլով՝ կիզե-
ցեալ ես՝ ցուցանէ ցաւս, նեղութիս, վիշտս,
և ձեռաս հանդիպիլ արքունի պաշտօնեից։

—

1851 1879 1907 1935

Յորժամ արեգակն ՚ի Գ մարտի յա-
ռաջին կէտ Խոյին մտանէ, իշխող
տարւոյն լինի Լուսինն, որ գտանի ՚ի մէջ
երկնից յառիւծ հնգանակերպի՝ որ է տուն
արեգական ։

Այս տարիս լինի պարարտ ։ Յամառան
ժամանակին շատ ջուր, և հիւանդութի։
Ձմեռն շատ ցուրտ, և մնայք Գետք Թանձ-
րանան զկնի գարնանամտին ։ Յապառաժ-
ն՚ի լեռնային տեղիս յոլով կարկուտ, բայց
տայցեն բազում պտուղս ծառք լեռնայինք․
զամն բոլոր լինի առողջ՝ բաց ՚ի յաշնան ։

Ըստ Պիմոկրիտոս փիլիսոփայն, թէ
շուրջ զերուսանոյն ծնանին փշրանք․ և թէ
մննաւանդ երիտասարդք պարտին խմել
զգարնանն գինի․ և զէյթունն յայամ առնել
լինի բաւական ։

Եւ զի լուսնթագն յառաջնում տան երկ-նից գտանի, նշանակէ զառողջութի մարդ-կային մարմնոյ։ Երեւակն ՚ի տասներորդում տան երկնից, և տուտն վիշապին կցեալ ընդ հրատին, և հրատն ՚ի շարժուն կենդա-նակերպի, ցուցանի մեծ պատերազմ և կոտորուած։

Եւս՝ Թագաւորն և իշխանքն դիցեն ծանր հարկս հնազանդելոցն, և ռամկաց. և արասցեն զայլ անիրաւութիս։ Յեռանին շատ աւազակք և գողք, այնպէս՝ որ ճա-նապարհք լցեն ահօք, և կասկածօք. ընդ որում ցուցանէ հրատն ՚ի տան իններոր-դում երկնից ընդ տուտն վիշապին։

Եւ զի տասցեալ հրատն գտանի ՚ի տան երեւակին, և լուսնթագն ոչ հայի առ նա. վն այսորիկ կարծիք է, թէ բանտք բանտու-թե բացեալ լինին, և բազումք ՚ի բանտար-գելոցն ելանիցեն. փայլածուն գտանի յեր-կոտասաներորդում տան երկնից՝ ցուցանի թէ վաճառականք անկցին յաստիճանացն, և ՚ի պատուոյն զրկս ունէին։

—

1852 1880 1908 1936

Իշխան տարւոյն լինի Հրատն, երբ ՚ի 9 մարտի յառաջին աստիճան Խոյ-ին

ին մտանէ արեգակն · և հրաման ունիցի ընդ ինքեան զաւրութն որ է տուն արեգական · ամուլ և ցամաք երևի տարիս այս ։

Սկիզբն ձմեռան ցուրտ , ջրային , և քամոտ · այնպէս՝ որ ծառք արմատովքն խելացին · մէջն՝ բարեխառն · վերջն՝ ցրտին ։ Գարունն անձրևոտ · նման ամէն լեցի ամառըն · աշունն թուի գոլ ջերմ , ցաւադար՝ իջուածոց , հազից , և անձկութն կրծոց · վսյ հարկ է ուտելն զուակաւ հաց , և ըմպելն շատ գինի ։

Ըստ Դեմոկրիտոս , թէ զէյթունն լինի առատ · տարին աջողակ որթոց · բայց ոչ է պարտ ջրելն · մեռանին բազում մեծամեծ կենդանիք տանց · գազանք առատանան · հիւանդութի կանանց · ձայն բօթալի զօրաց ։ Պարտ է աղաչել զԱծ , զի մի՛ երևեսցին երկրաշարժք ։

Երևակն յանկեան եօթներորդ տան երկնից · վսյ լինին արիւնահեղ պատերազմունք , և կոտորումք ։ Իսկ՝ նոյնն է կցեալ ընդ լուսաբերին , վսյ ակէն մի մեծ՝ անուանի՝ և հզօրաւ մեռանի ։

Լուսինն կցեալ է ընդ գլուխ վիշապին · վսյ մարդիկք զովութն արմանիք մեռանին · պտուղք վնասին յոյժ , և ապականին ։ Խաղաղութն ուղևորեսցի՝ զի հրաման է ընդ



լուս

լուսնոյն, ուստի սաստիկ երկրաշարժք գուշակէին։

---

1853 1881 1909 1937

Երբ 'ի Ցմերան արեգակն յառաջին կէտն Խոյին մտանէ, տարւոյ իշխանն լինի Լուսնթագն ընդ նշանաւ Առիւծոյ՝ որ է տուն արեգական։

Յառաջիկայ տարին լինի յոյժ պարարտ, և առատ ցորենով, ձիթով, գինւով, ապրշմաւ, և ձկամբ, և այլ ամ մրգօք։

Սկիզբն ձմեռան ցուրտ ընդ կարկտօք․ միջին՝ տաք․ վերջին՝ բարեհաճոյ․ Գարունն ցուրտ և անձրևոտ մինչև ցյունիսի ամիսն․ Ամառն սաստանայ մեղ անձրևս, և զովոտ․ պակասին ջուրք յաղբերաց․ վասն այսորիկ մեռանին բազում եզինք․ Աշունն տաստացուցանէ զգեստս։

Ասէ Դեմոկրիտոս, թէ երևին հիւանդութիւնք․ զնա աղաչեցուք՝ զի չիցէ մահ տարաժամ։ Լեր սակաւակեր, և ըմպեա՛ առատօրէն զգինի․ ասէ և նոյն իմաստասէրն՝ լինի կռիւ։

Յայսմ ամի ցուցանի ես՝ թէ թագաւոր ոմն նեղիցի, և վշտանկիցի յոյժ յիւր թշնամեաց, և գուցէ 'ի նոցանէ մեռանիցի


հան

հանդերձ մեծաւ հարուածով , և կոտորուածով զինուորացն .

Երևակն 'ի յեղանակին իւր և քառանկիւնի հայեցողութեամբ ընդ լուսնթագին՝ ցուցանէ զարիւնահեղ պատերազմունս . և 'ի պատճառէ կռուոց մարդիք անձկանան , և սրտնեղին յիւրեանց թագաւորէն . Ցուցանէ ևս փոփոխս թագաւորաց , մեծըս , խռովութիս , և տարաձայնութիս . նաև մեռս 'ի փառաւորականութեն .

—

1854 1882 1910 1938

Ի մտանել արեգական 'ի Խոյի յառաջին կէսն 'ի 9 մարտի , իշխան տարւոյն լինի Լուսաբերն ընդ կոյս նշանաւ՝ որ է տուն փայլածուին .

Ձմեռն այս լինի անձրևոտ , և յոյժ պարարտ . առաւել 'ի դաշտաւէտ տեղիս՝ քան թէ 'ի լեռնայինս . զի մայրեաց լուպառնայ կոյսն գծանկ , և զերթեր . Գինին տապականի , և պակասի . զի անձրևական մնայցէ գինին . բարւոք է յետոյ քաղել զխաղողն . մրգեղ ծառոց առատանան . Թռչունք պակասին :

Ամիսքն ձմեռան լինի միջակ , և անձրևաշատ . միջինն՝ մառայլ . վերջինն՝ ցրտէ . Գա_

րունն է բարեխառն, և գէջ: Ամառն յոյժ տապ: Աշունն ցրտագայղ, և ցաւաշար. մանաւանդ տղայոց աչացաւութիւն հանդիպի: Սա նաւարկութիւն տիր աշխարհի՝ և լաւ է. լինին պատերազմունք, և հարուածք ծերոց, և չորքոտանի անասնոց:

Իսկ Դեմոկրիտոս, թէ եղիցին մեծա-կար կարկտահարութիւնք. աղաչելի է զԱստուած, զի չիցէ երկրաշարժ:

Յայսմ ամի երևին գաւնաշունչ հի-ւիւք, և կոտորուածք մարդոց: Թագա-ւորն, և իշխանքն անիրաւութեամբ դիցեն ամէն կաց զծանրական հարկս. յարիցեն բազում արք վատթարք, և փցունք. ըստ որում արե-գակն հակադիր հայեցուածով ընդ Հրա-տին, և Երևակն յանկեան տասներորդի տան երկնից նշանէն:

Ի վախճանի՝ զի Հրատն զտանի հակա-դիր հայեցուածով ԷՌ արեգական, և յեր-բորդում տան երկնից, և Թաւապումնէ ցե-րեկայ՝ ցուցանի այսր աղագաւ լինել ղարինահեղ պատերազմունս, և զանհնա-զանդութիւն առ Թագաւորս՝ կորստեամբ համ-դերձ ոմանց ուրուք Թագաւորութեան:

Նեանին եա՝ վէճք, խռովութիւնք, և վիճա-բանութիւնք, որք լինին ի մէջ եղբարց, և բա-րեկամաց, և ի մէջ այնոցիկ՝ որք զընկերութիւն խնչ ունին, և ի մէջ նշ̃ տանն:

1855 1883 1911 1939

Իշխան տարւոյս լինի Երեւակն ընդ-
կոյս նշանաւն՝ որ է տուն Փայլա-
ծուին, երբ ՚ի 9 մարտի արեգակն մտանէ
յառաջին կէտ Խոյին ։ Միջակ լինի յայս
տարի ձմեռն . բայց վ՟ն զօրութ՟ն կուսին՝ ան-
կանի ժանիկ, և թրթուր ՚ի սերմանիս . և
վտանգ և կասկած է ծով ճանապարհ տանել ։

Սկիզբն ձմեռան լինի ցուրտ կարկտով
հանդերձ . մէջն՝ տաք . վերջն՝ քաղցր ։
Գարունն լինի ցուրտ մինչև ցյունիսի
ամիսն ։ Դեմոկրիտոս ասէ, թէ յաշնան
թանձրանան գետք, և լինին հիւանդութիւնք,
և երեքօրեայ տենդ ։

Յայսմ ամի բազմանան աւազակք . և
որք ծնան ՚ի ներքոյ երեւակին՝ ունիցին փո-
քրր հաւատ, և բարեպաշտութ՟ի . այ՟լ երեւակն
յիններորդում տան երկնից ցուցանէ ։
Նաւ՝ հրատն կցեալ ընդ լուսնթագին՝ և
յեօթներորդում տան երկնից՝ ցուցանի
լինել սաստիկ կռիւս, և կոտորուածս . մե-
ռանիլ մեծահամբաւ և հարուստ արանց .
բայց տարին լինի քաղցր ։ Դարձեալ՝
լուսաբերն յեօթներորդում անկեան
երկնից՝ ցուցանէ յաջողութ՟ի կանանց, և
խգաբարդ արանց ։



Յայսմ

Յայսմ ամի՝ երբ ՚ի 9 մարտի արե-գակն մտանէ յառաջին աստիճան Խոյին , իշխէ արեգակն ընդ կշիռ նշա-նաւն՝ որ է տուն լուսաբերին․

Յառաջիկայ ամն լինի ամենառատ․ բայց վ՟ զօրուն կշռին՝ գուշակէ ապա-կանութի պտղոց , հարուած մարդկային մարմնոյ , և պատերազմ․ Իսկ առատութի մեծ՝ ցորենոյ , ձիթոյ , գինւոյ , ապրշմի , և այլ ամ՟ մրգաց․

Սկիզբն ձմեռան լինի ցուրտ հանդերձ կարկտով , և վերջն բարեհամբոյ․ Գարունն ցուրտ մինչև ցյունիսի ամիսն․ ամառնոյ զանձրևս , կարկուտս , և շփոթութիս․ Ձմեռա-նին բազում եղինք․

Ըստ Դեմոկրիտոսի՝ թէ գինին լաւ , և մնացական լինի․ Ծառին աճողակ ջրելոյ զորթս , և պահելոյ զպարտէզս․ շատանոյ մարախն․ գուշակէ պատերազմ․

Յայսմ ամի՝ տեսանին պատերազմունք , ամբոխք , հրկիզութիւնք , տարաձայնութիւնք , և չարութիւնք , թշուառութիւնք , և պղտորութի կրօ-նից , և կրօնաւոր կարգաց․ ՚ի մարդիկս այլ և այլ տրտմութիւնք․ ըստ որում ցուցանէ մեծ կցորդութիւն երևակին և լուսնթագին , որ

եղև 'ի 24 դեկտեմբերի ամսոյն՝ 'ի հրոյին կենդանակերպին։

Մարդիկ կցորդութիք, կամ ծնունդք՝ զմեծ մասս նշանակեն, և զկեանս հաստատես. ցնծալի մարդոց մահս վատթարս։ Նշանի եւս այսու ծննդեամբ այլ և այլ տեղութի, և գաւ 'ի մէջի իշխանաց, որով փոփոխին իշխանութիք իշխանաց։ Նոյն այս լինի, զի փոփոխին վերոգրեցեալ ծնունդքն 'ի ջրոյն եռապատկութ առ հրոյինն. որ է յոյժ չարաչարս, զի մարդոց տրի բազում և զանազան ցաւս։ Նոյն զի Գերմանցիս է ը իշխանութիւն լուսնթագին, այլ աղագաւ՝ ենթարկի նա և յոլով ցաւոց։

Նոյն՝ Հրատն գտանի յառաջնում տան երկնից, և նշան՝ զի յայսմ ամի լինի մեծ արեանհեղութի։ Լուսինն մերձենայ երևակին մարմնոյն՝ ցուցանի մահ մեծ տիկնոջ. հիւանդութի ռամկաց՝ պատճառեցեալ 'ի ջերմանէ, և 'ի խոնաւութէ. գլխացաւութի. ծնկացաւութի, և այլ սմին նման ցաւ։ Խաղաւորք, և իշխանք յարիցեն ընդդէմ միմեանց. և ռամկաց ժողովուրդն ամբոխեսցի։

—

1857 1885 1913 1941

Որք արեգակն 'ի 9 մարտի մտանէ յառաջին կէտն Խոյի, իշխան տար

ժ  ւոյն

ուղյն լինի Հրատն ընդ Կշիռ նշանաւն որ է տուն Լուսաբերին. վէս տարին երեւի ցամաք, և սաերջ.

Սկիզբն ձմեռան լինի ցուրտ, ջրայինն՝ ընդ սաստիկ հողմով, որ արմատաքի խլին ծառք. մէջն՝ բարեխառն. վերջն՝ ցրտիկ. Գարունն անձրեւոտ. Ամառն չորանան գետք, և պակասին խոնաւութիք. Աշունն եղեմնոտ. Պարտ է սակաւ հաց ուտել՝ և շատ գինի խմել.

Օլի սա է Դեմոկրիտոս՝ առատանան գինիք, և ձիթունք. տարին է աջողակ զօրթ անկելոյ, և զայգիս, բայց ոչ ծառս. Մեռանին մեծամեծ անասունք, և ընտանի կենդանիք. շատանայ անձրեւն. Զգուշես ցուք զմծ, զի չիցեն երկրաշարժք.

Յայսմ թուականէ Ձի տեսանի Երեւակն յերկրատասաներորդում տան երկնից քա_ ռանկիւնի հայեցուածով ընդ արեգական. և ա՝ լուսինն կցեալ ընդ հրատին յերրորդում տան երկնից, ուր են վտառաքախոր.

Սա՝ ցուցանէ ազգի մարդոյ մեսաս, նեղութ, և ձախորդուն հանդիպել, մինչ զի ոչ ևս տեսանի սէր, ոչ բարեկամութ, և ոչ հնազանդութ, այլ հակառակ ատերութ.

Յայսմ ամի ի 12 հոկտեմբերի՝ ի 21 ժամու ընդ կէսոյ՝ խաւարի արեգակն,


երբ

երբ է լուսնոյն շրջի յութերորդում տան երկնից, 'ի ներքոյ կշիռ կենդանակերպին. վէպ գուշակէ մեռանելն մեծ և հզօր թագաւորի ուրուք, կամ իշխանի. լինի սով, և հասարակ մահտարաժամ: Նման այսորիկ աւր թագաւորաց և իշխանաց՝ որք է իշխանութե̄ կշռին կամ խոյին ծնեալ, զի կրեսցեն զանձկութիւնս, և տուժել նեղիցին քան զայլս:

---

1858 1886 1914 1942

Երբ 'ի Ձ մարտի մտանէ արեգակն յառաջին յատուածն Խոյին, իշխան տարւոյն լինի Փայլածուն ընդ Աշխա նըշանաւ. վէպ առաջիկայ տարին լինի ամուլ, և սակրջ. աւերումն պտղոց. հարուածք մարդոց. մահ ղրծակաց, և մեղուաց. ժամտառաբեր ևս ցաւ:

Սկիզբն ձմեռան ցրտին. մէջն՝ բարեխառըն. վերջն՝ գարնանային, յոլովաղող, սառնամանիք, անձրևայորդ, և թանձրունք գետօրէից. Գարունն անձրևոտ. ծառք մնասին յանձրևաց. վերջն 'ի տեղիս տեղիս կարկտահարի: Ամառն անձրևային, և մեղյլապատ. պարտ է փութով վճարել զհունձն, զի մի՛ աւերեսցի: Աշունն քամահար, և առողջարար. որթք զալով խաղողս առնեն.

առնեն . բարւոք , և աջողակ է անկեն ըղ
ձյսս , և անդամոխեալ գործս . ցորեանն գի_
րաւ տապականի . տարին անցանի առանց
հիւանդութե . աղաչեսցուք զնծ վն պտղոց .
Տարիս է առատ անձրև . և լինի տարաձայ
նութիւն 'ի մէջ իշխանաց .

Յայսմ ամի տեսանի աւերումն գաւա_
ռի , կամ քաղաքի միոյ . այլև անաջողութ ,
նեղութ , և այլ բազում վնաս հանդիպիլ
մարդոց . Եւ զի հրատն գտանի յեօթ_
ներորդում տան երկնից , քառանկիւնի
հայեցուածով Ճ՟ փայլածուին . և երևակն
յութերորդում տան երկնից , ևս քառան
կիւնի հայեցուածով ընդ արեգական . վն
գուշակէ մահ բիւր մարդոց . առաւել ևս՝
տեսանի նեղութ , և խորամանկութ ոմանց ,
որք այլոց զխորխորատ փորելով , ինքեանք
անկցին 'ի նոյն .

Հանդիպի գերութիւն , և բանտար_
կութիւն մարդոց՝ առաւել քան զչափն .
'ի մէջ պարսկաց , և 'ի մէջ այլ ևայլ նա_
հանգաց երևին տարաձայնութիւնք , կռ_
ուիւք , և խռովութիւնք , մինչ զի ոչ ևս
ճանաչի հաստատութիւն , և բարեկամն .
Երևակն ճախակի հայեցեալ 'ի հրատէն ,
ցուցանէ զնենգութիւնս , մահութիւնս ,
և սուտ խորհուրդս լինիլ , յորժէ պատ_

 ճառէ

Զաւէ ՚ի բազում տեղիս հանդիպի աւե_ րումն և խանգարումն։

---

Վերջացեալ այս 28 ամաց, և մերձեցե_ ցեալ Քրիստոսականացն՝ գալստեան սրբոյ ՚ի ծննդեն, որ նշանակեալ շրջան արեգականն է. մինչ ծնունդն Քրիստոսին էր, ամենայն 1943. և այլ ըստ կարգին։

Ջրհոս.



Առանձնաւոր գուշակումն այս հողոց, և երկնային փարոսին՝ յամէ յամս։

Յունվարի առաջին օրն ցուցանէ զօդ, և զեղանակ օգոստոսի ամսոյն. եթէ լինի օդն պարզ, և ջինջ. առաջիկայ տարին լինի պայծառ. եթէ արևելեան քա_ մին հնչէ, լինի մահ անասնոց. թէ արև_ մտեան՝ մահ մեծամեծ արանց. եթէ հա_ րաւ

րաւ՝ մահ ռամկաց. եւ թէ հիւսիս հնչէ, տարին լիցի անբեր՝ ամուլ՝ եւ սատերջ.

Որովհետեւ իջէ երկրորդ օրն, նոյնպէս սեպտեմբերի ամիսն. եւ այսօր օդն երեւի անհաստատ. Երրորդ օրն՝ օդն փոփոխի, ցուցանէ զընթացս հոկտեմբերի ամսոյն. 4, Կէս ձմեռան. հարաւ փչէ. անձրեւ, եւ ցուցանէ զեղանակ նոյեմբերի ամսոյն. 5, Ցուցանէ զորպիսութիւն դեկտեմբերի. երեւի եւ հողմախառն մրրիկ. 6, 7, 8, Երբեմն արեւմուտ հնչէ. 9, Հարաւ. անձրեւ. 10, 11, 12, Օդն փոխի. 13, Հողմակոծութիւն. 14, 15, 16, 17, Հարաւ. անձրեւ. 18, 19, Ձմեռան եղանակ. 20, 21, 22, Օրն ամպոտ. 23, Մինչեւ ի 27, ալէկոծութիւն. 28, 29, Հարաւ. 30, 31, Մրրկախառն օդ.

Ձուկն.



Փետրվարի առաջին օրն արեւելեան քամին փչէ. երբեմն հարաւ ընդ եղեմանք. 2, 3, Ցուրտն, եւ քնարինն բոլորովին ցածանան.

ծանան · հնչէ արեւմուտ կամ հիւսիս ։ 4 ,
5 , Պղտորին ու ջրհոսին ցածանայ · անձրեւ ·
մրրիկ · կայծակ · գոյան արեւմտեան քամիք ։
6 , 7 , Հողմային ։ 8 , 9 , Հողմակոծութի ։
10 , 11 , Քամին արեւմտեան փչէ ։ 12 ,
13 , Եղեղնաւորն ցածանայ · քամոտ օր ։
14 , Ցերեկային ըմպանակ աստղն երեւի ·
քամիք մինչ ՚ի 19 , 20 , 21 , երբեմն հողմա
կոծութի , երբեմն փչէ հիւսիս մինչեւ երե_
կուն օր ։ 22 , Երեւի տուան արջին · օրն
ցուրտ · զանազան քամի · անձրեւային ։ 23 ,
Ալոք աստղն երեւի · է ժամանակ տնկելոյ
զորթս · ձիթենիս · ծնեբեկս · և զայլս ու_
տըս ։ 24 , Որհոան յիշատէ , և անձրեւէ ։
25 , Տուան արջին ելանէ · օրն անձրեւային ։
26 , Մինչեւ ՚ի վերջ ամսոյն առաւօտէն
հնչէ հողմն արեւմտեան , որ բարեխառնօ_
րէն գէջ է , և ջրային , անձրեւածին , և որո_
տաբեր ըստ եղանակին ։



Մարտի առաջի օրն փչէ հարաւ․ երբեմն եւ եղեմամբ, եւ ձեամբ։ 2, Ղառ-քաղ աստղն երեւի․ հնչեն հիւսիսայինք։ 3, 4, Հոսէ հարաւ․ երբեմն արեւմուտ․ օրն է ցուրտ։ 5, Անարբիկն ընդ հողմով երեւի։ 6, Արծիւ աստղն ընդ ուժգին հողմով ցածանայ։ 7, Արծիւն կանուխ ելանէ։ 8, 9, Այծեղջիւրն երեւի, անձրեւ, եւ հողմ։ 10, 11, 12, Փեղաղ աստղն է․ հնչէ հիւսիս․ հողմ, եւ անձրեւ։ 13, Ձուկն հիւսիսային երեւի․ քամիք հիւսիսոյ փչեն։ 14, Ելանէ նաւատես աստղն․ պանդխտի ծիծեռնկին․ փչեն զանազան քամիք․ յայսմ ժամանակի զայգիս, եւ զբուրաստանս յօրինեն։ 15, 16, Կարիճն ցածանայ․ նշան ալէկոծութեան․ արեւմտեան քամին փչէ։ 20, 21, հիւսիս փչէ։ 22, 23, Սկսանի երեւիլ խոյն, անձրեւային օդ, երբեմն ձիւնէ․ եւ է գարնանային հասարակածու։ 24, 25, Ձկունքն երեւին, ձիւնէ։

նէ ։ 26 ։ Հողմակոծութիւն հանդերձ որոտ֊
մամբ ։ 27 ։ 28 ։ Կարիճն ցածանայ ։ քամի ։
անձրև , և որոտ ։ 29 ։ 30 ։ Հարաւ հնչէ ։
անձրև ։ 31 ։ Քամի , և անձրև ։

## Ցուլ ։



Ապրիլ առաջի օրն կարիճն ցածանայ ,
և է նշան ալեկոծութեան ։ 2 ։ 3 ։ Ցամուրեք
օդն մառախլապատ ։ վերջիլեայ աստեղքն
անձրևութեանն ։ 4 ։ 5 ։ Հնչէ հարաւ ։
6 ։ Անձրևէ ։ 7 ։ Փչէ արևմուտ , և հարաւ֊
ընդ եղեմամբ ։ 8 ։ Վերջիլեայքն ցածա֊
նան , և լինի ցուրտ ։ 9 ։ 10 ։ 11 ։ Հարա֊
ւային հնչեն , լինի հողմակոծութիւն ։ 12 ։
Ցուրտ ։ 13 ։ Կշիռն ցածանայ , և ցրտի ։
14 ։ Քամոտ ։ մրրիկ , և ջուր ։ 15 ։ 16 ։
17 ։ 18 ։ 19 ։ Որայծն ։ 20 ։ 21 ։ Մէջ
գարուն ։ Ջրայծն ։ 22 ։ Վերջիլեայքն ե֊
րևին ։ հարաւային քամիք հնչեն ։ 23 ։
Քնարին աստղն երևի , և է նշան ալեկո֊



ծու

ծուէ. 24, 25, 26, 27, Մաւ օգ. 28, Հարաւ է անձրեւ. 29, Նորեւ այծիկն. հնչէ հարաւ. երբեմն անձրեւէ. 30, Խեցգետինն ցածանայ յերեկոյին, և է նշան ալէկոծուէ. Յայսմ աւուր է բարի պատուաստելոյ զձիթենիս, և զայլ բոյսս.

## Երկուոր.



Մայիսի, 1, 2, աւր թէ՝ արեգակն մընայ ՚ի միում տեղւոջ, հիւսիսային քամիք հնչեն. 3, Ձկնաւորք աստղն երեւի, և նըշան ալէկոծուէ. 4, 5, Այն աստղն գուշակէ զանձրեւ. 6, 7, Կարծի կէան ցածանայ. և նշան հողմակոծուէ. յառաւօտուն երեւին վերջիլեայ աստեղքն. փչեն արեմտեան քամիք, երբեմն անձրեւէ. 8, 9, 10, Ցածանան վերջիլեայքն. հնչեն արեմտեան քամիք. բազմիցս անձրեւէ. 11, 12 13, 14, Օրհնարիկն յառաւօտուն երեւի. է նշան ալէկոծուէ. և լաւ ժամանակ սեր

ռելոյ զկաշս, և զպաստ. չորացնելոյ զհն-
ձեցեալ խոտս, և անկելոյ զոստս ծառոց.
15, 16, Երևի ևս յառաւօտուն քնարի-
կըն. հնչէ հարաւային, կամ արևմտեան
քամին. երբեմն անձրևէ. 17, 18, 19,
20, Այն քամիքն հնչեն ընդ ջրով. 21,
Հիւսիսային քամիք հնչեն, երբեմն հարա-
ւայինքն ընդ ջրով. 22, 23, 24, Յառա-
ւօտուն ցածանայ տաւան արջին, և է նը-
շան ալեկոծուն. 25, 26, 27, Երևի այ-
ծին յառաւօտուն, հիւսիսայինք հնչեն.
28, Հնչէ հարաւ. 29, Երևին վերջել-
եայքն. 30, 31, Հողմակոծութի. և լու-
եղանակն՝ կրկին ռելոյ զայգիս, և ամփոփե-
լոյ զորթս.

Խեցգետին.



Յունիսի, 1, 2, արծիւ աստղն երևի.
քամոտ ժամանակ. 3, 4, 5, Փչեն հարա-
ւային քամիք՝ հանդերձ անձրևաւ. 6,



Հնչէ

Հնչէ հիւսիս, և անձրևէ։ 7, Յածանայ տուտն արջին, և արևմտեան քամիք տիրեն։ 8, Դուլփին աստղն սկսանի երևիլ։ 9, Հնչէ հիւսիս, և անձրևէ։ 10, Յերեկոյին երևի գլխին. հոսէ արևմուտ. երբեմն թեթև անձրև գայ. է ժամանակ տնկելոյ զորթս, տանելոյ յարօտ զանասունս։ 11, 12, Հնչէ արևմուտ, օդն մրրկի ընդ որոտիւք։ 13, Նուազութիւն սկսանի, երևի գլխին. հն չէ հարաւ։ 14, Երևի հայկն, որ է շամփուրն։ 15, Մրրկամածոխ օդ. հնչէ հարաւ։ 16, Ալեկոծութի, մնչեն հիւսիսային քամիք։ 17, Արևմտեան, կամ հարաւային քամիք։ 18, 19, Հարաւ, և արևմուտ փըչեն։ 20, 21, Ալեկոծութիւն։ 22, 23, Օձ և շամփուրն երևին, և է նշան ալեկոծութե։ 24, 25, 26, Իշխէ արևմտեան քամին, շոգ։ 27, 28, 29, Ալեկոծութի. շուն աստղն երևի։ 30, Յածանայ տուն արջին ալեկոծութեամբ հանդերձ։

Եթէ յունիսի 24 անձրևէ, մեծասին ընկոյզք, և հետևեն 40 աւուրք անձրևաց. և եթէ պակասին անձրևք՝ առատանան հունձք։



Յուլիս.

Առիւծ.



Յուլիսի ամսոյն, 1, 2, 3, տիրէ արե-մուտ, և լինի շոգ: 4, Յաստատուն ցա-ծանոյ պայծ աստղն: 5, 6, Խեցգետնի կեան ցածանոյ: 7, 8, Այծեղջեր կեան ցածանոյ: 9, Երևելին ձիուկ աստղն երևի: 10, Իշխել սկսանին քամիքն: 11, 12, Հնչէ հարաւ: 13, 14, Հիւսիս, և հարաւ փչեն: 15, Նաւապետ աստղն ե-րևի. հարաւ, և արևմուտ փչեն: 16, 17, Հիւսիս գուժէ: 18, Արևմուտ փչէ: 19, Անհաստատ քամիք: 20, 21, Արե-մուտ հնչէ: 22, Հնչեն արևմտային քա-միքն. իշխէ շնիկ աստղն, որ ի հնոցն կոչե-ցաւ շնիկ աստղ արմիզդայ: 23, Արծուին ցածանոյ: 24, Փայլուն աստղն յառիւ-ծոյ կրծին երևի. երբեմն ալէկոծի: 25, Որհան սկսանի ցածանալ. հարաւ, կամ արևմուտ հնչէ: 26, Շնիկ աստղն երե-ւի, տաք եղանակ: 27, Արծուին երևի, 28, 29, 30, 31, Երևին փայլածուն աս-տեղքն յառիւծոյ կրծին, արծուին խո-նարհի, ալէկոծութի:



Օգոստոսի ամսոյն յառաջին օրն տա-
րեկան քամիքն հնչեն . հիւսիս ևս . 2 , 3 ,
Հարաւայինք փչեն . 4 , 5 , Ա՛ռեւծոյ կեան
երևի , ալեկոծութ . 6 , Ընարիկն երևի ,
տաք է . 7 , Որհոսի կեան ցածանայ . 8 ,
9 , 10 , 11 , Ա՛ռեւծն երևի . մառայլ . տաք .
12 , Ընարիկն ցածանայ . քամի . 13 , 14 ,
Պլէիին ընդ նապաստակ աստեղն ցածա-
նան , հողմակոծութ . 15 , 16 , Ս՛թնապատ
ող . 17 , Սկիզբն աշնան . 18 , Ընարիկն
ցածանայ . 19 , Պլէիին խոնարհի , ջեռուն
միջակօրէն . 20 , 21 , Հողմակոծութ . 22 ,
23 , Ընարիկն ցածանայ . պարզ կայ . 24 ,
Վերջիլեայքն երևին , հիւսիս փչէ . 25 ,
Տարեկան քամիքն փչեն . 26 , Պլէիին ե-
րևի . 27 , Դռաքաղն երևի , հարաւ փչէ .
ալեկոծի , տաւան արջին խոնարհի . 28 ,
Վերջիլեայքն երևին . 29 , Արևմտեան
փչէ . 30 , Սեւր կուսին երևին . տարեկան
քամիքն դադարեն .

 Ընդ

31 · Անդրոմէդա աստղն երևի · հովիկ է · Ի 15 յուլիսի ամսոյն մինչև ցայսօր՝ պատուաստին , և աղբերն բոյսք · Եթէ յօգոստոսի 10 պայծառ օդ լինի , առատ և լաւ գինի ցուցանէ · նոյնպէս և ի 15 · Որպիսի օդ իցէ 24 , նոյնպիսի իցէ աշունն ·

Կշիռ ·



Սեպտեմբերի յառաջին օրն ջեռուէ · 2 , Բերենիկէ աստղն հարաւային երևի , ջեռուէ · 3 , Անձրևէ , որոտայ · 4 , Տուան արջին ընդ ծագաղին երևի · 5 , Քամիք իշխեն · անձրևէ · 6 , Ձիուկ աստղն երևի · 7 , Ձուկն , և արծուն ոչ ևս խոնարհին · այծն երևի , ալեկոծի · 8 , Տուան արջին քամով երևի · որոտայ · 9 , 10 , 11 , Հարաւ կամ արևմուտ փչէ · 12 , 13 , Տուորն արջին երևի , անձրևէ · 14 , Ծիծեռնիկն յայլ երկիր չուէ · 15 , 16 , 17 , Տուորն արջին երևի , հարաւ կամ արևմուտ փչէ · 18 , Այծն երևի · արևմուտ փչէ ·



Ձկունք

19 · Ձկունք երեւին ։ 20, 21, Հասարա-
կութի աւուրց · յառաւօտուն ըմպանակ
աստղն երեւի · ամպամածութ, անձրեւէ ։ 22,
Խոյն խոնարհի · հարաւ անձրեւաւ կամ
արեւմուտ փչէ ։ 23, Նաւ աստղն խոնար-
հի ։ 24, Զինդաւորն · հողմակոծութի ընդ-
ջրոյ ։ 25, Ցուրտ ։ 26, 27, Այծեամբքն
երեւին, արեւմուտ հնչէ ։ 28, 29, Վերջիլ-
եայքն խոնարհին, ոչ եւս երեւին ։ 30,
Այծիկն երեւի, հողմակոծի ։

Կարիճ ։



Հոկտեմբերի յառաջին օրն հնչէ հող-
մըն, երեւին Վերջիլեայք ։ 2, 3, Նշնդէս ·
կառավարն խոնարհի · դառնայ արծիւն ։
4, Անձրեւաբեր բազմաստեղն երեւի · անձ-
րեւէ ։ 5, Պսակն երեւի ։ 6, Խոյի կէսն ըն-
կարծին ցածանայ ։ 7, Այծեամբքն երեւին ։
8, Փայլուն աստղ պսակին երեւի · ամբոխի
օդն ։ 9, 10, Վերջիլեայք հողմով հան-
դերձ երեւին ։ 11, Պսակն յառաւօտուց

 երեւի,

երևի , ծովն խառնիլ։ 12 , Միջիւլեայք
հողմով երևին։ 13 , 14 , Պսակն բոլոր ա-
ռաւօտն երևի . ձմեռնային հարաւն փչէ .
անձրևէ։ 15 , 16 , 17 , Հողմակոծութի , եր-
բեմն անձրևէ . 18 , 19 , Արևմուտն փչէ .
20 , 21 , Ի ծագել արևուն մամանեն վեր-
ջիլեայքն . հարաւ հնչէ . երբեմն անձրևէ ։
23 , Իջանէ կարկուտն . 24 , 25 , Միջի-
լեայք ընդ չենդաւորն յառաւօտուն խո-
նարհին։ 26 , Ըամի , ալեկոծութի ծովու .
Ճակատ կարկտին երևի։ 27 , 28 , Ցուտն
արջին խոնարհի քամով։ 29 , Սևադեմ
աստղն՝ որ է կարսխօղէն՝ ծածկի։ 30 , 31 ,
Հայկն կամ շամփուրն սկսանի ցածանալ .
յերեկոյին քնարկին երևի . ալեկոծութի։

Ի լու ժամանակ պատուաստելոյ . մարգրե-
լոյ զգղյս . ցանելոյ զսերմանիս . սափրելոյ
զորթս . վարելոյ , անկելոյ , և այլին նմանս
գործելոյ։ Եթէ յայսմ ամի տերևք ծա-
ռոց ոչ կանուխ ցցուին , մեծացուցեա ձմե-
ռըն հետևի։ Իսկ թէ տերևք ծառոց ցիր-
ցանք իցեն , հետևեալ ամբն սակրջ և ա-
մուլ անցանի։ Իսմ ևս զայս ինչ , արևել-
եան քամին է առողջարար , ջերմ՝ , և չոր։
Արևմտեանն՝ ցուրտ , և խոնաւ։ Հարա-
ւային՝ ջերմ , և խոնաւ , և հիւսաւկար։ Հիւ-
սիսային հողմն միշտ է ցուրտ , և չոր։



Նոյեմբերի յառաջնում աւուր ամսոյն յառաւօտուն՝ վերջիլեայքն ցածանան ընդ-տուտն արջին․ օդն ամպոտի, անձրեւէ։ 2, Ցուրտ քամիք փչեն, անձրեւէ։ 3, Քնա-րիկն երեւի։ 4, 5, Քամիք փչեն․ անձրեւ․ 6, Տուտն արջին ծածկի․ օդն մառայլա-պատ։ 7, Վերջիլեայք, եւ Հայկն ծածկին․ քամի։ 8, 9, Օդն խոնաւ։ 10, սկիզբն ձմերան։ 11, Վերջիլեայք ծածկին։ 12, Փայլուն աստղն կարծին երեւի։ 13, Վեր ջիլեայք, եւ շամբուրն ծածկին յառաւօ-տուց։ 14, Կարիճն յառաւօտուց ցածա-նայ։ 15, 16, Քնարիկն երեւի յառաւօ-տուն, հողմհնչէ։ 17, Օր հողմակոծունէ։ 18, Հայկն, եւ քնարիկն երեւին հողմակո-ծութի։ 19, Աղջիւըր ցլուն ընդ արեգա-կան ցածանան․ հողմակոծի։ 20, 21, Սաս-տիկ հողմակոծունի։ 22, Ջրհոսի, եւ ձիւ-նէ։ 23, Աղջիւր ցլուն ցածանայ։ 24, Յառաւօտուն ծագի շնիկն։ 25, 26,



Հնչեն

Հնչէն ցուրտ քամիքն ։ 27 ։ 28 ։ 29 ։ ☾ ուՆն ցածանայ , օդն մառայլապատ · հողմ · ջուր ։ 30 ։ ☾ ամբոււրն ցածանայ · քամի · անձրեւ ։

Ի լաւ ժամանակ ցանելոյ եւ ջրելոյ ղըղթըմ · բայց յաւուրս ջերմայինս · եւ թէ գետերայն ջուրն՝ խիստ լաւ է ծրագով գործդաշտի , կամ այգեաց ՚ի կատար ածելն յառաջ քան զամիսն դեկտեմբերին ։

Եթէ յետ մտանելոյ արեգական յաղեղնաւորն՝ որոտայ ամպն , լինի առատութի̄ մրգաց ՚ի լեռնականս , եւ պակասութի̄ ՚ի ձորային տեղիս ։ Որպէս եղէ չորեքտասաներորդ օրն , նոյնպէս լիցի հետեւեալ մարտի ամսոյն ։ Եթէ ՚ի 1 նոյեմբերի անձրեւէ կամ ամպէ , անհաստատ ձմեռն հետեւի · եթէ եղէ պարզ , է նշան ցրտութ̄ · եւ թէ զինի անձրեւին ցրտի օդն , նշանակէ զառերջուն ։

Այծեղջիւր ։



Դեկտեմբերի առաջին օրն պղտոր · բոլոր հայքն անձրեւութեանց յառաւօտուն ։

տուն։ 2, Շունն ցածանայ յերեկոյին՝ քամի։ 3, Ալէկոծեալ օրն, և ամպ։ 4, 5, Քամի · անձրև · աղեղնաւորն խոնարհի։ 6, Կարծի կեան երևի։ 7, 8, Արծիւն երևի, կարծի բոլորն ևս · քամի։ 9, 10, 11, Յառաւօտուն շունն երևի · մէգ գոյ քամի · մառայլ։ 12, 13, 14, 15, 16, 17, Քամի, անձրև։ 18, Խաւարչուտ երկինք · հնչեն երկու հակառակ քամիք։ 19, Այծիկն երևի։ 20, Արծիւն է ամպեղէնք բարձրանան · ամի ցերեկն։ 21, 22, Քամի · արծիւն յերեկոյին երևի։ 23, Այծեկըն երևի յառաւօտուն։ 24, Արծիւն, և պաղին խոնարհին · հողմակոծութի։ 25, 26, Գուլփին յառաւօտուն երևի։ 27, Ալէկոծի · ցուրտ։ 28, 29, 30, Յերեկոյին շունիկն խոնարհի · ալէկոծութի։ 31, Քամու · ալէկոծութի։

Յայսմ ամի վերջացեալ լեցին ամ̃ հողագործուն արարք։ Որպիսի է դեկտեմբերի չորրորդ օրն, նոյնպէս և բոլոր ամիսն։ Հինգերորդ օրն նմանի յունվարին։ Վեցերորդն՝ փետրվարին · այսպէս և այլն։

Եթէ որոտան երկինք, քամիս բերէ։ Կանաչութի առուր ծննդեանն քն՝ դակայլն ձիւնս գուշակէ։

Եթէ 24 և 25 այսորիկ ամսոյ առանց



ամպոյ

ամպոյ լիցին, նշանակէ առատութի ցորենոյ, գինւոյ, և մրգաց։ Իսկ եթէ քամի՝ և անձրև՝ ցուցանէ ժանտ, և մահ։

## Յաջողուածք նո՛ր պատահարաց ՚ի մէջ եղանակաց բոլոր ամսոց։

### Յունվար։

Յունվարի (որ է Հոռի՝) թէ լուսինն խաւարի, ելանէ թագաւոր յարևելից. առնէ արիւնհեղութի շատ. և յաղթէ բազում զօրաց. և աղ և ձիւն շատ. և մարեխ լինի. և յարևմուտս լիութի. և յառնեն մեծամեծք ՚ի վերայ իրերաց, և պատերազմին Է քաղաքս և աւանս։ Իսկ բակ ունի, ջուրք պակասին. և յառաջանալ տարւոյն՝ թագաւոր մի փախստական լինի։ Իսկ եղջիւրն ողորկ՝ ցուրտ լինի. և թէ ՚ի կախ՝ անձրև գայ։

Իսկ արեգակն խաւարի, թագաւոր ոմն ելանէ ՚ի վերայ մարդկան, և սուր շարժի և աւերի. և լինի յայնմ տարւոջ բարկութի։ Իսկ բակ ունի, բազմանան գողք. և թագաւոր ոմն փախչի. խաշանց մահ. և շարժին պատերազմունք։



Իսկ

Եթէ իջանէ աղեղն յարևելս, անձրևաց առատութի. և ցաւք 'ի մարդիկ: Եթէ յարևմուտս իջանէ, տարին բարի և հողմային. հաց և գինի և պտղաբերութիւնք շատ: Եթէ 'ի հիւսիս կոյս 'ի հարաւ՝ հողմ ելանէ շատ:

Եթէ կայծակն, հողմ մինչև 'ի յարևմտից, և ծառք պտղաւորին 'ի պտղոց, և տարին բարի լինի:

Եթէ որոտայ, բարի է ամ̅ իրաց և յաւելումն խաչանց. ցորեան և գինի շատ, և լիութիւն ամ̅ երկրի:

Եթէ ցերեկն շարժի, պտղաբերութիւնք լինի և չորքոտանիք պակասին, և ամ̅ իրաց առատութի: Եթէ գիշերն՝ աշխարհի մահտարաժամք, և քաղաքաց փոփոխումն, և կռիւք լինի. և զիրեար նեղեն և փախչին. և յարևելս հիւանդութիւն, և յարուցմունք գետոց:

—

Փետրվար.

Ի փետրվարի (որ է Մահճիր՝) Թէ լուսինըն խաւարի, արիւնհեղութի լինի 'ի մէջ Թագաւորաց. և յարևելից ելանէ Թագաւոր մի, և զհամիթ առնու. և վայ լինի արանց բազմաց և մահ: Եթէ բակ՝ գինի և բամբակ շատ: Եթէ եղջիւրն ողորդ լինի,



ցուրտ

ցուրտ լինի։ Եթէ հալի՝ մուտք տարուն
հարկանի։

Եթէ արեգակն խաւարի, նուազութիւն է տարոյն և ամ՟ երկրի. Եթէ բալ՝ Թագաւոր մի ելանէ յարևելից և զօրաւորսն հնազանդեցուցանէ և անկանի 'ի վր երկրի տուգանք։

Եթէ իջանէ աղեղն յարևելս, բազում ցաւք տիրեն բաբելացւոց, և շարժումն լինի հեծելոց. յարևմուտս բազում պատերազմունք. և Թագաւոր մի 'ի զօրաց իւրոց կորնչի. և ձիւն շատ գայ. և խաղաղութիւն մարդկան. գազանք շատանան. և հեծելաւք մտանեն յարևմուտս. իջանեն հողմք և անձրևք։ Եթէ յարևմուտս իջանէ, հողմ սաստիկ, ամ՟ երկրի աղքատութիւն լինի, և արիւնհեղութիւն և հալածումն և պատերազմունք. և պարսիկք զօրանան։

Եթէ կայծակն, լինի սով յարևելից կողմանէ, և մարդիկ մեռանին. սակաւութիւն կերակրոց. և պտուղք ծառոց պակասին։

Եթէ որոտայ, գարունն աղնիւ և պտուղ շատ. և խաշանց առատութիւն. ցորեան և գինի շատ։ Եթէ 'ի յուրբաթի որոտայ, կարկուտ գայ և սով. որք վաճառեն հարք զորդիս։

Եթէ ցերեկն շարժ լինի և թէ գիշերն, ապականութիւն է մարդոյ. իսկ անասնոց առողջութիւն և ամ՟ իրաց առատութիւն. և պա-



տերազ-

տերադմունք . և թագաւորք կռուին ընդ միմեանս և մեծամեծք քաղաքաց անկանին . յերկրայ խառնակին . և մարդիկք նենգաւորք լինին միմեանց . և իշխանք ապստամբին ՚ի գլխաւորէն . արևելից գլխաւորն կորընչի . և հեծելոց դադարումն լինի . և յեգիպտոս սով լինի .

—

## Մարտ .

Ի մարտի ( որ է Նրէ՝ ) թէ լուսինն խաւարի , ամ՟ իրաց թանկութի . բայց առողջութի է . և ՚ի պարսիկս մեծամեծք մեռանին . և ասորին բարի լինի : Եթէ բակ առնի , որ նշանակէ աւերման՝ ահի և մահու : Եթէ եղջերուն որոտ՝ այգուց պտուղք բառնան : Եթէ ՚ի կախ՝ երաշտ և հողմն .

Եթէ արեգակն խաւարի , եղանէ ՚ի հոռոմոց հեծեալս յարապիկս և շատ աղմուկք լինի . Եթէ բակ՝ հիւանդութի լինի . և զաւաղի նորա առցէ այլ ոք .

Եթէ իջանէ աղեղն յարևելս , հեծեալք եղանեն . բայց հաստատուն լինի ՚ի մէջ թագաւորաց . պտուղ շատ . և Ջ՟ ամիս անասնոց մահ . և թագաւորն զօրանայ ՚ի մեծամեծաց իւրոց . և մահ անկանի յերկիր և անձրև գայ . Եթէ յարևմուտս իջանէ , սաս



տու

տութի՛ ամ՛ իրաց և խաղաղութի՛ ամ՛ երկրի։
Եթէ կայծակի, բազում չարիք տիրեն ՚ի վերայ երկրի. բայց մեղր շատ։
Եթէ որոտայ, աշունն չոր և պարզ. ձմեռըն երկար և խաշանց մահ և մարդկան առողջութի։ Եթէ ՚ի յուրբաթի որոտայ, գարունն հողմային. մարդկան առողջութի. մեղր և գինի շատ. և պտղոց առատութի։
Եթէ ցերեկն շարժի, գաղանաց և թագաւորաց կռիւ լինի. և գողք կորնչին, և աղքատք ձոխանան. և յարևելից կողմ՛ մեռա լինի. բայց ամ՛ երկրի լիութի և քաղաքաց շատ բարի լինի. և բարկութի վերանայ. բայց սակաւ հիւանդութի. և թագաւոր ոմն մեռանի։ Եթէ գիշերն շարժի, խաղաղութի նշանակէ. և հողմն խիստ և ցրտան շատ. և սահմանն դիմակաց լինի թշնամեացն. և թռչունք բազմանան։

---

Ապրիլ.

Ի յապրիլի (որ է Արաղոց՛) թէ լուսինն խաւարի, սով և արտմուն լինի երկրի. և մեծամեծք ցածանան. բայց ՚ի հայք լիութի. և տարին բարի գայ. և ՚ի պարսիկս սով մեծ. և թագաւորք պարսից հնազանդին։ Եթէ բակ՛ ցայք ՚ի մարդիկ. և թշնամիք


խափա

խափանին . և լինի ուրախութի ամ՟ երկրի.
Եթէ եղջիւրն ողորդ՝ այգիք աղէկ. Եթէ
՚ի կախ՝ մահ անկանի, և օդք խառնակին.
Եթէ արեգակն խաւարի, ապականումն Թա_
գաւորաց և պակասումն զօրաց: Եթէ բակ
առնու, արիւնհեղութի. և հողմն և յոլով
հիւանդութի մարդկան. Ջուրք պակասին.
գողք շատանան, և մարդիկք զարհուրին.

Եթէ իջանէ աղեղն յարեւելս, խառնա_
կումն լինի ՚ի Թագաւորն պարսից. և մե_
ծամեծաց կորուստ և սուգ և արտմութի.
յարեւելս մեծ ումն մեռանի. և հակառա_
կութի ընդ Թագաւորն արեւելից: Եթէ յա_
րեւմուտս իջանէ, եկանէ Թագաւոր մի յա_
րեւելից և առնէ արիւնհեղութի. և տիրէ
քաղաքաց. բաղում պատերազմունք. և գե_
րութի լինի յերկիրն պարսից. և մնացեալքն
առարագիր լինին. գողք շատանան, և մար_
դիկ փախստական լինին. և խաղաղութի
սակաւ գտանի:

Եթէ որոտայ, գազանք և խաշինք կոտո_
րին. և տղայոց մահ: Եթէ յուրբաթի որո_
տայ. ՚ի հարաւոյ կողմն՝ տարին բարի լինի.
և մարդկան առողջութի. և մեղր շատ. և խա_
շանց բարի լինի. շարժմունք և հարուածք
մեծամեծաց. և կանայք բաղմածին լինին:

Եթէ ցերեկն շարժի, արիւնհեղութի լի_
նի

նի յարևելս . և հեծեալք ստւերն ընդ ձմ՛ երկիր . և աշով լինի խաղաղութի . և լինի աւերումն թագաւորաց , և գլխաւորք ան_կանին . Եթէ գիշերն շարժի , գերուն լե_ցի . և ՚ի տեղիս տեղիս բարի անձրևական .

պատերազմունք շատ և անբաւ .

---

## Մայիս .

Ի Մայիսի ( որ է Արաց՝ ) թէ լուսինն խաւարի , բարի է ձմ՛ արմտեաց . և հակա_ռակուն երկրին հասնից . և կոտորումն խըս_տագոյն այլազգեաց , և աւերեսցեն զբա_զում տեղիս և հարկանիցեն . և յաժմ երկիր ամօթ և մեծ արտմութի հասանէ յանօրէ_նաց . և կանայք յղիք մեռանին . և թագա_ւորն սպանանէ զծառին իւր . և ինքն մեռա_նի . և թագաւորեն որդիքն իւր : Եթէ բակ՝ խռովութիւն լինի յարևելս . և գազանք մեռանին : Եթէ եղջիւրն ողորդ՝ գողք բազմանան . և գազանք մեռանին : Եթէ կախ՝ թանկութի հացի և հիւանդութի :

Եթէ արեգակն խաւարի , թագաւոր ումն մեռանի . և լինի հակառակութի մեծ . Եթէ բակ՝ թագաւոր ումն մտանէ յօտար քաղաք և ոչ յաջողի , և յետոյ դառնայ . և լինի մարդկան առողջութիւն .



Եթէ

Եթէ իշխանէ աղեղն յարևելս, մուտք շատ. տարին արդիւնաւոր. մեղր և բամբակ թանկ. պատերազմ բազում. և յարևմուտս աղքատութիւն. և թագաւորն արևելից ՚ի գերութիւն վարի. և թագաւորն մարաց՝ պատերազմի ընդ այլ թագաւորի. և յետոյ խաղաղանայ։ Եթէ յարևմուտս իշխանէ, հիւանդութիւն. ջերմ և ծաղիկ և ցաւ։

Եթէ կայծակի, ՚ի օր հողմ ելանէ և լինի արիւնհեղութիւն և մեծ մարդ մեռանի։

Եթէ որոտայ, պտուղք շատանան և գինիք քացախին և հիւանդութիւն։ Եթէ յուրբաթի որոտայ, մարդկան մահ և անասնոց ծախք. հացի նուազումն. գողք շատանան. հաւատք կործանին. մարդիկ դիւահարին. մեծամեծք չքանան. տղայք խանգարին յորովայնի։

Եթէ ցերեկն շարժի, ջերմ շատ. և թագաւոր մի ելեալ՝ առնէ արիւնհեղութիւն. և լինի մահ մեծամեծաց. մարդիկ սպառին. ը՟ հեթանոսս կոխի. ցորեան պակաս. թշնամիք բազմանան. հաւատացելոց թերահաւատութիւն։ Եթէ գիշերն շարժի, արքունեաց և հարստաց պակասութիւն. թագաւորաց անկումն. ցորեան յոլով. և մարախ անկանի։

Ի յունիսի ( որ է Մ՚եհեկի՛ ) թէ լու-
սինն խաւարի, սասանութիւնք աղքատաց և
արիւնհեղութիւն․ անձրևք պակասին քառա-
սուն օր․ և թագաւորն բարեկացուց՝ սպա-
նանէ զոմանս իւր․ Թէ բակ՝ յետ Է ա-
ւուր հողմն սաստիկ․ և անձրևաց պակա-
սումն․ և գազանք մեռանին և խաղաղու-
թիւն լինի․ Թէ եղջիւրն ողորկ՝ գազանք մե-
ռանին․ և ոչք խառնակին․ Թէ կալի՝ ե-
րաշտ և թանկութիւն․

Թէ արեգակն խաւարի, թագաւոր մի
եղանէ յարևելս․ և տապալէ զբազում տե-
ղիս․ և առնէ շատ աղմուկ և սասանի եր-
կիր․ Թէ բակ՝ երթան հեծեալք ՚ի հոռո-
մոց յարևմուտս․ և առցեն քաղաքս, և
տարցեն աւարս․

Թէ իջանէ աղեղն յարևելս, վտանգ
աղեկ ՚ի կողմն հարաւոյ․ և ցաւ անկանի․
մարդիկ և շունք կատաղին յերկրին պար-
սից․ Թէ յարևմուտս իջանէ, անձրև շատ․
ձէթ գինի և մեղր շատ։

Թէ կայծակն, աղուի լինի անասնոց և
թռչնոց․

Թէ որոտայ, արիւնհեղութիւն լինի․ հաց ա-
ռատ և գինի թանկ․ և մարդկան առողջութիւն․

Թէ ցերեկն շարժի, արիւնհեղութիւն․
սրանէ

սրտնեղութն · արտասուս, և հիւանդութն · և
աթու մեծ անկանի · և ծառք ապականին
և ամ քաղցրութն հայի յաշխարհ ։ Եւ
գիշերին շարժի, մանր անասունք կոտորին ·
աղբիւրք բազմանան · և ցորեան շատ · աշ֊
խարհի խաղաղութի ։

—

## Յուլիս ։

Ի յուլիսի ( որ է Մ․րեգ՝ ) թէ լուսինն խաւարի, արիւնհեղութն լինի ՚ի խորասան և աւեր շատ · և քաղաքք շարժին · և թագաւոր ժառանգէ զնա · և յարևմուտս պատերազմունք ։ Եւ եթէ բակ՝ անասնոց և հողմոց և անձրևաց բազմութն · և աղբիւրք առատանան · և մարդկան առողջութի ։ Եւ եղջիւրն ուղիղ լինի, երաշտ · թէ կախ՝ անձրև գայ ։

Եւ արեգակն խաւարի, յառնէ որդի թագաւորի և սպանանէ զհայր իւր և անցանէ յարևելս · առցէ քաղաք բազում · և հեծեալք նորա ցրուին ընդ ամ երկիր ։ Եւ բակ՝ մահ հասանէ թագաւորի և որդւոց նր · և լինի թշուառութն զօրաց նոցա · և ելանէ արագիլն և առնէ վնաս բազում ։

Եւ իջանէ աստղն յարևելս, մեռցի թագաւորն իւր և խափանին գործք իւր · և

հեծ

հնձեալք եղանեն և մտանեն 'ի յարկմու-
տըս . և պատերազմին դադարք ընդ այլազգե-
ացն և յաղթեն նոցա . 'ի բանակելոն և յա-
րկմուտս պատերազմունք լինին . և ցորեան
առատ: Եթէ յարկմուտս իջանէ , արիւն
հեղութի 'ի կողմն հարաւոյ .

Եթէ կայծակի , պակասին անձրևք . մեղր
և բամպակ աղէկ . ահ անկանի 'ի վր երկ-
րի և պատերազմ լինի .

Եթէ որոտայ , խաշանց մահ և ծաղիկ տը-
ղայոց . ցորեան շատ և ազատաց մահ: Եթէ
յուրբաթի որոտայ , ձմեռն շատ . տարին
բարի ծառոց և տնկոց:

Եթէ ցերեկն շարժի , ապականութի տղայ-
ոց և նեղութի մեծ գայ 'ի վերայ երկրի . և
ձայնք և որոտք շարժին . Եթէ գիշերն շար-
ժի , արքունիք յառնեն 'ի վր . և մեծամե-
ծաց հիւանդութի . և նաւուց կործանումն:

—

Օգոստոս:

Ի յօգոստոսի ( որ է Ը.հկի՛ ) Եթէ լու-
սինն խաւարի , ցուրտ պինտ լինի . յետոյ
անձրև գայ . և հիւանդութի խիստ 'ի հա-
րաւոյ կողմն . և հաց առատ . և յարկմուտս
առել և նեղութի . փայլատակմունք շատ .
ծառք նեղութի կրեն . առողջութի մարդ-
կան .

կան . գ ամիսք անձրեւք պակասին . առնուն զքաղաքս հայաստանեայց այլազգիք . և յամ քաղաքս ձայն ահի անկանի . և՛ի խորասան արիւնհեղութի ։ Եթէ բակ ունի , հողմ ելա_նէ և անձրեւ գայ . և՛ի տեղիս տեղիս խռո_վութի յոլով ։ Եթէ եղջիւրն ողորդ՝ հօտք բազմանան . յամի աղէկ ։ Եթէ կախ՝ անա_սունք մեռանին ։

Եթէ արեգական խաւարի , մեռանէ թագաւորն հռոմոց յարապիկն . և ելանէ արաբն և կոտորէ զհռոմն . և մեծ խառնակումն լինի ։ Եթէ բակ՝ թագաւորն մեռանի և այլ ոք թա_գաւորէ . և յաւուրս նր լինի խաղաղութի ։

Եթէ իջանէ աղեղն ՛ի յարեւելս , յառա_ջիկայ ամիսն ձիւն գայ . և պարզ և ցուրտ լինի . և՛ի հռոմք պատերազմունք բազում . և արեւմտից թագաւորն ՛ի գերութի վարի . և ուռուսք ընդ իրեար պատերազմին . և խաղաղութի ը ամ երկրի ։ Եթէ յարեւմուտս իջանէ , տարին բարի՝ պտուղք առատ՝ և թագաւորին փոխումն . և մարդիկ ՛ի քա_ղաքէ ՛ի քաղաքս փոխին . և անկանի մահ_տարաժամ ։

Եթէ կայծակն , որոտումն և աշխարումն . հալածումն և խռովութիւն թագաւորաց և երկրի նոցա ։

Եթէ ցերեկն շարժի , կախ լինի . և շատք

անկանին ՚ի գետին . աշխարհք ապականին . ծովք չորանան . ցորեան և ամ՟ պտուղք շատ ։ Եթէ գիշերն՝ անձրև սաստիկ մինչ ՚ի 30 օր . ցուրտ խիստ և աղայոց մահ ։

—

## Սեպտեմբեր ։

Ի սեպտեմբերի ( որ է Ս՟արերի՝ ) Թէ լուսինն խաւարի , պատ՟ և ցուրտ և նեղութի և խռովութի ամ՟ երկրի . զի յառնեն քաղաքք ՚ի վերայ քաղաքաց . և մեռանի յարևմուտս մեծ այր մի . և նոր խորշուրդ շարժի ՚ի վերայ երկրի և վնասէ զմարդիկ . և պտուղ երկրի չորանայ ։ Եթէ բաւկ՝ անձրև կարկտախառն եկեսցէ , կամ ձիւն հողմով . և ցամաք ցուրտ լինի . ձմեռն աղնիւ և հողմ սաստիկ ։ Եթէ եղջիւրն ողորդ լինի , անձրև բազում և մահ և բարին պակասի ։ Եթէ կախ՝ անձրև սակաւ և բարի յոյժ ։

Եթէ արեգակն խաւարի , ամ՟ իրաց սղղութի և մահ . պատերազմունք և արեան հեղութի . և շահմանան աւագանք . և յետոյ առատութի լինի ամ՟ երկրի ։ Եթէ բաւկ՝ ցամաք ցուրտ լինի և զարհուրումն ՚ի քաղաքի . և մնայք գինւոյ պակասի . և ցորեան բազմանայ ։

Եթէ իջանէ աղեղն յարևելս , պտուղ սա_

կաւութի ․ և խաղաղութի ամ երկրի ․ բայց սերմն պակասի ․ և յերկիրն բաբելացւոց է սարի սով լինի ․ և յարեմուտս անձրև_ այլին ․ և առիւծք՝ ՚ի մարդիկ է ամիս վը_ նաս առնեն ։ Թէ յարեմուտս իջանէ , անձրևաց պակասութի ․ ցաւք աղայոց ․ հա_ ւուց և խաշանց առողջութի ․

Թէ որոտայ , առատութի հացի ․ անձրև բազում և հիւանդութիւն ։

Թէ կայծակէ , առատութի ամ իրաց ․ և զօրք յարևելից յարեմուտս երթան ․ և բա_ զում պատերազմունք լինին ․ և բարկութի ՚ի վերայ երկրի ։

Թէ ցերեկն շարժ լինի , խաղաղութի է աշխարհի ․ պատերազմաց դադարումն ․ մե_ ծատանց մահ ․ կանանց և աղայոց և խա_ շանց ցաւ ։ Թէ գիշերն շարժ լինի , խա_ ղաղութի և ուրախութի և ցորենոյ լիութի ․ և ծովք բազմանան ։

—

Հոկտեմբեր ։

Ի հոկտեմբերի ( որ է Մարգաց՝ ) թէ լուսինն խաւարի , տարին բարի և առա_ տութի հացի և ամ իրաց ․ և խաղաղութի ՚ի մէջ մարդկան ․ և անձրև շատ և լիութի ․ և այր մի անկանի յիշխանութենէն ՚ի լեռնէն



առ

տիւրոսի. Եթէ բակ՝ ձիւն շատ և ցուրտ խիստ. և անձրևք մեծամեծք. Եթէ եղջիւրն ողորդ՝ յառաջանալ տարւոյ աղէկ լինի. Եթէ կախ՝ մահ գուշակէ և կարկուտ։

Եթէ արեգակն խաւարի, տարին ցաւագին և մահ լինի. Եթէ բակ՝ աճոտ լինի և փախուստ հաւուց, և ծաղիկ բազում։

Եթէ որոտայ, անձրև բազում և տարւոյն խիստ. մեծաց մահ. Եթէ յուրբաթի որոտայ, եղանեն խռովութիւնք և զառնան մարդիք 'ի տեղիս իւրեանց. հաց և գինի շատ. և շարժումն զօրաց յարևմտից և 'ի հիւսիսոյ։

Եթէ իջանէ աղեղն յարևելս, անձրև շատ և վտանգաւոր աւերումն. և բազում լինուն լինի երկրի. բայց մարդիկ վտանգին 'ի ցաւոց. և բազում պատերազմունք լինին յարևմուտս. և 'ի բաբիլօն ժանգ. և յարևելս բազմուն վտանգաւոր. Եթէ յարևմուտս իջանէ, անկանի սով 'ի կողմն հարաւոյ։

Եթէ կայծակն, պտուղք ծառոց պակասին. և բազում քաղաքաց տապալումն.

Եթէ ցերեկն շարժ լինի, սակաւ սասանի երկիր և ոչխարաց մահ. Եթէ գիշերն շարժի, թագաւորք քաղաքաց հեթանոսաց՝ յոտար աշխարհ փախչին, և այլք առնուն զնոցա տեղին և զթագաւորութիւն. պտուղք ծառոց պակասեն. և անձրև անոյշ և ցոր-

եան

եան զօրանայ․ և վայրի կենդանիք կորնչին․ և յետոյ երևի թագում խաղաղութի։

Նոյեմբեր․

Ի Նոյեմբերի (որ է Հռոտից՝) թէ լուսինն խաւարի, ՚ի գարունն առնէ վնասակըն․ ամ իրաց առատութի և տղայոց շահեկանութի․ և յերուսաղէմ շատ անձրև գայ․ և ՚ի մէջ թագաւորաց կռիւ լինի, և մեռանի։ Թէ բաց՝ առատութի և գետք բազմանան։ Թէ եղջիւրն ողորդ՝ հաց և գինի շատ․ և ցուրտ։ Թէ կախ՝ մահ գուշակէ և անձրև։

Թէ արեգակն խաւարի, կոտորումն անասնոց և գազանաց․ և հիւանդութի տղայոց։ Թէ բաց՝ շարժումն հեծելոց յարձակմունս երթալոյ։

Թէ իջանէ աղեղն յարևելս, երաշտութի․ վնասակար ժանդ․ և յարևելս թագաւոր մի ՚ի թշնամեաց իւրոց մեռանի և արտմուի լինի․ և ձիւն շատ գայ։ Թէ իջանէ աղեղն յարևմուտս, առողջութի և խաղաղութի և առատութիւն։

Թէ որոտայ, մահ լինի․ վնասակք և այգիք լուանան․ ցորեան և գինի շատ։ Թէ յուրբաթի որոտայ, աւերումն հարկանէ․

կանէ․ և շարժին քաղաք և գիւղ․ և ելանէ Թագաւոր ոմն յարևելից և տապականէ զերկիր տաճկի խուր։

Եթէ ցերեկն շարժի, ջուրք շատանան և հողմ լինի․ և տարին պտղաբեր․ և տատութն անչափ։ Եթէ գիշերն շարժի, յայն աւուրն ուր լինի՝ կռիւ լինի և սասանումն, և փախուստ մարդկան։

—

Դեկտեմբեր։

Ի դեկտեմբերի ( որ է՞ Նաւասարդ՝ ) Թէ լուսինն խաւարի, շատ անձրև գայ․ և լինի եղեամն և պաղ, և դառնութիւն օդոյ․ և լինի խաղաղութի քաղաքի, և ամառն պատերազմունք․ բայց լիութի լինի․ մարախ գայ և վնաս տանէ․ գարունն խառնակ և ծաղիկ անկանի։ Եթէ բակ ունի, իշխանաց տեր և խաղաղութի․ ձիւն և կարկուտ գայ․ Թագաւորք մեռանին․ և պարսիկք յանձրևաց տապականին։ Եթէ եղջիւրն ողորդ լինի, պղունի և ցուրտ նշանակէ։ Եթէ կախ՝ անձրև գայ։

Եթէ արեգակն խաւարի, խաղաղութի․ բայց 'ի չորից կողմանց տարին խառնակ գայ և տղայոց ծաղիկ։ Եթէ բակ ունի, շարժին հեծելք յարևելից և յարևմուտս երԹան․

 գինի

գինի շատ եւ ուրախութիւն լինի մարդկան ։

Եթէ իջանէ աղեղն յարեւելս , երաշտա- նան աւուրք եւ խառնակեն ամպք . եւ սուր շարժի 'ի վերայ երկրի ։ Եթէ յարեւմուտս իջանէ , առատուի՟ ամ՟ իրաց եւ ամ՟ երկրի . եւ առողջութի՟ ամ՟ մարդկան ։

Եթէ կայծակի , հրացայտ լինին աստե- ղունք . հիւանդուի՟ մարդկան . ցորեան եւ գինի շատ . եւ պտղոյց կոտորումն ։

Եթէ որոտայ , ամ՟ երկրի բարի լինի . եւ վաստակ բազում ։ Եթէ յուրբաթի որո- տայ , նուազութի՟ լինի յարեւելս ։

Եթէ ցերեկն շարժի , այն տեղայց առաջ- նորդքն խառնակումն եւ կռիւ լինի , եւ բա- զում պատերազմունք ։ Եթէ գիշերն շար- ժի , մեծամեծաց տրտմութի՟ . եւ հեծելայք շարժին եւ զօրք ելանեն . եւ մարդկան նե- ղութիւն լինի , եւ աւերումն քաղաքաց , եւ գլխաւորաց կոտորումն , եւ վաստակոց նուազումն ։

Նմա քի՟ յուսոյն մերոյ փառք յաւիտեանս ամէն ։

Յուցմունք ՚ի վր երկոտասան կենդանակերպիցն, որոց և ասէ Յանուարէր:

Խոյ:

Յորժամ Խոյն լինի տանուտէրն, գարունն աղնիւ. ա̄մ խիստ և ցորենոյ առատութի. և ՚ի հաւմ տունկք չորանան. վաստակ աղէկ. ՚ի յերկիրն բաբիլոնի սով լինի. ՚ի յասորիք գինի առատ. ՚ի յերկիրն հնդկաց՝ մահ անկանի. և խաղաղութի յերկիրն գիլաթայ՝ մինչև ՚ի ծովն հիւսիսայ. և յարևմուտս շարժումն լինի, և բազում քաղաք տապալին:

Եւ յորժամ ՚ի հիւսիսոյ կողմն աստղ ելանէ, քաղաքք Է խռովար հարկանին. մեծամեծաց կորուստ ՚ի թշուառաց կամ ՚ի յայց:

Եւ յորժամ աղեղն իջանէ, ա̄մ աշխարհի խաղաղութի ցուցանէ. ամառն բարի և վաստակ աղէկ և անձրև գայ. մեղր և կիթ շատ. ձիւն թեթև. և մարդկան առողջութիւն:

—

Ցուլ:

Յորժամ Ցուլն լինի տանուտէրն,



գա

գարունն գիճային • յառաջ շատ մ՛ ցու-
ներ, զի մուտք տարւոյն չէ աղէկ • յերկիրն
բաբելոնի սով լինի և մահ • Յետ գարնան՝
հողմային • զի ցուլն՝ գէջ է և ջերմն • եւ ա-
նէ ապականութի՛ վասատակոց 'ի յերկնից •
յասորիս՝ մահ եղանց և խաշանց •

Իսկ 'ի տեղիս տեղիս ամառն տօթային՝
խիստ ջերմային • բայց հակառակ խիստ
լինի • յառաջ ձմեռն բաղցր և յետոյ ձիւն
շատ • գարունն աղնիւ • ամ՛ բարուց աղէ-
կութիւն ցուցանէ •

---

## Երկաւոր:

Յորժամ Երկաւորն լինի տանուտէ-
րըն, գարունն միջակ • և 'ի բազում՛ տեղիս
սով լինի և որոմնութի • Յերկիրն պարսից
վասատակ ոչ լինի • և ձմեռն վատ խիստ լի-
նի • և անկանի կռիւ և պատերազմ Է իբ-
եարս • և խռովի երկիրն 'ի սահմանս պար-
սից • և շարժումն երկրին գէկլաթայ՝ մինչև
'ի ծովն ովկիանոս, և 'ի բաբելոն՝ բայց ոչ
բազում •

Յասորիս և 'ի միջագետս՝ ձմեռն կակուղ
և գինի շատ քան զցորեան • և տարին ա-
ռողջ գայ, յետոյ աշնայքն հողմ՛ եղանէ •
և ծնունդք ոչ բազմանան • բերանացաւ
խիստ • և աղբերաց պակասումն •

## Խեցգետին.

Յորժամ Խեցգետինն լինի տանուտէրն, գարունն յոյժ և հողմային. ամառ պտղաբերք ապականին, և գինի սակաւ. վաստակ աղէկ լինի, բայց սակաւանայ անձրև.

Նաւանց և գազանաց անցումն. և ըստ մուծին ՚ի վ՟ երկրի. արօտ անասնոց չէք. և ՚ի տեղիս տեղիս մարախ երևի.

Ձմեռն թանձ լինի, և հողմ ելանէ. որ հիւանդանայ՝ խիստ նեղի ՚ի ցաւս.

Աշունն շատ տաք, բայց ցուրտ լինի.

---

## Առիւծ.

Յորժամ Առիւծն լինի տանուտէրն, գարունն աղէկ. դաշտք լիարար. վաստակք և ամ՟ արմտիք պտղաբերք. պատառին ոստք վասն շատ լինելոյ. և գինի շատ.

Ամառն անձրև գայ բազում. և քաղաքք աւերին ՚ի սմբակաց. ՚ի բաբելոն շարժումն լինի ժողովրդոց. յասորիս արտամուտ լինի. զի օդն տանու զվաստակն. անձրև անոյշ, յետոյ երաշտ.

Ձմեռն սակաւ. ցուրտ խիստ. և ՚ի սաստկութէ ձմերայնն՝ մառախուղ նստի. և գազանք սատակին.

Ի տանէն յունաց զօրք ելանեն. և բազում գաւառք ընդ ոտս հարկանին.



Կոյս.

## Կոյս.

Յորժամ Կուսն լինի տանուտէրն, գարունն աղէկ գայ. վաստակ աղէկ, բայց մուտք տարւոյն պակասին. և այգի մի՛ վաստակեր՝ զի գինի ոչ լինի. և պտղաբերք պտուղ ոչ տան.

Ի յերկիրն արևելից ամպոց սակաւութ. տարին ցաւագին և աչացաւ բազում. զատորիք՝ սով և մարախ հարկանէ.

Յերկիրն պարսից՝ գլխաւոր մի անկանի. և զօրք ելեալ ապստամբեն. և բազում գաւառս առնուն.

Ի տեղիս տեղիս աշունն շատ անէ. ձմեռն քաղցր և սով սաստիկ. որք վաճառեն հարք զորդիս. և տեսանեն ամենեքեան զվայս իւրեանց.

—

## Կշիռ.

Յորժամ Կշիռն լինի տանուտէրն, ի գարնան անձրև սակաւ գայ, բայց ցորեան շատ. և ապականին աղէկ գինին.

Ի Հռոմ տրտմութի անկանի և խառնակումն խիստ. Ի հայք աւեր մտանէ, և բաժանեն զերկիր ի վերայ իրերաց. և տունք մեծամեծաց տապալին.

Յաւք անասնոց և եղանց, բայց ծախումն

խուռն սակաւ · պինտակ հարկանել զերկիրն · փորացաւ յարենէ · գաղանաց մահ ։

Սերմն անձրեւային · և թմ պտղաբերք աղէկ լինին · յերկիրն գկլանթայ խաղաղունն ։

Հաշուանն անձրեւ գայ , յետոյ երաշտ ։ Ձմեռն աղէկ և ձիւն շատ ։ ՚Ի սեղխս սե_ղխս կարկուտ ։

---

Կարիճ ։

Յորժամ Կարիճն լինի տանուտէրն , գարունն անձրեւ ամպով բայց կասուր · յառաջին երաշտ , և յետոյ ցուրտ ահեղ և սոսկալի ։

Աշն է լաւ տարին · զի օդք տրամին ՚ի հրամանէն Այ · և լինի խառնակումն ամպոց և ճայթումն փայլատակմանց · և յահեղ_որոտմանց՝ սասանի երկիր · գետք և ծովք յառնեն , և աւերծեալ մրրկին ։

Գարունն խառնակ լինի յամպոց՝ մինչև յելանել բազմաստեղն · պտղաբերք շորա_նան · գինի սակաւ · վաստակ աղէկ · Իսկ հունձ սակաւ հասանի · կամ յամպոց , կամ ՚ի կարկտէ , կամ յայլ պատահարաց՝ սակաւ գայ ՚ի շահ · և թրթուր երևի ։

Երկիրն պարսից խառնակումն · և ան_կանին ընդ իրերար · և շարժին զօրք նորա · և

և թագաւորն երկրին այնորիկ 'ի հողս ան-
կանի · և թագաւորն յունաց՝ շարժի զօ-
րօք իւրովք յաթոռոյ իւրմէ, և բազում
գաւառք ապականին 'ի մէջակաց · և խռովի
երկիրն · զի մնացք տարւոյն ապականին ։

Եւ 'ի մտանել աղեղնաւորին՝ սով լինի ·
և որ աշունն անցանէ՝ լաւ լինի ։ Մտան
հողմային · ձմեռն թեթև · բայց ցուրտ
խիստ · և 'ի հասարակ ձմեռն անձրև գայ ։

—

Աղեղնաւոր ։

Յորժամ Աղեղնաւորն լինի տանուտէ-
րըն, գարունն խոնաւ գայ յամսոց մինչև
յամառնային եղանակն · տարին հողմային ·
դաշտք լիարար վաստակօք՝ գինւով և ձէթ
պտղով · բայց այգիք ապականին 'ի կարկտէ
կամ յայլ պատահարաց · պիծակ խիստ և
սով 'ի բազում տեղիս · և շարժումն զօրաց
և ձայն պատերազմաց յարևելից և յարև-
մտից և շարժումն ժողովրդոց 'ի վ՜ր իրերաց ։

Զի գաւառք բազումք ապականին 'ի
մէջակաց · տունք մեծամեծաց տապալին 'ի
թագաւորաց կամ 'ի յ՜յ · վասն զի 'ի նե-
ղութե՛ ժամանակին՝ ուրանան ծնօղք զոր-
դիս իւրեանց · և տագնապի երկիր իբրև
զնաւ ալէկոծեալ ։ Նայց յերկիրն տար-


ւոյ

ւոց խաղաղութի · և լի՛ ամ բարուով · յառաջ ձմեռն՝ ջերմ տաք և ցամաք · և ցորեան լաւ լինի քան զգարի · և ոչխարաց մահ լինի ։

—

Այծեղջիւր ։

Յորժամ Այծեղջիւրն լինի տանուտէրըն · գարունն աղէկ · անձրև ըստ կամաց · պիծակ խիստ · պտուղք պակասին · դաշտք լեարաք վաստակօք զօր յառաջն ցանեն · բայց ՚ի բարձր տեղիս՝ զվաստակն օդն տանի ։ ՚Ի հայս տրտմութի անկանի և մեծամեծք թափին ՚ի յընչից իւրեանց ։ ՚Ի կողմն հիւսիսոյ և ՚ի հարաւոյ բարկութի շարժի ՚ի ամբարակաց · և ցամաքին աղբիւրք անդնդոց և գետոց · լինին հայթմունք յերկնից · գաւառք ապականին ՚ի կարկտէ · տարին ցաւագին լինի · և քաղաքք բազումք կործանին · և մեղք պակաս ։ Որ յետոյ սերմանէ , յաշունն աղէկ լինի · ձմեռն աղէկ գայ · ցուրտ և ձիւն ոչ լինի ։ Հացն յաղբիլեն ՚ի վէր՝ թանկագին երևի մինչև ՚ի յունիսն ։

Եւ լուսինն խաւարի՝ պտղաբերք ապականին · մնացն աղէկ լինի՝ թէ ՚ի տեղիս տեղիս ուր ժանգ չուտէ ։

Ջրհոս:

Յորժամ Ջրհոսն լինի տանուտէրն, գարունն գիջային · անձրևք մեծամեծք · պտղոց առատութի · ՚ի գաղտ տեղ մի՛ սերմաներ՝ զի ժանգն առնու զվաստակն · և շարժումն զօրաց յարևելից մինչև ՚ի մուտս արևու · և այս հովուքն մարդիկ ՚ի ծերպըս վիմաց:

Մահ խաշանց · առաջնորդաց կորուստ · մեղր սակաւ ընդ ամ երկիր · մարդկան առողջութի առ հասարակ · գնացք կարկտի · և հողմն գայ ՚ի հիւսիսոյ · պտղոց և անկոց պակասումն լինի · ՚ի տեղիս տեղիս Թըրթուր հարկանէ:

Ձմեռն ցամաք · ցորեան և գարի շատ լինի · Իսկ յարևելս սով լինի ՚ի խաշինս ամսոյն ՚ի վեր · և դաշտք չբերեն պտուղ · Երբանց վաստակ · այգիք միջակ լինին:

—

Ձուկն:

Յորժամ Ձուկն լինի տանուտէրն, գարունն միջակ և կատուր և անձրևային · և յարուցմունք գետոց · Ցորենոյ և պտղոց առատութի · մեղր սակաւ · և ՚ի տեղիս տեղիս պատերազմունք · Մահապարտամ խաշանց · և խիստ փորացաւ · ծովք շարժին:

ժին. և լերինք լեառնար վաստակօք։ Մարախ և թրթուր ապականէ զերկիրն պտղոց։

Յարևելս խաղաղութիւն. և յերկիրն հունից պատերազմունք։

Ամառն՝ անձրևային, բարով ՚ի հունձս հասանէ. մեծամեծաց մահ. խառնակութիւն ազգաց ընդ իրեար. յաշունն անձրև շատ գայ. և զոր ցանես ՚ի խաշին ամիսն՝ աղէկ լինի. ՚ի տեղիս տեղիս ձիւն շատ։

Եւ ՚ի հասարակ ձմեռանն՝ հողմն շարժի և անձրև գայ և ցուրտ լինի։ Կարի շատ, բայց ոչ յամէն տեղիս. մասնաւոր միջակ. և ձմեռան ՚ի միջին ամիսն՝ Ժ կամ ԺԵ՝ եղանց բարի. և աղայոց մահ։

### ՚Ի վերայ եւթն մոլորակացն՝ հանդերձ Լուսնի դարձուցեան և ծնեցեալ աւուրք նոյնոյն.

Արեգակն է իբր Թագաւոր և ուղղաւորիչ մոլար աստեղաց, զի ունի զազդողականութիւն քան զայլսն։

Որ արեգականն՝ է կիրակի. ցերեկեան և երեկոյեան առաջին ժամն։

Կաղանդի օրն եթէ ՚ի կիրակի հանդիպի, ձմեռն լինի սաստիկ ցուրտ. գարունն՝ բարեխառն. ամառն՝ չոր և տաքաւակութ.

աշունն՝

ազունն՝ հողմոյն · ուռճին առատ · Ցո՛ գարի · ցորեան · գինի · ձէթ և մեղր · ոչխար և անդեայք · փարթութն 'ի մէջ ազնուաց, և քուռն ընդդէմ մեծամեծաց · մահ ա_ ղայոց և մանկամարդաց ։

Ընկեալն ընդ իշխանութեամբ արեգական՝ լինի մեկեղ, շառագոյն, լայնաճակատ, բա_ րակ ունք, աչեղ, յարմարութիւ, միջակա_ բերան, միջակապարունդ, յարմարակազմ, կարմրայտ և գեղեցկադէմ։ Բարուքն ծա_ նրը, համեստ, առատաձեռն, խորախոհ, պատուասէր, և քաղցրաբան ։

—

Լուսին ։

Ունի զանազան արարս, մանաւանդ յա_ ճիլն, և 'ի նուազիլն · նոյնպէս զծովականս հարմարի յաճման լուսնոյն՝ զկենդանիս կարելին զարմանս հաւաքելն, զուգակցուն անուանեցելոյն · և այլ այլքն նման առք և աղբիք · իսկ 'ի լրմանն՝ շահեկան և պիտանի ։

Որ լուսնոյն է երկուշաբթի · և նոյն ա_ ւուր ցերեկեայ և գիշերեայ առաջին ժամն ։

Կաղանդի օրն եթէ յերկուշաբաթի հան_ դիպի, ձմեռն՝ բարեխառն · գարունն՝ զովական · ամառն՝ միջակ և աղնիւ · ա_ շունն՝ յոյժ խոնաւ · որ ջուրք բնաւ ոչ

պակասին , ցորենոյ պակասութիւն , բայց այլսերմանց առատութիւն ․ գինի և ձէթ միջակ ․ սարսուելի նուաղութիւն անասնոց ․ հիւանդութիւն մարդոց ․ փեռեկտութիւն ՚ի մէջ մեծամեծաց ․ արգանդացաւ կանանց ․ պակասութիւն աբրշմի և մեղեր ․

Յունուարն ընդ իշխանութ̅ լուսնոյն՝ լինի սպիտակամարմին , մազասատ , ներղակզակ , բոլորադէմ , ատամնայարմար , միջակաչեայ , քնած , փոքրաբերան , գաղաբերակ , հաստաթիկունք , երկայնաբազուկ , յամրաշարժ , սպիտակամազ , լայնաճակատ , նստաքիթ , բացերես , փոփոխական , դիւրահիւանդ , երկրասէր , ջրասէր և վավաշոտ ․

—

Հրատն ․

Պատճառէ զանազան փոթորիկս ․ սառնամանիս ․ ալէկոծութիւնս ․ և զայլ օդային պղտորութիւնս ․ երբեմն և սաստիկ ջերմութիւնս ․ ծանր հիւանդութիւնս ․ և շարժէ զանձինս ՚ի խռովութիւն , ՚ի վիճաբանութիւն , յապստամբութիւն , յարեանհեղութիւն , և յայլ բազմատեսակ թշնամութիւն ․

Օր հրատին՝ է երեքշաբթի ․ և նոյն աւուր ցերեկեան և երեկոյեան առաջին ժամն ․

Կաղանդի օրն՝ եթէ յերեքշաբաթի հան

գինւոյ, ձմեռն լինի ցրտային՝ անձրևային՝ խաւարչուտ և շատաձիւն · գարունն՝ գե_ջային · ամառն՝ ջեր · աշունն՝ չոր ։

Յառաջիկայ տարին լինի ծովու ալեկո_ծութիւն · նաւաբեկութիւն · նուաղութիւն ցորենոյ և այլ արմտեաց · միջակութիւն մեղեր, ձիթոյ և մրգաց · առատութիւն ընչից և հունդ սեր_մանց · պակասութիւն գինւոյ · մահ մանր կեն_դանեաց · նաև իգաց՝ առաւել հիւան_դութիւն և մահ, քան թէ արուաց · երևի թէ՝ ոչ սակաւ ազնուապատիւ այրք մահ_ուամբ զկեանս փոխիցեն ։

Ծնեալն ընդ իշխանութ̃ հրատին՝ լինի թխամորթն, շատախօսիկ, ողորկ և փոքրա_մազ, հրաշեայ, մեծայինչ, սակաւամօրուք և անյարմարատամն, սրտամաշող, չարաբարոյ, չարահնար, չարախնդաց, լեզուագար, կա_մապաշտ, թերահաւատ, արեանարբու, ամ_բարտաւան, իգամոլ, խաբեբայ, առերդմ_նեայ, անգութ, յափշտակող, թշնամի խա_ղաղութեան, և անյագ ՚ի պատահարութէ

—

Փայլածու ։

Ի այլայլումն, փոփոխական, և երկա_բունն · ընդ բարեացն՝ բարեբարոյ, ընդ չարին՝ չարաբարոյ ։

Որ փայլածուին՝ է չորեքշաբաթի ․ և նոյն աւուր առաւօտեան և երեկոյեան առաջին ժամն ։

Այղանդի օրն եթէ ՚ի չորեքշաբաթի հանդիպի, ձմեռն դժուար լինի՝ բայց ոչ սաստիկ ցուրտ ․ գարունն՝ գէջ և ոչ գովելի ․ ամառն՝ քաջալեր և ազնիւ ․

Միջակ ցորեան և այլ հունդք ․ կութ գինւոյ՝ ձիթոյ՝ մեղեր՝ առատ, բայց ՚ի տեղիս տեղիս սղութիւն ոռճկաց ․ և երևի թէ՝ յաշնանն իցէ մահ գլխաւոր արանց ․ խեղդամութիւնք ․ կողացաւութիւնք ․ գլխացաւութիւնք ․ վիժանք, և նոր հանճարք ․

Նշանակն ընդ իշխանութեամբ փայլածուին՝ մաղասամակարդ լինի, ծանր և փափկամար մին, ուսնայնախոհ, երկրաւեր, քաղցրախօս, յօժարածածող, մարդելից, հպարտ, սաստաց, խորամանկ, նեղամտական, երկայնունք, սևաչեայ, յարմարադէմ, նեղաքիթ, հաստաշուրթն, յարմարակզակ, և սիրող սև զգեստուց ․

—

Լուսնթագն ․

Պատճառէ բարեկամութիւն, խաղաղութիւն, հանդարտութիւն, և ջերմեռանդութիւն, մնայուն ՚ի մանկութեան հասակս ․ Իշխէ ՚ի



վերայ

վերայ խոհեմ, համեստ, ամօթխած, ներ-
հուն, ազատաբարոյ, զուարճամիտ, և բա-
րեպաշտ անձանց.

Որ լուսնթագին՝ է հինգշաբթի. նոյն աւուր առաւօտեան և երեկոյեան առաջին ժամն:

Նշանագիր որն՝ եթէ ՚ի հինգշաբաթի հանդիպի, ձմեռն՝ անոյշ. գարունն՝ հողմոտ. ամառն՝ ցանկալի. աշունն՝ անձրևային: Առատութի ցորենոյ, ոսկւոյ, մրգաց, արմտեաց, գինւոյ և ձիթոյ.

Ծնեալն ընդ իշխանութ̃ լուսնթագին՝ լինի գեղեցկահասակ, կարմրախայտ, փափկամիս, հաստերակ, բարեձև, միջակամօրունեայ, գորշահեր, մեծաճակատ, մեծաբերան, մեծակոկորդ, հաս. զրեթ, սեաւչեայ, առատամտախոհ, լայնածնօտ, լայնակուրծ և լայնաթիկունք. Արուքն լինի հանդարտ, համեստակենցաղ, բարեհաճոյ, անպատիր, հաւատարիմ, ժուժկալ, ընդունակ ամ̃ բարեաց և հանճարոյ.

Լուսաբերն.

Որև գիշերավար ձայնի՝ իշխէ ՚ի վր̃ կանանց, երախայից, երաժշտաց, բարեբախտ և զարդարուն անձանց.

Որ լուսաբերին՝ է ուրբաթ․ ժամն՝ նոյն աւուր առաւօտեան և երեկոյի առաջինն ։

Կաղանդի օրն՝ եթէ յուրբաթի հանդիպի , ջուրք ոչ պակասին․ ձմեռն ծանր և սաստկունի ղաւն ցրտոյ․ գարունն հողմոտ․ ամառն գէշ և անոյշ․ աշունն մասամբ չոր՝ մասամբ հողմակոծ և անձրևայինն ։

Արդուսան առատ՝ թէ և ծանրագին․ կուռթն շատ և լաւ․ երևի նշան աչացաւութե․ ծանր տագնապ մեծամեծաց և պատուական անձանց․ տարաձայնութի յայլևայլ կող_ մունս աշխարհի․ և՛ի տեղիս տեղիս գեռ_ նաշարժութիւն ։

Ծնեալն ընդ իշխանութը լուսաբերին՝ լինի բարձրահասակ , զուարճերես , աչեղ , ծիծաղադէմ , հերատարած և արծուաքիթ ։ Բարուքն ճարտարաբան , խոհեմ , գթոտ , սիրելի , համեղախօս , զբօսաբեր , խնդաբեր և առփածու ։

—

Երևակն ։

Պատճառէ զերկս և զաշխատանս , սով և զմահ․ զանձկութի , զաւերածութի , և զսո_ ցինատարաս թշուառութիս ։ Ներէ ՚ի վերայ ծերոց՝ անկելոց և առանձնացելոց․ ղօշա_ քաղ՝ վաշխակեր՝ կախարդ՝ գծուծ և մը_ տացրդ անձանց ։

Օր երևակին՝ է շաբաթ . ժամն՝ առաւօտեան և երեկոյեան առաջինն.

Կաղանդի օրն՝ եթէ 'ի շաբաթի հանդիպի , ցուրտ և սովութի . ձմեռն երկայն՝ հողմակոծ՝ սարսուռ՝ և սակաւուիկ անձրեւային . գարունն հով . ամառն՝ գէձ . աշունըն՝ չոր և հով.

Բազմատեսակ ամուսնութի . անկումն հին տանց . երեքօրեայ և չորեքօրեայ տենդ . մահ ծերոց՝ անկելոց , ոչխարաց , և ապրշմագործ որդանց.

Ծնեալն ընդ իշխանութ̃ երևակին՝ լինի սևամաղձեայ , թխագեղ , մեծախաղաց , մազոտ , հաստապարանոց , ջլոտ և նեղակուրծ . Բարուքն ագահ , խորամանկ , մատնիչ , յար մտրաշարժ , ննդժոտ , բղջախոհ , տաննակեաց , և սիրող սեաւ հանդերձից.

## Յաղագս ժամուց տունջեան և գիշերոյ։

Յունվարի ամսոյ ցերեկն է տասն ժամ, և գիշերն՝ տասնևչորս ժամ։

Փետրվարի ցերեկն՝ տասնևմէկ ժամ, և գիշերն՝ տասներեք ժամ։

Մարտի ցերեկն՝ տասներկու ժամ, և գիշերն՝ տասներկու ժամ։

Ապրիլի ցերեկն՝ տասներեք ժամ, և գիշերն՝ տասնևմէկ ժամ։

Մայիսի ցերեկն՝ տասնևչորս ժամ, և գիշերն՝ տասն ժամ։

Յունիսի ցերեկն՝ տասնևհինգ ժամ, և գիշերն՝ ինն ժամ։

Յուլիսի ցերեկն՝ տասնևչորս ժամ, և գիշերն՝ տասն ժամ։

Օգոստոսի ցերեկն՝ տասներեք ժամ, և գիշերն՝ տասնևմէկ ժամ։

Սեպտեմբերի ցերեկն՝ տասներկու ժամ, և գիշերն՝ տասներկու ժամ։

Հոկտեմբերի ցերեկն՝ տասնևմէկ ժամ, և գիշերն՝ տասներեք ժամ։

Նոյեմբերի ցերեկն՝ տասն ժամ, և գիշերն՝ տասնևչորս ժամ։

Դեկտեմբերի ցերեկն՝ ինն ժամ, և գիշերն՝ տասնևհինգ ժամ։



Յա

Յաղագս նշանաւորութեց բազմատեսակ ներգոր-
ծութեց, որք պատահին յերրորդամսեայս ատաբս
ծը̄ ամսոյ տարւոյն՝ հնարաւոր ՚ի հանճարեղաց,
որք մեծ էրաց ասա ՚ի չորս հանճարեղ նշանաց՝
՚ի լինել մշանաւոր բանասիրաց. որոց տեսութիւն
՚ի հետեւեալ ծը̄ ադեւանդոյցն էջեսս:

—

Յունվար.

Յայսմիկ ամսեան խուլին (պաղին) յաւելանայ ՚ի յանձն մարդոյն. եւ ատամնոցան տկարանայ ՚ի կերակրոյ. վ՛յ յա-
ւաստուց Ջերմ Ջուր ըմպելն օգտակար է.

Կերակուրք այսորիկ ամսոյ՝ պարարտացուն միսք. լաւագոյն ձկունք. անուշեղէնք. քաղցրահամ չափաւոր գինիք.

Պիտոյ է սակաւակեր լինել, եւ հեռի կալ ՚ի հով կերակրոց եւ ՚ի սառն Ջրոյ, մանաւանդ յերեկոյեան բաց մնալոյ, զի ցաւ ընծայի.

Ոգոյշ լինել պիտոյ է ՚ի հանելոյ արեան, ՚ի գնալոյ ՚ի բաղանիս, ՚ի լուանալոյ գլուխն, ՚ի գործ ածելոյ դեղորայս, եւ ՚ի գիշերային ժամու մնալոյ յարտաքս. եւ անսուաղ մնալն ոչ պիտանէ:



Յուն

1 Այսօր տարեմուտ է ամսոց հռով-
մայեցւոց ։
2 Երեւի համաստեղութիւնն խոյին ։
4 Կէսն է ձմեռնային եղանակին ։
6 Այսօր դառն ջուրքն քաղցրանան , և
ծովք խառնակին ։
9 Արեգակն ՚ի Ջրհոսն մտանէ , և ծովք
խառնակին ։
10 Եղանակն և օդն՝ անհաստատ է ։
11 Պարզ և պայծառ է ։
12 Ծովք ալէկոծին ։
15 Ձմեռն սկսանի սաստկանալ ։
16 Հիւսիսային հողմունքն սաստկանան ։
17 Ախըրը արբայինն ։ Վերջն առաջին
մասին՝ 40 աւուր ձմերան ։
18 Էվվելի խամսին ։ Սկիզըն երկրորդ
մասին՝ 50 աւուր ձմերան ։
19 Ծովք խառնակին և շարժին ։
25 Այսօր զոր ինչ սերմանեն լաւ բուսանի ։
26 Ծովք շարժին 3 օր ։
27 Լուսինն ՚ի միասին ընթանայ ընդ իւ-
քերին ։
29 Ձկունք արտաքս ելանեն ՚ի բունոց ։
31 Այսօր մրրկախառնի օդն ։

Յայսմիկ ամսեան՝ խառնակ հողմունք շնչեն ։ Ձիւնք , անձրեւք տատանման ։ Եւ անտանոց կերպարանքն հարկանին ։ Եւ սկսանի ջուր քայլել ՚ի ձիւղս ծառոց ։

Կերակուրք սոյն ամսոյ՝ չոր միսք , չոր մրգունք , եւ զանազան թռչունք ։ Օգտէ կեր առնուլ զխասոր ՚ի մէջ տապակելոյ հաւեղէնաց , եւ մանաւանդ խաշուն՝ հանդերձ կարմիր տաքդեղիւ , բայց չափաւորապէս ։

Բառխարատու բժշկաց՝ եթէ ակար եւ ցաւագար իցէ բնութիւնն , պիտոյանայ գործածել զգործունեայ մաձուն՝ առ ՚ի լուծանել զցուրտն , եւ զցաւն գլխոյ ։ Եւ առաւել հակիլ ձաւհ է ջրով յեփեալ մեղունս՝ քան ՚ի խորովլուս ։

Պիտոյ է սակաւ ուտել , զի արիւնն յաւելանայ , եւ հին արիւնն ՚ի յերակունս նորանայ ։ Զգուշանալի է եւս՝ ՚ի մտանելոյ Է երկար անսուաղ , ՚ի գնալոյ յաճախ ՚ի բաղանիս , ՚ի հանելոյ զարիւն յերակաց , յուծելոյ զաղէ իւր , եւ ՚ի ննջելոյ ՚ի ցրտային տեղիս ։

1 Երեք օր անձրև գայ, կամ ամպոտ լինի
2 եղանակն · և զկնի անձրևոյն՝ առատութի
3 և յաճախութի նշանակէ ·
4 Հնչէ հարաւահողմն, որ է (լօտօս) · մրրկէ, և որոտայ ·
7 Ճեմրէի էվվէլ ալէհավա · այս՝ ջերմութի արևուն իջանէ յօդն ·
8 Արեգակն ՚ի Ձուկն մտանէ ·
9 Ծառոց ջուրքն սկսանին գալ ·
10 Ծառք սաղարթանալ սկսանին, որ է (եափրախ) տալ · և ծովք խառնակին 3 օր ·
12 Յօրէս ՚ի վեր ցուրտն սկսանի պակասիլ ·
13 Մրջիւնք ելանեն ՚ի բունոց ·
14 Ճեմրէի սանի ալէայ · այս՝ ջերմութի արևուն իջանէ ՚ի ջուրն ·
15 Արագիլն գայ, և լինի ցուրտ սակաւ ·
16 Ծովք խառնակին 3 օր ·
19 Կռունք սկսանին խօսիլ ·
21 Ճեմրէի սալիս թօփրաղա · այս՝ ջերմութի արևուն իջանէ ՚ի հողն ·
23 Մանր թռչունք և մեղուք ՚ի դուրս գան ·
24 Յօրէս ՚ի վեր լուսն, այս՝ (ֆէնէրն) յայտնի լինի ·
26 Պէրտիւլ աճիւզ · այս՝ պառաւու ցուրտ, որ տևէ 7 տիւ, և 8 գիշեր ·
28 Ծիծռունքն սկսանին դարձ առնել ՚ի սահմանս մեր ·

Յայսմիկ ամսեան՝ գետինն արթնանայ, և խուլն նուաղիլ սկսանի 'ի մարդն. Համամաթ առնելն, և դեղ ուտելն առ 'ի մաքրել զլեղին՝ օգտակար է. բայց ոչ է պարտ հանել զարիւն յերակաց, և ըմպել զզօրեղ օշարակ առանց հարկաւորութեան. օգուտ է եւ լուանալն ջրով խառնոց.

Կերակուրք այսմ ամսոյ՝ պարտին լինել նուրբք միայն, բարեխառն ըմպելիք, քաղցր ուտելիք, և թերախորով ձուկք. Բայց միշտ պահք քառասնորդաց հանդիպի մեզ յայսմիկ ամսեան, պարտիմք հնազանդիլ պատուիրանաց եկեղեցւոյ, և ըստ կարելութեն հեռի կալ 'ի հում պտղոց, 'ի սոխից, 'ի խաւարոց, և 'ի պողպայից որք ճնշեն. և վարել անձինս կերակրովք պահոց, և սա- կաւ ուտելով. Բանզի յայսմիկ ժամա- նակի՝ յաճախագոյն պատահի մարդկան ա- չացաւութիւն, փորացաւութիւն, և խառնա- կումն արեան.

1 Յօրէս 'ի վեր քուն մարդոյ յաւելանայ ·
2 Մինչև 'ի 7 օր ծառք պատուաստին ·
և կռունկն գայ ·
3 Ցուրտ, և ալէկոծութիւն լինի ·
4 Մերջն պատուհաս ցրտոյն · և քաղքաղն
'ի Հռոմոց երկիրն գայ ·
7 Մրջիւնք արտաքս ելանեն 'ի գետնոյ ·
8 Ալէկոծութիւն երևի, և անձրև գայ ·
9 Արեգակն 'ի Խոյն մտանէ, որ է գար-
նանամուտ և հաւասարակած, և լինի տիւ
և գիշեր հաւասար ·
10 Ախըրը խամսին · այ՝ վերջն 50 աւուր
ձմերան · զոր այլազգիք Նեվրուզ կո-
չեն, որ է նոր օր և գարնանամուտ ·
13 Օձք ելանեն արտաքս 'ի բունոց ·
14 Ալէկոծութիւն երևի 3 օր ·
15 Որդունք ելանեն 'ի յերեսս հողոյ ·
17 Եղանակն պարզ և յաջողակ է ·
18 Լաւ է սերկևիլի ծառ տնկելն ·
19 Յօրէս 'ի վեր նաւարկութիւն յաջողակ է ·
20 Կիւղիւղքն սկսանին խօսիլ ·
22 Որ ինչ եղանակ այսօր լինի, մինչև 'ի
30 օր տևէ ·
25 Որթք շարժին · և ծիծառունքն գան ·
27 Յօրէս 'ի վեր՝ դեղ ուտելն լաւ է ·
28 Արեգական գոյնն նման գինւոյ երևի ·
29 Եղանակն ցուրտ լինի մինչև 'ի 3 օր ·
30 Անձրևային լինի յաւուրս յայսմիկ ·

Յայսմիկ ամսեան՝ ուրախ և զուարճ
լինի մարդ. զի գարնան եղանակն զբնու-
թիւնն մարդոյ զօրացուցանէ. և 'ի վաղոր-
դայն՝ սակաւ մի ջուր ըմպելն օգուտ է
(ասեն բժիշկք).

Կերակուրք ամսոյս այսորիկ՝ են պախ-
րու միս, և քաղցրեղէնք. նաև գառինք,
զուխայք, և թթուաշ կերակուրք.

Պատրաստել պարտ է յաղի իրաց, 'ի բող-
կէ, 'ի թարայէ, և յամ ցեղ լեղի և կծու-
խոտոց, զի մեծս ընծայի. Արեան հանելն
յերակաց, կեր առնուլն զդեղորայս, օծա-
նիլն անուշահոտ իւղովք, և պատկանաւո-
րապէս գնալն 'ի բաղանիս, առողջարար է
մարդկային անձին.

Սկսանին հնչել քաղցրաշունչ հողմուն-
քն արևելեան. և գեղեցկապէս զարդա-
րին երկիր դաշտաց, և ձորոց. և երևին
համայնք վայելչութիւնք ծաղկանց, և
ծառք ցուցանեն զորպիսութիւնս պտղոց
իւրեանց.

1 Այսօր կարիճ աստղն ցածանայ։
2 Այլեկոծութիւն երեւի 3 օր։
3 Մառախլապատ լինի օդն յամ ուրեք։
5 Հողմ հարաւային հնչէ, և անձրև գայ։
7 Եթէ այսօր անձրև գայ, նշան է ա-
ռատութեան՝ թէև սակաւ լիցի. և եթէ
ոչ գայ, տարին չորային լինի։
9 Արեգակն 'ի Ցուլն մտանէ.
10 Տաճկաց Սիթթէի սէվր։
11 Չորային և հողմային և մառախլապատ
երեւի յայսմիկ աւուրս։
14 Այսօր անկաստեղ է։
16 Ջրային, քամոտ, և այլեկոծուն լինի։
18 Ոմանք ասեն, թէ այսօր եմուտ նոյ
'ի տապանն. բայց այս ոչ է այնքան
հաւաստի։
23 Տաճկաց Խըտըրելէզն է այսօր. և այլե-
կոծութեան 1 օր։
26 Չորես 'ի վեր արևելեան քամիք՝ և
27 Նիմպասաք սկսանին հնչել։
29 Գարունն սկսանի զօրեղանալ։
30 Նշան երեւի այլեկոծութեան և հողմոց։

Յայսմիկ ամսեան՝ ջուրք պարզին ՚ի պղտորութենէ ․ քաղցրաշունչ հողմունք փչեն ․ մաղձն ( ամճրաջն ) յաւելանայ ՚ի մարմին, և այլ շատ ախտք լինին։

Ըստ բժշկաց՝ ոչ է պարտ շատ ուտել, այլ չափաւոր ․ զի յայսմանէ հիւծական ախտն ( վէրէմ ) ընծայի ․ և որ շատ ուտէ, և ՚ի ցերեկն քնի՝ ըղխս լինի։

Կերակուրք պարարին նուրբք՝ և դիւրամարսք լինել, որպիսիք են գլուխք գառանց և ձուք ․ բեղեղնէ խոտն եւս օգտակար է նախ քան զկերակուրն։

Հեռի լինել պիտոյ է ՚ի պանրեղէն մսոյ, ՚ի փոշոյից, յաղի ձկոյ, և յոչ քամեցեալ մածնից, զի ամենևին մաղձն լինի։

Արիւն առնուլն, ըղեղորայս գործածելն, և չափաւորապէս ՚ի բաղանիս գնալն՝ օգտակար և առողջարար է։

1 Ամառը նահանջէ · և է սկիզբն մը–
2 լեռնեն կղզւոյ , որ՝ մալթային · և անձ–
րև գալն դադարի ·
3 Նռան ծաղկունքն սկսանին փթթիլ ·
4 Հողմք խառնականին , և լինի ալեկոծու–
թիւն 3 օր ·
6 Ճանճանալն կիսոյ կարճնին՝ է նշան հող–
7 մակոծութեն 4 կամ 5 օր ·
8 Ժամանակ վարդոյ է ·
9 Արեգակն յԵրկաւորն մտանէ ·
10 Շնչէ արևմտեան հողմն , և երբեմն
լինի անձրև ·
14 Կարաման հողմունքն դադարին ի շնչե–
լոյ · և այս օրս որպէս լինի , այնպէս
մնայ մինչև ի 30 օր ·
15 Ասերք հատանելն յոլխարայ ·
18 Անձրևային քամիք հնչեն ·
24 Յայս օրէս ի վեր սկսանին ելանել ի
հովանոցն , որ է ( եայլան ) · Ալլաաեդ ·
27 Ջերմունքն սկսանի յաւելանալ ·
30 Ծովի ալեկոծութիւն ·
31 Ժամանակ է բռնելոյ ղայղիս ·

Յայսմիկ ամսեան՝ ներքում արեանն մարդոյ իջանէ, և մաղձն զօրանայ, և ուղ-ղայնի ցաւս ընծայէ, և մերթ ևս տենդ. ուստի ՚ի վաղորդայն ջուր ըմպելն օգուտ է առ ՚ի լուանալ, և մաքրել զնոյն մաղձն:

Կերակուրք այն ամսոյ պիտոյ է լինել միս ուլոց, և հաւուց, և թարմագոյն ձուկք, որք ունին զհով բնութիւն. օգտակար է դդում, և վարունգ առաւելն ընդ սոսա. և գինին ևս ջրախառն լինել պիտոյ է:

Պա՛րտ է զգուշանալ յայնց ուտելեաց, որք են բնութե՛ ջերմայինք. և ոչ է պիտոյ երբեք հոտոտալ զմուշկ և զաֆրան, այլ զբարեխառն բնութի ունօղ ծաղկունս: Դու մի՛ ախորժեսցիս դատարկ մնալ յայսմիկ ամսեան, այլ աշխատեա՛ ըստ կարեացդ. և եթէ հետիոտս քայլես յաճախ, օգուտ անձին գտանես:

1 Յորեւս ՚ի վէր հիւսիսային քամիք հնչէն։
3 Երեւի համաստեղութիւն կուսին։
5 Հնչէ հարաւային քամին։
7 Ծովք շարժին, եւ լինի ալէկոծութիւն։
9 Արեգական ՚ի Խեցգետին մտանել, որ է
10 ամառնամուտ. զի ցերեկն սկսանի կար-
ճանալ, եւ գիշերն երկարել։
11 Որ ինչ եղանակ լինի այսօր, մինչեւ ՚ի
տարեգլուխն այնպէս լինի ( ասեն )։
12 Տօթութիւն սկսանի սաստկանալ։
15 Նեղոս գետն յաւելանայ, եւ այլ
ջուրք պակասին։
17 Հիւսիսային հողմունք հնչեն, եւ ալէ-
կոծութիւն ծովու երեւի։
18 Ժամանակ է մանգաղաւ հնձելոյ զար-
տորայս։
22 Այսօր սկսանի սամիելին փչել։
23 Երեւի ալէկոծութիւն ծովու 3 օր։
24 Սկիզբն է տօթութեան 50 աւուր։
25 Այսօր ծնեալ է աղէքսանդր մակե-
դոնացին ( ասեն )։
27 Շունն կոչեցեալ համաստեղութիւն երեւի։
29 Այսօր լաւ է ամ՛ ջրան. թէ գնալ
30 ՚ի ճանապարհ, թէ առնել զխանձառ, եւ
զայլ ազապկաց ինչ։

Յայսմիկ ամսեան՝ տաքութիւն զօրանայ, և օր ըստ օրէ սաստկանայ. վ՞յ լուքն, մծակքն և մորեխքն բազմանան.
Կերակուրք ամսոյս այսորիկ պարտ որ՞ք անցելոյն՝ դիւրամարսելիք, և թեթևք լի_ նիլ. և պարարտ միսք ուլից, և հաւուց, և թարմ խոտեղէնք, և հով օշարակք, շուռոփք, և չերըպէթք.

Զգուշանալ պիտոյ է ՚ի տաք և՚ի չոր կերակրոց, ՚ի պաշարեղինաց՝ որք ջերմայ_ ինք են բնութեամբ, և՚ի խակ մրգոց, և՚ի յոյժ քամեցեալ մածնոյ. նաև ՚ի մնալոյ անսուաղ ՚ի գնալոյ յաճախ ՚ի բաղանիս, ՚ի հանելոյ զարիւն յերակաց, ՚ի գործ ածելոյ դեղո_ րայս՝ առանց հարկաւորութեան. Վ՞անզի ՚ի մէջ ամսոյս այսորիկ՝ բնութիւնն մարդոյ թուլանայ. վ՞յ պատրաստել պիտոյ է յայս_ պիսեաց, զի մի՛ վնասիցի.

1 Ներեւելոյն երեւի համաստեղութիւն կու-
սին, որ է տուն լուսաբերին ։
3 Կաք լինի, զի իշխէ արեւմտեան հողմն ։
5 Այսօր երեւակ աստղն ծնանի, եւ լինի
ալեկոծութիւն 1 օր ։
9 Այսօր նոյ ՚ի տապանէն ել ( ասեն
ոմանք ) ։
10 Ալեկոծութի երեւի 3 օր ։
11 Արեգակն յԱռիւծն մտանէ ։
12 Յօրէս ՚ի վեր խաղողն սկսանի հա-
սուննալ ։
15 Ալեկոծութի երեւի եւ ծովք խառնակին ։
18 Աւելելի էջեալք պահոց ։ տամելէ ։
Սկիզբն յայժ ջերմութե շնիկ աստեղն ։
19 Անկայուն եղանակ, եւ քամիք ։
20 Յօրէս ՚ի վեր փայտակտրելոյ ժամանակ է ։
22 Այսօր տատաւոր աստղն սկսանի իշ-
խել, եւ լինի ալեկոծութի 3 օր ։
24 Ախորժ էջեալք պահոց ։ Սկիզբն շը-
նիկ աստեղն ։
25 Յօրէս ՚ի վեր զձմեռնայինն սերմանիս-
ցանելն լաւ է ։
26 Խառնակ հողմունք շնչեն ։
28 Ոմանք ասեն՝ թէ այսօր տատաւոր աստ-
ղըն ծնանի ։
29 Ալեկոծութի երեւի 3 օր ։

Յայսմիկ ամսեան՝ խիստ աւելի տաք հող_
մունք, և ուրեք ուրեք սաստկելիք հնչեն.
և մարդկային կազմուածքն յոյժ թուլա_
նան. և գրեթէ՝ յետ գիշեր հիւսիսային
քամիք փչեն. վ՛ոյ ոչ է ձանձ մերկ պառ_
կել, և զգեստս տանց չուլի թողուլ ՚ի
բացօթեայ տեղւոջ:

Կերակուրք՝ թթուաշ տպրներ. դդմ
ղալիսայք. ուլի միսք, և ձուկք. և հով_
բնութիւն ունող իրք, մրգունք, և ջրա_
ւէտ գինիք.

Հեռի կալ պիտոյ է ՚ի կաղամբոյ (լա_
հանայէ), ՚ի լուծողական դեղոց, ՚ի հանելոյ
զարիւն, ՚ի ծոմ կենալոյ, ՚ի տաք մերձե_
նալոյ, ՚ի շատ աշխատելոյ, ՚ի յըմպելոյ
զանձրուր գինի, և յուտելոյ չքամած մա_
ծուն, զի վնաս տարերէ.

1 Այսօր Նեղոս գետն սկսանի ջերմա_
նալ, և այլ ջուրք սկսանին ցրտանալ։
4 Ցօրէս ՚ի վեր հիւսիսային քամին ոչ_
շնչէ ։
6 Ծովք խառնակին, և լինի ալէկոծութիւն։
8 Այսօր գառումն գրոց եբրայեցւոց
եղև ( աւէն ) ։
10 Այսօր արագիլն ( լէյլէքն ) գնայ ՚ի
ձմերանոցն իւր ։
12 Արեգակն ՚ի Կոյսն մտանէ ։
13 Համաստեղութիւք նապաստակին, և դըլ_
փին ձկանն երևին։
14 Ծովք խառնակին ։
15 Այսօր երեւակ աստղն ծնանի ՚ի մաք_
րայն ՚ի հարաւ։
17 Սկզբնաւորի աշունն հեռաւորաց ։
19 Ցօրէս ՚ի վեր միստատակար տաքութիք լի_
նին, և յետոյ խաղաղին նոյն տաքութիքն։
23 Օձ աստղն ընդ շամփուրին երևի ։
25 Այսօր խաղողն կատարել հասունանայ։
27 Այսօր զխոյն ՚ի մաքեաց զատեն։
28 Ալէկոծութիւն երևի 3 օր ։
29 Տարերք խառնակին ՚ի մարդն, և յոր_
բուղխ ( ղէ-խէմ ) շատ լինի ։
31 Ցօրէս ՚ի վեր դեղորայս գործ ածելն
լաւ է ։

'Ի մէջ սոյն ամսոյ՝ ջերմութիւն բարեխառնի, և սնտայն ուժովանայ, և գոյն մարդոյ աւելի. 'ի տեղիս տեղիս հիւանդութիւնք լինին, և փայծաղնացաւութիւն երևի. Սաստի արիւն հանել, դեղ ըմպելոյ՝ թէ պիտոյ լիցի, և անուշեղէն ուտելիս, և քաղցրահամ հիւթոք օծանելին՝ օգուտ է (ասեն բժիշկք).

Կերակուրք ամսոյս՝ չիչեկի միս, և մնաց տապին ուտելիք՝ չափաւորապէս պահպանեցեալք. 'ի ջրեղէնս, և 'ի զրօսնատեղիս նստիլն օգուտ է.

Ոչ է պիտոյ ևս ձկանել 'ի միս այծեաց, նապաստակաց, և սագից, և ոչ ևս արագել 'ի բաղանիս. զի վնաս առբերէ. Եւ այս ամիս՝ համապատասխանէ մարտի ամսոյ.

1 Այսօր նահանջէ (ասեն աստեղա_
բաշխք). վնյ պատրաստ մնալ պիտոյ է.
3 Ներենիչ աստղն հարաւային երևի.
4 Որոտայ, և անձրևէ.
5 Յօրէս 'ի վեր ԺԵ հարկաւորութե արեան
առնուլն շահաւոր է.
7 Այծ կոչեցեալ աստղն երևի.
8 Ծովք խառնակին, և ալեկոծութի երևի,
Տերևք ծառոցն սկսանին թօթափիլ, զոր
այլազգիք Նոյեմբրոս աւուր իւրմէ կոչեն.
9 Ամպոտ և հողմային է եղանակն.
10 Նեղոս գետն ոչ ևս առատանայ. ալե_
կոծութի և վրդովումն ծովու.
11 Արեգակն 'ի Կշիռն մտանէ. Աշնանա
մուտ և հաւասարակած, և լինի տիւ և
գիշեր հաւասար. զոր այլազգիք Կիւղ
այլոր կոչեն, որ է աշնանային ամիսք.
14 Նռունք և ծառք դադարին յաճելոյ.
16 Ամպոտ և անձրևային երևի.
20 Ծառոց ջուրքն սկսանին նուազիլ.
22 Կռունկն 'ի ձմեռնոցն իւր գնայ.
24 Ալեկոծութի երևի 3 օր.
25 Ժամանակ է կթելոյ և քաղելոյ զմնա_
ցեալ ողկոյզս խաղողոյ այգեաց, զոր
այլազգիք Պաղպօղումն կոչեն.
27 Արևմտեն հողմն փչէ, և է նշան անձրևոյ.
30 Հողմակոծումն տեսանի, զի այծիկ
աստղն երևի.

Պարտիս գիտել, զի յայսմիկ ամսեան խառնիխուռն հողմունք շնչեն, և արեւելեան քամին զօրանայ, և անհաստատութիւնք խորոխտանան 'ի մարդկային մարմնի ։

Կերակուրք այս ամսոյ՝ պարտին լինել խորովածք հորթեմսից, և խաշմունք հաւեղինաց · թարեխաւն ընկուզեք, և ուտելիք · քաղցր և թթուաշ նուռք, և խնձորք ։ Մ․րիւն՝ և համամանաթ առնելն, և կակուղ դեղորայք 'ի կիր առնուլն լաւ է ։

Պատրաստել պարտ է 'ի մնալոյ անսաւաղ, յուտելոյ զխառնակ մրգս 'ի վերայ կերակրոյ, յերկար նստելոյ 'ի բաղանիսն, զի վնասակար է ։

1 Այսօր արեւելեան հողմն շնչէ.
2 Անձրեւային և ձիւնաբեր երեւի եղա-
նակն յաւուրս յայսոսիկ.
3 Սողունք ՚ի ներքոյ գետնոյ մտանեն.
5 Պակաս համաստեղութիւն երեւի.
7 Այծեան կոչեցեալ համաստեղութիւն
երեւի. և ծովք շարժին.
10 Ծովք ալեկոծին. և նաւահանջէ.
12 Արեգակն ՚ի Կարիճն մտանէ.
13 Պատրաստիլ պարտ է ՚ի ծովէ.
14 Այսուհետեւ եղանակն սկսանի ցրտանալ.
15 Այսօր կտրած փայտն՝ ուշ փտի.
17 Հողմային և անձրեւային եղանակ ե-
րեւի յաւուրս յայսոսիկ.
20 Խառնակ հողմունք շնչեն.
24 Ժամանակ է սերմանելոյ զսերմն.
26 Տաճկաց Խասըմ է այսօր. զխոյս ՚ի
մաքիս թողուն.
27 Այսօր ծիծռունքն ՚ի ձմերանոցն
իւրեանց գնան.
29 Ցրտային և անձրեւային երեւի եղանակն.
30 Այսուհետեւ ամ թռչունք ՚ի բոյն
սկսանին ձմեռել.

Ի մէջ այս ամսոյս սկսանի ցուրտն, և օր քան զօր առաւելու. և ցժն մարտ-ղութեան ատամնքսի յաւելանայ։

Կերակուրք այս ամսոյս՝ են պարարտ միսք, ձկունք ըստ ժամանակին, և հեղլեալք մրղաթորմք. և յառաւօտուց սակաւ մի տաք ջուր խմելն՝ օգուտ է առողջութեն. զի փարատանէ բաղում ցաւոց, և հի-ւանդութեանց։

Պատրաստ կենալ պիտոյ է յըմպելոյ ըղ-տաղ ջուր 'ի գիշերի, 'ի գնալոյ յանձրեւ 'ի բաղանիս, յըմպելոյ և յուտելոյ դեղ, 'ի հանելոյ զարիւն յերակաց. սակայն օգուտ և շահաւոր է 'ի կեր առնուլն զամսոյս մա-ձուն ըժշկական՝ իբր դեղ նախա-պահպանողական։

1 Ոմանք ասացեալ են փորձիւ՝ թէ նոյ_
եմբերի առաջին օրն որպէս լինի , նոյն_
պէս և ձմեռն լինի ։
2 Սկսանին հարաւային քամիք շնչել ։
3 Ծովք շարժին , և խառնակին ։
4 Այսու հետև սկսանի յաճախ անձրևել ։
5 Յորմէ 'ի վեր ծովու ճանապարհ ոչ լինի ։
7 Ալեկոծութիւն ծովու երևի ։
9 Անձրևք և ջուրք բազմանան ։
11 Արեգակն յԱղեղնաւորն մտանէ ։
13 Լուսներն խաղաղի ։
15 Ծովք վրդովին , և շարժին ։
19 Սարդք և ճանճք սկսանին ջարդիլ ։
22 Յորմէ 'ի վեր տաքն ջուր ըմպելն 'ի
գիշերի՝ վնաս տայ անձին ։
23 Պղտոր և փոփոխ աւուրք ։ Բ մեռանող ։
24 Ծառոց բոլոր տերևքն թօթափին ։
26 Հիւսիս հողմունք շնչեն ։
28 Ալեկոծութիւն , և անձրև յոյժ երևի ։
29 Ժամանակ է ձմերային սերմանիս
սերմանելոյ ։
30 Փոփոխական աւուրք , և պղտոր ։

՚Ի մէջ սոյն ամսոյս սկսանի ցրտութիւն սաստկանալ, և եռանդն արեան (հէրարէ-թըն) խաղաղի ՚ի յանձն մարդոյ. և խուխն (պալղամն) բազմանայ։ Իջուածք գլխոյ (նէզլէ), յարբուղխ (զըքքեամ), և այլ խուխային ցաւք յայտնին ՚ի մարդն անպակաս, և մանաւանդ հազն։

Կերակուրք ամսոյս այսոքիկ են՝ հերիսայք, փաչայք, խորովածք, և ղալեայք շողգամից, և քալամից. նաև հաւք, և խայլիկք, և գլուխք ոչխարաց։

Պատրաստ կենալ պիտոյ է յայնց կերակրոց, որք ունին զհովային բնութիւն. ՚Ի գնալոյ յաճախ ՚ի բաղանիս, ՚ի հանելոյ զարիւն յերակաց, յըմպելոյ և յուտելոյ ըղդեղ, ՚ի սառն ջրոյ, և ՚ի մրսելոյ։

1 Ամպային և պղտոր աւուրք երևին ։
2 Ցրտագին օդ , ապա անձրև ։
4 Ալեկոծութիւն մեծ երևի ։
6 Աղեղնաւորն խոնարհի , և կարծի կէսն
երևի ։
9 Արեգակն յԱյծեղջիւրն մտանէ , որ
10 է ձմեռնամուտ և արևադարձ այծեղ-
ջեր . զի ցերեկն սկսանի երկարել և գի-
շերն կարճանալ . զոր այսպէս՝ Օ՜ եղ-
հերիր կամ եղելելի արգասիքն և դալար-
դըշ կոչեն . ըստ՝ աւագին օր քաղաքանօք
եայ մասին ձմերան ։
11 Յորեա 'ի վեր տաքութիւնն 'ի ներքոյ
երկրի անցանէ ։
12 Փոփոխական աւուրք , անձրև և ձիւն ։
16 Ցրտային և հողմային եղանակ ։
19 Ալեկոծութիւն 5 օր հետևաբար ։
22 Սկիզբն եղեմնան , և սառոյց ։
24 Ցուրտն սկսանի օր քան զօր սաստկանալ ։
27 Խառնակ աւուրք և ձիւնաբեր , ապա
պարզ ։
30 Ծովք շարժին և խառնակին ։

---

Վերջապես՝ եթէ այսպիսի ներգործութիւք ոչ պա-
տահիցին 'ի յաւուրս իւնք , ոչ պարտիս քամհել . զի
կարէ պատահել յայլում , յորում ոչ զտանիս զա ։



Ահա

# Ընդհանուր գուշակութիւնք առ ՚ի գիտել բնութենաբար վիճակս Ձմերայ, Գարնայ, Ամառնեան, և Աշնանայնոյն.

—

Նշանք պարզ և լաւ եղանակի.

Առաւօտեան անձրևն՝ ջուրն՝ և ձիւնըն ՚ի ձմեռային ժամանակի, նշանակէ զճերմակութիւն գարնան և ամարան.

Ծիածանն՝ (որև կոչի երկնային աղեղն) մինչ յոյժ բարձրացեալ երևի յանձրևային եղանակի, գուշակէ զպարզ և զլաւ եղանակ. Ծիածանն՝ որ յերկնային երևի յարևելեան կողմն, սակաւ հողմով ցուցանէ զլաւ եղանակ.

Փայլակին յարևմուտ կոյս ՚ի յերկնային, նշանակէ զպարզ և զլաւ եղանակ.

Մաշկաթև թռչունքն՝ եթէ բազում թռչին և յանդորր ժամանակի թռչիցին յերկնային, ցուցանեն զհետևեալ օրն լինել պարզ և ջերմ.

Աստեղք եթէ ընկղմանիցին ՚ի վերայ ձախ կողման, նշանէ պարզութիւն եղանակին.

Ագռաւք եթէ կռնչիցեն յառաւօտուց, է նշանակ լաւ և պարզ եղանակի.

Ծովային կամ լճային ջուրն՝ մինչ անդորր քան զսովորն անշարժ կայ, նաև թարց արեգական ջերմութիւնն՝ նշանակեն զանձրև։ Ըստամաքար նաև նորապէս հոսեալ ջուրն՝ և անդր քան զչափն վերացեալն՝ նշանակէ զյորդ անձրև։ Սակաւ ջուր լինելն ՚ի մէջ մերձային եղանակին՝ ցուցանէ զպակասութիւն ջրանց լինել։

Եթէ ՚ի հիւսիսակողմն միայն փայլակեսցէ յերկնային, նշանակէ զառատանի անձրևն։

Յաճախ խայթող ջերմունքն ՚ի յամառան՝ ցուցանէ յառատանւոյ անձրև լինել։

Լուսինն եթէ ունիցի զսեաւ եզերս, ցուցակութիւն է անձրևային եղանակի։

Սպիտակ և թանձր ամպն կուտակեցեալ՝ ցուցանէ զանձրև որոտմամբ։

—

Նշանք հողմոյ։

Բադն և կամ անգղք կոչեցեալ երկակենցաղ թռչունքն՝ եթէ բազմիցս թաղեսցէ ՚ի ջուր, և թափթափեսցէ զթևս, է նշան հողմոյ։

Կարմրագոյն ծիածանն՝ զհողմն ցուցանէ։

Երեկային փայլակելն ՚ի հիւսիսակողմն միայն՝ նշանակէ հողմ, և ցուրտ լինել։

Փայլակելն ՚ի կէս աւուր՝ ցուցանէ հարա_ ւային հողմն ։ ՚Ի պարզ գիշերի՝ նշանակէ յայնմ կողմանէ գալ հողմն, ուր փայլակի ։

Ծուխն մինչ դառնայ և պտտի դէպ յերկիր, նշանակէ հողմ ։

՚Ի յերան պարզ երկնից մինչ փոքրիկ ամպք տարածեալք լինին, նշանակէ մեծ հողմ լինել ։

Դելփին ձկունքն, որ՝ եռանան պղլիւին՝ մինչ խաղալով շրջին ՚ի խաղաղ ծովու, ցուցանեն հողմ գալ յայնմ կողմանէ՝ ուստի գան նոքա ։

Լուսինն մինչ երևի սպիտակ՝ և կարմիր շրջանակաւ, նշանակէ հողմ ։

—

Նշանք ջերմութեան ։

Փայլակելն ՚ի պարզ ժամանակի մինչ օդն է ջինջ, նշանակէ զջերմութիւն ։

՚Ի գարնան և ՚ի յաշնան ժամանակի եղ_ եամ անկանելն՝ նշանակէ լինել լաւ և ջերմ եղանակ և օր ։

Ագռաւք մինչ կան ընդդէմ արեգա_ կան և կտուցօք քորեն զփետրեանս, ցուցա_ նէ լինել եղանակն ջերմային ։

Բառաղոն Թռչունքն մինչ թռչին յերե կոյին ժամու, ցուցանէ լինել ջերմ եղանակ ։

 Նշանք

Մ՚ինչ աստուոր աստղ երևի, նշանակէ զալէկոծութիւն և զմրրիկ ։

Մ՚ինչ շուրջ զլուսնիւ երևին կանաչ շրջանակք և պղտորութիւնք, նշանակէ ալէ֊կոծութիւն ։ Մ՚ինչ նոյն շրջանակք լինին ձարպաղք` և կանաչ` կամ սևաւ գունով, նշանակէ լինել մրրիկ մեծ ։

Սպիտակ և թանձր ամպն երևեալ յա֊մառայնի` գուշակէ զալէկոծութիւն և զմրր֊կութիւն եղանակին որոտմամբ հանդերձ ։

Աչխարք և եղինք մինչ քորեն տաիւք խուրեանց զերկիր ՚ի յաշխան, և մերձ երե֊կոյց ընկղմանին, նշանակէ մրրկային լի֊նել ձմեռան ։

Ցերեկային որոտումն` նշանակէ զխառ֊նակութիւն եղանակին, և՚ի սուղ ժամանակի լինել ալէկոծութիւն և մրրիկ ։

Նշանք լուսնի, որովք կարէ ճանաչել պարզ և խառնակ եղանակն ։

Նոր լուսինն` եթէ տեսանիցի նուրբ` պարզ` և ջինջ` ՚ի յերրորդ կամ ՚ի չորրորդ աւուր, նշանակէ զպարզութիւն եղանակին ։

Կիսաբոլոր լուսինն` եթէ երևիցի յայն կարմիր, նշանակէ զհողմ ։ Եթէ երևիցի



նսեմ

Նսեմ և սեաւ ՚ի յոմանս մասունս իւր , ցուցանէ զանձրև ։ Եթէ երևիցի սեաւ և բթացեալ եղջերօք , նշանակէ զանձրև և զջուր ։ Եթէ երևիցի կարմիր՝ և միգա_ պատ շրջանակաւ և բակիւ , ցուցանէ զալե կոծութիւն և զկարկուտ ։

Լրացեալ լուսինն՝ եթէ ունիցի ՚ի շըր ջապատն իւր զսեաւ բիծ ինչ , նշանակէ զամպ և զանձրև ։ Եթէ լիցին շուրջ ըզ լուսնիւ երկու կամ երեք շառաւիղք սեաւ ամպով , ցուցանէ ալեկոծումն ։

—

Այս ծանի՛ր տարանոց , զի լուսինն ունի չորս ժամանակս և չորս մասունս ։

Առաջին մասն և ժամանակն՝ որ պա_ րունակէ զեօթն օր , նման է ջերմ և խո_ նաւ , նմանի գարնան եղանակի ։

Երկրորդ մասն և ժամանակն՝ նմանա_ պէս պարունակելով զեօթն օր՝ գոլով ջերմ և չոր , նմանի ամարան եղանակի ։

Երրորդ մասն ևս ունելով զեօթն օր՝ նման զցրտութիւն և զչորութի , նմանի գարնան եղանակի ։

Չորրորդ մասն նմանապէս պարունակե լով զայնքան աւուրս՝ և գոլով ցուրտ և խոնաւ , նմանի ձմեռային ժամանակի ։



Աշունք

Նշանք արեգական, ՚ի ձեռն որոյ ճանաչել կարէ երազանացն։

Արեգակն մինչ երևի պարզ՝ ջինջ՝ և լոյծ պայծառութեամբ, գուշակէ զլաւ երազանն՝ ոչ ունելով զոնեայ զփոքր ինչ ամպ։

Արեգակն մինչ հակի առ մուտն, պարզ՝ լուսաւոր՝ և թարց ամպոյ, նշանակէ պարզ լինել հետևեալ օրն։ Եթէ հակիցի ՚ի մուտն՝ պարզ և առանց ամպոյ, բայց մերձ ինքեան ունիցի զճաճանչաւոր և զհրափայլ ամպս, է նշան՝ թէ ոչ անձրևէ յայնմիկ գիշերի, և ոչ ևս ՚ի հետևեալ աւուրն։

Արեգակն մինչ հակի ՚ի մուտն՝ ունելով մերձ ինքեան ըստ նկատման մեր՝ կարմրագոյն, ճաճանչաւոր, և ճապաղ ամպս, հաւաստի նշան է՝ թէ ոչ անձրևէ։

Արեգակն մինչ կարմիր և նսեմաշորթ երևի, նշանակէ զանձրև։

Արեգակն մինչ բարձրանայ ՚ի կորնթարդն երկնից՝ եթէ տեսանիցի ՚ի ճառագայթի իւրում ամպ ինչ մթին և սև, նշանակէ զանձրև։

Արեգակն ՚ի հակիլ իւրում ՚ի մուտն՝ եթէ ունիցի ՚ի ձախ կոյս իւր զսեաւ ամպ ինչ, նշանակէ զարագումն անձրևոյ։

Նշանք ծխածանի, որովք գուշակի եղանակն։

Ծխածանն եթէ յամպային և յանձրևային ժամանակի երևի, նշանակէ զպարզութիւն։

Ծխածանն եթէ տարածեալ տեսանի արեգական՝ յելանելն կամ ՚ի մտանելն, նշանակէ զպարզութիւն եղանակին համդերձ հողմով։

Մինչ երկու ծխածանք երևին ՚ի միասին, նշանակի անձրև։

Ծխածանն եթէ երևի ՚ի պարզ ժամանակի, ցուցանէ զհողմ։

Ծխածանն եթէ յոյժ կարմիր և գեղին երևիցի, նշանակէ զհողմ։

Ծխածանն եթէ երևի ՚ի յառաւօտեան ժամու, գուշակէ զհողմ դէպ ՚ի յերեկոյին ժամու։

Ծխածանն եթէ երևի յառաջ քան զկէս օրն, նշանակէ զանձրև և զհողմ։

Ծխածանն եթէ երևի շուրջ զկէս աւուրն, ցուցանէ զջուր։

Ծխածանն եթէ երևի զկնի կէս աւուր, նշանակէ զսակաւ անձրև և զլաւութ̃ի եղանակին։

Ծխածանն եթէ երևիցի արտաքոյ քան զսովորական եղանակն և ժամանակն տարւոյն, գուշակէ զպարզութ̃ի և զչորութ̃ի։

 Սասի

Ուսանի գիտել պարտիս յայսմիկ տեղ-ւոջ․ զի բազում հեղինակք հաստատեն, թէ յառաջ քան զգալուստն Քն ՚ի դա-տաստանն՝ զքառասուն ամ ոչ երևելոց է ընաւ ծիածանն՝ ՚ի նշան զարհուրելի վե-րէժխնդրութե ածայնոյ, որ սպառնացեալ լինի գալ առ դատապարտելի մեղաւորս:

Այլ և ասեն նոյն հեղինակք, թէ նաև յառաջ քան զՋրհեղեղն՝ ոչ տեղացեալ իցէ երբէք անձրև ՚ի վր երկրի․ այլ ամ երկիր ոռոգանեցեալ է ՚ի յառատութենէ ջուրց աղբերաց և գետոց: Եւ վասն այսո-րիկ պտուղքն՝ որք էին անդր քան զՋրհե-ղեղն, յոյժ քաղցրագոյնք էին քան ըզ-պտուղս այժմուս․ և խոտեղէնքն ևս ունէին զաւել ներգործութիւն և զօրութիւն:

Պտղաբերութեն զոր ՚ի հողոյ՝ անիծելոյ՝ և այլ [illegible]:

Իմաստասիրաց առած է․ * Ոչ գոյ ձմեռն առանց հողմոց․ ոչ ամառն ա-ռանց կանանց||:

Պատգամ ածայինէ․ * Հողմ՝ ուր կա-մի շնչէ՝․ և զձայն նր լսես․ այլ ոչ գիտես ուստի գայ՝ կամ յո երթայ: Յոհան․ 3․ 8||:



Ոայց

Բայց ըստ 'ի վերուստ առ 'ի հօրէն լուսոյ իջեալ պարգեւացն՝ դոյն ինչ գիտութի եղական գոյից ունիլ բաւականանամք։

Գիտելի սորունէ ։

Հիւսիսային հողմն է ցուրտ եւ չոր, պարզիչ՝ առողջարար՝ եղծանելեաց պահապան։ Բայց վնասակար ծաղկանց՝ նորատունկ որթոց՝ եւ մատաղ տնկոց՝ 'ի պատճառս սաստիկ ցրտութեն։

Հարաւայինն՝ ջերմ եւ խոնաւ, ամպահար՝ ժանտաբեր՝ լուսաղօտ՝ գլխամլիչ՝ վեհերոտ՝ կամ դանդաղկոտ, պատճառ փտուն տենդի, կշտացութեան եւ թոքի ուռուցման։

Արեւմտեանն՝ տամուկ եւ բարեխառնորէն ջրային, անձրեւածին եւ որոտաբեր. ուրեք ուրեք յամառն զօդն պարզէ. 'ի գարնան եւ 'ի ձմեռան եղանակին՝ զանձրեւ կամ զձիւն բերէ։

Արեւելեանն է բարեխառնօրէն ջերմ եւ չոր, առողջ՝ թշնամի փտուն ժանդի՝ մարմնապաշտպան. ձմեռնայինն ցրտագոյն եւ սառնածին լինի. փչէ յարեւագալին, եւ գիշերոյն յաւէտ դադարի։

Հողմն տարեկան՝ կամ յարամեայ (որ յայամ եւ յայնմ ժամու տարւոյն հաւա-



ատեա

տեւա մէջ ,) երկդիմի է · ամառնային , և ձմեռնային ։

Ամառնային տարեկան հողմն սկսանի մէջէն՝ ութօրեայ յառաջ քան զերն Յունիս ամսեղն . և մնայ 40 օր , բայց գիշերայն լռէ ։

Իսկ ձմեռնայինն՝ հակառակ ամառնայ֊նոյն՝ հակակայ ժամանակի շնչէ ։

Երևակն շարժէ զարևելեան հողմն ։ Լուսնթագն՝ զհիւսիսայինն ։ Հրատն՝ զա֊րևմտեանն , և զհարաւայինն ։ Լուսաբերն՝ զմիջօրեայն ։ Փայլածուն՝ ըստ որում ընդ ումեք ընկերանայ ։ Արեգակն և Լուսի֊նըն՝ շարժեն զարևմտեան հողմն ։

Յորժամ լուսինն է 'ի մէջ խոյին՝ առի֊ւծոյն՝ և աղեղնաւորին , մէջ 'ի միջոյ արևմ֊տից և հիւսիսոյ ։ Իսկ 'ի մէջ ցլոյն՝ կուսին և այծեղջեր , յարևելից և 'ի հարաւոյ միջո֊հոսէ ։ Յերկաւորի՝ կշռոյ և 'ի ջրհոսի մէ֊ջըն՝ յարևելից և 'ի հիւսիսոյ միջոյ հնչէ 'Ի խեցգետնի՝ կարճի՝ և 'ի ձկան մէջն , մէջ 'ի հարաւոյ և յարևմտից միջոյ ։

—

Նշանք հողմոց՝ յերկնից ։

Ամպ շառագունեալ 'ի հիւսիսոյ կամ 'ի հարաւոյ յարևագալի ժամուն , է նշան հողմահոսութեան ։



Ս՝ուտ

Մ՛ուտ արեգական շառագունեալ կամ՝ կարմրագոյն ամպ յետ արեւմտին՝ եւս զնի յորդ անձրեւաց, հողմն հոսէ։

Լուսինն կարմրացեալ կամ՝ սաւուերաւ-ըծաւորեալ, հողմ՝ եւ անձրեւ երեւի։

Եւ ՚ի ջինջ արեւագալն ամպ երեւի՝ կամ՝ յառաւօտուն որոտայ, հողմն հոսէ։

Եւ հարաւային ծայր կամ՝ եղջիւր լուսնոյն իցէ սուր, հարաւ հոսէ. եթէ հիւսիսայինն՝ հիւսիս փչէ. իսկ թէ երկուքանչիւր լուսնոյ ծայրն իցէ սուր, հողմակոծ գիշեր հնչեսցի։ Յոր կոյս ՚ի գիշերի աստղ ինչ ցոլանայ, անտի փչէ։

՚Ի ծննդեան լուսնոյն՝ եթէ հոսիցէ մինչեւ յերրորդ օրն, հոսեսցէ գրեթէ մինչեւ ՚ի լրումն։

՚Ի մտանել արեգական ՚ի ձմեռնային կենդանակերպն՝ եթէ երկինքն որոտան, տարին լինի հողմակոծ։

Մ՛նաւան յաճախ որոտն քան զփայլատակն՝ զհողմն գուշակէ։

Յորժամ՝ հարաւ փչէ, ոչ է պարտ սեր-մանել եւ ոչ հերկել։

Նշանք հողմոց՝ ՚ի կենդանեաց։

Եւ բադք յաճախ ՚ի ջուրս ղողին, հոսեսցէ։ Սագք եթէ ՚ի հիւսիս թռչին, փչէ



հարաւ

հարաւ․խոյ եթէ ՚ի հարաւ՝ հոսէ հիւսիս։

Մ՚րջիւնք երբ ոչ աշխատին՝ այլ զօղին ՚ի բունս, և՝ հաւք ընտանիք եթէ մերձ ջրոյ թռչոտին կամ սաւառնին, նշան է հողմոյ։

—

Նշանք անձրևաց՝ ՚ի լուսաճեմ արեգէն։

Ցերեկոյ անձրևքն յարևագալէն՝ և ցայգեայն յարևմտէն՝ գուշակին։

Արեգակն երկաթագոյն ամպով ելեալ՝ եթէ զշառաւիղս իւր ձգէ ՚ի հարաւ և ՚ի հիւսիս, հոսէ և անձրևէ։

Ամպ կապտագոյն՝ խառնեալ և մթնաշորթ յարևելս կամ յարևմուտս, պայծառատեսիլ արեգակն յարևելս կամ ՚ի մուտս, շառաւիղք արեգականն յելն կամ ՚ի մուտն ծածկեցեալք յամպոց, եթէ իւր հրացեալ գունտ երևի արեգակն, եթէ իւր ընդ վանդակապատս ցրուէ արեգակն զիւր շառաւիղն, գուշակին անձրևք։

Նշանք անձրևաց՝ ՚ի յարափոփոխ լուսնոյն։

Եղջիւր լուսնոյն բծաւոր յառաջ քան զլրումն լինի, անձրևէ։ Լրացեալ լուսնոյ մէջն բծաւոր, պարզ օդ։

Իսկ նոր լուսինն ունիցի զծայրն վերին հողմն մութն յետ լրմանն, թէ զներքին հողմն յառաջ քան զլրումն, և երբ ՚ի մէջ լուսնոյն երևի մութն մերձ լրմանն, հետևի անձրև.

Յետ երից աւուրց եթէ նոր լուսինն ոչ երևի՝ և շնչիցէ հարաւ, բոլոր լուսինն լինի ձմեռնային.

Նոր լուսինն յամենուստեքէ սևացեալ՝ սաստիկ ալէկոծութիւն լինի.

Եթէ յերրորդ աւուր լուսնոյն ծայր եղջերին իցէ շլագոյն՝ որ է արճճագոյն և մոխրագոյն, երկար անձրև լինի.

Երկիրն վաղորդեայն շառագունեալ՝ մրրկի. յերեկոյի կարմրացեալն՝ պարզի.

Լուսինն մոխրագոյն՝ կամ շլագոյն, զանձրև. շառագոյն՝ զհողմ. սպիտակագոյնն՝ զպարզութիւն գուշակէ.

Աստուստ յաստեղաբանից ասի՝ շլագոյն լուսինն անձրևէ. կարմրացեալն՝ փչէ. սպիտակն՝ պարզէ.

Այլ նշանք անձրևաց.

Ամպն եթէ ՚ի հարաւոյ ՚ի հիւսիս շուէ, և թէ ՚ի վեր ելանէ, անձրևէ. իսկ թէ ՚ի վայր իջանէ կամ սփռի, և ցրի, օդն պարզի.

 Ձմ

Ձմեռան որոտն՝ և ամառան փոթոր-
կեալն կամ երեկոյեան որոտայն՝ զանձ-
րև բերէ։

Ուշեան յաճախ փայլատակելն ՚ի հիւսի-
սոյ, զանձրև բերէ։

Եթէ ՚ի ջինջ հարաւոյ սաեզ սաեզ փայ-
լատակէ, ՚ի հետևեալ օրն անձրևեսցէ։

Փայլատակելն առանց որոտման՝ երբ
օդն է պղտորուն, անձրևէ։

Ծիածանն՝ կամ աղեղն օդոյն դէպ ՚ի
հարաւ ձգեալ, և թէ յարևմուտս աղեղն
յարևելս երևի, նշան է անձրևի։

Նշանք անձրևաց՝ ՚ի կենդանեաց։

Կարապունքն եթէ փայթ ՚ի փայթ բըղ-
կըրդկան։ Ագռաւքն զինի արևմտին խօսին
ձայնք յաճախ թաւալին՝ և զինքեանս քըթ-
ուեն. եւ կանուխ ՚ի բոյնս երթան, և անդ
գան յարօտ եղանեն յառաւօտն։ Ծիծ-
ռունքն սաւառնեալ մերձ ջրոց, կամ հաւոյ
ընդ հաւոյ որմոց և գետնոյն թռչտին։
Ճնճղուկք փողքով ձնձնկան։ Ճանճք
և լուք խիստ քան զսովորն բարս խայթեն
խայթեն։ Մեղուք ՚ի մեղուանոցէն ոչ
հեռանան։ Եղինք՝ բարձրացուցեալ գըլ-
խով հոտոտեն զօդն։ Կայլք ուրոյն ուրոյն
մըր

մերձենալով ՚ի շինութիւնս՝ վայելէ ։ Նո-
այլ բաղում սովորաբար՝ են նշանք
անձրևաց ։

—

Նշանք որոտմանց ։

Արեգակն եթէ վաղորդեայն՝ և յերե-
կոյն ամպամած հանդերձ տապախառն տօ-
թով երևի, և այս ՚ի գարնան և յաշնան
եղանակին՝ կամ ՚ի սկզբանն ամառանւոյ, որոտ
և զփայլատակ բերէ ։ Նոյնպէս յորդ ընդ-
ունայց հողմակոծեալ ։

Սեաւ ամպն տուեալ որոտոյ ։ տուե-
լոցն՝ եթէ ՚ի սեայն շառագունի ։ Եւ
տուեալ սաստիկ, երբ ամպն շառագունի
կանաչութեամբ հանդերձ ։ Սպիտակագոյն
ամպն է անվտանգ ։

—

Անջրութիւն ։

Ամենայն այգիսի և այլոց նման գու-
շակելեաց պատահմանն յառաջեալ՝ յորժամ վայ-
րի և անդրուոջ միայն, ուր աստեղքն ծա-
գին կամ խոնարհին ՚ի մի և ՚ի նոյն անձա-
հայեաց շրջանակի, որ ձկունք քառակուսա-
րեն ՚ի ծայրածաւալ գաշտի՝ ցայն վայր,
յո՞ անսուեթիւն աչաց հողիս հասանի ։

## Լոքէն.

Օդոյ խառնուածն կարող է երբեմն զգուշակելին յեղաշրջել և փոփոխել. Քանզի թէ գուշակիցի անձրև , և օդն իցէ բարեխառն , անձրևէ . եթէ ցուրտ՝ ձիւնէ , կամ կարկտէ . իսկ եթէ գաղջ՝ ցօղէ , կամ մառախլապատի ։

—

## Օգուտութիւն.

Մ՚ի ոք աստանօր անհրահանգ և ան-կիրթ զայսպիսի գուշակելիքս դժուարա-հաս խորհրդութիւնս համարելով յուսահատ-եալ նախատեսցէ զմեզ. Քանզի որք միանգամ (ըստ ուրում քաջ և անյաղթ փիլիսոփայն Պուտիթ արձանագրէ.) Իմաստասիրութե̃ տենչան բանից , և առ՚ի նմանէ հեշտութե̃ ծայրիւ միայն մատին հանգիլդին ճաշա-կեալք , ամ՛ կենդանական հոգւոց բարեա-մնալ ասացեալք , իմաստուն տենչմամբ , բա-ղում յօժարութ̃ , և ոգջախոհ իմն մոլութ̃ ա-ռ յայսպիսի հանգէս վարեալք երթին ։

Այսպիսի հարցաւորք՝ և զատակք բը-նութեան գերազանցագոյնս են (անեղի-բայաբար ասեմ.) կարեն իմանալ՝ քան զոր գրեմ ։

## Խաւարման աստեղաց գուշակումն ըստ տեղաւորանցն։

—

Արեգական խաւարումն պատճառէ ծանր ցրտութիւն, և լուսնոյն՝ չորրութիւն։ ՚Ի յաճախել խաւարմանցն՝ հարկիւ հետևի աներջութիւն յապագայ ամին։

Իսկ խաւարման իշխող աստղն լինէ երեւելն, հետևին երկար տկարութիւնք՝ տարրանք՝ պակասութի կենդանեաց՝ չորեքոտեաց անձրևք՝ մահ ձկանց՝ հեղեղ գետորեից՝ ապականութիւն պտղոց՝ ժանտահոտութիւն՝ և աղքատաստորաս մտաց։

Ըստ այսմ և զայլ իշխող աստեղացն գուշակեա։

Սև և կապտաշող գոյն խաւարեցելոյն՝ զօրս երևակին ունի · սպիտակագոյնն՝ լուսնթագին · և կարմրաշայտն՝ հրատին · դեղնագոյնն՝ լուսաբերին · գոյնզգոյնն՝ զօրս փայլածուին ունի։

Խաւարումն աստեղաց ՚ի հողային կենդանակերպսն՝ զաներջութիւն բերէ և ցամաքութիւն · ՚ի ջրայինս, խոնաւութիւն և զմահ · յօդայինս՝ զհողմն՝ փոփոխումն և ըղձանս · ՚ի հրայինս, հրդեհումն՝ տապ՝ մահ՝ և պատերազմ։

## Պատշաճական գիսաւոր աստեղացն ։

Գիսաւոր աստեղաձեւքն և ասմանաւորքն նախ՝ պատճառեն զժանտամահս , զի տարա_կանեն զեկ և զբեր հողոյն · ուստի սով՝ հետեւայես ժանտ մահու ։

Պատճառեն և զողմուկ՝ զապստամ_բութիւն և կռիւ · քանզի ունին զաւրաւս ապականել հրատին , երկարգեմ՝ փայլա_ծուքն , և մարդասպանաց երեւակին ։

Պատճառեն և զիշխանաց և մեծամե_ծաց մահս · քանզի դիւրամարմինքն՝ և փափկա_բունքն յապականել օդոյն՝ դիւրաւ առնին ։

Պատճառեն և յեղափոխումն օրինաց՝ կարգաց՝ և իշխանութեանց · զի յետ աւագմա_հարութեան՝ փոփոխին իշխանք և թագա_ւորք , զորոց տեղիս կալնուն յաղթողքն , և փոփոխեն զօրէնս և զիրաւունս , երբեմն և զկրօնս ։

## Պատշաճութիւն յարմարութիւն աւուրց լուսնոյն , յորում ծնեալն որդին էջէ ։

Ումանց յառաջին աւուր ծնելոյն Թլինի կարձակաց · հիւանդացելոյն երկրայի յաւուրս 14, 21 և 28, յետոյ առող_

ջանայ։ Զերակ թողուլն գեղձաճարէ։
2 · Աւուր ծնեալն լինի երկայնակեաց ·
հիւանդացեալն՝ մինչև 12 օրն երկմտի,
յետոյ լաւանայ · զարիւն առնուլն բերէ
և պատճառէ զանենգ ·
3 · Աւուր ծնեալն լինի կարճակեաց · հիւ_
անդացեալն տագնապի, իսկ յետոյ առող_
ջանայ · զարիւն առնուլն ճշտ է ·
4 · Ծնեալն լինի թոյլ · հիւանդացեալն՝
մինչև ՚ի 21 օր տագնապի, ապա լաւա_
նայ · զերակ թողուլն՝ միջակ է ·
5 · Ծնեալն՝ աղոյ մեռանի · և հիւանդա_
ցեալն երկարանայ, ապա լաւանայ ·
զերակ թողուլն՝ քսաստ առնէ ·
6 · Ծնեալն լինի չաւագար · հիւանդա_
ցեալն՝ մերձ հեռաւեալ ամսոյն 5 աւուրն
պարզէ · զերակ թողուլն՝ շահաւէտ է ·
7 · Ծնեալն լինի երկայնակեաց · հիւանդա
ցեալն երկմտի · արիւնն ճշտ է ·
8 · Ծնեալն՝ յերիտասարդութեան մեռանի ·
հաւանդացեալն զինի 14 աւուր մահա_
ութ · արիւնն ճշտ է ·
9 · Ծնեալն լինի թուլամարմին · հիւան_
դացեալն տագնապի, և լաւանայ · ար_
իւնն քսատէ զմարմինն ·
10 · Ծնեալն լինի երկայնակեաց · հիւան_
դացեալն մահահաւիթ · արիւնն զեղձա_
ցաւութիւն բերէ ·

11 · Ծնեալն լինի վտանգահոծ · հիւան_
դացեալն՝ յերիս աւուրս պարզի · ա_
րիւնն վնաս է ·
12 · Ծնեալն լինի միջակակեաց · հիւան_
դացեալն՝ զինի 15 աւուր մահառիթ ·
արիւնն՝ կարի շահաւէտ է ·
13 · Ծնեալն կեցցէ · հիւանդացեալն՝
զինի 18 աւուր վտանգի · արիւնն
վնաս է ·
14 · Ծնեալն լինի ակար · հիւանդացեալն՝
զինի 15 աւուր վտանգի, յետոյ պար_
զի · արիւնն՝ հիւանդութիւն բերէ ·
15 · Ծնեալն լինի երկայնակեաց · հիւան_
դացեալն՝ զինի 14 աւուր մահու վը_
տանգի · արիւնն շահաւէտ է ·
16 · Ծնեալն լինի առոյգ · հիւանդա_
ցեալն՝ յետ 28 աւուր առողջանայ ·
արիւնն վնասակար է ·
17 · Ծնեալն լինի առոյգ · հիւանդա_
ցեալն՝ յետ 18 աւուր լաւանայ ·
արիւնն վնաս բերէ ·
18 · Ծնեալն լինի երկբայ · հիւանդա_
ցեալն՝ զինի 3 աւուր լաւանայ · արիւն
առնուլն շահաբեր է ·
19 · Ծնեալն լինի անոյժ · հիւանդացեալն՝
զինի 3 աւուր լաւանայ · արիւնն հի_
ւանդութիւն բերէ ·

 Ծնեա

20 · Ծնեալն լինի յաղթանդամ · հիւան-
դացեալն՝ ելնի 7 աւուր վտանգի մա-
հու · արիւնն վնաս է ·
21 · Ծնեալն լինի երկայնակեաց · հիւան-
դացեալն՝ ի 13 աւուր հեռանալ ամ-
սոյն առողջանայ · արիւնն շահաւոր է ·
22 · Ծնեալն լինի միջակակեաց · հիւան-
դացեալն՝ յառաջնում աւուր հեռա-
նալ ամսոյն լաւանայ · արիւն առնուլն՝
շահաւոր է ·
23 · Ծնեալն լինի ախտոր · հաւանդացեալն՝
ելնի 12 աւուր է ախտ մահու · ար-
իւնն շահ է ·
24 · Ծնեալն լինի երկայնակեաց · հիւան-
դացեալն առողջանայ · արիւն առնու-
լըն է շահ ·
25 · Ծնեալն լինի թուլամորթն · հիւան-
դացեալն՝ յետ ութ աւուր հեռանալ
ամսոյն պարզի · արիւնն շահ է ·
26 · Ծնեալն և հիւանդացեալն վտանգա-
հատ · արիւնն շահ է ·
27 · Ծնեալն լինի միջակակեաց · հիւան-
դացեալն՝ ելնի 10 աւուր վտանգի
մահու · արիւնն վնաս է ·
28 · Ծնեալն լինի միջակակեաց · հիւան-
դացեալն՝ յառաջնում աւուր հեռա-
նալ ամսոյն պարզի · չարիւն առնուլն

կամ զերակ թողուլն վնասակար է:
29. Ծնեալն լինի վատոյժ. հիւանդա-
30. ցեալն՝ վտանգաւոր. երակն առնուլն
վնաս է:

## Խրատ վն գործածութեան մշտնջենաւոր աղիւ-սակաց ծննդեան և լրման ամսոց լուսնի:

—

Աղիւսակաձև մշտնջենաւոր շրջանագ-րոյ ՚ի տասն և ինն երեսս թղթոյ ԺԹ կարգի հաշուի տասն և ինն վերադրաց հռովմայեցւոց եդեալ է, ցուցանէ զա-ւուրս ամսոց ծննդեան և լրման լուսնի հանդերձ ժամօքն: Ուր ՚ի լրման տասն և ինն աղիւսակացն՝ գործածել սկսանի ըստ կարգի վերադրացն, որք ՚ի գլուխս իւրա-քանչիւր աղիւսակացն եդեալ են. և ՚ի ըն-կլման առաջին կարգին եդեալ են երկո-տասան ամիսք հռովմայեցւոց, և յերկ-րորդի կարգին՝ աւուրք ամսոցն ծննդեան և լրման, նոյնպէս և յերրորդի կարգին՝ ժամք նոցա:

Արդ՝ մինչ կամիցիս իմանալ զինչ և իցէ ամիս տարւոյն՝ թէ յորում աւուր



լինի

լինի ծնունդ և լրումն լուսնի , կալեալ զամն տեառն և կամ զԹուականն հայոց՝ գիտ զվերադիր տարւոյն . և ապա եկեալ ՚ի սոյն աղիւսակ գիտ զնոյն վերադիրն , որ ըստ կարգի ամսոյն ցուցանէ քեզ միայն ՚ի նոյն ամի՝ զաւուրս ամսոյ ծննդեան և լրման հանդերձ ժամօքն իւրեանց։

Որ օրինակ ՚ի Թուին հայոց 1280 . վերադիրն է ԻԷ , զոր գտեալ ՚ի գլուխս աղիւսակին՝ իմացաք Թէ ՚ի 2 յունուարի ամսոյն ՚ի 10 ժամու է ծնունդ լուսնի . նմանապէս ՚ի 16 սոյն ամսոյն և ՚ի 14 ժամու է լրումն լուսնի . և այլն ըստ կարգի ամսոյն մինչև ՚ի լրումն տարւոյն։

Արդ իմա՛ և զայս , զի բաղդեցս ըստ չափու միոյ աւուր և կամ քանի ինչ ժամու աւելի և կամ պակաս գտանիցին աւուրք ծննդեան և լրման՝ քան զեդեալսն ՚ի յօրացուցի , և ոչ յարմարին նոցա . զի նոքա շինեալ են նուրբ և մանրամասն հաշուօք հանդերձ ոչ միայն ժամօքն՝ այլև րոպէիւք։

## Սեղանիկ ԺԲ.

| Նորանալոյ լուսնի. | | | Լրման լուսնի. | | |
|---|---|---|---|---|---|
| Ամիսք | Նոյն ամսոյ օրն | Ժամք ցերեկի | Ամիսք | Նոյն ամսոյ օրն | Ժամք լուսոյն |
| Յունուար | 17 | 18 | Փետրուար | 2 | 0 |
| Փետրուար | 16 | 10 | Մարտ | 2 | 4 |
| Մարտ | 17 | 19 | Մարտ | 31 | 10 |
| Ապրիլ | 16 | 0 | Ապրիլ | 30 | 0 |
| Մայիս | 15 | 8 | Մայիս | 29 | 6 |
| Յունիս | 13 | 19 | Յունիս | 27 | 13 |
| Յուլիս | 13 | 8 | Յուլիս | 27 | 2 |
| Օգոստոս | 11 | 18 | Օգոստոս | 25 | 22 |
| Սեպտեմ | 11 | 14 | Սեպտեմ | 24 | 16 |
| Հոկտեմ | 9 | 8 | Հոկտեմ | 25 | 0 |
| Նոյեմբեր | 7 | 18 | Նոյեմբեր | 23 | 6 |
| Դեկտեմ | 7 | 8 | Դեկտեմ | 23 | 0 |

| Մեհուզեր ԽԲ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Նուազող լուսնի | | | Լրումն լուսնի | | |
| Ամիսք | Աւուր ամսոյ | Ժամք | Ամիսք | Աւուր ամսոյ | Ժամք |
| Յունվար | 6 | 0 | Յունվար | 21 | 11 |
| Փետրվար | 4 | 13 | Փետրվար | 20 | 0 |
| Մարտ | 6 | 5 | Մարտ | 20 | 6 |
| Ապրիլ | 2 | 7 | Ապրիլ | 19 | 16 |
| Մայիս | 4 | 12 | Մայիս | 18 | 20 |
| Յունիս | 4 | 6 | Յունիս | 17 | 0 |
| Յուլիս | 3 | 0 | Յուլիս | 16 | 12 |
| Օգոստոս | 1 | 6 | Օգոստոս | 15 | 0 |
| Օգոստոս | 31 | 0 | Սեպտեմ | 13 | 16 |
| Սեպտեմ | 29 | 0 | Հոկտեմ | 13 | 11 |
| Հոկտեմ | 28 | 0 | Նոյեմբեր | 12 | 5 |
| Նոյեմբեր | 27 | 0 | Դեկտեմ | 11 | 0 |
| Դեկտեմ | 26 | 6 | Յունվար | 11 | 0 |

## Մ. Հերադիր Գ.

| Ծնունդ լուսնի. | | | Լրումն լուսնի. | | |
|---|---|---|---|---|---|
| Ամիսք | Աւուրք ամսոյ | Ժամք ծննդեան | Ամիսք | Աւուրք ամսոյ | Ժամք լրման |
| Յունվար | 25 | 0 | Փետրվար | 9 | 11 |
| Փետրվար | 23 | 5 | Մարտ | 10 | 21 |
| Մարտ | 25 | 0 | Ապրիլ | 9 | 0 |
| Ապրիլ | 23 | 14 | Մայիս | 8 | 0 |
| Մայիս | 23 | 4 | Յունիս | 7 | 0 |
| Յունիս | 22 | 0 | Յուլիս | 6 | 3 |
| Յուլիս | 21 | 14 | Օգոստոս | 5 | 0 |
| Օգոստոս | 20 | 0 | Սեպտեմ | 3 | 0 |
| Սեպտեմ | 18 | 14 | Հոկտեմ | 2 | 19 |
| Հոկտեմ | 18 | 3 | Նոյեմբեր | 1 | 9 |
| Նոյեմբեր | 16 | 13 | Դեկտեմ | 2 | 0 |
| Դեկտեմ | 16 | 3 | Դեկտեմ | 31 | 0 |

| Սերաղէն ԺԳ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ծնունդ լուսնի. | | | Լրումն լուսնի. | | |
| Ամիսք | Ամսոյ աւուրն | Ըստ Հնդկաց ժամուն | Ամիսք | Ամսոյ աւուրն | Հռոմայ ժամուն |
| Յունվար | 14 | 13 | Յունվար | 30 | 0 |
| Փետրվար | 12 | 22 | Փետրվար | 28 | 7 |
| Մարտ | 14 | 6 | Մարտ | 30 | 0 |
| Ապրիլ | 13 | 0 | Ապրիլ | 28 | 0 |
| Մայիս | 12 | 2 | Մայիս | 28 | 0 |
| Յունիս | 11 | 0 | Յունիս | 26 | 0 |
| Յուլիս | 10 | 12 | Յուլիս | 25 | 7 |
| Օգոստոս | 9 | 4 | Օգոստոս | 24 | 0 |
| Սեպտեմ | 8 | 0 | Սեպտեմ | 22 | 0 |
| Հոկտեմ | 7 | 11 | Հոկտեմ | 21 | 10 |
| Նոյեմբեր | 6 | 1 | Նոյեմբեր | 20 | 2 |
| Դեկտեմ | 5 | 12 | Դեկտեմ | 20 | 0 |

# Աերագիր ԻԸ

| Ծնունդ լուսնի ։ | | | Լրումն լուսնի ։ | | |
|---|---|---|---|---|---|
| Ամիսք | Ամսոյ աւուրք | Ժամք յետ միջօրէի | Ամիսք | Ամսոյ աւուրք | Ժամք առաւօտուն |
| Յունվար | 4 | 2 | Յունվար | 19 | 0 |
| Փետրվար | 2 | 12 | Փետրվար | 17 | 10 |
| Մարտ | 2 | 22 | Մարտ | 18 | 0 |
| Ապրիլ | 1 | 12 | Ապրիլ | 16 | 16 |
| Մայիս | 1 | 11 | Մայիս | 16 | 5 |
| Մայիս | 31 | 0 | Յունիս | 14 | 5 |
| Յունիս | 30 | 10 | Յուլիս | 15 | 10 |
| Յուլիս | 28 | 11 | Օգոստոս | 12 | 10 |
| Օգոստոս | 27 | 0 | Սեպտեմ | 10 | 4 |
| Սեպտեմ | 26 | 0 | Հոկտեմ | 10 | 4 |
| Հոկտեմ | 25 | 10 | Նոյեմբեր | 8 | 14 |
| Նոյեմբեր | 24 | 0 | Դեկտեմ | 8 | 4 |
| Դեկտեմ | 24 | 0 | Յունվար | 7 | 3 |

| Ս. Հերակլէ Օ. | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ծնունդ լուսնի. | | | Լրումն լուսնի. | | |
| Ամիսք | Ամսոյ աւուրք | Ժամ կէսօրէ յետ | Ամիսք | Ամսոյ աւուրք | Ժամ առաւօտուն |
| Յունվար | 22 | 10 | Փետրվար | 6 | 4 |
| Փետրվար | 21 | 0 | Մարտ | 7 | 1 |
| Մարտ | 22 | 0 | Ապրիլ | 6 | 4 |
| Ապրիլ | 20 | 9 | Մայիս | 5 | 9 |
| Մայիս | 20 | 0 | Յունիս | 4 | 0 |
| Յունիս | 17 | 9 | Յուլիս | 3 | 10 |
| Յուլիս | 17 | 8 | Օգոստոս | 2 | 0 |
| Օգոստոս | 16 | 0 | Օգոստոս | 31 | 7 |
| Սեպտեմ | 12 | 8 | Սեպտեմ | 29 | 16 |
| Հոկտեմ | 14 | 8 | Հոկտեմ | 29 | 2 |
| Նոյեմբեր | 13 | 9 | Նոյեմբեր | 27 | 12 |
| Դեկտեմ | 13 | 0 | Դեկտեմ | 27 | 2 |

| Մերձագիր ԺԼ. | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ծնունդ լուսնի . | | | Լրումն լուսնի . | | |
| Ամիսք | Աւուրք ամսոյ | Ժամք ծննդեան | Ամիսք | Աւուրք ամսոյ | Ժամք լրման |
| Յունվար | 11 | 18 | Յունվար | 25 | 12 |
| Փետրվար | 10 | 7 | Փետրվար | 24 | 8 |
| Մարտ | 11 | 17 | Մարտ | 27 | 0 |
| Ապրիլ | 10 | 0 | Ապրիլ | 26 | 11 |
| Մայիս | 9 | 7 | Մայիս | 24 | 1 |
| Յունիս | 8 | 0 | Յունիս | 23 | 0 |
| Յուլիս | 7 | 2 | Յուլիս | 22 | 5 |
| Օգոստոս | 5 | 6 | Օգոստոս | 22 | 0 |
| Սեպտեմբեր | 4 | 1 | Սեպտեմբեր | 19 | 12 |
| Հոկտեմբեր | 3 | 8 | Հոկտեմբեր | 18 | 11 |
| Նոյեմբեր | 2 | 4 | Նոյեմբեր | 17 | 5 |
| Դեկտեմբեր | 2 | 1 | Դեկտեմբեր | 17 | 0 |

253

## Մեհրաբեր ԻԲ.

| Ծնունդ լուսնի. | | | Լրումն լուսնի. | | |
|---|---|---|---|---|---|
| Ամիսք | Հասարակ ամսոյ | Գիշերոյ ժամք | Ամիսք | Հասարակ ամսոյ | Ցերեկին ժամք |
| Յունվար | 1 | 0 | Յունվար | 15 | 2 |
| Յունվար | 30 | 17 | Փետրվար | 13 | 15 |
| Մարտ | 1 | 5 | Մարտ | 15 | 3 |
| Մարտ | 30 | 14 | Ապրիլ | 13 | 15 |
| Ապրիլ | 30 | 0 | Մայիս | 13 | 10 |
| Մայիս | 28 | 4 | Յունիս | 11 | 15 |
| Յունիս | 26 | 14 | Յուլիս | 11 | 10 |
| Յուլիս | 26 | 0 | Օգոստոս | 10 | 0 |
| Օգոստոս | 24 | 4 | Սեպտեմ | 8 | 15 |
| Սեպտեմ | 22 | 14 | Հոկտեմ | 7 | 9 |
| Հոկտեմ | 22 | 6 | Նոյեմբեր | 7 | 0 |
| Նոյեմբեր | 21 | 0 | Դեկտեմ | 6 | 9 |
| Դեկտեմ | 20 | 18 | Յունվար | 5 | 0 |

## Մերադիր Ժ.

| Ծնունդ լուսնի. | | | Լրումն լուսնի. | | |
|---|---|---|---|---|---|
| Ամիսք | Ամսոյ աւուրք | Երեկոյեան ժամք | Ամիսք | Ամսոյ աւուրք | Առաւօտեան ժամք |
| Յունվար | 19 | 10 | Փետրվար | 3 | 8 |
| Փետրվար | 18 | 5 | Մարտ | 5 | 15 |
| Մարտ | 19 | 0 | Ապրիլ | 2 | 1 |
| Ապրիլ | 17 | 15 | Մայիս | 1 | 8 |
| Մայիս | 17 | 0 | Մայիս | 31 | 0 |
| Յունիս | 15 | 9 | Յունիս | 29 | 10 |
| Յուլիս | 15 | 0 | Յուլիս | 29 | 7 |
| Օգոստոս | 12 | 20 | Օգոստոս | 27 | 20 |
| Սեպտեմ | 11 | 7 | Սեպտեմ | 26 | 12 |
| Հոկտեմ | 10 | 17 | Հոկտեմ | 25 | 6 |
| Նոյեմբեր | 9 | 10 | Նոյեմբեր | 25 | 0 |
| Դեկտեմ | 11 | 21 | Դեկտեմ | 26 | 20 |

## Կերագիր ԻՄ.

| Ծնունդ լուսնի. | | | Լրման լուսնի. | | |
|---|---|---|---|---|---|
| Ամիս | Թուական ամսոյ | Թուական ժամուց | Ամիս | Թուական ամսոյ | Թուական ժամուց |
| Յունվար | 7 | 12 | Յունվար | 22 | 20 |
| Փետրվար | 6 | 7 | Փետրվար | 21 | 6 |
| Մարտ | 8 | 0 | Մարտ | 22 | 20 |
| Ապրիլ | 6 | 12 | Ապրիլ | 21 | 0 |
| Մայիս | 6 | 13 | Մայիս | 20 | 6 |
| Յունիս | 4 | 19 | Յունիս | 18 | 15 |
| Յուլիս | 4 | 4 | Յուլիս | 18 | 5 |
| Օգոստոս | 2 | 15. | Օգոստոս | 16 | 19 |
| Սեպտեմ | 1 | 0 | Սեպտեմ | 15 | 10 |
| Սեպտեմ | 30 | 7 | Հոկտեմ | 15 | 4 |
| Հոկտեմ | 29 | 10 | Նոյեմբեր | 14 | 0 |
| Նոյեմբեր | 28 | 7 | Դեկտեմ | 14 | 0 |
| Դեկտեմ | 28 | 0 | Յունվար | 12 | 9 |

## Մերադիր Ի.

| Ծնունդ լուսնի. | | | Լրումն լուսնի. | | |
|---|---|---|---|---|---|
| Ամիսք | Աւուրք ամսոյ | Ժամք ցերեկին | Ամիսք | Աւուրք ամսոյ | Ժամք գիշերին |
| Յունվար | 26 | 10 | Փետրվար | 10 | 9 |
| Փետրվար | 25 | 0 | Մարտ | 12 | 6 |
| Մարտ | 27 | 0 | Ապրիլ | 10 | 14 |
| Ապրիլ | 26 | 10 | Մայիս | 10 | 0 |
| Մայիս | 25 | 0 | Յունիս | 8 | 3 |
| Յունիս | 23 | 15 | Յուլիս | 7 | 13 |
| Յուլիս | 23 | 0 | Օգոստոս | 6 | 0 |
| Օգոստոս | 21 | 13 | Սեպտեմ | 4 | 12 |
| Սեպտեմ | 20 | 0 | Հոկտեմ | 4 | 5 |
| Հոկտեմ | 19 | 10 | Նոյեմբեր | 3 | 0 |
| Նոյեմբեր | 18 | 0 | Դեկտեմ | 2 | 3 |
| Դեկտեմ | 16 | 8 | Յունվար | 2 | 18 |

# Մերադիր ԺԴ.

| Նուազումն լուսնի | | | Լրումն լուսնի | | |
|---|---|---|---|---|---|
| Ամիսք | Օր ամսոյ | Ժամ | Ամիսք | Օր ամսոյ | Ժամ |
| Յունվար | 16 | 0 | Յունվար | 31 | 7 |
| Փետրվար | 14 | 7 | Մարտ | 2 | 0 |
| Մարտ | 15 | 19 | Մարտ | 31 | 7 |
| Ապրիլ | 14 | 7 | Ապրիլ | 29 | 15 |
| Մայիս | 14 | 0 | Մայիս | 29 | 0 |
| Յունիս | 12 | 16 | Յունիս | 27 | 5 |
| Յուլիս | 12 | 6 | Յուլիս | 26 | 12 |
| Օգոստոս | 11 | 0 | Օգոստոս | 25 | 10 |
| Սեպտեմ | 9 | 11 | Սեպտեմ | 23 | 12 |
| Հոկտեմ | 9 | 0 | Հոկտեմ | 23 | 1 |
| Նոյեմբեր | 8 | 15 | Նոյեմբեր | 22 | 0 |
| Դեկտեմ | 7 | 0 | Դեկտեմ | 21 | 15 |

| Մերադիր ԻԴ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ծնունդ լուսնի | | | Լրումն լուսնի | | |
| Ամիսք | Աւուրք ամսոյ | Ժամք յետ միջօրէի | Ամիսք | Աւուրք ամսոյ | Ժամք առաւօտու |
| Յունվար | 7 | 15 | Յունվար | 20 | 11 |
| Փետրվար | 4 | 0 | Փետրվար | 18 | 5 |
| Մարտ | 4 | 8 | Մարտ | 18 | 17 |
| Ապրիլ | 2 | 13 | Ապրիլ | 18 | 9 |
| Մայիս | 2 | 4 | Մայիս | 17 | 12 |
| Յունիս | 1 | 1 | Յունիս | 16 | 0 |
| Յունիս | 30 | 10 | Յուլիս | 15 | 0 |
| Յուլիս | 30 | 0 | Օգոստոս | 13 | 19 |
| Օգոստոս | 28 | 15 | Սեպտեմ | 12 | 0 |
| Սեպտեմ | 26 | 13 | Հոկտեմ | 11 | 9 |
| Հոկտեմ | 27 | 0 | Նոյեմբեր | 10 | 0 |
| Նոյեմբեր | 25 | 0 | Դեկտեմ | 9 | 18 |
| Դեկտեմ | 25 | 2 | Յունվար | 8 | 10 |

## Մերադիր Ա

| Ծնունդ լուսնի | | | Լրումն լուսնի | | |
|---|---|---|---|---|---|
| Ամիսք | Թուական ամսոյ | Ժամ կէսգիշերէն | Ամիսք | Թուական ամսոյ | Ժամ առաւօտէն |
| Յունվար | 23 | 13 | Փետրվար | 7 | 0 |
| Փետրվար | 22 | 0 | Մարտ | 9 | 0 |
| Մարտ | 23 | 5 | Ապրիլ | 7 | 12 |
| Ապրիլ | 21 | 12 | Մայիս | 7 | 0 |
| Մայիս | 21 | 0 | Յունիս | 5 | 12 |
| Յունիս | 20 | 2 | Յուլիս | 6 | 8 |
| Յուլիս | 19 | 11 | Օգոստոս | 5 | 0 |
| Օգոստոս | 18 | 19 | Սեպտեմբեր | 1 | 13 |
| Սեպտեմբեր | 16 | 10 | Հոկտեմբեր | 1 | 0 |
| Հոկտեմբեր | 16 | 3 | Հոկտեմբեր | 30 | 10 |
| Նոյեմբեր | 15 | 0 | Նոյեմբեր | 28 | 22 |
| Դեկտեմբեր | 14 | 12 | Դեկտեմբեր | 28 | 16 |

## Ա Կերադիր Փ. Օ.

| Ճշմարիտ լուսնի ։ | | | Լուսամն լուսնի ։ | | |
|---|---|---|---|---|---|
| Ամիսք | Ճարպ ամսոյ Լ. | Ձիթոյ ամսոյ Փ. | Ամիսք | Ճարպ ամսոյ Լ. | Ձիթոյ ամսոյ Փ. |
| Յունվար | 13 | 2 | Յունվար | 27 | 4 |
| Փետրվար | 11 | 12 | Փետրվար | 26 | 0 |
| Մարտ | 12 | 22 | Մարտ | 27 | 16 |
| Ապրիլ | 11 | 12 | Ապրիլ | 26 | 6 |
| Մայիս | 10 | 15 | Մայիս | 26 | 0 |
| Յունիս | 10 | 11 | Յունիս | 24 | 8 |
| Յուլիս | 8 | 6 | Յուլիս | 24 | 0 |
| Օգոստոս | 6 | 19 | Օգոստոս | 22 | 5 |
| Սեպտեմ. | 5 | 10 | Սեպտեմ. | 20 | 14 |
| Հոկտեմ. | 5 | 10 | Հոկտեմ. | 20 | 4 |
| Նոյեմբեր | 4 | 0 | Նոյեմբեր | 18 | 14 |
| Դեկտեմ. | 4 | 0 | Դեկտեմ. | 18 | 10 |

## Մ՝ Հերոդիր Խ.

| Ծնունդ լուսնի. | | | Լրումն լուսնի. | | |
|---|---|---|---|---|---|
| Ամիսք | Աւուրք ամսոց | Ժամք ծննդեան | Ամիսք | Աւուրք ամսոց | Ժամք լրման |
| Յունվար | 2 | 10 | Յունվար | 16 | 14 |
| Փետրվար | 1 | 1 | Փետրվար | 15 | 1 |
| Մարտ | 2 | 13 | Մարտ | 16 | 4 |
| Ապրիլ | 1 | 0 | Ապրիլ | 15 | 3 |
| Ապրիլ | 30 | 9 | Մայիս | 15 | 0 |
| Մայիս | 29 | 10 | Յունիս | 13 | 10 |
| Յունիս | 28 | 0 | Յուլիս | 12 | 4 |
| Յուլիս | 27 | 6 | Օգոստոս | 11 | 17 |
| Օգոստոս | 25 | 18 | Սեպտեմ | 10 | 8 |
| Սեպտեմ | 24 | 0 | Հոկտեմ | 10 | 0 |
| Հոկտեմ | 24 | 0 | Նոյեմբեր | 8 | 8 |
| Նոյեմբեր | 2 | 18 | Դեկտեմ | 8 | 0 |
| Դեկտեմ | 22 | 17 | Յունվար | 6 | 1 |

| Մերդեր Ը. | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Նորունդ լուսնի. | | | Լրումն լուսնի. | | |
| Ամիս. | Ծագման ժամու | Վաթսնեկ մասը | Ամիս. | Ծագման ժամու | Վաթսնեկ մասը |
| Յունվար | 21 | 8 | Փետրվար | 4 | 12 |
| Փետրվար | 20 | 0 | Մարտ | 5 | 0 |
| Մարտ | 20 | 12 | Ապրիլ | 3 | 12 |
| Ապրիլ | 19 | 0 | Մայիս | 3 | 0 |
| Մայիս | 18 | 7 | Յունիս | 1 | 15 |
| Յունիս | 16 | 16 | Յուլիս | 1 | 4 |
| Յուլիս | 16 | 0 | Յուլիս | 31 | 0 |
| Օգոստոս | 14 | 1 | Օգոստոս | 29 | 12 |
| Սեպտեմ. | 12 | 16 | Սեպտեմ. | 28 | 2 |
| Հոկտեմ. | 12 | 0 | Հոկտեմ. | 28 | 0 |
| Նոյեմբեր | 10 | 0 | Նոյեմբեր | 26 | 7 |
| Դեկտեմ. | 10 | 15 | Դեկտեմ. | 25 | 17 |

## Մ'Հերագեր ժմն

| Նորոգ լուսնի. | | | Լրման լուսնի. | | |
|---|---|---|---|---|---|
| Ամիսք | Ցայգոյ ժամք | Ցայգոյ մասունք | Ամիսք | Ցայգոյ ժամք | Ցերեկի ժամք |
| Յունվար | 9 | 7 | Յունվար | 24 | 3 |
| Փետրվար | 8 | 0 | Փետրվար | 22 | 13 |
| Մարտ | 10 | 0 | Մարտ | 24 | 11 |
| Ապրիլ | 8 | 9 | Ապրիլ | 22 | 10 |
| Մայիս | 8 | 0 | Մայիս | 22 | 0 |
| Յունիս | 6 | 4 | Յունիս | 19 | 10 |
| Յուլիս | 6 | 0 | Յուլիս | 20 | 0 |
| Օգոստոս | 4 | 0 | Օգոստոս | 18 | 14 |
| Սեպտեմ | 2 | 4 | Սեպտեմ | 17 | 9 |
| Հոկտեմ | 1 | 13 | Հոկտեմ | 17 | 8 |
| Հոկտեմ | 31 | 0 | Նոյեմբեր | 10 | 0 |
| Նոյեմբեր | 30 | 0 | Դեկտեմ | 14 | 9 |
| Դեկտեմ | 29 | 1 | Յունվար | 14 | 0 |

| [illegible] | | | | | |
|---|---|---|---|---|---|
| [illegible] լուսնի։ | | | [illegible] լուսնի։ | | |
| Ամիսք | [illegible] | [illegible] | Ամիսք | [illegible] | [illegible] |
| Յունվար | 28 | 2 | Փետրվար | 12 | 8 |
| Փետրվար | 27 | 0 | Մարտ | 13 | 14 |
| Մարտ | 28 | 12 | Ապրիլ | 12 | 0 |
| Ապրիլ | 27 | 2 | Մայիս | 10 | 7 |
| Մայիս | 26 | 12 | Յունիս | 9 | 17 |
| Յունիս | 25 | 2 | Յուլիս | 8 | 0 |
| Յուլիս | 24 | 12 | Օգոստոս | 7 | 7 |
| Օգոստոս | 23 | 0 | Սեպտեմ. | 6 | 8 |
| Սեպտեմ. | 20 | 7 | Հոկտեմ. | 6 | 2 |
| Հոկտեմ. | 20 | 17 | Նոյեմբեր | 5 | 0 |
| Նոյեմբեր | 19 | 4 | Դեկտեմ. | 4 | 16 |
| Դեկտեմ. | 18 | 16 | Յունվար | 3 | 6 |

# ՑԱՆԿ

## Բուն տօմարի հայոց.


Աղիւսակ ամսամտից, կրկնակաց, և կիսակաց. 2
Յաղագս կրկնակի . . . . . . 3
Յաղագս կիսակի . . . . . . . 4
Յաղագս Թուականին հայոց . . . . 4
Յաղագս իննևտասներեկից . . . . 7
Յաղագս եօթներեկից . . . . . 7
Յաղագս վերադրաց . . . . . . 8
Յաղագս տանուտէրան . . . . . 9
Յաղագս ամսամտից . . . . . . 10
Յաղագս օրագիտից . . . . . 11
Յաղագս բարեկենդանի առաջաւորաց . 12
Յաղագս լուսին զատկի . . . . . 14
Յաղագս գիրս տարւոյն . . . . 16
Յաղագս տեառն ընդ առաջին . . . 16
Յաղագս աւետման . . . . . . 17
Յաղագս վճռոյն վարդավառի և աստուածածնի . 18
Յաղագս ամանորահանդէից . . . . 19


## ՑԱՆԿ

Տօմարի համեմատելեաց ընդ կարգի եւրոպացւոց բանից և գաղղիականաց.


Աղիւսակ ամսամտից, յարակայից, կրկնակաց, և կիսակաց . . . . . . 24

[illegible] . . . . . . 25
[illegible] . . . . . . 27
[illegible] . . . . . . 28
[illegible] . 29
[illegible] . . . . . 30
[illegible] . . . . . 31
[illegible] . . . 33
[illegible] . 34
[illegible] . . . . 36
[illegible] . . 37
[illegible] . . . . 38
[illegible] . . . 41
[illegible] . 42
[illegible]
[illegible] . . . . . . . . 43
[illegible] . 43
[illegible] . . . 44
[illegible] . . . . . . . . 45
[illegible] . . . . . 45
[illegible] . . . . . 46
[illegible] . . . . . 46
[illegible] . 47
[illegible] . . . . . 48
[illegible]
[illegible] . . . . . . 48
[illegible] . . 48
[illegible]




[illegible]

սուրբ խաչի . . . . . . . 49
Յաղագս սուրբ խաչի . . . . . 50
Յաղագս բարեկենդանին ս՟բ Գէորգայ . 50
Յաղագս [illegible] [illegible] ս՟բ Գէորգայ
և բարեկենդանին Յիսնակաց . . . 51
Յաղագս [illegible] խաչի . . . . . 52
Յաղագս բարեկենդանին Յիսնակաց . . 52
Յաղագս բարեկենդանին ս՟բ Յակոբայ . 53
Յաղագս [illegible] [illegible] ս՟բ Յակոբայ և
Ծննդեան բարեկենդանին . . . 53
Յաղագս բարեկենդանին Ծննդեան [illegible] . 54
Յաղագս անշարժ [illegible] . . . . 56
Խորան [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] . . . . . . . 57
[illegible] [illegible] [illegible] [illegible] . 62
Տօմարական աղիւսակ [illegible] . . 66
Խորան տօմարական աղիւսակին . . . 72

—

[illegible] [illegible] [illegible] [illegible]
. . . . . . . . . 75
Յաղագս [illegible] [illegible] . . . . 81
Յաղագս [illegible] [illegible] . . 83
[illegible] [illegible] [illegible]
[illegible] . . . . . . . . 85
Յաղագս [illegible] [illegible] . . 90
Յաղագս [illegible] [illegible] և [illegible] [illegible]. 93

Տեղեկութիւն գուշակելոց խաւարման արե-
գական և լուսնոյ . . . . . . 98
Օրինագրութիւնք առ ի տպաւոր տարեգրաց . 100

—

Մշտնջենաւոր տարեկան տօնախմբութեանց
գուշակումն . . . . . . . 107
Մշտնջենաւոր գուշակումն առ ի հողմոց
և եղանակաց տարւոյն՝ յաւուր յաւուր . 149
Յաւելուածք մէ պատահարաց 'ի մէջ
եղանակաց բոլոր ամսոյ . . . . 165
Յաւելուածք 'ի մէջ 12 կենդանակերպից . 183
'Ի մէջ եօթն մոլորակացն՝ հանդերձ խորհրդ-
տօղայութեան և ծննդեան առաջի մահուան . 191
Յաղագս ծանուց պատճէան և կերպից . 199
Յաղագս եղանակութեանց մի ամսոյ . . 200
Նշանք գուշակութեանց մի եղանակի, անձ-
րևոյ, հողմոց, ջերմութեան, և ալեկոծութեան. 224
Գուշակումն խաւարման արեգական՝ առ ի
տարեգրաց . . . . . . . . 240
Գուշակումն յարատեւութեան սառոյց լուսնոյն,
յորում ծնեալն որոշեալ է իւր . . . 241
Խորհուրդ վասն գործածութեան Մշտնջենաւոր
աղիւսակաց ծննդեան և լրման լուսնի . 245
Մշտնջենաւոր աղիւսակք ծննդեան և
լրման լուսնի . . . . . . . 247

Մշեփաչեաց պաղատանք բանից՝ Նախերգեան։

Այս Ռուբէն՝ բաղխէ ցի։
մեղօք լցեալ՝ նուաստ ո՜ գի։
Տաղաչափեալ՝ բառ իմ կա րի։
ըղձառ Հնդկաց՝ Թագաւո րի։
Ռուբինեայ՝ կրաւորաշ տի։
և իւր որդւոյն՝ Յովնասա փի։
Դիւրաբարբառ՝ վերծանո ղի։
և հեշտընկալ՝ գով լսո ղի։
Ով իմացեալ՝ ըղձիւ բա նի։
փառըս տացեն՝ Տեառն արար չի։
Որով յանցեր՝ քաւանց երկ րի։
աբրահամու՝ յանձն ո՜ դի։



## Տաղ ի վերայ Յովհաննու Երզնկացւոյ՝ որդ-ւոյ Երզնկացւոյն հնդկոյ Աբենեկայ։

Ա.

Յորժամ հայրն երկնաւոր յերկիր հա-
ճեցաւ. և բանն անձ իջեալ յերկնից
մարմնացաւ. ի խաչափայտն ելեալ սիրով
բարձրացաւ. եդաւ ի գերեզման և փառ-
օք յարեաւ։

Ելեալ մարմնով յերկինս յաջմէ հօր նստաւ.
և անձ սուրբ հոգին ի յերկիր իջաւ.
ի վերնատանն ի կերպ հրոյ յայտնեցաւ.
ի դասս առաքելոց սիրով բնակեցաւ։

Աշխարհս առաքելոցն վիճակեցաւ.
երկիրըն Հընդկաստան Թովմայի անկաւ.
գնացեալ անդ քարոզեաց ա՟ն հրամանաւ.
և անդէն պաշտելեօք նահատակեցաւ։

Հաւատ քրիստոնէից անդ հաստատեցաւ.
կռապաշտութիւն դիւացըն խափանեցաւ.
մի ոմն ի չաստուածոց խորտակեալ բարձաւ.
անուանըն քրիստոսի փառաւորեցաւ։

Յետոյ չոր թագաւոր մի երևեցաւ.
որ աշխէնէր անուն նըմա կոչեցաւ.



սաստա

սատանայի կամաց նա հետևե ցաւ ·
կռապաշտութիւն գիւաց կամաւն իւր անկաւ ։
Հալածէր զքրիստոնեայս յծէն հնդկաց ·
և անթիւ բազմութիւն անդ նահատակեաց ·
զանուանըն քրիստոսի 'ի յերկրէն ջնջեաց ·
զմանկանն գիւաց պաշտօնեայս կարգեաց ։
Ունէր մեծ թագաւորն Աբենէր զորդի ·
որ ժառանգէր զաթոռըն իւր հայրենի ·
շատ աղաչեաց ըղձուս փառըն զաւակի ·
և գեղըն ոչ կարացին տալ նըմա զորդի ։

## Վասն ծննդեանն և սննդեանն Յովասափու ։

### Ա

Այն ամենայնի որ բարեգութն է ·
դարձի մեղաւորաց նա կամեցող է ·
Աբենէր արքային զաւակ պարգևէ ·
այն որ 'ի փուշ անկեալն՝ վարդ բուսուցանէ ։
Իսկ նա 'ի չաստուածոցն ըղձա գիտենայ ·
զենէր զոհըս բազում և ուրախանայ ·
և կըռոցն առաջի անկեալ գոհանայ ·
յովասափ կոչեցին զանուանըն նորա ։
Մոգուցն զաստղաբաշխսն որք էին գիտուն ·
եկեալ 'ի միասին համարով յիսուն ·
հարցին թագաւորին վն իւրեան որդւոյն ·
ասեն թէ լինիցի քան զքեզ մեծագոյն ։
Մի ոմն 'ի նոցանէ այն որ ճարտարն է ·
Աբենէր արքային զայս դարձեալ ասէ ·



հզօր

Հզօր մեծ Թագաւորըդ մեր գիտասցէ ·
որդին քո քրիստոնեայ իսկ լինելոց է ·
Յորժամ լուաւ արքայն զբանս աստղագիտին ·
տրտմեցաւ դառնագին վասըն զաւակին ·
խորհրդէր հընարս առնել վն յովասափին ·
զի մի լուիցէ նա զձայն քրիստոնեայ ազգին ·
Յորժամ որ կորեցաւ մանուկն ՚ի տանէ ·
Թագաւորըն տեղի նըմա պատրաստ առէ ·
աղահասակ մանկունս առ նա ժողովէ ·
և զյովասափ մանուկն իւր ուրախ առնէ ·
Եւ պատուէր ետ նոցա ՚ի դուրս ոչ հանել ·
և ալեւոր և ծեր՝ անդ ոչ մուծանել ·
ցաւոց ձայն և մահու անդէն ոչ յիշել ·
և ոչ զքրիստոնէից օրէնս անուանել ·
Եւ թէ ՚ի յայն մանկանցըն մեռանէին ·
որք որդւոյ արքային ընկերակիցք էին ·
մի այլ փոխան նորա կացուցանէ ին ·
զմեռեալըն յատոր երկիր գնացեալ ասէին ·
Մանուկն յովասափ յորժամ զարգացաւ ·
իմաստութեան բանից նա հետևեցաւ ·
բերլին առ նա վարպետ ՚ի նմանէ ուսաւ ·
և յաստղաբաշխութե արուեստ վարժեցաւ ։
Յուսել և ՚ի խրմել յուրախութե կայր ·
ձայնիւ երգեցողաց խնդութե ցնծայր ·
և հայր նորա յամէն աւուր առ նա գայր ·
որդւոյն յովասափու սիրով բարև տայր ։

Առաջին ելանելոյն արտաքս Յովասափու :

Գ.

Յաւուր միում մինչ խորհուրդ արարեալ
մանուկըն յովասափ 'ի տրտմութե լեալ.
կոչեաց զմի յընկերաց իւրոց և հարցեալ.
վա՞ն էր 'ի տաճարիս եմ ասա արգելեալ :
Յայնժամ պատասխանել նըմա ծառայն.
յովասափու ասաց ըղըլանս արքայ էն.
զքրիստոնեայս հալածեաց աւէ հայր քոյին.
կամեցաւ խափանել զանուն քրիստոսին :
Նա զքեզ վա՞ն այսորիկ ասա արգելեալ է.
զի մի՛ զօրէնս նոցա ականջ քո լը սէ.
ըղըլանս աստղագիտին նմա ծանուցանէ.
որ վասն յովասափու նախ ասացեալ է :
Շ ընորհն աստուածային 'ի սիրտըն ծագեալ.
որդւոյ թագաւորին յորժամ զայս լուեալ.
յայնժամ եկեալ առ նա հայրն 'ի յողջոյն տալ.
ելանելոյ 'ի դուրս յարքայէն խնդրեալ :
Ասաց զարդարեցէք զփողոց քաղաքին.
հիւանդք և ցաւագարք մի՛ երևեսցին.
և զաւք երգեցողաց պատրաստք եղիցին.
քանզի ուրախասցի որդի արքային :
Հանապազ յովասափ 'ի դուրս ելանէր.
հաւասար ընկերօքն իւր ուրախ լինէր.
յանկարծ ուրուկ և կոյր մի նա տեսանէր.
տրտմութե զարհուրեալ և սիրտըն ձմլէր.
Եհարց թէ ինչ պատճառաւ նա ցաւագ֊
նեալ

նեալ է • ասեն թէ պատահմամբ ՚ի տարե_
րացս է • եհարց թէ ամենից այն լինելոց է •
ասեն այլ ոչ ումանց որոց պատահէ ։
Յաւուր միում եկեալ ծեր մի տեսանէ •
որ ՚ի գաւազանին վերայ գողդո ջէ •
եհարց վասն ծերոյն թայս ինչ պատճառ է •
ասեն թէ որ մահուան եկեալ հասեալ է •
Եհարց թէ ամենեցն մահըն հանդի այլ •
եթէ նորա միայն զոր աչօք տե սի •
ասեն թէ ամենայն մարդ որ ծընա նի •
մահուամբ ՚ի յաշխարհէս ելանել պարտի ։
Լուեալ յովսափատ զայս սիրտըն դողաց •
և զառնացեալ ոգւով նա յոյժ հառաչեց •
ըզկեանք մարդոյս յերկրի ոչ ինչ համարեց •
երազ է գիշերոյ զոր դաւիթ ասաց ։
Օրըստ օրէ տըրտում կայր և մըտածէր •
և հանապազ ծածուկ մըտօք տագնապէր •
ըզփառս և զպատիւ ոչ ինչ համարէր • խընդ-
րէր մարդ իմաստուն որ զինքըն խրատէր ։

Ա՟ Գալոյ Բարլաամու ճգնաւորին առ Յով_
սափատ՝ և քարոզելն նմ։

Դ.

Սքանչագործն ա՟ծ արքայն համայնից •
որ հանապազ խնդրող է մոլորեալ հօտից •
նա որ յերկնից իջեալ վա՟ իւր ծառայից •
՚ի փայտ խաչին ելեալ՝ փըրկեաց յանիծից ։


Նհան

Ահան յանապատէն զհովիւըն բա րի ։
որպէս և խել անուն բարբառամ կո չի ։
լքեալ ՚ի քաղաքին վասն յովսա փի ։
որ էր տեղ պատրաստեալ փառայն յի ։
Անկեալ ՚ի քաղաքին ճգնաւորն ընտրեալ ։
որ էր ծածաչունչ գրովքըն վարժեալ ։
՚ի քաղց և ՚ի ծարաւ զմարմինըն ճընշեալ ։
՚ի յայրս և ՚ի փապարս լերանց բընակեալ ։
Ո քաղաքական ըզգեստ առեալ ագանի ։
՚ի կերպարանս եղեալ վաճառակա նի ։
գնացեալ եհաս ՚ի դուռն որդւոյն արքայի ։
որ էր լըցեալ շնորհօք որդւոյն մեծանի ։
Զաւայն յովսաափու ըղնա տեսա նէ ։
հանդարտաբար սիրով առ նա խօսակ ցէ ։
ասաց յինչ պէտս եկեալ ըղնա հարցանէ ։
ասաց վաճառական եմ՝ յօտար երկրէ ։
Աւ մարգարիտ ունիմ առ իս մեծագին ։
որ չկայ ՚ի գանձանակ քո Թագաւորին ։
ոչ ես տեսեալ նըման իմոյ մարգարտին ։
ոչ դու ոչ քո արքայն ոչ նախնիքըն նորին ։
Քանզի մըջըրեան այն՝ հանց շնորհ ունի ։
որ կուրըն տեսանէ և աչքըն բա նի ։
խըլից լսել շնորհէ և համրըն խօ սի ։
հոգւով հիւանդացեալն նովաւ բըժըշկի ։
Մըտեալ ծառայն ասաց որդւոյ արքային ։
զբանըն բարբառմուն սուրբ ճըգնաւորին ։
որ էր վաճառական անգին մարգարտին ։



զոր

զոր և Քրիստոս ասաց յաւետարանին ։
Հրաման առեալ ծառայն ՚ի յովասափէ ։
զվաճառօղ մարգարտին ՚ի ներս մուծանէ ։
որդւոյ թագաւորին նա գլուխն դընէ ։
մանուկն յովասափ ըզնա մեծարէ ։
Յայնժամ ասէ նմա մանուկն խոհեմ ․
թէ ցոյց ինձ զմրգրիտն զայն որ աւեսանեմ ․
ասաց վասն այն եկի որ քեզ ցուցանեմ ․
զմեծագին մարգարիտն իմ քեզ վաճառեմ ․
Բայց նախ դու ունկնդիր լեր մտօք իմ բանիս ․
որ ես զպատճառն ասեմ այս մեծ մրգրտիս ․
եթէ խօսից իմոց դու հաւանես ցիս ․
տաց անուշ նորա արժանաւորիս ։
Բանիդ որքայն և ակըն որ իմ ամէն է ։
յաւետարանն իւր Տր̃ զայս ասացեալ է ։
առակաւոր բանիւ նա խօսեցեալ է ։
ամէն մարդոյ խըրատ զայս ասացեալ է ։
Սերմանողացն ելեալ սերմանել յերկիր ։
՚ի սերմանելըն անկաւ ՚ի ճանապարհ հի ։
թռչունք երկնից կերին՝ ոտից կոխելի ։
է օրինակ մեղաց և սատանայի ։
Իսկ այլն անկաւ ՚ի փուշ և հեղձուցին զնա ․
օրինակ մեծութեան որ հոգս ունենայ ։
և այլն յապառաժի որ ոչ բուսաւ նա ․
և տապըն փորձութեան չորացոյց ըզնա ։
Այլ որ անկեալ բուսաւ ՚ի յերկիր բարի ։
բերել պտուղ հարիւր վաթսուն երեսնի ։

Նման

Նման է արդարոց գործոց ՚ի յերկրի ·
այնց որք կամարարք այ լինին ։
Եթէ տեղի ունիս դու սերմանելոյ ·
այլ և լաւող լինիս բանին աստուծոյ ·
յայնժամ ես կամք ունիմ սիրով պատմելոյ ·
զխորհուրդ պաշտօնէիցըս տն աստուծոյ ։
Ապա թէ զմարգարիտն իմ դու իմանաս ·
և հոգւով և մարմնով նորա ցանկանաս ·
զամէն իշխանութի քո նորա գին տաս ·
և անանց մեծութի յայնժամ ըստանաս ։
Իսկ եթէ ոչ ունիս դու տեղի սերման ·
այլ ես փուշ ատապատած ճանապրհ կոխան ·
յայնժամ ՚ի յայդ չունիմ ես հրաման ·
ցուցանել զմարգարիտն իմ քեզ պատուէն ·
Քանզի յաւետարանն ինձ պատուիրեալ է ·
թէ զբան պատուիրանին որ մարգարիտն է ·
խոզից մեղասիրաց որք շունք գործովք են ·
մի տայք կոխան առնել՝ զի շատ մեղանք են ։
Մանուկըն յոխնաւի որդի արքայ ին ·
յորժամ լուաւ զբարբառս ծեր ճգնաւորին ·
ծագեաց լոյսըն շնորհաց ՚ի սիրտըս նորին ·
բորբոքեցաւ սիրով անխօս մարգարտին ։
Աղերսութեամբ սկսաւ խօսել ընդ նմա ·
ասէ արքայ որդին մեծ ին բարբառ մայ ·
թէ զինչ բան զոր ունիս՝ զամէնն ինձ ասա ·
քանզի բարի խրատու հոգիս իմ ցանկայ ։
Ա՛ զսերմըն հոգևոր դու յիս սերմանեա ·

Թըռ

Թըռչունն երկնից ըղձա տանիլ ոչ կարէ ·
ոչ տապըն փորձութեան չորացուցանէ ·
և ոչ փուշըն մեղաց զնա հեղձուցանէ ։
Սալհաստատով ըղձան քո յիս ընդունիմ ·
և յուսով կատարման բարեաց անձն ունիմ ·
սիրով բուսուցանեմ՝ արդիւնաւորիմ ·
մի թէ անանց կենաց ժառանգ լինիցիմ ։

## Տաղ որ ասաց Առաքել Յովհաննու ։

### Ա

Ադամ ասաց աստուածամ ամէն զու լըսէ ·
որ թէ ՚ի մեզ պահես՝ քեզ բազում շահ է ·
անցաւոր աշխարհիս այս օրինակ է ·
և զկեանս յաւիտենից քեզ ծանուցանէ ։
Թագաւոր մի փառօք ՚ի կառս իւր նստէր ·
յանկարծ երկու աղքատ մարդ նա տեսանէր ·
մարմինքըն սևացին արևակէզ էր ·
ոչ ունէին զհանդերձս որ զնա ծածկէր ։
Ահեալ դէմ արքային ասէն յայտնապէս ·
մեք եմք քաղող կենացըն ձմերոտապէս ·
սոսկացեալ թագաւորն այն ահեղապէս ·
երկիր եպագ նոցա անդ խոնարհապէս ։
Զօրքըն թագաւորին զնա բամբասեցին ·
եղբօր նորա ասէն ըղձանս արքայ ին ·
և նա գնացեալ պատմեաց զայն թագաւորին ·
մի՞ էր խոնարհեցար արանցն այն չընչին ։
Սահման կայր քաղաքին այն թագաւորին ·



ըղմա

ըղմահապարտ մարդկին զորս ըմբռնէին ·
փողով ազդեցութեան ծանուցանէին ·
որք զդատաւորացն տանջանօքն տեսանէին ·
Թագաւորըն զեղբայրն իւր ետ ըմբռնել ·
զանդաւակ մահապարտից հնչեցուցանել ·
՚ի մէջ հրապարակին ձեռս ՚ի յետս կապել ·
զխորհուրդ դատաստանին առա ծանուցանել ·
Յայնժամ արքայն եղբօրն իւր եկել ասէ ·
Թէ դու զարհուրեցար ՚ի յայդ մահուանէ ·
զիա՞րդ ես ոչ վախիմ յարանցն յայնցանէ ·
որք ինձ պատուհան տանջանս որ ոչ անցանէ ·
Յովասափու ասաց բարլաամ զայս առակ ·
Թէ բան Թագաւորին՝ է քեզ օրինակ ·
որ կամիցիս լսել զբարեացն յիշատակ ·
ասել զկատարչութի՛ն որն հակառակ ·

## Բան Ներսեսի · Օ ·

Պատմել առակ մի այլ ասեմ այսմ նըման ·
է օրինակ մեղաց և արդարութեան ·
ծնընդիր և լսէ՛ կամօք հաճութեան ·
և տես զխօս Տէր դատարկ և ունայն ·
Երկու սենեակ շինեաց արքայ մի բարի ·
ըղմինն ելից ոսկւով ականօք ցանկալի ·
և ըղմիւսն զաղբահոտ աղբով աղտեղի ·
զերկուսն անօր փակեաց անտեսանելի ·
Եւ զայն որ զմէջն ոսկւով ականօք լըցեալ
էր ·

էր • ըղձութեան սեաւագոյն կըղպով ծեփեալ
էր • և այն որ 'ի ներքուն աղբով 'ի լի էր • մե-
ծագին հանդերձիւ գուրան ծածկեալ էր •
Ասոյց գին արարէք երկու ամանն ին •
Նոքա զգործն ծածուկ գիտել չկարացին •
զայն որ աղբով լըցեալ մեծ գին արարին •
և զայն որ մէջն ոսկւով՝ անարգ խոտեցին •
Մեկնեմ զբան առակիս՝ դու սիրով լըսէ •
այն մարդն որ յ[illegible] թաքուն բարի է •
թէպէտ 'ի մէջ մարդկան նա անարգեալ է •
առաջի աստուծոյ յոյժ մեծարեալ է •
Իսկ որ յերևելիս պայծառ և ճոխ է •
և 'ի բարեաց գործոց դատարկացեալ է •
թէպէտ զփառս աշխարհիս առեալ վայելէ •
'ի յահեղ ատենին զամօթ կըրեսցէ •
Յովասափ զայս լուեալ յոյժ ուրախացաւ •
որ իւր հանց խրատու յանկարծ յայտնեցաւ •
'ի կըռապաշտութեանց նա ազատեցաւ •
և որդւոյն աստուծոյ ծառայ կարգեցաւ •
Ապա դարձեալ ասէ մեծին բարղամու •
եթէ յայտնեա զխորհուրդ բանիցն առաջ
նոյ • զանուն թագաւորին քո ուսուցողին •
զառակ սերմանողին՝ զմեկնութիւն նորին •
Յայնժամ սբն բարղամ սկիզբն արարեալ •
զկատարածանիլ երգս նորա ծանուցեալ •
զբանսարկուին անկումն որ ապստամբեալ •
զմարդոյն լինելուն՝ զպտղոյն զոր կերեալ •

Օ րհնին յանձառ լուսոյն՝ զանեղծս գաւա-
նագոյն․ այլ և զցաւոց ծնունդ զգիտան
լաստակոյն․ ըղձուց նախաստեղծին վասն
յանցանելոյն․ զխոստումն իմ որդւոյն և
մարդանալոյն․
Զծնունդ հօրն ադամայ և զմօրն եւայի․
զձումըն զուսակաց 'ի վերայ երկ   րի․
որ ոք բարի գործովք եկաց յաշխար հի․
և որք հեռանեցան կամաց բանսարկուին․
Օ մարգարէիցն զասքն որք գուշակեցին․
զմարդեղութի բանին աստուծոյ ցուցին․
զանօրինաբար շրջիլն 'ի մէջ մարդկային․
և զսքանչելեաց նշան որդւոյ միածնին․
Օ չարչարանըս խաչի՝ զթաղումն նորին․
զյարութի քրիստոսի յաւուր երրորդին․
զհամբառնալ վերկչին յաթոռ հայրենի․
զգալուստ հոգւոյն սրբ 'ի պենտեկոստին․
Օ քարոզս առաքելոցն յաշխարհս ամ․
որք լուցին նոցա և յաստուած դարձան․
զհաւատ քրիստոնէից որք հաստատեցան․
զմոլորութիւնս կռոց որք խափանեցան․
Օ գալուստն 'ի դատաստն որդւոյն միածնի․
զհատուցումն գործոց մարդկայնոց ազգի․
չարագործացն ըղհուրն անշիջանե   լի․
բարեգործացն ըղփառս որ յանձառելի․
Իսկ յորժամ զայս լուաւ որդի արքային․
անկեալ երկիր եպագ սուրբ ճգնաւորին․



իմա

իմացաւ զգործութին անգին մարգարտին ։
որ խոստացաւ յայտնել զայն յոլովակին ։
Պատասխանի տուեալ մեծին բարղամայ ։
ասէ ըզմարգարիտըն քեզ իմա ցայ ։
որդ այժմ ըզհայրենի կուսայն մոռացայ ։
և յիսուսի փրկչին լինիցիմ ծառայ ։
Որդ զինչ ըսն զոր գիտես զամենին ինձ ասա ։
քանզի բարի խրատու հոգիս իմ ցանկայ ։
այս մոլորեալ հոգւոյս ճարակ դու ասա ։
և լուսով գիտութեն ինձ առաջնորդեա ։
Ասաց թէ մկրտեսցիր յանուանն յիսուսի ։
և հօրն երկնաւորի՝ հոգւոյն ճշմարտի ։
անեղ անհաս անճառ աստուծոյ մեծի ։
ստեղծողին համայնից երկնի և երկրի ։
Ասաց՝ մկրտութեն խորհուրդըն զինչ է ։
ասաց որըն բարղամ թէ մեծ պարգևք է ։
՚ի ըսկըզբնական մեղաց ըզմարդն ազատէ ։
և հօրն երկնաւորի որդի անուանէ ։
Մկրտութին սուրբ՝ անբիծ հաւատով ։
՚ի բազմազգոյն մեղաց զմարդըն փրկելով ։
լուսափայլ պատմուճանն ագուցանէ լով ։
ժառանգակից կենաց բանին առնելով ։
Մկրտութին սուրբ՝ կենաց պատճառ է ։
բժշկութիւն հոգւոյ և գեղ ցաւոց է ։
՚ի խոցմանէ չարին զմարդիկ բըժըշկէ ։
՚ի մահուանէ մեղաց կենդանագործող է ։
Մկրտութին նոր՝ զեղումն է շնորհաց ։



և

և ճանապարհ գնացման յուսով առ ած·
դուռն է արքայութեն և հանգիստ փառաց·
ժառանգ յաւիտենից անպատում բարեաց։
Մ՝կրտութեան շնորհըն գերագոյն է·
որ ամէն բարութեն պատճառ և սկիզբն է·
զախտի ծնունդս որդի աստուծոյ առնէ·
զապականեալ բնութիւնս կենագործէ·
Մ՝կրտութիւնն զգեստ է արքունական·
՚ի քէ շնորհեալ մեզ որդւոց մարդկան·
պարիսպ է ամրութեն և զէն յաղթութեն·
քաղաք ապաստանից և գանձ պատուական։
Մ՝կրտութեն ով որ սրբեալ մաքրեցի·
բազմապատիկ շնորհաց արժանաւորի·
ամէն ՚ի յօրհնութեան իւղոյն օծանի·
և անդ ՚ի յաստուծոյ լուսոյն վառեցի·
Զ՝մկրտութիւնն ով որ սրբութե պահէ·
նա յառագաստն երկնից առ իր մտանէ·
իսկ որ աղտեղացեալ զայլիր գործով է·
նա յաւէտ ատենին զամօթ կրեսցէ·
Ա՝րդ դու թէ մկրտիս յանուն յիսուսի·
յորդեգրութի կոչիս հօրն երկնաւորի·
տաճար կազմիս անճառ հոգւոյն ճշմարտի·
և ժառանգես զկեանսն որ անպատմելի·
Յ՝այնժամ ուրախացաւ որդի արքային·
պատասխանեալ ասէ սուրբ ճգնաւորին·
զիա՞րդ կատարեցից ըղկամն արար չին·
որ ազատիմ յանշէջ հրոյ գեհենին·



Ա՝սաց

Նաց թէ ուրացեր զկուսութիւն գիւղական .
որք են ձեռաց գործիք արարեալք մարդկան .
մերկացեր ըզխաւարն որ անգիտութեան .
ծածկէր զլոյս հաւատոյ ա͞ծգիտութեան .
Աղբերբ մկրտութե͞ յաղտից մարմնական .
զգեցեր զհոգին շնորհաց անսպառական .
զերծեր ՚ի տանջանաց յաւիտենա կան .
և լեր բաժին շնորհաց և արքայութեան .
Ո՜վ է որք զկուռսն պաշտեն՝ մարդք մոլարք են .
և զարարիչն ա͞ծ խիկ մոռացեալք են .
ցուցից քեզ օրինակ թէ ո՞ւմ նմանք են .
տատկաւոր բանիւք որ նշանակեն .

## Առակ Երրորդ : Է

Մարդ մի ճընճղուկ մի ետես և ըմբռնեաց
զնա . այլ նա սկսաւ խօսիլ և ասէ նմա .
թէ զիս արձակեսցես՝ քեզ բազումշահ կայ .
երեք բան խրատ տամ՝ քեզ օգուտ լինայ .
Լուաւ այրն ճնճղկին և արձակեաց զնա .
եկաւ նստաւ ՚ի ծառն և ասաց նմա .
ականջդիր եղ նմա բարբառեցաւ նա .
երեք խրատն այս էր զոր ասաց նմա .
Նախ՝ թէ անհաւատ բանից մի՛ հաւատալ .
և յայն տեղն որ չհասանիս ձեռօք մի՛ ձգտալ .
զանցեալ բանն որ գընաց՝ զայն մի՛ ափսոսալ .
՚ի միտ առ ըզխրատս և մի՛ մոռանար .
Յայնժամ փորձեալ ըզնա և դարձեալ ասէ .

յիս կայ հանց մարգարիտ որ մեծագին է .
պայծառ և պատուական և գեղեցիկ է .
որքան ըղջայլամու հաւկիթ մի մեծ է .
Իսկ նա որ արձակեաց՝ եղև փոշիման .
գընաց գըտնելն նորա վասն տրտմութեան .
Ձգէց զձեռն ըմբռնել ըղձընձղուկն զայն .
Իսկ նա դարձեալ ասէ յիմար մարդոյն այն .
Օ՜ խենդ ասէ զխրատն իմ դու մոռացար .
և ըղսուտն զոր ասացի ուղղորդ իմացար .
'ի ձեռդ էի անկեալ՝ պահել չկարացար .
զանցեալն հոգայեր որ այլ չկայ ճար .
Այնպէս են որք կռոց երկրպագուք են .
և զձեռագործս իւրեանց ա͞ծս անուանեն .
զաստուածն ամենայնի 'ի բաց թողեալ են .
և զբարեաց պարգևողըն մոռացեալ են .
Այլ մեզ մի է ա͞ծ հայրն ամենակալ .
և մի է միածինըն հօր հաւասար .
հոգին ճշմարտութե͞ն 'ի հօրէ բղխեալ .
փառակից միածնին և ոչ բաժանեալ .
Անձամբ է երրակի՝ բնութեամբ միակի .
անուամբ երեք կոչի՝ կամքն է եզակի .
բաժանեալ է յերիս ւանբաժանելի .
երրեակն 'ի միակէն անեղանելի .
Մինն ծընող կոչի անմարմին բանին .
մինն ծընունդ ասի հաւասար ծընողին .
մինն ելումն 'ի հօրէ անճառ անդրըն նմին .
եւցըս համօրէն միայն գիտողին .



Ընէղ

Անեղ է հայրն աստուած յաւիտենական.
անեղակից որդին ծնունդ հայրական.
անեղաբար հոգին՝ հօր համանը ման.
էակից միածնին 'ի գործ կատար ման.
Արարիչ հայր ամի երկնի և երկ րի.
արարչակից որդին էիցս ամե նի.
կատարիչ նը հոգին անեղծական սե ռի.
իմանալեաց՝ զգալեաց՝ ծովու և ցամաքի.
Կամաւ հօրն լուսոյ արարածքս են զեն.
մարդեղութ̄ բանին՝ գերեալք փրկեցան.
աստուածոյ նը հոգւոյն նըման նորոգման.
անեղ և անըրաւ կենդք աննախանձան.
Արդ դու թէ հաւատաս 'ի նա՛ այպէսցիս.
միրաութեան շնորհաց արժանաւորիս.
'ի փորձութէց մեղաց կամաւ զերծանիս.
անապրանելի կենաց միշտ մխիթարիս.
Քանզի փառք Տեառն այս աննկարան է.
և թագաւորութիւն քո քեզ տնալոյ չէ՛.
այսօր դու փայլեսս՝ վաղիւըն այլոց է.
անշէջ հուր գեհեննին՝ ձեզ պատրաստեալ է.
Եթէ լռօղ լինիս այլ աւակ ա սեմ.
զոչինչ կեանքս աշխարհիս քեզ օրինակեմ.
եթէ ունկն դընես զոր ծանուցա նեմ.
կամիմ զի 'ի մեղաց ըղքեզ ազատեմ.

Ձայն Չորրորդ. Ը

Մարդ մի փախուցեալ էր 'ի մի եղջերէ.
գնացեալ 'ի խոր վիրապ մի նա հասանէ.


'ի

՚ի մէջ դըրին վիշապ մի մեծ տեսանէ ·
և հուր ՚ի բերանոյ նորա բորբոքէ ·
Իսկ ՚ի բերան հըրոյն գծաւ մի տեսանէր ·
գձեռըն ձըգեալ ոտիւք ՚ի նա հաստատէր ·
երկու մկունք մինն սև՝ մինն սպիտակ էր ·
հատանէին զծիւղն որ ըմբռնեալ էր ·
Չորս օձք ներքոյ ոտից նորա փորէին ·
կամէին ընկենուլ զմարդն այն ՚ի գըբին ·
իսկ ՚ի ձըղէն այնմիկ՝ յոր մկունքն էին ·
սակաւ ինչ քաղցրութե՜ մեղըր ծորէին ·
Իսկ նա մըտօք մոլար և յիմարեալ էր ·
որ զահ մեղքերուին այն մոռացեալ էր ·
զդըրոյն և զվիշապին որ հուր բորբոքէր ·
անկմանն հայեր մարդոյն որ զնա կըլանէր ·
Օձիցն որք ՚ի ներքոյ ոտից նորին կայր ·
զմկանցն որք կարէին զծիւղն յոր յեցեալ
կայր · զորոգայթս ամ՟ մարդն այն մոռա-
նայր · և ՚ի դեմըս ձըղին զբերանըն բանայր ·
Մեղքերուն մահու օրինակեալ է ·
վիշապն ահագնագոչ՝ ձայն դըժոխոցն է ·
վիրապըն խորագոյն՝ գերեզմանիկըն է ·
չորս իժքն ոտից ներքոյ՝ այն տարերցս է ·
Մկունք սեաւ և սպիտակ՝ տիւ և գիշերն է ·
զայս ամ՟ մարդկան՝ ազգ մոռացեալ է ·
իսկ քաղցրութե՜ մեղերն՝ ոչինչ կենցաղս է ·
որ պատրանօք չարին կորուսանող է ·
Լուաւ զայն յովասափ և յոգւոց եհան ·



և

և 'ի կռապաշտութեանցն եղև փոշիման ·
ասաց ճգնաւորին մը հայր պատուական ·
ուսո ինձ զայլ խրատ ոգւոյս փրկութե ·
Քանզի լուսաւորիչ դու ինձ յայտնեցար ·
հանելով 'ի բանտէ զհոգիս իմ խաւար ·
որդ մրջիւն ունիս դու սանդին ճօհար ·
և ես կամիմ ստանալ՝ հոգւովս իմ յօժար ·

## Առակ Հինգերորդ · Ե

Առակ մի այլ ասաց նա յոլովսա փին ·
Թէ երեք սիրելիք մարդոյ մի կային ·
զերկուքըն մեծարէր խիստ յօժարագին ·
և զմինն ոչ մեծարէր հաւասար նոցին ·
Յաղքատութի անկաւ այրն այն մեծատուն ·
կոչեաց ըզբարեկամս զերկուսին սիրուն ·
խնդրեաց 'ի նոցանէ ինչս 'ի յօգնութի ·
ասաց թէ պարտք ունիմ բազում և անհուն ·
Ասաց թէ զիս կոչէ արքայն 'ի յատեան ·
և ես ընդ քանքարոյ եղէ պարտական ·
յիշեցէք զառաջին զութըն սիրական ·
լերուք ինձ կարեկիցք յորս այս նեղուե ·
Իսկ մինն ասէ յինէն քեզ ճարակ չկայ ·
բայց թէ երկու կտաւ տամ առ և գնա ·
երկրորդն ասէ թէ գամ ընդ քեզ առ արքայ ·
բայց խօսիլ ոչ կարեմ առաջի նորա ·
Ամն նա յուսահատեալ յերկուց սիրելեացն ·
առ երրորդն գնաց սրտիւ դառնագին ·



բայց

բայց ոչ կարէր հայել յերեսս յամօթոյն ։
զի սէր չունէր ընդ նա կատարելագոյն ։
Ապա նա կոչեաց սիրով առ ինքն և խօսի ։
ասէ մի՛ երկնչիր իմ քաջ սիրելի ։
ես քո փոխան խօսիմ ՚ի գուսան արքայի ։
աղաչեմ ՚ի պալատուց քոյ ամի ։
Յորժամ լուաւ զառակս որդի արքային ։
աղաչեաց զբարղամ մեկնել զայն նորին ։
և նա սկսաւ ասել զայն յովասափին ։
և ունկնդիր լինէր յովասափ բանին ։
Ասաց թէ սիրելի մարդոյն մին ինչքն են ։
և երկրորդ ազգականքն և բարեկամքն են ։
յորժամ ՚ի յոր մահու մարդըն հասանէ ։
ոչ ազգն է օգնական՝ ոչ ինչքն փրկէ ։
Իսկ թէ գործըս բարիս յաշխարհ ունիցի ։
երրորդն այն սիրելին է զոր ասացի ։
լինի իւրն ապաւէն յատեանն յիսուսի ։
և ազատէ յանշէջ հրոյն գեհենի ։
Լուեալ զայն յովասափ յոյժ ուրախացաւ ։
և բոլորով սրտիւ յաստուած յուսացաւ ։
՚ի խօսան բարղամու փառաւորեցաւ ։
զունայնութի կենցաղս աւերակ իմացաւ ։

## Առակ Վեցերորդ ։ Զ

Առակ մի այլ բարղամ ճգնաւորն ասէ ։
այր մի ունէր որդի սիրուն ՚ի սրտէ ։
կամեցաւ կին առնուլ ՚ի մեծատանէ ։


այլ

այլ նա գնացեալ յօտար երկիր հասանէ .
Նստեալ անդ կայ աղջիկ մի ալևորի .
Ճարտար ոք անարատ և իմաստուք լի .
եկեալ իւր հօրն ասէ թէ այն ինձ վայլի .
Եւ նա գնացեալ էառ զնա իւր զաւակին .
Յորժամ որ հարսանեաց աւուրքն լցան .
կոչեաց ալևորն այն ըզփեսայն ՚ի տան .
ասաց աչաց իմ լոյս որդի պատուական .
խոհեմ և իմաստուն և յոյժ սիրական .
Որդի որ յաղքատութիւնս իմ հաւանեցար .
և ՚ի կուսան դստերիկն իմ դու հաճեցար .
զփարթամութիւն հօր քո փութով մոռացար .
կամիմ զքեզ խրատել իմ սրտովս յօժար .
Լուեա նմա զինուիա ակն մի պատուական .
որ էր քան լուսեր չափով ծանրութեն .
վաճառեաց և հասաւ նա փարթամութեն .
եօթնպատիկ քան զհայրն ՚ի հարստութեն .
Իսկ յոլասափ ասաց թէ զայդ ինձ մեկնէ .
քանզի ուրախացայ ՚ի քոյին բանէ .
զի այլ որ առաքեաց զքեզ յանապատէ .
նոյն իրքն անձառ կենօք զքեզ փառաւորէ .
Ասաց՝ երիտասարդ մանուկն դու ես .
աղքատ ծեր ալևորն՝ ես որ պատմեմ քեզ .
և դուստրն գեղեցիկ՝ զոր ասացի քեզ .
այն վարքն է սրբուն՝ յոր հրաւիրեմ զքեզ .
Իսկ ակն մեծագին արքայութիւնն է .
ուր անպատումբարիք անդ ամբարեալ է .
և

և այն որ ծանրութեամբն քան լեառն է ·
զյաւիտենից ըղձեանըն նըշանակէ ·
Թէ դու քարոզութեանս իմոյ լուիցես ·
և զճշմարիտն աստուած հոգւով ճանաչես ·
Ի չար գործոց մաքուր ըզքեզ պահեսցես ·
և զվերջին օր մահուն քո միշտ յիշեսցես ·
Յայնժամ ստանաս աստէն բազում մեծութի̅ ·
քան զհայր քո առաւել թագաւորութի̅ ·
յետոյ ժառանգեսցես զանանց մեծութի̅ն ·
և հասանիս յերկնից թագաւորութի̅ն ·
Լուաւ զայն յովասափ և ուրախացաւ ·
հոգւով այլ և մարմնով բերկրե̅լ ցնծացաւ ·
Ի տեառնէ աստուծոյ նա յոյժ գոհացաւ ·
զի այնպիսի բժիշկ նըմա յայտնեցաւ ·
Ասաց նա բարղամու սուրբ ճգնաւորին ·
եթէ ո՞րքան տարւոյ են աւուրք քոյին ·
քառասուն և հինգ ամաց եմ ասէ նմին ·
զարմացաւ ընդ բանին որդի արքային ·
Ասաց թէ ծերացեալ՝ ալեօք պսակեալ ես ·
որ ութսուն տարեկան՝ այլ աւելի ես ·
որդ քառասուն և հինգ տարւոյ ասես զքեզ ·
զիա՞րդ այսու բանիւ զիս հաւան առնես ·
Ասաց՝ եօթանասուն ի ծննդենէ եմ ·
այլ զոր յե̅ կացի զայն ոչ համարեմ ·
բայց քառասուն և հինգ որ յանապատն եմ ·
իսկ որ յառաջ քան զայն ոչինչ համարեմ ·
Քանզի որ յաշխարհի՝ մեղօք ցնորի ·
մեռ

մեռեալ է նա հոգւով և չէ կենդանի ։
նորա կեանքն ՚ի մարդոյ համար չանկանի ։
այլ անբան անասուն և մեղաց գերի ։
Քառասուն և հինգ ամ յանապատի եմ ։
յընթերցմանէ գրոց ես դադարեալ չեմ ։
՚ի քաղց և ՚ի ծարաւ զմարմինս ճնշել եմ ։
և թողութիւն մեղաց յոյժ հայցեմ ։
Եհարց յանապատին դուք ինչ կերակրիք ։
ասաց՝ զայն որ ուտեն անբան վայրենիք ։
դալար խոտ բանջարոյ է մեզ ուտելի ։
և ՚ի ցօղոյ երկնից լինի ըմպելի ։
Ասաց՝ ագանելի մարմնոյ ձեր զինչ է ։
ասաց թէ մաշկեղէն և մազեղէն է ։
յամառ ու ՚ի ձմեռըն մեր հանդերձ է ։
միայն որ զմերկութիւն մարմնոյ ծածկեսցէ ։
Քանզի որք կամեցին անտառն ծառայել ։
պարտին զանդամս մարմնոյ՝ յերկրի սպանանել ։
բազում ազգի ազգի վշտաց համբերել ։
ապա վերինն երկրի ժառանգորդ լինել ։
Ասաց թէ քո հանդերձըն մազեղէն է ։
ապա զայդ որ զգեցեալ ես այդ ուստի՞ է ։
ասաց թէ զայս առեալ եմ յայս քաղաքէ ։
զի զգալս իմ որ առ քեզ ո՛չ ոք իմասցէ ։
Քանզի յանապատէն յորժամ ես ելայ ։
զայս մեծաման հանդերձս առի և ագայ ։
ապա ՚ի դուռն եկեալ հրաման ընկալայ ։
և այս կերպարանաւս յապարանս մտայ ։
Ասա

Բայց ասէ առ նա որդին արքայ ին ․
Թէ հան զիս 'ի բանտէս այս խաւարային ․
և տար 'ի յանապատ աղօթից քոյ ին ․
մի թէ ազատիցիմ 'ի հրոյ գեհենին ․
Պատասխանել բարդամ որդւոյ արքային ․
զքեզ ոչ կարեմ տանել 'ի յանապատին ․
այլ դիր ականջ բանիս իմոյ առակին ․
կամիմ տալ օրինակ գալըստեան քոյին ։

## Առակ Եղնորդւոյ ։ ԺԱ.

Որսորդ մի ըմբռնեալ էր ձագ մի եղին ․
բերեալ սովորեցոյց 'ի մէջ մարդկային ․
յետոյ գնացեալ եհաս յերէոց միջին ․
ըղձեաց նորա մօրին զայլոյն ըմբռնեցին ։
Այնպէս թէ զքեզ տանիմ` քո հայրն իմանայ ․
և թէ ընդ որ երթամ զանեղին գիտենայ ․
զեղբարսն իմ զամ` սորայ իւր կեր տայ ․
և զքեզ անդ ոչ թողուն` բերեն առ արքայ ։
Այլ զինչ խրատ տամ քեզ` պահեա 'ի սրտի ․
և մեկնութիւն յանուն որդւոյն միածնի ․
եւ յանձն առնեմ զքեզ փրկչին յիսուսի ․
Նոյն ինքն առաջնորդէ' քեզ զինչ և կամի ։
Այս ակն ունիմ յամ հայրն ամենակալ ․
և 'ի յաստուած որդին 'ի հօրէ ծնեալ ․
որ զքեզ ուղեորէ փութով առ իս գալ ․
և յայնժամ 'ի միմեանց այլ ոչ հեռանալ ։
Հովասափ բարդամու զայս բան հարցանէ ․



Թէ

Թէ ո՛ր հայր հոգևոր զայս ինձ հրամայեաց .
Թէ մարդ որ մկրտի՝ կրկին մեղանչէ .
Նա զթողութիւն մեղաց ո՞րպէս գտանէ .
Ասաց Թէ բարերար տէրն ողորմած է .
որ 'ի մեղաւորաց ըզդարձըն խնդրէ .
քանզի որ առ ա՜ծ սրտով դիմեալ է .
Նա զառաջին յանցանս նո՜ր ոչ յիշէ .
Որչափ որ գըլորի մարդըն թող կանգնի .
որքան որ մեղանչէ՝ նա խոստովանի .
գըթած և մարդասէրն ա՜ծ ընդունի .
արքայութեան առնէ ըզնա արժանի .
Յաւետարանըն ոչ՝ նա մեզ խոստանայ .
Թէ ով որ գայ առ իս՝ անտես չառնեմ զնա .
քանզի առանց մեղաց յերկրի մարդ ոչ կայ .
այլ անդարձըն դիւաց նըման լինենայ .
Քանզի եսայիաս մարգարէն ասէ .
Թէ զանօրէնութիւն քո լեզուաւ յայտնէ՛ .
յայնժամ արդարանաս շնորհօք 'ի տ՜նէ .
և յաստուծոյ քեզ մեծ պարգև իջանէ .
Դաւիթ ասէ պատմեմ ինձէն զմեղս իմ .
դու զամբարշտութիւն մեղաց թողուս զիմ .
Մարգարէիւն ասէ՝ ըզդարձըն կամիմ .
այն որ յերկնից իջաւ բըժիշկ և հաքիմ .
Օ է մեղաւորըն յորժամ դառնայ 'ի մեղաց .
խոստովանի զըղջալով չարիս յանցանաց .
գըթած հայրըն երկնաւոր մաքրէ՛ 'ի մեղաց .
այն որ անառակի որդւոյն դէմ գնաց .



Քան

Բանզի ողորմութե՜ տեառն անսպառ է ․
որ ամենայն մարդոյ ըղձաբաձն խնդրէ ․
իսկ որ անզեղջ մնայ ոչ ապաշխարէ ․
անշէջ հուր գեհենոյն նմա պատրաստ է ․
Յովասափ բարղամու դարձեալ զայս ասէ ․
յորժամ կամիս գըտնալ դու զիս մեղաւ՛ ․
և առ ոսկի ւարծաթ՝ որչափ քեզ պէտք է ․
և տար 'ի յանապատն ուր կրօնաւորքն է ․
Յայնժամ յովասափու ասաց բարղամ․
թէ ոսկւոյ ւարծաթոյ քոյ ոչ ցանկամ․
և զի ես քան զքեզ այլ խիստ եմ փարթամ․
անցաւոր փառաց քոց ոչ կարօտանամ․
Բանզի զայդ մեծութիւդ որ դու վայելես ․
վաղւեան այլոց թողուս 'ի հող մտանես ․
դու ոսկւոյ ւարծաթոյ ծառայ եղեալ ես ․
ոչ զայդը անպիտան զայն համարիմ ես ․
Մն այն ես քան զքեզ այլ մեծատուն եմ․
փառաց և մեծութե՜ ես ցանկացող չեմ․
յանանց կենքն անվախճանին գանձ ժողովել եմ․
յընչից մարմնականաց զիս ազատել եմ․
Նու թէպէտ յաշխարհի չքնչինք աղքատ ․
այլ ակն ունիմք անանց բարեացն յորդառատ․
յուսով և հաւատով՝ սիրով անպարտ ․
ծառայ եմք աստուծոյ 'ի մեղաց ազատ ․
Բայց թէ յընչիցդ առեալ յանձին տանիմ․
խռովութի արկանեմ մէջ ընկերացն իմ․
յայնժամ մեղաց պատճառ ես նոցա լինիմ․
և աղօթից նոցա խափանիչ լինիմ․

Քանզի երկուց տերանց՝ մարդ ոչ ծա-
ռայէ. զի թէ զմինն սիրէ միւսն ատելի է.
զի որ մամոնայի ծառայ եղեալ է. նա յոյժ
սիրոյն զինքըն զրկեալ է.
Արդ դու թէ կամենաս ընդ քեզ միարեմ.
'ի յառաջին մեղաց կրուոցն ազատեմ.
որդի հօր աստուծոյ՝ շնորհօք զարդարեմ.
ժառանգակից բանին իմ տանեմ.

Ա. Վերտառեն յուղարկաւոր. ՃԽԱ

Յայնժամ հրաժարեցայց 'ի սատանայէ.
զերրորդութիւնն իմ՝ դաւանել ասէ.
'ի մահըն քրիստոսի ընդ նմա մկրտէ.
շնորհք հոգւոյն սբյ 'ի նմ իջանէ.
Հաղորդեցայց զնա մարմնոյ կենսատուին.
ուստի պահել նմա զբան պատուիրանին.
ասաց ընդ ուշանալ կամաց արարչին.
և ինքն եկեալ գընաց 'ի տեղ առանձին.
Իսկ մի 'ի ծառայից որդւոյ արքային.
որ զարդ անուն նորա վերակոչեին.
խմացաւ ընդ առուստ առ նա բարձանին.
և զքրիստոնեայ լինելըն յուղասափին.
Ասեալ առ յուղասափ զարդն այն և ասէ.
թէ մի քո գործոյդ՝ աչ զիս պատեալ է.
ընդէ՞ր այն ծերունին առ քեզ մտանէ.
գիտեմ որ քրիստոնեայ զքեզ արարեալ է.
Սա հայրն 'ի յայսմ երկրէ զնա հալածեաց.

զքրիստոնէից անուանն յաշխարհէ ջնջեաց․
և զքեզ վասն այնորիկ ՚ի տուն արգելեաց․
զի մի՛ լուիցես զբանն նորին օրինաց․
Եթէ զխորհուրդս զայս հայր քո իմանայ․
որ մուտ և ել ունի առ քեզ քրիստոնեայ․
փութով զամենեան զմեզ սպանանել տայ․
որք ոչ զգործըս քո յայտնեցաք նորա․
Պատասխանեալ նըմա որդի արքային․
եթէ յորժամ գայցէ առ իս ծերունին․
դու ծածկատես կացցես դեմ վարագուրին․
ունկնդիր և լուր ըզխըրատ նորին․
Մաղեան եկեալ առ նա ծեր ճգնաւորին․
յայնժամ խօսի ընդ նա որդի արքային․
ասէ ո՛ր հայր կարօտ եմ բանից քոյին․
դարձեալ զիս խրատեա՛ կամօք արարչին․
Յովասափու Բարղամ զայս դարձեալ ասէ․
թէ զոր քեզ ուսուցի՝ դու ՚ի միտ պահէ․
յաղտեղութեանց մեղաց զհոգիդ որոշէ․
՚ի սէրըն քրիստոսի ըզքեզ բևեռէ՛․
Ադամ որ ոչ պահեաց զպատուէր արարչին․
մերկացաւ ՚ի լուսոյն ճաշակմամբ պտղոյն․
մինչ բանն ա՛ծ մարմնով ազատեաց զնոսին․
զադամ ընդ եւայի և զծնունդըս նոցին․
Եւ այլ բազում բանիւ խրատեաց ըզնա․
և զարդըն ունկն դընէր բանիցըն նորա․
իմացաւ ըզճշմարիտ հաւատալ նորա․
բայց ոչ ետ հաւատալ նմա սատանայ․



Ապա

Ապա եկեալ ասէ որդւոյ արքայ ին·
զարդն այն որ ծառայեր նա յովասափին·
զայս ոչ կարեմ ծածկել ՚ի հօրէ քոյին·
զոր դու հաւանեցար խաբէբայ ծերին·
Յովասափ ծառային պատասխանի տայ·
թէ ճշմարիտ եղեալ եմ ես քրիստոնեայ·
եթէ հայրն իմ արքայ զիս սպանանել տայ·
իմ սէրս ՚ի քրիստոսէ այլ ոչ հեռանայ·
Սան այն ընդ քեզ բերի որ դու լսէիր·
մի թէ բարի խրատուն այն հաւանէիր·
և դու ոչ ընկալար զլոյսն աստուածիր·
ոգիդ մնաց խաւարեալ՝ ունայն և նանիր·

Ա. Գնալըն Բարլաամու յանապատ։ ՃԿԴ

Եկեալ առ յովասափ ճգնաւորն ընտրեալ·
ասէ թէ քրիստոսի ես դու զինուորեալ·
զհաւատս յաւազանէն որ քեզ աւանդեալ·
որդեակ իմ ՟Ի՟ հոգւոյդ պինդ հաստատուն կալ·
Ես յանձն առնեմ ընդ քեզ որդւոյն միածնի·
այնմ որ նախախնամիչ է ամենայն նի·
խաղաղութեամբ կացիր ՚ի քոյդ պալատի·
գնամ ես առ ընկերսն իմ յանապատի·
Յովասափ բարլաամու զայս դարձեալ ասէ·
՚ի քէն խնդիրք ունիմ դու ինձ կատարէ՛·
զկերկնոցդ և զմաշկեղէնդ հայր ինձ պարգեւէ՛·
որ առ իս յիշատակ ՚ի քէն մնասցէ·
Նա հան ընդմաշկեղէնն և զկերկնոցըն յանձնէն·


առ

առեալ զայն յովասափ 'ի ճգնաւորէն .
և զգեցաւ 'ի մարմնի՝ դէմ բանսարկուին զէն .
որպէս ընդմաշկեակն սուրբ 'ի յեղիայէն .
Նա լալով ընդփեշանըս համբուրէ ցին .
ելեալ բարբառ գնաց յիւր անապատ տին .
Հանապազ աղօթէր վասն յովասա փին .
մի թէ ազատեսցի յախտից մարմնոյին :

## Մ՟ յոյանէըս զորս ծառայքն՝ վրէժխնդրաց ընծէին յովասափու : Ծ․Դ

Իսկ յովասափ 'ի տան իւրում աղօթէր .
և զօրդ ծոյն յահէն հիւանդ անկանէր .
եհարց զնա թագաւորն և տալ չկարէր .
յետոյ 'ի յերկիւղէն զճշմարիտն ասէր :
Նաոյ թէ խնդրէր տէր իմ և արքայ .
որ յովասափ մանուկն եղև քրիստոնեայ .
քանզի յանապատէն ծերմ եկեալ առ նա .
քարոզելով նըմա մոլորեցուց զնա .
Յայնժամ լուաւ արքայն և յոյժ տրտմեցաւ .
որպէս ըղկատողի չար գազան դարձաւ .
կոչեաց ընդծածուկ զընոսա հարցաւ .
թէ զի՞նչ առնէ մանկինն որ զկուռսն ուրացաւ :
Իսկ ոմն որ առաջին անուն կոչէ ին .
որ էր աստեղաբաշխ երկնից կամար ին .
ետես յոյժ դառնացեալ զերեսս արքային .
ասաց թէ մի՛ տրտմիր վասն յովասափին :
Նորդ ընդմոլորեցուցիչ ծերին ես ընձանեմ.

և ՚ի յարեան մահու զնա կոչուցանեմ ·
չարաչար տանջանօք զնա վիրաւորեմ ·
զՅովսափ ՚ի նմանէ փութով բաժանեմ ։
Օ ճանճրէ՞ք քաղաքին զայն ըմբռնեցին ·
բազում զօրօք ելեալ զԲարղամ խնդրեցին ·
գնացեալ ՚ի յանապատ զնա որոնէին ·
յոլով աշխատեցան զԲարղամ ոչ գտին ։
Իսկ ՚ի կրօնաւորացն որք յանապատին ·
բազումք յահէ նոցին ըզփախուստ տային ·
զտասն և ութ ըմբռնեալ և ՚ի հետ բերին ·
որպէս զանմեղ գառինս նահատակեցին ։

Վ՟ Նաքովրայ կախարդին ։ ՃԽԸ

Իսկ կայր ՚ի քաղաքին Նաքովր անուն մի ·
եր չար և խաբեբայ կախարդութե՟ լի ·
եկեալ անդ առաջիս և ընդ նա խորհի ·
խաբել ըզՅովսափ մանուկըն բարի ։
Նըստեալ գընաց ծածուկ ՚ի յանապատին ·
Նաքովր անուն կախարդ կամարար չարին ·
կերպարանեալ կամաւ յանուն Բարղամին ·
բանիւ առաջինին և թագաւորին ։
Գընացեալ յետոյ զօրօք ըզնա ըմբռնեն ·
բերեալ ՚ի քաղաքին ՚ի բանտ արգելեն ·
կամաւ հրապարակին յայտնի համբաւեն ·
թէ զծերունին Բարղամ առեալ բերեալ են ։
Գընաց առ Յովսափ արքայն աւետէր ·
ասաց թէ այս զ՞ինչ է զոր դու գործեցեր ·

Ի յաստուծոյ մերոյ զմեզ բաժանեցեր.
զքրիստոնէից աղանդ կամաւ յանձնդ առեր.
Նախատինս արարեր զմեզ ազգի մարդկան.
և կուռքն հաւրդ՝ մեզ յոյժ բարկանան.
խուլին վիրաւորին՝ փախչին և գնան.
այլ ո՞ր ած լինի երկրիս պաշտպան.
Լաւ եր չէիր ծընել յերկրի մեզ զաւակ.
զի ծնար և արարեր ըզմեզ խայտառակ.
ատելի չաստուածոցն եղեր և ներհակ.
և օրինաց մերոց յայտնի հակառակ.
Որդ ես ըզվարդապետըն քո կապեալ եմ.
Ի բանտ և ի զընդան զնա արգելեալ եմ.
վաղիւն ի յատենի զնա կացուցանեմ.
զխաբէութի նորա քեզ ծանուցանեմ.
Յովասափ պատասխան առնէ արքային.
ասէ մի՛ բարկանար հայր իմ զայրագին.
քանզի կամաւ թողի զխաւարըն ներքին.
և ըզգեցայ ըզլոյս փառացըն վերին.
Քանզի զկուռսն որ պաշտէք՝ շինուածք են
ձեռքին. և արարածք մարդկն՝ ած ոչ լինին.
այլ նա որ ըստեղծեաց զերկիր և զերկին.
աստուած է համայնից՝ երրեակ է և մին.
Որդ ես ի հայր ած հաւատացեալ եմ.
որդւոյ և սբ հոգւոյն երկրպագեալ եմ.
Ի բանն ած յիսուս՝ ես յուսացեալ եմ
որ և զքեզ քրիստոնեայ՝ յետոյ առնիցեմ.
Իսկ աբենէր արքայն բարկութե լըցեալ
եղեալ

ելեալ յայժմ դառնութեամբ և՛ի տուն գնացեալ․
այլ յոլովակի մանուկն 'ի տրտմութեան լեալ․
գիտաց թէ վարդապետն իւր էր ըմբռնեալ։

Սաւն շարադրեալս հրեշտակին ձերբալ փեղկերս
շղթայից՝ մինչեւդրոն Նաւակերս չախակերտին․

Ժ․Օ․

Գիշերն 'ի յերազի՝ հրեշտակըն յայտնէ․
որդւոյ թագաւորին զայս ծանուցանէ․
թէ այն որ 'ի բանտին՝ բարբարոս չէ․
այլ կախարդն է Նաւքովը՝ որ խաբեբայն է։
Սողեան ըղձեղ կամին կոչել յառենի․
Նաւքովը 'ի բարդամնաւ կերպարան լինի․
բերեն զխմստաւթրն 'ի յայն հանդիսի․
և զքեզ կամին խաբել ձեռամբ Նաւքովըի։
Օրթեաւ 'ի յերազոյն մանուկըն բարի․
և գոհացաւ զանաւանէ որդւոյն միածնի․
որ յայտնեց ըղդաղանիս ձեռամբ հրեշտկի
զի որդի արքային ոչ մոլորեցի․
Թագաւորն ասէնէր ժողով արարեալ․
զառաւեղագէտս ամէն 'ի մի հաւաքեալ․
Նաւքովը 'ի բարդամնա կերպըն փոխարկեալ․
բերին զնա յառենի և հարցափորձեալ։
Մանուկըն յոլովակի անդէն ժամանէ․
տեսեալ անդ ըղկախարդն՝ խոկոյն ճանաչէ․
բայց ոչ ասաց նոցա՝ վարդապետն իմ չէ՛․
մինչև բանիւ նորա ըղնա որսացէ։



Փի

փիլիսոփայիցն ասաց արենէր արքայն ·
եթէ կարէք յաղթել ղալեոր ծերն այն ·
առնուք յինէն պարգևս և ըզանձ պատուին ·
ապա թէ ոչ եհաս՝ ձեր օրըն մահուան ·
Իսկ յովասափ ասաց սուտ բարբաղմին ·
Թէ դու ինձ ուսուցեր զօրէնս քոյին ·
ցուցեր զիս ատելի իմ հօրն արքային ·
որոշեցեր ՚ի կաւոց խրատով քո բանին ·
Արդ եթէ ճշմարիտ է զոր ասա ցեր ·
այսօր փիլիսոփայիցըս դու յաղթե ցեր ·
նա ՚ի հօրէս խնդէ կասկած մի՛ կըլ բեր ·
յայտնի օրինաց քոց՝ դու քարոզօղ լեր ·
Ու թէ խաբէութե դու զիս պատրեցեր ·
և սուտ և անիրաւ օրէնս ուսուցեր ·
նա քո կենդանութեդ վճար դու եղեր ·
՚ի քո մըսեդ կըտրեմ և տամ քեզ ՚ի կեր ·
Անդամ անդամ զմարմինըդ քո կտորեմ ·
և շանց և գազանաց ըզքեզ արկանեմ ·
ամէն մարդոյ խրատ ըզքեզ ցուցանեմ ·
այսօր զսուտն և զիրաւըն քո ես յայտնեմ ·
Յայնժամ որ նախ դիւաց նա ընտրեալն էր ·
շնորհացն աստուծոյն ընդունակ լինէր ·
որդւոյ թագաւորի յերկիւղէն ասէր ·
և սուտըն բարբաղամ զճշմարիտն ասէր ·

Ս ̃ն փարդաշէլոց ասաց բարբաղամին, որ էր նաքովր
ըստ անձն ճշմարտին Յ՟ի, զոր հոգին ո՟չ ցուցանէր
այն խաբեբայրին. ԾԼ.

Ասաց ոմըն նըման՝ թէ դու բարբաղամ ես ·

որ սուտ և խաբեբայ օրէնս քարոզես •
սաստ ճշմարտութեն վարդապետ եմ ես •
որ որդւոյ արքայի օրէնս ցուցի ես ։
Յայնժամ Հոգւոյ շնորհօքն՝ լցեալ կերպին •
զոր Տեառըն օրինաց հակառակ բերին •
որպէս յայնժամ Բարղամ դէմ խօսայիլըն •
անէծքըն 'ի յօրհնութի փոխարկեալ լինին ։
Խօսեալ ընդ արքային բանիւ և ասէ •
այն որ ծածուկ Նաքովրն՝ յայտնի Բարղամ է •
Թէ կուռքըն զոր պաշտեք այն ձեզ վնաս է •
զի ընտակարան գիւտոյ պատկեր կանգնեալ է ։
Ամենք որք զլուսաւորս ածս ասա ցին •
նոքա մոլորեցան և ոչ գիտա ցին •
զի փոփոխին տեղեաւ և ոչ դադա րին •
հրամանաւ անփոփոխ կամօք արար չին ։
Իսկ որք զչորս տարերս՝ ածս անուանեն •
նոքա յիմարեցեալ մոլար մտօք են •
զի որք միմեանց ներհակ և հակառակք են •
նոքա ածութեան անուն ոչ կրեն ։
Օ եգիպտացւոց ածսն և զբաբիլոնին •
զհելլենացւոցն և զորս 'ի կարգի նոցին •
որք մարդոյ կերպարան շինեալ պաշտեցին •
և որք իգականի աստուած ասացին ։
Խողումք ասել և զայլսն որք չէին յիշելոյ •
զգազանս և զանասունս յօդոյ և 'ի ջրոյ •
զարփիս զմուկն և զկատու և զայլսն 'ի գետնոյ •
զծառ զտունկ և զբոյս՝ զսոխ և խստորոյ ։

Մարդ՝

Արդ՝ այս է զոր երկրի Ած տա ցին.
և զճշմարիտն Ած մոռացեալ թո ղին.
զարարածս՝ արարչին փոխան պաշտեցին.
գարշելեաց և ամօթոյ երկրպագեցին:
Այլ որ ամենայնի աստուածն է՝ մի է.
անձնամբ է երրակի՝ անուամբ երեք է.
բնութե̃ իշխանութե̃ զօրութե̃ մի է.
կեանք և կենդանարար և նորոգօղ է:
Հայր է ծընող բանին՝ հոգւոյն բղխումն է.
անեղ անժամանակ և անսահման է.
անտես անքննելի և անզըննելին է.
անչափ և անքանակ՝ անըմմանակ է:
Անդիտելի է հայր՝ որդին զնա գիտէ.
գիտէ որդին զհայր՝ հոգին քննիչ է.
ստեղծօղ կեցուցանօղ պարգևատու է.
գթած և մարդասէր նախախնամօղ է:
Կամեցօղ է բարեաց՝ կամակատար է.
Լոյս է միշտ համափիւռ և լուսատու է.
աղբիւր յորդախաղաց արբուցանօղ է.
և գետ լայնատարած ծով խորագոյն է:
Էր միշտ յաւիտենից՝ է և եղի ցի.
էիցս է՝ անպարփակ և անիմանա լի.
էացուցիչ գոյից երկնի և երկ րի.
իմանալեաց զգալեաց՝ ծովու ցամաքի:
Նախատիպ անորակ և կերպ անձև է.
էութիւն անզուգելին և գոյ անեղը է.
խոկութե̃ է յաւէտ կեանք անվախճան է.



անուր՝

անուր՝ աներբ՝ անբաւ՝ անհաս էակ է ։
Ծընունդ է ՚ի ծոց Հօր անբաժանելի ։
ըղխումըն սուրբ Հոգւոյն անսպառելի ։
են հարթ և հաւասար անձինքն երրակի ։
ոչ մեծ ընդ կրտսերի՝ կամ՝ նախ և վերջի ։
Բանն էր որդի Է հօր նախ քան զյաւիտեն ։
որ և բոլոր էակքս նովաւ արար բան ։
Հոգին արարչակից որդւոյ Հօր նըման ։
յաւիտենից յաւէտ մշտնջենական ։
Իսկ մինն յերից անձանց՝ յերկիր խոնարհէլ ։
՚ի Հայրական ծոցոյ նա ոչ բաժանեալ ։
ծընեալ ՚ի կոյս մօրէ անձ մարդացեալ ։
որ նախ քան զյաւիտեանս անմայր էր ծնել ։
Մարմնով յերկրի շրջէր երեսուն տարի ։
եկեալ ՚ի յորդանան կամաւ մկրտ ան ։
՚ի Հօրէ վըկայեալ՝ Հոգին իջա նի ։
ապա Հրաշիւք յայտնեալ ՚ի մէջ աշխարհի ։
Ընտրեաց իւր աշակերտս երկոտասան թիւ ։
նոքօք որսաց զմարդիկ կենացըն բանիւ ։
զոր նախանձէլ ընդ նա չարին խորհրդիւ ։
՚ի խաչ բևեռեցին թիւրեալքըն որախ ։
Եդաւ ՚ի գերեզման կամաւորս կան ։
յարեաւ ՚ի մեռելոց անձն անվախ ձան ։
ելեալ մարմնով յերկինս յաթոռ Հայրանի ։
առաքեաց զսբ Հոգին՝ դասուն մետասան ։
Իսկ առաքեալքըն նոր՝ յերկիր ըսփռեցան ։
և մոլորեալքըն ՚ի կուռս առ անձ դարձան ։

չարագործաց պատժել է հուրն անվախճան .
բարեգործաց հանգիստն յաւիտենական ։
Որդ՟ ճշմարիտ ած՟՝ յիսուս քրիստոս է .
այն որ տէր կենդանեաց և մեռելոց է .
իսկ որ արարածոց երկրպագս նէ .
Նըմա անլոյս խաւարըն պատրաստել է ։

Յաւէլ ընթերցն [illegible] . Եւ նմանապէս եղեալ [illegible]՝ և գնացեալ յանապատն՝ լինի նըշ նաւոր ։ ԺԱ.

Յորժամ նաքումը ամէնդ զայս հաւատոյ բան .
փիլիսոփայքն ամէնք զամօթի հարան .
այլ ոչ կարացին տալ նըմա պատասխան .
տեսեալ զնաքումը տարաւ յովասափ 'ի տան ։
Օ ցերըս կախարդուն իւր նաքումը այրէլ .
գնացեալ 'ի յանապատ և անդ մերժեալ .
յուսով և հաւատով 'ի տէր հաստատեալ .
և մինչ 'ի յօր մահուն անդ կրօնաւորեալ ։
Դարձեալ՝ 'ի տրտմութեն աբենէր լինէր .
և միշտ և հանապազ 'ի դառնութեան էր .
քանզի որ 'ի կախարդն ապաւինեալ էր .
ետես զնա քրիստոնեայ՝ որդւոյն իւր ընկեր ։
Յայնժամ 'ի միասին զիշխանորըն կոչէ .
և դառնացեալ սրտիւ խըրատ հարցանէ .
Թէ զինչ հնարակ որդւոյն իւրոյ գտանէ .
որ 'ի կռապաշտութիւն ըղձամ արկանէ .
Կախարդ մի այլ ցուցին՝ անունըն Թեւդաս .



որ

որ ՚ի սատանայէ՛ առեալ էր շատ դաս •
և էր դիւաց գնդին մեծ ծառայ և խաս •
և զմարմինն արարեալ էր նշ̅ դարպաս •
Որ միշտ և հանապազ ՚ի յանապատ կայր •
և դիւացըն դասուց եղեալ էր դադար •
Նա մերկ և գլխիբաց և բոկ ոտամբ կայր •
և անդադար ՚ի չար ըզմարդիկ որսայր •
Ուղարկէ և կոչէ Թագաւորն ըզնա •
զբոլոր քաղաքն առեալ դէմ նր̅ երթայ •
փառօք մեծարանօք առեալ և դառնայ •
Թերևս յովասափու ճարակ գտցէ նա •
Ասաց Թեւդաս թէ ես հընար գըտանեմ •
և զյովասափ ՚ի կուռսըն դարձուցանեմ •
յաղանդոյն բարղամու ըզնա որ չեմ •
և զկամս Թագաւորիդ փութով կատարեմ •
Որդ հան նախ զմանկունսն ՚ի տանէ նր̅ •
և փոխանակ մանկնոց՝ տուր աղջկունս առ նա •
և ես ըղցանկութեան դեն յըղեմ ՚ի նա •
որ յախտ ստնըկունէ շարժեսցէ ըզնա •
Այնժամ ա̅ծն յս̅ յոր հաւատաց նա •
բարկութե̅ զայրանայ ՚ի գործըս նորա •
քանզի է մեղասէրն աւելի նա բա •
և յովասափ անդրէն ՚ի կուռսըն դառնայ •
Հրամանն ետ թ̅որն՝ ըզմանկունսն հանին •
և կոյս աղջկունս առ նա բերել կացուցին •
իսկ յովասափ լցեալ շնորհօքն յիսուսին •
ոչ ինչ կարաց յաղթել ըզնա թշնամին •



Բան

Վ՚անդի աղօթելով զաստուած աղաչէր .
զվերըն պանդխտութեան ՚ի լայց հալածէր .
քան զգեղեցիկն յովսէփ նա ողջախոհ էր .
որ ՚ի մայր և քոյր յաղջկունսն հայէր :
Յայնժամ Թեկղաս կախարդն առ յովսափ
գայ . և չարաչար բանիւ խրատէ զնա .
խոկ նա ասէ չա՛ր ծեր զդեղքանդ քո կործեա .
ասէ ՚ի քեղ յիսուս՝ ածն իմ արքայ :
Սկսաւ սուրբն յովսափ ըղձամ խրատել .
զօրէնս ածային՝ Թեկղասայ պատ մել .
՚ի յադամայ հետէ նորին քարո զել .
զանօրէնութի բանին աստուծոյ ճառել :
Հոգւոյն սրբոյ շնորհքն ՚ի նա ծագեցաւ .
զմոլորութի դիւաց փութով ուրացաւ .
քարոզութեան նորա յոյժ հաւանեցաւ .
և զայլըն նոյնժամայն զատն երևեցաւ :
Գնացեալ առ թգւորըն՝ ասաց թէ արքայ .
յորդին քո ճշմարիտ շնորհաց հոգի կայ .
արդ ես բանիւ նորա եղէ քրիստոնեայ .
զկուռսն և ըզդիւաց զաւնդըն մոռացայ :
Ո կախարդութե գըրէնս զամէնն այրեց նա .
գընաց մկրտեցաւ նըման նորով բոյ .
եղև որ ճգնաւոր՝ ընտիր քրիստոնեայ .
յիսուսի քրիստոսի ո՛յ ծառայ :

Վասն բաժանելոյ աբեներայ թագաւորին զերկիրն
իւր ընդ յովսափատու որդւոյ իւրոյ՝ և նորա [illegible]
եալ զանձն քրիստոնեայ . ԺԻ

Իսկ աբեներ չգիտէր թէ զինչ առնիցէր .

զի զորդին 'ի կամաց իւր հանել չկարէր ·
վարել յօտար ի սիրան չհանդուրժէր ·
բաժանանել ըղնա անհնարին էր ·
Այս մեծամեծօք խորհուրդ արարեալ ·
զերկիրն իւր զայն յերկուս բաժանեալ ·
զմի մասն իւր որդւոյն կամաւն իւր տուեալ ·
և յոլովսամբ գնացեալ անդ թագաւորեալ ։
Գտեալ եպիսկոպոս մի նա փախուցեալ ·
որ յահէ հօրն իւրոյ էր նա թագուցեալ ·
բերել զնա յոլովսամբ առաջնորդ կարգել ·
քաղաքին և երկրին հովիւ կացուցեալ ։
Եկեղեցիս բազում անդէն շինէցին ·
ըղկուռսն և ըղմեհեանսըն կործանէցին ·
ժամանակաց սահմանս և կանոնս եդին ·
զօրէնս քրիստոնէից անդ հաստատեցին ։
Օրըստօրէ ըզբազում անդ մկրտելով ·
և զաւանդայն 'ի նոր պայծառ հաւատով ·
զառաջին պղծութիւնսըն մերկանալով ·
և նոր բարս վարուց յանձին բերելով ։
Մենայնի պարգևս յոլովսամբ շնորհէր ·
հանդերձս պատուականս նա ագուցանէր ·
զամենեսեան 'ի նոյն հաւատս յորդորէր ·
ոսկի արծաթ և այլ ինչըս պարգևէր ։
Քաղաքական օրէնս և սահմանս եդեալ ·
զգօղս և զաւազակս յերկրէն փախուցեալ ·
շնացօղս և զմարդասպանս յոյժ զատեալ ·
խըստով ըստ օրինաց զնոսա պարապեալ ։



'Ի

Ի յամենայն տեղիս խաչն կանգնեցաւ·
անուանըն քրիստոսի փառաւորե ցաւ·
կարողութիւն դիւացըն կործանե ցաւ·
և յոյսըն հաւատոյ անդ հաստատեցաւ:
Ո՛վ որք զյովասափու ձայնըն լսէ ին·
՚ի յօտար աշխարհէ առ նա երթայ ին·
՚ի տեսութիւն նորա ուրախանայ ին·
յիմաստութե՟ն շնորհացըն զարմանային:
Իսկ արքայն աբենէր աչօք տեսանէր·
որ ժողովուրդ երկրին իւրոյ պակասէր·
և փառք իշխանութե՟ն որդւոյն յաւելէր·
և բազմութիւն զօրաց առ նա ժողովէր:
Հայնժամ ծագեց ՚ի նա շնորհքըն երկնային·
փարատեաց ըզխաւար մըտաց և սրտին·
իմացաւ զի կուռքըն այնք ընդունայնք էին·
և հաւատաց փառաց որդւոյ միածնին:

Կոչէ թագաւորն աբէնէր առ ինքն զյովասափ՝ և նա գնաց առ նա: Ի

Հաբենէր արքայէ ողջոյն իմ որդւոյն·
սիրասնունդ զաւակ՝ իմ հոգւոյս հոգւոյն·
կարօտ եմ և փափագ տեսոյդ քաղցրագոյն·
յովասափ թագաւոր ծառայ բարձրելոյն:
Իմացայ աշխարհիս ՚ի բոլոր սըր տէ·
յոր դու հաւատացեր՝ ըստոյգ ճշ է·
և կուռքըն մեր ոչ ինչ՝ դատարկ ունայն է·
և պաշտօնեայք նոցա մըտօք խաւար է:


Արդ

Որդ զառաջին չարիսն որ ես գործեցի ·
և զքրիստոնէայս բաղումն որ չարչարեցի ·
հոգիս իմ զխորհուրդ յաշէն քրիստոսի ·
վախեմ թէ զանպիտանս այլ ոչ ընդունի ·
Որդ թէ գիտես որ նա ինձ կամեցող է ·
և զառաջին խաւար գործսն իմ ոչ յիշէ ·
յայնժամ յօժար կամօք սիրտս իմ փափագի ·
և զյիսուս ճշմարիտ աստուած դաւանի ·
Կարօտ եմ և ցանկամ ըզքեզ տեսանել ·
զորդիդ իմ զանդրանիկ գրկով համբուրել ·
զօրէնս քրիստոնէից ի քէն ուսանել ·
և զճշմարիտ աստուածըն քո ճանաչել ·
Օ թուղթն առ յովասափ՝ տարան և տուին ·
կարդաց և փառըս ետ՝ անմահ արքային ·
որ հանապազ կամի զդարձ մեղաւորին ·
և ժառանգորդ առնէ փառացըն վերին ·
Ն·եալ ուրախութե՛ առ հայրըն գընաց ·
գորովագութ սիրով զարքայն ողջունեաց ·
լցեալ ուրախութե՛ ի հոգւոյն շնորհաց ·
և յովասափ սկսաւ խօսիլ յօրինաց ·
Իսկ աբէնէր արքայն՝ բարձրաձայն գոչէ ·
թէ ճշմարիտ աստուած՝ քրիստոնէիցն է ·
յո̃ քրիստոս փրկիչ ծնեալն է ի կուսէ ·
երկրպագեմ նըմա ի բոլոր սրտէ ·
Քաղաքըն հաւասար՝ ըզնոյն ասացին ·
քրիստոսի աստուծոյ ծունր կրկնեցին ·
զերրորդութիւնըն սուրբ խոստովանեցին ·

ըղձուաս և զմեծհեանսըն կործանեցին ։
Ո՜ եպիսկոպոս մի՝ յոլովաւոր ըեր եալ·
յորմէ աբեղէր՝ եղև մըրգո եալ·
հօրըն կերահայր՝ իերըն որդին եղ եալ·
նըյնըքս զայս խորհուրդ՝ և այլքն ընկալէլ ։
Քաղաքըն ամենայն անդ մեկըրաւ ցան·
ըսպիտակացդեաս լեալ նորոգե ցան·
՚ի բարութի տեառըն սիրով փութացան·
և զառաջին չարիսն իւրեանց մոռացան ։
Մ.Ա աբեղէր արքայն զյոլովաւոր կոչեաց·
զերկիրն իւր զոմ ՚ի յորդին յանձնեաց·
ամիս մի առանձին նա ապաշխար եաց·
պահօք և աղօթիւք արտասուօք ելաց·

Վ՜ն մահուան աբեղերայ արքայի՝ և բնագաւո-
րելոյ որդւոյն իւրոյ յոլովաւորին ։ ԽԱ.

Աբեղերայ մահու օրըն հասա նէր·
կոչեալ ըզյոլովաւոր և անդարձ առնէր·
զառաջին չարութի գործոյն իւր յիշէր·
և ՚ի զատաստանի տեառըն սարսէր ։
Իսկ յոլովաւոր որդին միխիթարէր զնա·
ասէ մի՛ երկնչիր հայր իմ և տէր քոյ·
զի մէլ ոք որ կամաւ առ ա՜ծ զառ նոյ·
զանցեալ գործըս մեղաց անտես առնէ նա ։
Քանզի հայր բարեգութ .և ողորմած է·
առեղծօղ նախախնամիչ և մարդասէր է·
մեղաւորաց դարձի միշտ կամեցօղ է·
անոխակալ է նա սան յիշաչար է ։

Զաւետարանն իւր սուրբ՝ քս զայս ասէ ·
թէ ի միոյ մեղաւոր որ ապաշխարէ ·
հրեշտակաց ՚ի յերկինս ուրախութիւն է ·
զի պատկեր աստուածոյ երկնաւորի է ·
Որանզի զմեղաւորին ըղձացան ջնջեաց ·
զպոռնիկն արդարացոյց և ոչ անարգեաց ·
քանանուհւոյն լուաւ զդուստրն բժշկեաց ·
աւազակին ըղձաւորին դրախտին եբաց ·
Արդ մի յուսահատիր հոգի իմ՝ թագաւոր ·
այլ երթ առ արարիչն քո երկնաւոր ·
և նա անտես չառնէ յառնեանն ահաւոր ·
այլ ողորմակաց առնէ զքեզ արժանաւոր ·
Զայնժամ հաղորդեցու մարմնոյ կենսատուին ·
և աւանդեաց զհոգին ՚ի ձեռն արարչին ·
ժողովեալ ՚ի վերայ և կոծ արա րին ·
առնել մեծաւ պատուով՝ տարեալ թաղեցին ·
Իսկ յովասափ արքայն անդէն դադարեալ ·
և եօթն օր ՚ի վերայ տապանին կացեալ ·
՚ի տիւ և ՚ի գիշեր աղօթս արար եալ ·
արտասուօք զպաղատանս առ ՚ի մատուցել ·
Պատարագս մատուցին զաւուրս քռսուն ·
բազում բաշխս արարին արքայի հոգւոյն ·
աղքատաց կերակուր և հանդերձս ետուն ·
զծառայսն ազատեցին կամօքն նորին ·

ՄԸ Թողուլն յովասափու զթագաւորութիւնն ՚ի ծառայն իւր բարաքիայ · և ինքն գնացեալ յանապատն առ բարլամ · ԻՆ

Իսկ յովասափ արքայն խորհուրդ արարեալ ·

զիշխանս և զմեծամեծս ՚ի մի ժողովել ·
բազում բանս օրինաց նոցա տացել ·
և զխառս այսմ Ձեռ կամաւ անարգել ·
Ասաց թէ ալևներ հայրն իմ փոխեցաւ ·
և փառք և մեծութիւն իւր ոչընչացաւ ·
զեղեցկուն պատույն իւր ՚ի հող դարձաւ ·
ահեղ իշխանութիւն ՚ի մէջ բարձաւ ·
Աղիւն այն օրինակ՝ ինձ կամի լինել ·
և այս փառքս և պատիւս յինէն խափանել ·
արդ ես կամաւ իմով պարտիմ զայս ձգել ·
և ՚ի բարերարս ծառայն իմ յանձնել ·
Կոչեաց զբարերարս առ ինքն և ասէ ·
թէ զինչ որ յիս տեսեր՝ ըզնոյն կատարէ ·
ամ այն բարերարս բարեաց պատճառն է ·
որ նախ յոխասափու զբարերդամ ցուցել է ·
Առեալ ըզթագն և եդ ՚ի գլուխ նորա ·
զիշխանութիւն յանձնեաց իւր կամաւն ՚ի նա ·
բարերարս նըմա պատասխանի տայ ·
թէ էր ընդադատես զիս այսօր արքայ ·
Քանզի դու որ որդի թագաւորի ես ·
և այսմ իշխանութեան արժանաւոր ես ·
կամաւ դու ՚ի զմանէ զխափանութիւն խնդրես ·
զի՞նչ զիս զծառայս քո յայս հրաւիրես ·
Յոխասափ թագաւորն ըզնա խրատէ ·
զբարերարս կամացն իւր հաւան առնէ ·
՚ի յարևելս դարձեալ՝ և աղօթս առնէ ·
զթագն ՚ի գլուխն եդել՝ արքայ հաստատէ ·

Յայնժամ քաղաքն ամէն 'ի մի ժողովեալ.
'ի յողբ և 'ի հառաչ բարձրաձայն գոչեալ.
'ի ձիչ և յաղաղակ յարտասուս հարեալ.
և վասն յոլովասափու մեծ կոծ արարեալ.
Օրհնէն 'ի յարքայէն խուրեանց ողբային.
լուսականաց բարբառ անդ արձակէին.
Թող խաւարի ամէն արև և լու   սին.
'ի բաժանիլ 'ի մէնջ մերոյ արքային.
Օ՜հ յոլովամփ արքայն՝ աչաց մեր լոյս էր.
աղբիւր յորդաբխաղաց դրախտին կենաց էր.
այգի քաղցրաճաշակ՝ ծառ անթառամ էր.
անուշահոտ վարդ՝ վարդ մանուշակ էր.
Պարիսպ ամուր էր սա յերկրիս հնդկաստան.
պատճառ բարեաց եղև քրիստոնէութե.
հարգաց եկեղեցւոյ և դաւանութեան.
արդար 'ի դատաստան՝ վճռիչ չարութե.
Այսօր արդարութի մեր խափանեցաւ.
և ջահս եկեղեցւոյ մեր փութով շիջաւ.
մեր անթառամ ծաղիկըն թարշամեցաւ.
փլաւ այգւոյ պարիսպն և խոպան դարձաւ.
Այսօր մեր թագաւորն 'ի մէնջ բաժանի.
և զմեզ անտէր թողու 'ի վերայ երկրի.
հովիւըն հոգևոր բանաւոր հօ   տի.
այսօր 'ի յոչխարաց իւրոց հեռացի.
Որդ զայս և որ սոցին նըման ասէին.
'ի յողբ և յարտասուս զարքային շարժէին.
յայնժամ նա համբուրէր սիրով զնոսին.

եղեալ գնայր՝ ինքեանք ըղձեա երթային .

### Մ՟ա վեհալոյն յաղաւթաւ ՚ի յանապատ . ԽԳ

Եղեալ յոխատանաւ յերկրէն հեռացաւ .
և լալով ժողովուրդն յիւրմէն յետ դարձաւ .
գնացեալ նա աղքատի մի հանդիպեցաւ .
Եմուտ ՚ի տուն նորա և անդ օթեցաւ .
Նաւաստուն եղեալ զհանդերձըն հանէր .
զբեհեզըն և զծիրանին՝ աղքատին շնորհէր .
և ինքն զմաղեղէն քուրձն իւր ագանէր .
զոր ՚ի վարդապետէն իւրմէ առեալ էր .
Հերկիրն երիտասացուց գնացեալ հասանի .
ամիսս երկու՝ ոտիւք քայլեալ աշխատի .
յանկարծ յանապատին ծեր մի հանդիպի .
և նա էհարց զանեղին սրբոյն քարոզմի .
Իսկ ծերըն պատուսիկան նըմա ցուցանէ .
և յոխատանաւ փութով անդըր ժամանէ .
տեսեալ ծերըն քարոզամ ըղձեա ողջունէ .
զբարբեաց պատասխանն ած նմա վասն ուրե .
Հայնժամ էհարց ըղձեա զամէնըն կերդաւ .
թէ որպէս ՚ի հօրէն իւրմէ նա զերծաւ .
կամ զիարդ զմեծութն իւր նա ուրացաւ .
և ՚ի փառաց իւրոց կամաւ հեռացաւ .
Նայց թէ քրիստոնէայ զհայրն իմ արարի .
և զաշխարհըն ամենայն յիմ դարձուցի .
լուեալ ծերըն քարոզամ զքանան յոխատանաւի .
և օրհնեաց զարարիչն երկնի և երկրի .

Հայն

Յայնժամ ելեալ երկոքեանքն աղօթեցին ․
Ճաչու ժամու զխորհուրդքն կատարեցին ․
գոհացան զաստուածոյ հոգւով ցնծացին ․
Եւ տեսութե̃ մեծանց ուրախանային ։
Կերակուր պատրաստելոց բարղամ եւ եբեր ․
ասաց ամբոյ որդի հրամայեա եւ կեր ․
զի էր բանջար արմատու եղջիւր զոր եբեր ․
Եւ աղ եւ հաց եւ այլ մրգ եւ ծառոց բեր ։
Կերեալ ուրախութեամբ զա̃ծ օրհնեցին ․
յարեան զխաղաղական զաղօթսն ասացին ․
առկաւ մի ննջելով եւ հանգիստ ա ունին ․
Յետոյ զգիշերային աղօթսն արարին ։
Դարձեալ յովասափու բարղամ զայս ասէ ․
Թէ իմ որդի մահու եկեալ հասեալ է ․
որդ դու ձեռամբ քոյին զմարմինս իմ թաղէ ․
Եւ օրհնութի̃ փրկչին ՚ի քեզ մնասցէ ։
Կանգնել մատոյց զխորհուրդ նր̃ պատարագին ․
հաղորդեցաւ եւ ետ զայն յովասափին ․
անկեալ եւ աւանդեաց առ ա̃ծ զհոգին ․
Եւ թաղեցաւ ձեռամբ իւր աշակերտին ։
Հարիւր եւ ութ ամի բարղամ ապրեցաւ ․
եօթանասուն եւ հինգ յանապատ կեցաւ ․
շնորհօքն քրիստոսի յերկրի ճգնեցաւ ․
անպատում պարգեւաց նա արժանացաւ ։

Մ [illegible] եւ [illegible] ։ ԽԴ

Յորժամ թաղեաց զնա որդի արքային ․
Ննջեալ

Ննջեալ տեսիլս եսես 'ի մէջ գիշերին ․
զի արք լուսապայծառք զարդարեալ տանէին ․
և 'ի խորանս երկնից հանգուցանէին ։
Այլ և երկուս աթոռս ոսկիս տեսանէ ․
երկու պսակ լուսոյ՝ զոր մարդ տեսանել չէ ․
եհարց թէ այս բարիքս ո՞ւմ պատրաստել է ․
ասեն թէ մինն քեզ՝ մինն հօր քո է ։
Իսկ յոլովամբ ասէր զայս տրտմնջելով ․
թէ ես բազում ամօք յերկրի ճգնելով ․
և հայր իմ մի ամիս ապաշխարե լով ․
զխորդ եղէ նորին հաւասարե լով ։
Բարդամ 'ի յերազին ըղձայ խորս աէ ․
զյոլովամփու խորհուրդըն յանդիման նէ ․
զաւակաց մշակին օրինակ բե րէ ․
յետնոցն և առաջնոց մին դահեկան է ։
Այլ յոլովամբ կացեալ 'ի յանապատին ․
երեսուն և եօթն ամ ձգամբք մեծագին ․
և մինչ եթող ըղձաւորս իւր հայրենին ․
քսան և հինգ ամօք էր աւուրք նորին ։
Վաթսուն երկու ամօք՝ հասանէ վախճանն ․
յոլովամփու մեծի ձգնաւորին այն ․
այնմ որ եթող ըղձաւս անցաւորական ․
եհաս անանց կենացն յաւիտենական ։
Եկեալ կրօնաւորաց թաղեցին ըզնա ․
յետոյ բարեպաշտաց որքոյն իմա նայ ․
գնացեալ յանապատէն հանեցին ըզնա ․
տարան և թաղեցին առ հօրն նորա ։



Բա

Բազում բժշկութիւն նորոց հասարի ·
՚ի փառս ամենազօր հօրն երկնաւո րի ·
և որդւոյն միածնի փրկչին յիսու սի ·
ամենահզօր հոգւոյն սրբոյ ճշմարտի ։
Ի թուականիս հայոց՝ որ ութ հարիւրն է ·
ութսունևերեք ՚ի նոյն յարաբերդեալ է ·
տարիք չափեցաւ այս ՚ի յառաջե լէ ·
վարդապետ կոչեցեալ՝ բաղիշեցին ։

Իգնատիոսէ արարեալ նորահնախողաց՝ ծորցին ։

Թէ գառն խաղայ՝ շահի և մեծութեն նշան է · հարկեք և բարի գանձէ · անուան եղանէ հարկած · ՚ի բարի ճանապարհ երթայ և ուրախանայ ։
Թէ գագաթն խաղայ՝ բարի է · և սիրէ յամենեցունց · մեծութեն և փառաց հանդիպի · մեծ թագաւոր տեսանէ · յիշխանաց պատիւ առնու՝ ՚ի ճանապարհ երթայ · շահի և ուրախանայ ։
Թէ ծոծրակն խաղայ՝ դերծանի ՚ի չարէ և ՚ի հոգւոց · ՚ի նեղութեն և ՚ի տանջանաց ։
Թէ աջ դիհ գլխոյն խաղայ՝ զօր առէ , սիրէ · երկար ճանապարհ երթայ · և շատ շահի և բարւոյ հանդիպի և գանձոյ բարոյ ։
Թէ

Եթէ ձախ դիհ գլխոյն խալայ՝ ի չարէ ա-
զատի. կամ որդի լինի. մեծ բարի գայ
իւր յաւագաց և յազգէ. բաղակի հան-
դիպի. շահու և մեծութեան.

Եթէ գլխոյն վերի դիհն խալայ՝ ի հոգս
անկանի. բայց պատիւ առնու.

Եթէ ամենայն գլուխն խալայ՝ բարի և շատ
իրաց հանդիպի. շատ իրք անկանի իւրն.
գաղտ իրք տեսանէ և լսէ.

Եթէ ճակատն խալայ՝ պատուի ի բազ-
մաց. և զինչ զոր ասէ՝ առնէ. և զանձ
գտանէ. դատաւորութիւն վայելէ. մեծա-
նայ յաւագէ և ի փառս հասանի.

Եթէ աջ քունքերակն խալայ՝ զինչն մեծանայ
յաւագէ. ի սգոյ վերծանի. ի հոգս ան-
կանի յաղագս կանանց՝ և մեռանի.

Եթէ ձախ քունքերակն խալայ՝ լիութեան և
խնդման հանդիպի. շնորհք առնու.
պատուոյ և մեծութեան է խորհուրդ. կամ
կռուի ընդ մարդոյ.

Եթէ աջոյ յօնքն խալայ՝ սրտահեշտութի է. և
կորուստն գտանի: Եթէ ձախն՝ լիութեան և
խնդման հանդիպի. յերկար կեանս յօր-
դորի և շահի. կամ հիւանդանալոյ նշան է:

Եթէ յօնամիջն խալայ՝ համբաւ լսէ նե-
ղութեան. անպատեհ բան առնէ զինչն.
արամբ և վիրաւորի:



Եթէ

Եթէ աջ աչաց առաջի աղբիւրն խաղայ՝ սրտնեղութիւն, սգոյ, և տրտմութիւն հանդիպի, բայց բարի գտանէ. կամ ընդ թշնամեացն կռուի, վէրք և լաց լինի։ Եթէ ձախ աչացն՝ շատ բարւոյ և առողջութիւն հանդիպի. զհեռաւորն տեսանէ և սրտնեղի.

Եթէ աջ աչաց յետի աղբիւրն խաղայ՝ շատ բարւոյ հանդիպի. զհեռաւորն տեսանէ և խնդայ. իրաց հանդիպի և վայելէ.

Եթէ ձախ աչացն՝ հարստութիւն և մեծութիւն հանդիպի. մօտենայ առ աւագ. տեսանէ զորդին և խնդայ. բարութիւն կամ իրք անկանի իւրն ՚ի նմանէ. թէ շատ և թէ սուղ իրք գտանէ.

Եթէ աջ աչաց վերին կողմն խաղայ՝ հարստութիւն և հարկիք է. մեծանայ յաւագէ. ինչ ժողովէ և ցնծութիւն կրէ. կամ արտասուէ և սրտնեղի. բայց շուտով զերծանի.

Եթէ ձախ աչացն՝ ատելութիւն և լաց է. բայց յետոյ բարի է. ուրախութիւն և խնդումն, և սրտնեղութիւն հիւր գայ։

Եթէ աջ աչաց ներքին կողմն խաղայ՝ ՚ի հեռի ճանապարհ երթայ. զհեռաւորն տեսանէ. բարի գտանէ և խնդումն։ Եթէ ձախ աչացն՝ շատ բարւոյ հանդիպի. ցանկայ և հասանի. ցնծայ և ուրախանայ. կամ ազգի ատելութիւն է. լալոյ և սգոյ հանդիպի.

Եթէ աջ պտուղն խաղայ՝ սրտնեղութիւն է.

Եթէ ձախն՝ բարի գտանէ։

Եթէ աջ ակն ամէն խաղայ՝ շատ բարուց հան-
դիպի · առողջանայ և ազատի 'ի դժուա-
րութէ · 'ի մեռելոց իւրք անկանի իւրն և ընտա-
նեաց · և հեռաւորն գայ · Եթէ ձախն՝ շատ
և առատ բարուց հանդիպի · մեծարի յա-
ւագաց · և գանձ գտանէ · հարկէք և հա-
րստութն · բայց սրտնեղի և չարանայ ·
Եթէ աջ ակն ամէն վարըն խաղայ՝ զիւր
հեռաւոր մարդն տեսանէ · Եթէ ձախն՝
հիւանդանայ , բայց ապրի ·
Եթէ աջ վերի արտեւանունքն խաղայ՝ հե-
ռաւոր մարդ գայ իւրն · տրտմի և լայ · բայց
իւր բանն ըստ կամացն լինի · Եթէ ձախն՝
հեռաւոր կարեւոր տեսանէ և խնդայ · և
առողջութի և խնդութն և բարի գտանէ ·
Եթէ աջ ներքի արտեւանունքն խաղայ՝ լայ
և սրտնեղութի է · կամ մեծ բարի գտանէ 'ի
մարդկանէ · Եթէ ձախն՝ լայ և սրտնեղութի
է · բայց իւր հեռաւորն գայ ·
Եթէ սկաւառակն խաղայ՝ 'ի մեծ մարդոց
հարկէք առնու ·
Եթէ աջ դիհ քթին խաղայ՝ ակամայ մի հի-
ւանդանայ · յառնելուն և 'ի ներքուն զերծա-
նի · կռուոյ և վէճի հանդիպի՝ որ ոչ է կա-
մեկից · բայց զօրանայ և ազատի 'ի չարեն ·
Եթէ ձախն՝ իւր անկանի՝ կամ որդի լինի իւրն ·
մարտնչի ՟Է թշնամեացն՝ բայց յաղթէ · բան



զոր

զոր ղուզէ՝ բարի գայ իւրն նոյն ․ 'ի հիւան
դութե առողջանայ՝ և սիրոյ հանդիպի ։
Թէ ամենայն քիթն խաղայ՝ 'ի մեծամե֊
ծաց շահ առնու ։
Թէ քթի ծայրն խաղայ՝ 'ի պարտուց ա֊
զատի և հարստանայ ։
Թէ աջ դիհ ծայր քթին խաղայ՝ ցաւոց
հանդիպի ։ Թէ ձախն՝ յանկարծ մարդ֊
կռուի ընդ իւրն ։
Թէ աջ քթափողն խաղայ՝ ընդ մարդոյ սէր
դնէ ։ Թէ ձախն՝ 'ի պարտուց ազատի ։
Թէ քթին ողն խաղայ՝ հարստանայ ։
Թէ երկու պինչն խաղայ՝ հարստանայ ․
բայց իւրն ընտանի մեռանի ։
Թէ աջ այտն խաղայ՝ տրտմութե հանդիպի ․
գործ գործէ և ամաչէ ․ սակաւ մի հիւան֊
դանայ և ողջանայ ․ գալիք և պատահարք
հանդիպի իւրն ։ Թէ ձախն՝ որդի լինի
իւրն և խնդայ ․ սրտահեշտի ․ բարի սիրելոյ՝
գանձի՝ և լիութե հանդիպի ։
Թէ աջ քնատեղն խաղայ՝ սրտնեղութե է ․
խիստ հիւանդանայ՝ բայց ապրի ։
Թէ ձախն՝ ձայն գուժի լսէ և տրտմի ․ 'ի
Ճանապարհ երթայ ․ և իւր բանն աղէկ գայ ։
Թէ աջ երեսն խաղայ՝ առողջութե է ․ և գանձ
գտանէ ․ 'ի նոյն աւուրց փոխի և սրտահեշտի ։
Թէ ձախն՝ սակաւ մի տրտմի և տկարանայ ․

վէրք լինի իւրն · պակաս ցաւս հանդիպի
և շուտով մեռանի ·

Եթէ այլ դից կշռափանն խաղայ՝ դառնայ
իւր ճանապարհէն · սրտահեշտի և շատ բարի
լինի իւրեանն · կամ սակաւ մի տկարանայ ·
Եթէ ձախին՝ հետ իւր ազգին կռուի · հի_
ւանդանայ · բայց ապրի · ընդդէմ գայ իւ_
րըն և ուրախանայ ·

Եթէ այլ դից կշռակին խաղայ՝ մեծի և կըռ_
ուի ընդ իւր ազգին · սակաւ մի տկարանայ՝
և սրտահեշտի · ՚ի նեղութե անկանի՝ և ա̃ծ փրը
կէ · ՚ի ցաւոց և ՚ի չարէ ազատի ։ Եթէ ձախին՝
հեռաւոր ճանապարհորդ գայ իւրն աղ_
գէն · կամ հեռաւոր ճանապարհ երթայ ·
՚ի սակաւ ցաւոց ողջանայ և խնդայ ։

Եթէ այլ ականջն խաղայ՝ համբաւ լսէ յաղ_
գականէ · խնդութի և լինի է · յանկարծ
բարւոյ հանդիպի · սիրուի յամենեցունց ·
շահի և զուարճանայ · բայց տկարանայ՝ կամ
ազգականն մեռանի ։ Եթէ ձախին՝ հեռա_
ւորն գայ · յիշեն զինքն ՚ի բարին՝ ՚ի հե_
ռու տեղ · զնոյն բարի զրոյց լսէ · յանկարծ
խնդութի և մեծ առողջութի է · այլ և աւա_
գայ իւրն քաղցրանայ · ընդդէմ գայ իւրն՝
ուսանի ամէն ինչ ունի ։

Եթէ այլ ականջի դմակն խաղայ՝ Ը մարդ դա
տախազէ ։ Եթէ ձախին՝ զինքն ՚ի բարին յիշեն ։



Եթէ

Իսկ աջ ականջի վերի գիծն խաղայ՝ ՚ի յու-
գըս անկանի. Իսկ ձախն՝ յանկարծ գանձ
գտանէ։

Իսկ աջ ականջին տակն խաղայ՝ բարի գտա-
նէ՝ ուստի ակն ոչ ունի։ Իսկ ձախն՝ չէ բարի։

Իսկ ծամ՝ բերանն խաղայ՝ ՚ի սիրած սիրե-
ցեալ սիրելի հեռաւոր համբուրել և մե-
ծարի ՚ի սիրելւոյն։

Իսկ լեզուն խաղայ՝ կռիւ և խռովութիւն է.
տանջութիւն և աղաղակ. Թշնամի խօսի ընդ-
ինքն. սրտնեղութիւն և վիճոյ նշան է։

Իսկ աջ գիծ լեզուին խաղայ՝ հարստանայ։

Իսկ ձախն՝ բարւոյ հանդիպի։

Իսկ լեզուն ամէնն խաղայ՝ ՚ի մատնողաց և
զրպարտողաց զգոյշ լիցի և պատրաստ կացցէ։

Իսկ վերի շուրթն խաղայ՝ համբաւ լսէ
ապանդմանն. վէճ է և խռովութիւն. կռիւ և ա-
տելութիւն. սրտնեղութիւն և զէն. կամ հեռաւոր
գայ խաբր. Ճօշթ է. վատ զրոյց լսէ և տրտմի։

Իսկ ներքինն՝ սրտնեղի. վիճի և յաղթէ.
ում ցանկայ՝ հասանի. հեռաւորն գայ.
և բարւոյ նշան է։

Իսկ շրթանց երկու գիծն խաղայ՝ խօսք
լսէ և վիճի. խնդայ ՚ի զաւակէ. բամբասի
՚ի մարդկանէ. զէնն է՝ տրտմութիւն և սուգ։

Իսկ ներքի և վերի շրթունքն խաղայ՝ սի-
րելի համբուրել։

Եթէ այր կին վերի շրթանն խաղայ՝ կռիւ
լինի և խօսք. ՚ի մարդկանէ սրտնեղի և ՚ի
սուտ անկանի. կամ զաւակ լինի խնդման.
սրտահեշտի և ուրախանայ. Եթէ ձախն՝ սէր
և խնդումն և խաղաղութի է. զաւակ լինի բա-
րի և շնորհաւոր. յանկարծ խնդայ ՚ի զաւա-
կէ. վճարէ զպարտս՝ և սիրելի գայ իւրն.
Եթէ վերի շրթանց մէջն խաղայ՝ համբուրէ
զով ուզէ. զբոյց լսէ և տրտմի. Եթէ ներ-
քինն՝ տրտմի.

Եթէ այր կին ներքի շրթանն խաղայ՝ սրտա
հեշտի և ուրախանայ. Եթէ ձախն՝ ու-
րախանայ.

Եթէ այր կին շրթանն խաղայ՝ իւր անձին
առողջութիւն է. Եթէ ձախն՝ կարիմ տը-
ղայ լինի իւրն.

Եթէ շրթներն խաղայ՝ բարի և ըռզակ
գայ իւրն.

Եթէ այր կին բերանոյ կարոյն խաղայ՝ բարձ
րանայ և կոխէ զթշնամին իւր. Եթէ ձախն՝
յաղթէ թշնամեացն. ՚ի բարի հեռաւոր տեղ
երթայ. կոխէ զչար կամն և մեծանայ.

Եթէ այր կին վերին բերանոյն խաղայ՝ գանձ
գտանէ. սրտահեշտի՝ և բարւոյ հանդիպի.
ըռզակի և մեծնան. Եթէ ձախն՝ յաղթէ
թշնամեացն և բարւոյ հանդիպի. հեռա-
ւորն գայ և զօրանայ. Եթէ առաստայն



խաղայ՝

խաղայ՝ սրտնեղանք անկանի ։
Թէ աջ դիհ առաստաղին խաղայ՝ բարի
գտանէ և ուրախանայ ։ Թէ ձախն՝ պակաս
մի հիւանդանայ՝ և շուտով առողջանայ ։
Թէ աջ Թուշն խաղայ՝ ’ի Թշնամեաց պատ_
րաստ կայ ։ Թէ ձախն՝ մեծ բարութիւն
գտանէ ։
Թէ աջ երախն խաղայ՝ հարստութիւն նը_
շան է ։ Թէ ձախն՝ իրաց մի բռղակի ։
Թէ աջ դիհ կլափանն խաղայ՝ սրտահեշտի և
ուրախանայ ․ և աչօքն շատ բարի տեսանու ։
Թէ ձախն՝ բռղակ գտանէ ։
Թէ կլափան ծայրն խաղայ՝ ոսկւոյ և կու_
մաշի հանդիպի ։ Թէ կլափն խաղայ՝ շա_
հոյ նշան է ։
Թէ աջ խամ՝ ծիծն խաղայ՝ առողջութի է ։
Թէ ձախն՝ խնդայ և ուրախանայ ։ Թէ փող_
քըն խաղայ՝ սրտնեղութիւն զրոյց լսէ ։
Թէ աջ դիհ մզլին խաղայ՝ ’ի հեռուստ տե_
ղաց շահ գայ իւրն ․ շատ կումաշի հանդի_
պի և բռղակի տիրանայ ․ մեծութի առնու՝
ուստի ակն ոչ ունի ․ և ուրախանայ ։
Թէ ձախն՝ գլխաւոր լինի և խնդայ ․ մե_
ծութի առնու ․ հարստանայ՝ և աչօքն շատ
բարի տեսանու ․ խնդութի և ողորմութի գտա_
նէ ․ կամ՝ անպատեհ բան գործէ ․ [illegible] յա_
ւագէ կամ՝ յաղթէ՝ ընդ վայր զրոյց լսէ ։



Թէ

Եթէ ամէն վէրղն խաղայ՝ մեծ նեղութի գայ
իւր վերայ․ իւր կեանքն պակասի․ կամ
սրով հատանի վէրղն՝ և տունն այրի։
Եթէ աջ դիհ Թիկնամէջն խա՞՝ սրտնեղանք
է։ Եթէ ձախն՝ բան առնէ՝ զոր չէ արժան։
Եթէ աջ Թիկն խաղայ՝ յորոգայթէ Թող
պատրաստ կենայ։ Եթէ ձախն՝ խնդայ
իւր սրտովն։
Եթէ Թիկնամէջն խաղայ՝ հարստանայ ինքն։
Եթէ աջ անթառկն խաղայ՝ յիւր ձեռաց
գործոյն բաղակի։ Եթէ ձախն՝ մեծութե
հանդիպի․ խնդութ և սիրոյ նշանէ։
Եթէ աջ բեռն խաղայ՝ հարստանայ և սրտ
հեշտի․ կամ ցնորք է և տրամութ՝ պատրաստ
կացցէ ՚ի չարէ և ՚ի կնոջէ։ Եթէ ձախն՝ ա
ռողջութիւն է․ նոր ագանի․ բարի լինի իւրն․
կամ՝ անպատեհ բան գործէ։
Եթէ աջ Թիկունքն խաղայ՝ նոր ագանի։
Եթէ ձախն՝ խնդիրք իւրն կատարի։
Եթէ աջ ծղկն խաղայ՝ գլխացաւի անկանի
և լուանայ․ զնոյն ՚ի ամբրայն ցաւոյ հան
դիպի․ առաւայ հարկանէ։ Եթէ ձախն՝
խնդումն և ցնծութիւն է․ զինչ բարի ուզէ՝
գտանէ յընկերաց․ պարգև ՚ի մարդկանէ․
շահի և բաղակի։
Եթէ աջ արմունկն խաղայ՝ սիրելոյ հանդի
պի․ սէր է լաւ և բարի․ ՚ի բան արքունեց
մտանէ․

մտանէ · կամ առկաւ մի տկարանայ · գլուխն ցաւի և արտմի ՚ի ցաւոց · և հիւանդանայ · և ա͞ծ հանէ ՚ի հիւանդութ͞ե ։ Իսկ ձախն՝ բարի է և խնդումն · հիւրն գնայ՝ և զերծանի · ցնծայ և սրտահեշտի · կամ յօտարաց վիրաւորի՝ և հիւանդանայ ։

Իսկ աջ բազուկն խաղայ՝ զայր և կին համբուրէ · ՚ի կնոջէ սիրի · հասանէ խնդութ͞ե · և սիրելի գտանէ ։ Իսկ ձախն՝ մեծ բարւոյ և շահի հանդիպի · բարի և շնորհաւոր է · պատուի ՚ի մարդկանէ · և բաղձանք գտանէ ։

Իսկ աջ թեւն խաղայ՝ ցաւոց և նեղութ͞ե հանդիպի ։ Իսկ ձախն՝ ՚ի զնտան մտանէ ։

Իսկ աջ բազկի ձուկն խաղայ՝ գլխացաւութ͞ե հանդիպի ։ Իսկ ձախն՝ քիւր ընտանեացն բարի զրոյց լսէ և բարի լինի ։

Իսկ աջ ձեռաց թաթն խաղայ՝ վէճ գայ մեծ և ծեծ · աղմուկ է · զնոյն այլ վիրաւորի ՚ի մարդկանէ ։ Իսկ ձախն՝ ընտա բարի գտանէ · արծաթոյ և ոսկոյ և գանձի հանդիպի · յաւագէ իւր առնու · կամ վէճի ընդ մարդ ։

Իսկ աջ ափն խաղայ՝ բարի գործոյ հանդիպի · կամ. կռուոյ և ազգականի ։ Իսկ ձախն՝ շատ բարւոյ հանդիպի · կամ արծաթ շահի ։

Իսկ աջ բոյթն խաղայ՝ ՚ի մեծ մարդկէ սիրվի և պատուի · յաւագէ իւր առնու · ան_



կաս

կասկած բարի գտանէ · շնորհի 'ի մեծաց պարգևք և մեծութի · բարի խօսին զինքն առ մարդիկ · այլ կամ եղբարք խռովիլ խնդան:
Եթէ ձախն՝ հարստութի և հարկեք է · աղէկ լինի իւրն · բարւոյ և գանձի հանդիպի · զինչ ուզէ՝ առնու · տանն առատ լիցի վասն
իւր · և ինքն 'ի մեղք անկանի ·
Եթէ աջ խաժլ մատն խաղայ՝ չարի հանդիպի · գէշ խօսք լսէ · ձօշան զինքն · 'ի զուր վիրաւորի · 'ի լեզու անկանի · վասն խօսին զինքն առ մարդիկ · Եթէ ձախն՝ բարի է և ուրախութի · խորհուրդ բարի խորհի · գութ գտանէ · գովք լսէ · իրք զոր կամի՝ գտանէ ·
Եթէ աջ միջի մատն խաղայ՝ վէճ անկանի · վէճի և յաղթէ թշնամեացն · բարի գտանէ՝ ուստի ակն ոչ ունի · փոխի 'ի մեծ բան · հարստութի և շատ բուզակ լինի իւրն 'ի մեծէ ·
Եթէ ձախն՝ կռուոյ և սրտնեղութի նշան է · վէճի և յաղթէ · իրք գտանէ և խնդայ · զերծանի 'ի տրտմութէ · և բարի գայ իւր վերայ ·
Եթէ աջ ծագ մատն խա''՝ 'ի բարին յիշուի · շատ բարի գտանէ · հարստանայ և շահի · խնդրուածքն կատարի · հեռաւոր սիրելի գայ · զնոյն 'ի յոյս բարի գտանէ: Եթէ ձախն՝ զինքն 'ի բարին յիշեն՝ շատ բարւոյ հանդիպի · 'ի յաւագէ մեծանայ · սրտով յորդորի և խնդայ · և իւր սրտի խորհուրդն յայտնի ·

Եթէ աջ ճկոյթն խաղայ՝ ըղձալի հանդիպի․ գանձ գտանէ և հարստութի․ պարգևք ՚ի յոյժ․ զուր տրտմի․ ՚ի ձօշք անկանի՝ և զեր_ծանի։ Եթէ ձախն՝ վէճ է և աղաղակ․ վատ խօսք ասեն վասն իւր․ կամ՛ բարձրանայ և հարստանայ․ ՚ի տրտմութէ ազատի․ ՚ի բարի տեղ յիշուի ՚ի մեծամեծաց։

Եթէ աջ ձեռն ամէնն խաղայ՝ հարկի ՚ի մե_ծաց․ մեծարի ՚ի մարդկանէ․ հարստանայ և խնդայ․ կամ՛ չար գայ իւրն՝ պատրաստ կացցէ։ Եթէ ձախն՝ բարի գտանէ․ ուստի ակն ոչ_ունի․ ՚ի մեծ մարդվէ հարկիք առնու․ պարգևս ՚ի թագաւորէ․ խնդայ և հարըս_տանայ․ ամէնն բարի լինի իւրն։

Եթէ աջ ձեռաց ամէն մատունքն խաղան՝ տրտմի․ բայց յետոյ ուրախութի գայ իւրն․ չարն հեռանայ իւրմէն․ և ա͞ծ ընդ իւրն է։ Եթէ ձախն՝ գանձուց և պատուոյ հանդիպի։ Եթէ աջ ձեռաց վերի թաթն խա՛ նախանձ և ձրիկք դնեն ͞է իւրն․ և յաղթել չկարեն։ Եթէ աջ ուսն խաղայ՝ առողջութի նշան է․ և նոր հալաւս ագանի։ Եթէ ձախն՝ իրք անկանի իւրն և խնդայ․ պարգևս ՚ի յոյժ առնու․ պատուի ՚ի մեծաց։

Եթէ աջ ծիծն խաղայ՝ ուռճի և ուրախա_նայ․ աղգականքն զօրանան․ սիրելիքն բազմանան․ նոյն և ծանօթք շատանան։

Թէ ձախն՝ հեռաւոր մարդ տեսանէ • և
յընտանեաց խնդայ • մեծութեն հասանի •
կամ վիճօք հանդիպի • և ակամայ վերա_
ւորի՝ և դժուարի ։
Թէ աջ գիծ կրծոցն խաղայ՝ բարւոց հան_
դիպի • ՚ի չարէ և՚ի հոգւոց ազատի • կուամաչի
տիրանայ • և մեծուն հասանի • կամ գործ
գործէ՝ զոր չէ արժան • և ապաշաւէ շատ ։
Թէ ձախն՝ ամբեան սիրեն զնա • զչարն որ
գալոց է՝ նա անցուցանէ յիւրմէն ։
Թէ ամէն կուրծքն խաղայ՝ զոր սիրէ • գիր_
կըս արկանէ • խնդման յառաջքէ • ընկեր_
րումն անձին • բարւոյ աւետիք է • հա_
րստանայ՝ և սէր գտանէ ։
Թէ աջ գիծ սրտին խաղայ՝ բազմանան
իրեղէքն՝ և ուրախանայ ։ Թէ ձախն՝
ըամութեն հասանի ։ Թէ սիրան խաղայ՝
անեղուն է և հոգ • իւր մարդն մեռանի •
անկարծ սրտնեղութեան և տրտմութեն
հանդիպի ։
Թէ աջ գիծ թևի ներքի կողմն խաղայ՝
յառաջ երկիր երթայ ։ Թէ ձախն՝ հի_
ւանդանայ՝ և շուտ ողջանայ ։
Թէ աջ գիծ կողիցն խաղայ՝ շահու հան_
դիպի • ՚ի տեղւոյն փոխի՝ և՚ի ճանապարհ եր_
թայ • սակաւ մի տկարանայ՝ բայց յառնէ ։
Թէ ձախն՝ իւրն որդի ծնանի • կամ զնոյն
՚ի

՚ի ճանապարհ երթայ . փոփոխումն է տե_
ղաց ՚ի տեղ .

Թէ աջ ոտն խաղայ՝ կին առնու և զուարճ խնդման լինի . Թէ ձախն՝ զուարճ բարի լինի իւրն . և մեծութիւն գտանէ .

Թէ մէջ ոտանն խաղայ՝ բարի է իւրն :

Թէ աջ մատանն խաղայ՝ հարստանայ . Թէ ձախն՝ նոյն է .

Թէ երկու մատներն խաղան՝ հարըստու_
թիւն է իւրն :

Թէ աջ կուշտն խաղայ՝ մեծութի՛ գտանէ . կին առնու բարի . բարձրութի՛ և խնդութի՛ է . զոր ինչ խնդրէ ՚ի յոյ՝ կատարի . Թէ ձախն՝ զնոյն կին առնու և զուարճ խընդ_
ման լինի . ՚ի հոգւոց զերծանի . սրտահեշալի և մեծ լինի .

Թէ աջ դիհ փորուն խաղայ՝ մեծանայ և ըռաղակի : Թէ ձախն՝ շատ լայ և տրտմի :

Թէ ամէն փորն խաղայ՝ զինչ ուզէ ՚ի յաստուծոյ՝ տայ նմա աստուած :

Թէ փորն խաղայ՝ բարի է և մեծութիւն :

Թէ աջ կողն խա՛ ՚ի հիւանդութէ՛ ազատի :

Թէ ձախն՝ յայլ ճանապարհ երթայ .

Թէ աջ դիհ կողին խաղայ՝ բարի է իւրն :

Թէ ձախն՝ նոյն է .

Թէ աջ քոնն խաղայ՝ ուրախութի՛ մեծ գտանէ . Թէ ձախն՝ որդի լինի իւրեան .



կամ

կամ ՚ի մահու երկիւղէ ազատի ։
Եթէ պորտն խաղայ՝ շահ գայ իւրն ․ իւր
բարիքն բազմանան ․ զերծանի ՚ի հոգոց ․
կին առնու ․ կամ ՚ի կնոջէ խնդայ ։
Եթէ աջ դիհ փողրաւորն խաղայ՝ հարըս_
տանայ ։ Եթէ ձախն՝ բռղակլի ՚ի յոյս ․ և
յաղքատութենէ ազատի ։
Եթէ փոքր փորն ամէնն խաղայ՝ բարի զը_
րոյց լսէ՝ և խնդայ ․ բազմանան իւր ինչքն ․
բարի կնոջ դիպի ․ հարստանայ և մեծանայ ։
Եթէ երանքն խաղայ՝ մեծ բարի լինի յա_
ւագաց ․ Ած տայ զխնդրելին ․ զինչ ուզէ՝
առնու ․ խորհուրդն կատարի ․ և արու
զաւակ լինի խնդման ։
Եթէ աջ դիհ երանացն խաղայ՝ հարստա_
նայ ։ Եթէ ձախն՝ մեծանայ և ուրախանայ ։
Եթէ ծայրն խաղայ՝ կամ տակն՝ մեծա_
նայ ․ կամ զէն գայ իւրն ։
Եթէ ծածուկ մարմինն խաղայ՝ յաղթէ բա_
րի գտանէ ․ խնդութիւն և ուրախութի՟ ։
Եթէ աջ ձուն խաղայ՝ հարստանայ ․ և ծե_
րանայ ․ և իւր կամքն կատարի ։ Եթէ ձախն՝
յայլ կին մերձենայ ․ և իւրն շնորհաւոր
որդի լինի ․ խիստ սրտահեշտի ․ հարկեք առ_
նու և գովի ․ ՚ի տուն ցնծութ՟ երթայ ․ կամ
հարսանեաց հանդիպի ։ Եթէ երկու ձուն
միահետ խաղան՝ շնորհաւոր որդի լինի ։



Եթէ

Եթէ աջ ձուատակն խաղայ՝ ըղձակ տանու՝
ուստի ակն ոչ ունի. կամ՝ յոյսանի լինին
գաղտնիք իւր. Եթէ ձախն՝ տանու զօր-
ուղէ և ուրախանայ. կամ՝ սրտնեղանք է.
Եթէ ցայլքն խաղայ՝ ընդ կնոջ ննջէ. և ՚ի
բարին յիշուի. հասանէ իւր ցանկութն.
զնոյն իրք որ ուղէ՝ տանու. իւր խոր-
հուրդն կատարի՝ և բանն յաջողի.
Եթէ աջ ցայլքն խաղայ՝ ըղձակի յիւր գոր-
ծոյն. Եթէ ձախն՝ ՚ի մեղս անկանի. և ՚ի
չարէ պատրաստ կացցէ.
Եթէ աջ ձուն խաղայ՝ լինի իւր բանն զոր
տանէ. Եթէ ձախն՝ խնդութի և սրտնեղ-
տութի է. խնդման և շահի հասանի. Եթէ
մէջ ողին խաղայ՝ սրտնեղշտի և խնդայ.
Եթէ աջ դիհ ողին խաղայ՝ բարութի գը-
տանէ և յաւար վարէ. Եթէ ձախն՝ նոյն է.
Եթէ նստոյ տեղին խաղայ՝ դէպ ՚ի ձուն՝
չար է. տուգանաց հանդիպի. ծախուի
իւր իրքն և զէն լինի. սուգ հանդիպի
իւրեան. անկասկած արամբ.
Եթէ աջ բուծքն խաղայ՝ մտանի ՚ի մարդոց.
այլ՝ ամ յաջողէ նմա՝ և զերծանի. և իւր
Թշնամիքն մեռանին. զուր խօսին զիւրմէն
զօրաւոր. ասէն բան անպատեհ. Եթէ ձա-
խըն՝ սուտ ասէն վասն իւր. բարի տանէ
մարդոց և չշահի. ՚ի մեղս անկանի և սրտ-
նեղի.

Նեղէ · բայց շուտով ուրախանայ։ Թէ եր_
կու բուսմէի ներքեւն խաղող՝ իբր անկանի
իւրն՝ ուստի ակն ոչ ունի · յանկարծ շա_
հի · անշնորհ մարդոյ՝ բարի առնէ ։
Թէ աջ անդաման խաղող՝ բարի է և խըն_
դութի · ցնծայ և սրտահեշտի · կամ գաղտ
զրուցեն զինքն · պակաս մի երկինչի · վախէ
յիւր անձնէն · տրտմութի է և զէն · Թէ
ձախն՝ բարի է · ամլ ուրախ լինի · նոր ա_
գանի և խնդայ · կամ ձօշան զինքն · մարդ_
թշնամանայ ընդ ինքն · և զինի հանդիպի
սակաւ մի յիւր բանէն ։ Թէ անդամոյ
դրուցի դիհն խաղող՝ զօրութի է ։
Թէ աջ անդամոյ դրուցեն խաղող՝ մեծա_
նայ և բարձրանայ յոյժ ։ Թէ ձախն՝ շատ
բուզակի տիրանայ ։
Թէ աջ անդամոյ ներսեն խաղող՝ սրտնե_
ղութի հասանի ։ Թէ ձախն՝ սրտահեշտանք է ։
Թէ աջ ծունկն խաղող՝ մանենայ առ ա_
ռաջս · մեծութի և հարկիք է · կամ ՚ի մեծ
ե՚ի դատաւմն անկանի ։ Թէ ձախն՝ առ ա_
ռաջ մանանէ · ՚ի հարկիք եղանէ · կատարի
իւր բանն առ առաջ · կամ գեշ զրոյց լսէ ։
Թէ աջ դրուցի ծունկն խաղող՝ մասանեն
զինքն · և բարով զերծանի ։ Թէ ձախն՝
առ ժամույն զերծանի ։
Թէ աջ ներսի ծունկն խաղող՝ աւետիս

լսէ ։

լսէ ։ Թէ ձախն՝ ՚ի դատաստանէ ուրա_
խանայ և խնդայ ։
Թէ աջ սրունքն խաղայ՝ հարստութիւն
է ․ ՚ի մեծաց գովասանութիւն առնու ։
Թէ ձախն՝ հարստութիւն է ։
Թէ աջ ամենայն սրունքն խաղայ՝ ահ որ
կայ իւր վերայ անցանի ։ Թէ ձախն՝ յա_
մենայն նեղութենէ ազատի ։
Թէ աջ ոլորքն խաղայ՝ յոր է սրունքն՝ բար_
ւոյ նշան է ․ վէճի և բարի գտանէ ․ ցան_
կայ և խնդայ ․ յիւր մտաւորացն մարդ մե_
ռանի ․ մտանենայ առ ուտագ ․ հարկիք առնու
և մեծանայ ։ Թէ ձախն՝ թշնամեաց յաղ_
թէ ․ բուստ բարի և շնորհաւոր լինի ․ կամ
սուտ է և տրտմութի ․ այլ յետոյ բարի գը_
տանէ ․ հարկի ՚ի յոյս ․ պարգևս և սէր առ_
նու ՚ի մեծ մարդկանց և հարստանայ ։
Թէ աջ ներսև ոլորքն խաղայ՝ բարի ըղ_
բոյց լսէ և ուրախանայ ։ Թէ ձախն՝ ՚ի
ճանապարհ երթայ ։
Թէ աջ կոճն խաղայ՝ սգոյ և լալոյ հանդի_
պի ․ իւրն սիրելի մարդ մեռանի և տրտմի ։
Թէ ձախն՝ խօսք ելանէ իւր վր խնդութեն
և ցնծութեն է ․ ընկերի ՚ի սիրելեաց ․ գտանէ
բարի յաւագաց ․ հասանի ուրախութե ։
Թէ աջ կոճի դրուցի դիհն խաղայ՝ հեռ
մեռելի երթայ ։ Թէ ձախն՝ սրտահեշտանք է ։
Թէ

Եթէ աջ կոճի ներքոյ գիծն խաղայ՝ ի մեծ-
մարդկանց հարկեր առնու. բարի է և սրտա
հեշտութիւն։ Եթէ ձախն՝ ուրախութիւն է յոյժ։
Եթէ աջ ոտից թաթն խաղայ՝ սրտահեշտանք
է և ուրախութիւն յոյժ. ծանրանայ ի վերայ
մարդկան. հաստատի իւր գործն ի յոյս.
ի գործ ածայլին գնալ նշանակէ. ի ճանա-
պարհ երթայ. գտանի վասն իւր ապրանացն
և դառնայ բարով։ Եթէ ձախ ոտիցն՝ բարի
է և շահ. բնակին շատանայ. մտանէ ա-
ւագ և փառաւորի. ճանապարհ է խնդ-
ման և բարձրութեն. մտանէ յարքունիս.
շատ խնդայ և հարստանայ։
Եթէ աջ ոտից կոճն խաղայ՝ զենի հանդէ-
պի, և յետոյ բնակի։
Եթէ աջ կրընկան կոխ ջիլն խաղայ՝ օտար
զրոյց լսէ։ Եթէ ձախն՝ աւլաթ առնու
և սրտահեշտի։
Եթէ աջ ոտից ներբանքն խաղայ՝ ի ճանա-
պարհ երթայ. վերք հասանի իւրն. հերքի
յիւր ազգէն. ի ծանօթից արտաք. ահի
իրք հանդիպի. բայց յետոյ բարի լինի իւ-
րըն. ի տրտմութենէ ազատի. իրք գտանէ
և շահի. հարստանայ և խնդայ։ Եթէ ձախն՝
ի ձեռն աւագաց՝ մեծութիւն և իշխանութիւն և
հարկեր առնու. իւր բանն յաջողի. ի դար-
պաս մտանէ. մեծանայ և հարստանայ։



Եթէ

Եթէ աջ ոտից ամ̃ թաթն խաղայ՝ տրտմի
միւք ազգէն. հեռանայ յազգէ իւրմէ.
նոյն և թեթևանայ առ ծանօթս իւր. կամ
՚ի ճանապարհ երթայ՝ և իշխանուէ գտանէ.
և շահի ՚ի ըուղակէ։ Եթէ ձախ ոտիցն՝ հե-
ռանայ յազգականացն և տրտմի. սակաւ մի
հիւանդանայ և այլքի. ՚ի ճանապարհ եր-
թայ. հարկիք և շնորհ առնու՝ ուստի ակն
ոչ ունի. մեծանայ և բարձրանայ։
Եթէ աջ ոտից ներքևն կամ վերինն խաղայ՝
՚ի ճանապարհ արդիւնաւոր երթայ. մե-
ծութեան հասանի և սրտահեշտի յանկարծ-
խնդայ և հարստանայ։ Եթէ ձախ ոտիցն՝
բարի լինի իւրն յանկարծակի. յաւագայ
ըուռմնիկ առնու. խնդայ ՚ի ճանապարհէ.
սէր է և բարձրութիւն։
Եթէ ոտից մէջն խաղայ՝ մարդ վնասի ընդ-
խնքն և ծեծվի։
Եթէ աջ կրնկան վերևն խաղայ՝ օտարանայ
յերկրէ. և զրոյց լսէ բարի։ Եթէ ձախն՝
՚ի չար անկանի։
Եթէ աջ կրունկն խաղայ՝ մեծութ̃ է. բայց
հեռ մեռելի ընթանայ. մտանէն զինքն՝ և
բարով զերծանի։ Եթէ ձախն՝ տոլկաթ և
բարի է. ուրախանայ և խնդայ։
Եթէ աջ ոտն ամէնն խաղայ՝ ՚ի ճանապարհ
երթայ։ Եթէ ձախն՝ բարի գայ իւրեանն՝
ուստի ակն ոչ ունի։

Եթէ աջ ոտից բութն խաղայ՝ գնայ յիւրմէն տրտմութի · հեռաւորն գայ 'ի մարդկանէ շահի և հարստանայ։ Եթէ ձախն՝ առող_ ջութի է անձինն · հեռաւոր ստանէ · սիրելիքն բազմանան · յոյժ ուրախի և խըն_ դայ · և ամէն սիրեն զնա · կամ ցաւք դիպի իւրն · և հիւանդանայ խիստ։

Եթէ աջ ոտից խաժլ մատն խաղայ՝ հիւան_ դանայ մինչ 'ի մահ · տրտմի և վախէ · բայց յետոյ բարի լինի իւրն՝ 'ի փորձանէ ամենայնի և ազատի · և իւր գնացած մարդն գայ։ Եթէ ձախն՝ հարստութի և հարկեաց՝ մե_ ծութի և խնդութի հասանի · կամ վերք ընդունի 'ի սայ՝ և տրտմի · վախէ 'ի շա_ ւէ՝ որ ոչ գայ իւրն։

Եթէ աջ ոտից միջի մատն խաղ՞ սրտանեղուն գայ · 'ի վերջ և 'ի տրտմութ ամենայնի · և մեծ փոթորակ գայ իւրն · մարդ կռուի ընդ իւրն և ծեծէ · և չար լինի։ Եթէ ձախն՝ վնասուած է · 'ի մեծ աղաղակ ամենայնի · գուժ առնու · բարեկամաց կռիւ · մեծ զէն ամենա_ նի ընդ ազգականի և վնասի · կամ ցնծութի է մատցն · սիրով հետ մարդոյ սատուլիս սա_ նէ · շատ բարուց հանդիպի և ուրախանայ։

Եթէ աջ ոտից ծագ մատն խաղայ՝ գտանէ զինչ ուզէ · հարկեք և սէր · կամ վնասի ընդ ծանօթի և թշնամիքն շատանան։ Եթէ ձա_ խըն՝

խըղն՝ յաղգէ հեռանոյ · բաժանի ՚ի տանէ
և յորդւոցն · գնայ յայլ տեղ և յաջողի ·
կարի հանգիստ և լաւ լինի · բաժնեսանն
զինքն առ կանայս ։

Եթէ աջ ոտից ճկոյթն խաղայ՝ մեծութի և
հարստութի տայ ա̄ծ իւրն · լինի զոր կա_
մի · յաւագաց շնորհք առնու · ըղձալի և
բարւոյ հանդիպի · կամ իրք կորուսանէ ։
Եթէ ձախն՝ տրտմի յաւագէ · աղմուկ ՚ի
սիրելեաց · վէրք ՚ի յաւագաց · անպատեհ
բան լսէ · յաղթեն ապստամբքն իւր · կամ
՚ի վտանգաւէ շահի · գանձ և առողջութի և
շատ բարի գտանէ ։

Եթէ աջ ոտից ամէն մատունքն խաղան՝ հե_
ռանակ ՚ի Ճանապարհ երթայ · բարի լինի
իւրն և խնդայ · ցնծութի և մեծ սէր գըտա_
նէ · պարգևս առնու ՚ի յայ · հեռաւոր օ_
տար մարդ ծանօթանայ ընդ իւրն · ՚ի մարդ_
կանէ պատուի և բարւոյ հանդիպի ։ Եթէ
ձախ ոտիցն՝ խիստ գատուածէ նեղութի և
և վէրք · ցաւք լինի · սրտնեղի ՚ի խօսից ·
աղքատանայ՝ և դարձեալ փորձի ·

Եթէ տափողն խաղայ՝ խնդայ և՚ի ձի հեծ_
նու · և՚ի բարի Ճանապարհ երթայ ·

Գուշակողին ա̄ծ զաղտնեաց և յայտնողին
զպարգագայս՝ Քրիստոսի ա̄յ մերոյ · փառք
յաւիտեանս ամէն ։



Նշա

Երազահան հարուստ և գեղեցիկ։ Օ՛ր առաջեալ է Դանիէլէ մարգարէէ՝ ձևան պէս պէս փեսաչաց։ Ա.

Ած տեսանելն յերազի՝ լաւ է տեսնողին. և յամէն չարէ ազատի՝ և հարկերն աւելանայ. և՚ի զինուածս խալխի. թէ աղքատ է՝ հարստանայ. թէ հիւանդ է՝ ողջանայ։ Ած ՚ի տան քում տեսանել՝ նորոգութիւն է։ Աստղ տեսանել՝ լաւ է։ Աստղն՝ յիւր տանն տեսանել՝ իւր տանն բարիքն աւելանայ. թէ օտարական լինի՝ խաղաղութ ՚ի տուն երթայ։ Աստեղք տեսանել՝ ՚ի ձմեռնադարձ երթայ և շահի։

Աստեղք յերկնից անկեալ տեսանել՝ մեծամեծաց մահ է և կորուստ։ Ասպար տանուլ տեսանել՝ զիւրն կամ զայլոցն՝ պատիւ է։ Ասպարն՝ որ է ղալխանն՝ երկրի տիրանայ։

Աբեղայ տեսանելն՝ փառք և պատիւ է. կամ կռիւ։

Ագաղաղն՝ ՚ի պատարագ բարի է. և կրաւոյ նշան է։ Ագռաւք տեսանել՝ թշնամիք արձակին ՚ի վերայ քո. աղօթք արա որ ազատիս։

Աթո

Ա.Թոռն՝ մեծութիւն և բարձրութիւն է.
Ա.Թոռ նստիլն՝ բարձրութիւն է:
Ա.լևոր զինքն տեսանել՝ հարստութիւն է և
շահ: Ա.լիւրն՝ շահ է իրաց և բարեաց:
Ա.լիւրն՝ ուժ է: Ա.լիւր՝ ամանովն,
բաղդակ է:
Ա.կներ տեսանես կամ քար՝ աղախին է և
ծառայ: Ա.կանջն՝ յերազի, աղջիկ է և
կնիք և առևտուր.
Ա.ղաւնին՝ շնորհք է, Ա.ղուեսն յերազի՝
ահ է և երկիւղ և խլաթ.
Ա.ղուեսն՝ թշնամի է. որ թէ որսաս աղ-
ուեսն, զթշնամիդ յաղթես: Ա.ղուեսն՝ թէ
'ի մարդոյն փախչի, իւր պարտականն յիւր-
մէ փախչի: Ա.ղուեսի հետ թէ կռիւ անէ,
հետ իւր կարևորին կռիւ անէ: Ա.ղուեսի
հետ թէ խաղայ, աղվոր կնկան ծանօթանայ:
Ա.ղջիկ իւր ծոցն՝ խնդութիւն է. Ա.ղջիկ փո-
քր՝ շատ շահ է և բարի. Ա.ղջիկ երեխայն՝
ցնորք է և նեղութիւն. Ա.ղջիկ տեսանուլն՝ ա-
մէնն լաւ է, և կին տեսանուլն՝ լաւ է և
խնդութիւն. և իւր սրտի կամքն կատարի.
Ա.ղբիւրն՝ իրաց շահ նշանակէ: Ա.ղբիւրն
լուացվիլ՝ շահ է. Ա.ղբերց ջուր առնուլն՝
վատ է: Ա.ղբերց ջուր խմելն՝ շնորհք է.
Ա.ղն և ամանաւն՝ անոյշ խօսք է և բարի:
Ա.ղ տեսանել՝ կսկիծ է: Ա.ղ ազխասկ տե-
սանես՝

սանես՝ դրամ է և շահ։ Աղ սև տեսանես՝ վատ խօսք է և տրտմութի․ Աղ կորած տես՝ կռիւ խափանի։ Աղի ձուկն՝ կսկիծ է և հոգս։ Աղէն՝ չափինք շահ է տեսնողին։ Աղէն մարդոյն՝ հարամ ուծիկ է և շահ։ Աղեղն՝ շատ զրոյց է և ձօշք և բամբասանք։ Աղեղնաւոր զինքն տես՝ թշնամի և կռիւ է։ Աղիւս հանելն՝ տանն շինութի է և լաւ։ Աղքատին իւր շնորհելն՝ շահ է և բարի․ և պարգև ՚ի յոյս քեզ կատարեալ։ Աղէկ հալաւն՝ շատ ժամանակ է՝ ուրախութի և շնորհք։

Ամանաթ առնուլն և պահելն՝ բղորգութի է։ Ամբաստանել զոք յերազի՝ վնաս է խիստ և վատ․ ած օգնէ։ Արմաւն՝ շատ բարի է և անուշ խօսք։

Այծն և քօշն՝ ճանապարհ ցուցանէ։ Այրեցեալ զհանդերձն տեսանել՝ վնաս մահու է և երկիւղ։ Այրել և աւերել տեսանել զտուն իւր՝ ամենևին պիղծ չար և վնաս է։

Անձրևն՝ ժամանակ բարի է։ Անդաստանըն՝ վաստակ է և ժամանակ բարւոյ։ Անասունն՝ հալալ բուծիկ է։ Անուշ ուտելու զինչ որ լինի՝ լաւ է և հալալ ուտծիկ․ և անուշ խօսք է։ Անուշահոտ իւղն՝ լաւ է և հալալ ուծիկ։ Անկանիլ ՚ի գետըն՝ թօթափի յղեցն և աղքատանայ։



Աչքն՝

Աղբն՝ գանձի շատութիւն է։ Աղբ՝ բռ-
նում տեսանել՝ հարստութիւն է։ Աղս մեծս
ունել՝ կենաց յաւելումն է։ Աղս հանելն՝
կինն կամ որդին մեռանի։

Ապարանջանն՝ նեղութ է և հոգ։ Ապուձա-
նըն՝ հարկաւոր կինի է։ Ապուձանն՝ այր
մարդոյն պարծանութ է։ Ապուձան տեսանու-
կին մարդ՝ թէ այրի է, այր առնու. թէ
այր ունի՝ որդի լինի։ Ապրշումն՝ լաւ է
և բժշկութ և շահ։ Ապաշխարօղն՝ իւր
հաւատքն է։

Առիւծ տեսանել՝ թագաւոր է լինել. կամ
աւագ իշխան՝ և մեծ մարդ։ Առիւծք եր-
կուք ընդ միմեանս կռուին, երկու թագա-
ւոր՝ կամ երկու մեծ մարդիկ կռուին։
Առիւծին հետ կռուիս, ընդ մեծ մարդոյ
կռուիս. կամ ՚ի կռիւ անկանիս։ Առիւծին
վերայ նստած լինիս և քշես, նա դու ՚ի
պարոնութի վարիս։ Առիւծէն թէ փախ-
չիս՝ և առիւծն յետևէդ չգայ, ՚ի չար կա-
մէ անհոգանաս։ Առիւծն ՚ի դեմդ եկանէ
և հրամայ քեզ՝ նա աջ հասանի քեզ ՚ի
մեծ մարդոյ։ Առիւծն անասնօթանայ, թըշ-
նամի արձակի յերկիրն այն։ Առիւծի միս
ուտել յերազի, ՚ի չար կամէն բարի գայ
իւրեան։ Առու տեսանելն ՚ի տան քում,
գանձ է և շահ։



Ատա

Ատամունքն՝ աղեբերն է։ Ատամունքն ա-
մէնն ընկնի՝ շատ գանձ գտանէ։ Ատամն
առաջին ընկնի, իւրն սուգ հանդիպի. կամ
ի ճանապարհ երթայ։ Ատամունս առա-
ջինս հանել՝ որդւոյ մահ է։ Ատամունս
ներքինս հանել՝ տրտմութ̃ է. և թէ վերինս՝
ազգական մեռանի։ Ատամունս մեծս հա-
նել՝ մօտաւոր ազգական ոք մեռանի։
Ատամունս սրբել՝ ղայլոց վաստակն ուտէ։
Ատամունքն սևացեալ՝ հիւանդութ̃ է։
Արեգակն տեսանել՝ թագաւոր է։ Արե-
գակն յիւր ձեռքն տեսանել՝ պարծութ̃ է
տեսանողին։ Արեգակն խաւար տեսանել՝
այն տեղաց պարոնին չար գայ։ Արեգակն
յիւրում տեղւոջ տեսանել՝ թագաւոր
մեծ է։ Արեգակն յերկնից անկեալ տե-
սանել՝ թագաւորաց մահ է։ Արեգակն ի
կողմանէ տեսանել՝ նեղութ̃ է։ Արեգակն
ի ներքոյ ամպոյ տեսանել՝ երկրի նեղութ̃
է՝ կամ պայծառութ̃ի։ Արեգակն և լու-
սինն ընդ իրեարս ընթանալով տեսանել՝
թագաւորք են՝ և կռիւ և հիւանդութիւնք
ցուցանեն։ Արեգակն և լուսինն այսր
անդր ընթանալ տեսանել՝ բաժանումն է
երկրի։ Արեգակն և լուսին նորին՝ բա-
ժանիլ երկրի է։ Արծաթ սուրբ և յիս-
տակ տեսանես՝ հաւատք է։ Արծաթն՝
է



կամ

կամ ներքուն և ծածուկն է ։ Արմաւենին՝ զուարկ է և ուրախութի ։ Արմաւենի ծառըն՝ քան զամէն ծառ լաւ է ։ Արիւն հեղուլն՝ մեղս մեծ է և զէն ։ Արիւն տեսանել՝ կամ արիւն առնուլ՝ շնորհք է ։

Արծիւն յերազի աւագ է և մեծ պարոն ։
Արծուոյն վէր նստիլ՝ պարոնութն տիրանալ ։
Արծուոյն հետ կռուիլ կամ զարնել, հետ մեծ մարդկանց նախանձիլ և կռուիլ ։

Արծիւն զքեզ զարնէ, 'ի պարոնէ զէն հասանի քեզ . կամ լեզուով անհարկութի ։ Արմաւք հաւք տեսանել՝ կնիկք հարկաւոր․ գեղեցիկ և շնորհօք ։ Արջ տեսանես՝ անիրաւ և անգէտ մարդոյ խօսք է . և ամէն գէշ գազան՝ թշնամի է ։

Աւետարան տեսանես, հալալ մուրատ է ։
Աւազ տեսանել՝ հալալ ռոճիկ է և շահ ։
Աւագերէց մեռած՝ կենդանացեալ տեսանել՝ մեծ զրոյց կենդանանայ ։ Աւազակ տեսանել՝ զգուշացիր 'ի կռւոյ ։ Աւագ զինքըն տես՟ բարի է և խիստ լաւ ։ Աւագ տե՟ թշնամի արձակի յերկիրն ։ Աւագ տեսանել կամ խօսիլ՝ շնորհք է և բարի ։ Աւեզըն որ է սուլուխ՝ շատ գանձ է ։

Բ

Բառնալ զինքըն յուսմբք տեսանել՝ չար է և բարի ։ Բառնալ և ընկենուլ զին

քըն յուլիքէ՝ վնաս մաշու է։ Բարձր տեղաց ընկնիլն՝ չէ բարի. վնաս է։ Բարձր տեղաց վերայ քայլես՝ մեծուն գտանես։ Բարբառուտ ձայն լսես և այլ սաղերու՝ անուշ խօսք է։ Բարև տալ յերազի՝ կռիւ է։ Բաղդայ տեսանել՝ որդի է և մեծութեն նշան. կամ լաւ մարդ է։ Բաղուկ ազնիւ տեսանել՝ շատ գուշակէ։ Բաղուկ աղտեղի՝ զգուշացիր ՚ի մեղաց։ Բաղնիք տեսանել՝ հոգս է։ Բաղնիք երթաս՝ ՚ի պատրանք անկանիս։ Բաղնեց դուրս գաս՝ ՚ի հոգոց ազատիս։ Բաղնիք լուացուիլն՝ չարչարանօք ըռոճիկ է։ Բաղանիս լուացվիլն կամ մէջն կենալն՝ մեծ նեղութիւն է։ Բադ տեսանել՝ մեծ մարդ է։ Բակ շինելն կամ հիմն արկանելն՝ բարութիւն է։ Բաշն՝ լեղու է։ Բանդակ տեսանել՝ արդարութիւն է և սրբութիւն։ Բանջար տեսանել՝ շահ է։ Բանջար ուտեր տեսանել՝ չէ լաւ։

Բաշխուլն՝ չէ աղէկ։

Բեւեռ ժողովելն՝ լեղուք է։ Բեւեկն տեսանել կամ ժողովել՝ մեծ բարութիւն է։ Բերդ տեսանել՝ ՚ի վերայ թշնամեաց իշխանանաս։ Բերդ մտանելն՝ ամրութիւն է և պարիսպ։ Բերդ աւերելն՝ ՚ի նեղութենէ ազատիս։ Բերանն՝ ձեռնտուութիւն է։ Բերանոյ ցամաքելն՝ իւր ռոճիկն պակասի։



Բի

Բիր տեսանել՝ կամ առնուլ՝ եղբայր է կամ որդի։ Բիր կոտրելն՝ եղբայրն մեռանի. կամ ազգականն։ Բլուր տեսանել՝ երկրի շինութիւն է և խաղաղութիւն։
Բու տեսանել՝ նեղութիւն է։ Բուրվառ առնուլն կամ շարժելն՝ չէ աղէկ. կռիւ է։ Բուրդ սպիտակ տեսանես կամ առնուս, մեծ առողջութիւն և հալալ ռոճիկ և շահ է։ Բուրդ սև՝ սուգ է և լաց։ Բուք արկանելն՝ ձայն գուժի գայ յերկիրն։ Բող կնոջ խօսիլն՝ փառք է։ Բող տեսանել կամ խօսիլ կամ խաղալ՝ շահ է։ Բոկիկ զինքն տեսանել՝ զէն գայ իւրն։ Բոպոտ զինքն տեսանել՝ զանձն շատանայ. մեծութիւն և շահ է։ Բորակ տեսանել կամ ժողովել, կսկիծ է։ Բողկ ուտելն՝ առողջութիւն է և շահ։ Բրինձ տեսանել՝ շահ է և բարի։ Բրել կամ գործել՝ մեծ բարութիւն է և շահ։

Գ.

Գառինս տեսանել՝ շահ մեծ է։ Գառինս զենելն՝ չէ բարի։ Գառինս լուանալ՝ զէնէ է և տրտմութիւն։ Գազան տեսանել՝ կռիւ է և երկիւղ առանց վնասու։ Գազան շատ տեսանել՝ ահ է։ Գազանն որ գոչէ՝ երկրի նեղութիւն է։ Գազանի խաղալն՝ թշնամեաց հաշտութիւն է։ Գազանի



փախ

փախչիլն՝ խաղաղութի՟ է։ Գառանցն՝ աւագ
է և մեծութի՟։ Գանձ տեսանել՝ կամ առ_
նուլ՝ շահ է։ Գանձն և կումաշն՝ խիստ
աղէկ է։ Գարի տեսանել՝ ըղձալի է։ Գա_
րի սերմանել կամ ժողովել՝ ուրախ է։
Գայլ անասնոց ամս՟ թշնամի է։ Գայլն
թէ սպանանես՝ զթշնամիդ յաղթես։ Գայ
լուն զարնես և չի մեռանի, նա հետ կնոջ
մեղք գործես. և թէ մեռանի, քո բանն
'ի բարին յաջողի։ Գայլի միսն թէ ուտես՝
'ի մարդոյ հարամ ուտես։ Գայլադուան՝
անհաւատ մարդ է։ Գաւաղան տեսանել՝
ամրանաս ընդդէմ թշնամեացն։ Գաւաղա_
նըն 'ի ափին՝ լաւ է։ Գաւաղանն 'ի ձե_
ռին՝ որդի է. կամ շահ մեծ։ Գաւաթ
բռնել 'ի ձեռքդ՝ զուարթ խնդումն է։
Գետ և հեղեղ եղանելն յերազի՝ հեծելն
նշան է։ Գետ անցանելն՝ հեծել է։
Գետ յստակ հայելն՝ առատութի՟ է։ Գետ
պղտոր՝ լեռութի՟ է։ Գետ լուացվիլն՝ նե_
ղութի՟ է։ Գետափին 'ի վայր երթալն՝ թըշ_
նամին յաղթէ զինքն։ Գերի տանիլն՝ նե_
ղութի՟ է։ Գերի զինքն տեսանել՝ մեծութի՟
է. և 'ի նեղութէ ազատի։ Գերանդին՝ մե_
ծութի՟ է և շահ։ Գերանն որ կոտրի՝ տա_
նուտէր մեռանի. և վնաս է։ Գերեզման
բանալն՝ վնաս է։ Գերեզման զինքն գնե_
լըն՝

լըն՝ վատ է։ Գեղեցիկ պատկերօք զինքն
տեսանել՝ փառք է։ Գեղեցիկ պատկեր նը
կարած տեսանել՝ նոյն է։ Գէշ հոտ առ-
նուլն՝ գէշ խօսք է։ Գէր զինքն տեսա-
նել՝ ողջոյց անուանն է։

Գինի անապակ տեսանելն կամ խմելն
և կամ գնելն՝ ուժ է և շահ։ Գինի գե-
ղով խմելն՝ հարամ ռոճիկ է։ Գինձ տե-
սանել՝ անոյշ խօսք է։ Գինձ ուտել կամ
ժողովելն՝ կռիւ է։ Գինա հագնիլն՝ մեծ
շահ է։ Գինա հանելն յականջէն՝ փառս
մահու է։ Գիշերի ՚ի ճանապարհ երթալն՝
նեղութի է։ Գիսաւոր աստղ տեսանել՝ մե-
ծութի է և պատիւ։ Գիրք կարդալն՝ ժո-
ղովք ցուցանէ։ Գիր տեսանել կամ կար-
դալն՝ իւր մարմնոյն նեղութի է և ցաւ։
Գիր գրելն՝ բարի և հալալ մուրատ է։

Գլխատել զինքն տեսանել՝ փառս մահու
է։ Գլուխն յանձնեն ՚ի զատ տեսանել՝
յաղթութի երթայ։ Գլուխ կարած ՚ի ձեռ-
քըն առնուլ՝ շատ գանձ գտանէ։ Գլուխն
գեղ քսելն՝ անոյշ խօսք է։ Գլուխդ ածի-
լեա՝ յամէն նեղութէ ազատիս։ Գլուխն
այլոց ածիլելն՝ ցաւուն գժար զերծանի։
Գլուխ լուանալ կամ գլխաւոր տեսանե-
լըն, զէն ցուցանէ։ Գլուխ սպիտակն՝ յան
կարծ շահ է։ Գլխաւոր տեսանել՝ ցնորք և

ողջքա

ողջամտութիւն է։ Գինւոյ խաղողն՝ պարոնին լաւ է. փուշը մարդոյ գէշ է։

Գութի գեղեղ տեսանելն՝ հարստութիւն է և լաւ։ Գոմէշ տեսանելն՝ շահ է և ուրախութիւն։ Գոմէշ ՚ի գետն՝ բարի զրոյց գայ խաբեան։ Գոմ շինելն՝ շահ է և ուրախութիւն։ Գոյն գոյն հալաւն՝ խնդութիւն է։ Գորտ տեսանելն՝ հաւատացեալ մարդ է։ Գորտ շատ՝ հաւատացէլ մարդիկք են։ Գորտոյն ձայն լսելն՝ խնդութիւն զրոյց գայ։ Գորտն թէ պղտանանես, հետ հաւատացեալ մարդոյ հաշուամն առնես։ Գոտի հագնիլ տեսանելն՝ հարկիք է։

Գրաւական հանել ՚ի տանէն, վնաս մահու է։ Գրոց տեսն՝ մահն մօտեցեր է։ Գրիչն ու կաղամարն՝ իրիցուն խելք է. կամ ձանապարհ։ Գրչի ամանն՝ կին է։

## Դ

Դահեկանն յումեքէ ՚ի ձեռքն առնուլ և տեսանելն՝ շահ է. կամ կին առնու և տղայք վաստակի։ Դամանն՝ հիւանդութիւն է։ Դանակ տեսանել՝ կամ գնել՝ չէ լաւ. վասն լեզու է։ Դանակ կորուսանես՝ լեզու խափանի։ Դանակ շինողն՝ հիլլայով մարդ է։ Դաշտ տեսանել՝ աճու բան առնես։ Դաշտեն ՚ի դուրս գաս՝ ՚ի նեղութէ



ազա

աղատիս ։ Դատաւորն՝ ամծ է ։ դատաւոր
տեսանել՝ պարոնին պարոնութին յաւելլա_
նայ ։ Դատաստանն՝ մեղաց քննութի է ։
Դարպաս շինելն, կամ դարպասի դուռ
շինելն, կամ դարպաս տեսանելն՝ հարուստ
լինել է ։ Դարպաս լայնացեալ՝ պարոնութի է ։
Դարպաս փակելն՝ մեծ մարդ անկանի ։
Դարպասն ի թագաւորէ՝ պատիւ է ։
Դարբին տեսանել՝ մեծ մարդ է ։ Դարբ_
նութին թէ ինքն առնու, լաւ տանուտէր
լինի ։ Դարբնի սայլն և կռանն՝ պարոնութի
է ։ Դարբնի սարուածն զինչ որ լինի՝
ամէնն բարի է ։

Դեկանն ի յայլ մարդ տայ, կամ կորու_
սանէ, կամ գողանան . ամէն հոգոց ազա_
տի . թէ հիւանդ է՝ ողջանայ ։ Դեկան ու_
դրամ՝ թէ աշուն տեսնուս, արիւն հե_
ղութի է . և թէ ի գարնան ժամանակին
տեսնուս՝ բոր և ծաղիկ է ։ Դեղին պղին_
ձըն՝ համաթ է որ կատարի ։ Դեղին սե_
խըն, դեղին հալաւն, դեղին ձի հեծնուլն՝
դեղինն ամէնեքին վատ է և հիւանդութի ։
Դև տեսանես՝ միաս և նեղութիւն և մե_
ղաց նշան է ։

Դըրդում տեսանելն՝ հիւանդին լաւութի
է ։ Դըրդում ցանելն՝ ջերմ է . և ուտե_
լըն՝ հիւանդութի ։ Դի տեսանես՝ զըզջ


բար

բարւոյ է։ Ջխրակ տեսանել կամ ազա-
նիլ՝ մեծ պատիւ է։ Ջմնիկ տեսանել կամ ուտելն՝ հիւանդութիւն է . կամ անհոգութիւն։
Ջուռն տեսանել կամ առնուլ , պատիւ է . և հետ մեծ մարդոյ ծանօթանայ։
Ջուռ բանալն՝ իւր բախտն բացվի . և իւր կամքն կատարի։ Ջուռ ձգելն՝ մեծ մարդ անկանի . և կործանումն է։ Ջուռ կտրելն՝ մահու նշան է։ Ջուռն եղանելն՝ չէ բարի։ Ջուր տեսանել՝ պատիւ է։ Ջրա տեսանել կամ ժողովել՝ ազատութիւն է։
Ջրայնին բարև տալն՝ կռիւ է։

## Ս

Սագն տեսանել՝ ահն գնայ։ Սագն նըստամն՝ անհոգութիւն է . կամ մեծ աւետիս գայ . կամ զուգակից սիրելի։ Սագին միսն ուտելն՝ աղէկ է։ ոմանք տան թէ նեղութիւն և հիւանդութիւն է։ Սագենք և սալքն՝ նեղութիւն է։ Սագանց կռուին՝ երկիր առնէ կամ թշնամի։ Սագն մորթել՝ մեռս մահու է։
Սաղերգի տեսանելն կամ չինելն՝ փառք է։ բայց ոմանք տան թէ՝ նեղութիւն է։ Սագ ուտելն՝ բարի է։ Սագինկն ի տան տեսանել՝ զուգակից է . կամ սիրելի գայ իւրն։ Սագ ջերմոն՝ երկիր նեղութիւն է։
Սորդեհանն՝ տրտմութիւն է։ Սերկերն՝ խըն-



դու

գութի է։ Երկանք աղալն կամ տեսանե_լըն՝ անհանգստութի է։ Երկաթ տեսանել կամ գնել՝ տրտմութիւն է և յոյժ վատ։ Երկաթով ծեծիլըն՝ նեղութի է և ցաւ։ Երակ առնուլըն՝ սրբութի է։ Երակ կտրե_լըն՝ չէսս մահու է։ Երես լուանալ տե_սանել՝ զէն է։ Երես կարմիր՝ բանն աղէկ լինի։ Երես դեղին՝ մեղք է։ Երես ա_ղէկ՝ մեծ փառք է։

## Զ.

Զանգակի ձայն լսես յերազի՝ խնդու_մըն է և ուրախութի։ Զարդարու_ուտելըն՝ տրտմութի է։ Զաֆրանն՝ հիւան_դութի է։ Զաֆրանով կերակուրըն՝ լաւ է։ Զէնէըն՝ մեծ նեղութի է։ Զինուոր տե_սանել՝ պատերազմ կայ, զի տրտմութի է։ Զմրութն՝ լաւ է հաւատքին և բանին։ Զնտանն յերազի՝ մեծ հոգս է և սուգ։ Զուռնայն կամ զձայնն լսես՝ անձրև է կամ կռիւ։ Զրոյց տալն՝ նեղութի և չա_րութի է։ Զրէհն՝ պարտութի է։ Զրխ հագնելըն՝ զէն է։

## Է.

Էրէց մեռած տեսանել՝ մեծ զրոյց խափանի։ Էրէց ՚ի մեռելոց յառ_նել՝

նել՝ հին խօսք 'ի գրոց գայ։ Էշ բազում տեսանել՝ նեղութիւն է։ Էշ խառնչէ՝ նախանձ է։ Էշ անամօթ՝ չէ աղէկ։ Էշ ըղմեղուք ծամել՝ թշնամեաց կորուստ է։ Էշ ձերմակ տեսանել՝ կամ 'ի յօտար, կամ բարձեալ և հեծեալ՝ բարի է և պատիւ։

Ը

Ընդ իշխանին խօսիլ տեսանել՝ բարի է և յանկարծ շնորհք։ Ընդ այլ ումեմն մարդոյ խօսիլն՝ շահ է և փառք։ Ընդ այլ կնոջ խօսիլ՝ տրտմութի է։ Ընդ անօրէնի խօսիլ՝ սրբունի է։ Ընդ աղբի խօսիլն՝ չէ աղէկ։ Ընդ կուսի հաց ուտելն՝ բարի է։ Ընդ բոզ կնոջ նստելն՝ վնաս է։ Ընդ մօրն նստել՝ անհոգունի է։ Ընդ անասուն զմտաւ ածելն՝ վնաս է։ Ընտել գընալն՝ բախտաւոր լինիս։ Ընդ խաղալ գետանցանելն՝ չէ աղէկ։ Ընդ պղտոր գետ անցանելն՝ նոյն է։ Ըղունկն կտրել՝ վնաս է։ Ըղունկ ունենալ՝ աղքատ է։ Ընկղի ծառ տեսանել՝ աճմունի է։ Ընկուզ ժողովելն՝ չէ աղէկ։ Ըսումբն՝ երկիր է։ Ըղախի խմելն ուրախունի է՝ բայց ոմանք ասեն թէ տրտմութի է։

Թ

Թագաւոր ողջունելն կամ բարևելն յերազի՝ փառք է։ Թախամն՝ մեծութիւն

թի է։ Թախտ կամանչ տեսանել՝ ցաւ է։ Թամբ արարին՝ իրաւարար մարդ է։ Թա_նաք եփելն՝ լաւ է։ Թանաք ՚ի վերայ վա_թես՝ գէշ խօսք է։ Թարախոտ զինքն տե_սանել՝ շահ է և հարստութի։ Թարախն՝ թէ արիւնախառն եկանէ, ՚ի մեղք գործ մը_ղրհի։ Թարտի զինքն տեսանել՝ բարի է։ Թևաւոր զինքն տեսանել՝ հօգոց դիպի։ Թթու մածուն ուտելն՝ հարամ ունձիկ է։ Թթի ծառն՝ հարուստ մարդ է։ Թիւր՝ զինչ և իցէ, նեղութի է։ Թզի ծառն՝ լիրբ մարդ է։ Թուզ դալար տեսանել կամ ու_տել՝ վնաս է, և փոշիմանութի։ Թուզ չոր ուտելն՝ շահ է։ Թուխ մորուս ալեւոր տե_սանելն՝ շահ է։ Թուխ զինքն տեսանել՝ մեծութի է անձինն։

Թռչիլն յերազի՝ յայլ տեղ երթայ։ Թէ յիւր կտուրէն ՚ի յայլ կտուր թռչի՝ նա իւր կինն թողու, և այլ կին առնու։ Թէ թռչի որ բարձրանայ՝ ՚ի լաւութի հասանի։ Թէ թռչունն յանձն քո մերձենայ՝ մարդ երանէ զքեզ։ Թռչուն արձակելն՝ մեծ բարութի է։ Թռչուն փախչիլն՝ մեծ վնաս է։ Թռչնոց կռուիլն՝ վնաս է։ Թռչունն թէ խա_ղայ ընդ քեզ՝ քո թշնամիքն սիրեն զքեզ։

Ժ

Ժամատուն զարդարած տեսանել՝ ալ_



քայ

զայրուն արժանի լինիս։ Ժամ երթալն՝
կենանցն բարի լինի։ Ժամանաուն մտանելն՝
հաւատքին լաւ է։ Ժամանաունն աղօթելն՝
լաւ բան անելն է։ Ժամ անելն՝ աղէկ է։
Ժամանհար տեսանել՝ գողրուն հասանիս,
կամ նեղուի է։ Ժուռ գալն՝ չէ աղէկ։
Ժողովք տեսանել՝ ժխորումն է։

## Ի

Ի մանկուն զինքն ալեւոր տեսանել՝ կենաց
յաւելումն է։ Ի յալեւորութեն զինքն
մանուկ տեսանել՝ նոյն է։ Ի ծովակի նըս-
տիլ՝ զուարթութի է անձինն։ Ի նաւ նստիլ՝
պատիւ է։ Ի բարձր տեղւոջ նստիլ՝ պա-
տիւ առնու յաւագաց։ Ի յանապատի նըս-
տիլ՝ հիւանդութի ցուցանէ։ Ի բարբարոս
նստիլ՝ նեղութի է։ Ի կին նստիլ՝ բարի է
եւ լաւ։ Ի ձի ձերմակ նստիլ կամ ի սեւ՝
պատիւ է եւ բարի։ Ի ձի խմաստուն նըս-
տիլ՝ աւետիս է եւ շահ։ Ի ձի վազան նըս-
տիլն՝ խիստ աղէկ է։ Ի ձի գնացող նստիլ՝
շահ է։ Ի սեւ ջորի եւ ի ձի նստիլն՝ ի մե-
ծունաց շահ տեսանէ։ Ի գայլ նստիլ՝
նեղութի է։ Ի կառ նստիլ՝ մեծ պատիւ է։
Ի լայց. նստիլն՝ շատ նեղութի է։ Ի բարձր
տեղւոջէ անկանիլ՝ ի փառաց անկանի։
Ի լուծս գնել զեզինս՝ զօրց է։ Ի սերմա-
նիս

նիս ձեան արկանել կամ վարել՝ բարի է։ ՚Ի ջրհոր կամ ՚ի գետն անկանիլ՝ ՚ի նեղութ անկանի։ ՚Ի ջրհորէ ՚ի գետոյ կամ ՚ի ծովէ ելանելն՝ պատիւ է և ազատութ. չելանելն՝ վնաս մեծ է։ Սրբեցու խաչ տանուլն՝ պատմութի է։ Սուրբ մի ուղեն քերթանէ՝ պատիւ է։ ՚Ի գերեզմանն զէնքն տեսանել՝ դատաստանաց հանդիպի և զղջանանի։ ՚Ի մեռելոց իրք առնուլն՝ շահ է և բարի։ ՚Ի մեռելոց պարգ. առնուլ՝ զէն է և վնաս։ ՚Ի թշնամոյն զէնքն առեալ յայլ երկիր վարի, և մեծութ հանդիպի։ ՚Ի վայրի գազանէ հալածիլ՝ ՚ի զօրաւոր մարդոյ պատրաստ կացիր. կամ թշնամի յաղթէ քեզ։

## Լ.

Լոյս տեսանել՝ աշխարհի խաղաղութ է։ Լոյս շիջեալ՝ տրտմութ է առաջնորդաց։ Լուսին և արեգակն տեսանել յայգին՝ վնաս է այգին։ Լուսնի առողջն՝ խիստ շահ է։ Լուսինք բազումք՝ անձուկ է երկրին։ Լուսինն կարմիր՝ վնաս է։ Լուսինն խաւար՝ թագաւորի մահ է։ Լուսինն երկու տեսանել՝ երկու թագաւոր յառնեն ՚ի վր միմեանց։ Լուծ՝ ուժգին է։ Լուծ դնելն՝ վատ է։ Լուծք եզանց՝ բարի է։ Լեառն բարձր՝ տրտմութ ազատի։



Լե-

Կենեղն՝ հարուստ կնիկ է։ Կինն՝ անոյշ խօսք է։

## Խ

Խաչակնքել զինքն ուսանել՝ մեծ պատուոյ նշան է։ Խաչն՝ չարչարանք է։ Խաչափայտն՝ դատարկ մարդ է։ Խաւարն՝ նեղութիւն է։ Խաւեարն՝ հիւանդութիւն է։ Խաղողն՝ անձրև է, և ցնորք։ Խաղողի ատենն՝ լաւ է։ Խաղող սպիտակ՝ խնդութիւն է։ սև խաղողն՝ լաց է։ Խաղող ժողված՝ գանձ է։ Խայտ հանդերձ առս՝՝ ուաղ մեռանի։ Խարատաւ ուսանել՝ օտար կին մերձենայ։ Խարփիղակ սև և սպիտակ կամ կանանչ ուսանելն՝ աղէկ է։ բայց ուտելն՝ հիւանդութիւն է։ Խիարն՝ ուրախութիւն։ Խեցեղէն աման ունիլն՝ ուրախութիւն է։ Խմոր ուտելն՝ շահ է։ Խնդալն՝ չէ աղէկ։ Խնծորն՝ տղայ և աղախին է։ և ուտելն՝ շահ։ Խնծորն թէ քեզ տան՝ աւետիս է։ Խնծորի ծառն՝ մեծ մարդ է։ Խուլն և համրն՝ շահ է։ Խունկ ծխելն՝ խնչք և ապրանք է, և անոյշ խօսք։ Խորոված միս ուտելն՝ շահ է։ Խոզ մեծ առս՝՝ մահ է։ կամ այլազգի։ Խոզի միս ուտելն՝ ազգականաց մահ է։ Խոտն՝ լաւ մարդ է։ Խոտ ժողվելն՝ պատիւ է։



Ծաղ

Ծաղկեալ անդաստան տեսանել՝ շահ է և ուրախութիւն ։ Ծաղիկն՝ անհոգութիւն է ։ Ծաղիկ քաղել՝ կին առնու ։ Ծաղկիլն՝ բարի է ։ Ծաղկած ծառն՝ նոյն է ։ Ծաղիկն ու բորն՝ սրտնեղութիւն է ։ Ծառ անկելն՝ յիշատակ է ․ կամ այլ բան բարի ։ Ծառ պտղով՝ բարի է ։ Ծառ կըտրել կամ այրել՝ վնաս է ։ Ծառն թէ ծուխ լինի՝ չէ լաւ ։ Ծառին տերեւն թափի՝ արիւնհեղութիւն է ։ Ծառ անկանիլ՝ մարդոյ մահ է ։ Ծառ մեծ խլել՝ յաւագաց ումն անկանի ։ Ծառ տեսանել գքեղ կամ նստիս՝ փառք է ։ Ծառի վր գնալն՝ նոյն է ։ Ծառ կանանչ՝ գանձ է ։ Ծառ չոր՝ տրտմութիւն է ։ Վատ մարդ է ու չարակամ քեզ ։ Ծամ գուգելն՝ կին է ։ Ծամ կտրելն՝ բաժանումն է ։ Ծառայն՝ աւետիք է և խնդութիւն ։ Ծարաւիլն՝ չէ բարի ։ Ծանր շալակելն՝ մեծ մեղք է ։ Ծիծաղելն՝ տրտմութիւն է ։ Ծիծղըն՝ աղայ է, կամ մեծութիւն ։ Ծնանիլ կընոջն՝ մեծ շահ գայ ։ Ծունր ածելն առ Ած՝ լոյս է ։ Ծով տեսանել՝ շատ հեծել է ։ Ծով պղտոր՝ նեղութիւն է ։ Ծով ցամաք՝ լիութիւն է աշխարհի ։ Ծովու լուացվիլն՝ շահ է ։ Ծովայեններն՝ մեծ թշնամի է ։ Ծովու ՚ի ներս երթալ՝ ՚ի վր թշնամեաց յաղթանաս ։



Ծովու

Ծուլն զմարդն ՚ի նեղս քարշէ՝ անմտողն զօղի ձեռաց ապանմի։

## Կ

Կամուրջ շինելն՝ խիստ լաւ է։ Կայծա_կըն՝ խռովութի է։ Կանանչ ծաղիկն՝ բարի է։ Կապած տեսանել՝ անհոգութի է։ Կարկուտն՝ երկրի նեղութի է։ Կարասն՝ նեղութիւն է։ Կաղուտն՝ աւերումն է։ Կղմինդր տակ հանելն՝ չէ լաւ է ը֊ դանիելի։ Կենդանի զինքն ՚ի գերեզմանի տեսանել՝ մեծ զրոյց է։ Կին առնուլն՝ չէ լաւ մահու է։ Կին հերարձակ՝ նոյն է։ Կին գեղե_ցիկ և զարդարած՝ երկիր է կամ՝ քաղաք։ Կնոջ հեր կտրելն՝ խիստ չէ լաւ է։ Կոյս զինքն տեսանել՝ խիստ շահ է։ Կուժն՝ որդի է։ Կուժ ջրով տեսանել՝ բարի է ա_մենեին։ Կուպրոյ տեսանել՝ պատիւ է։ Կուսմոչ տեսանել՝ հուր է։ Կորեկ տես՝՝ կամ ուտել՝ լռութի է։ Կրակ անկանիլն՝ մահ է. և սով։ Կատու հանել՝ չէ բարի։ Կօշիկ տես՝՝ կամ ագանիլ՝ ճանապարհ է։

## Հ

Հայ տես՝՝ բարի է և լաւ։ Հաւն՝ զուարթութի է։ Հաւ սիրամարգ տե_սանել՝ մեծ իշխանի է։ Հաւ ՚ի ձուի վր՝

յանկարծ շնորհք է։ Հաւ 'ի խօսելն՝ մարդ 'ի կենաց անկանի։ Հաղորդ առնուլն՝ ծեծ է մարդոյն։ Հասկ քաղելն՝ ուրախութի է ըստ պղատոնի։ Հարստանիլն՝ տրտմութի է։ Հայրապետն՝ մեծ զրոյց է։ Հայրն մեռած կենդանացելով՝ մեծ շահ է։ Հալուն այրամ՝ շահի 'ի կնոջէ։ Հանդերձն՝ հեծել է և թշնամի։ Հանդերձ կորուսանելն՝ վընաս է։ Հանդերձ գինեգոյն ունիլ՝ նոյն է։ Հետաւոր զինքն տեսանել կամ զայլ ոք՝ շատ շահ է. լաւ և բարի։ Հիմն արկանել՝ հարստութի է։ Հիմն 'ի վերայ հիման դնել և շինել՝ բարի է։ Հիմն 'ի շինէ գուբս տեսանել՝ գերեզման է։ Հիւանդ տեսանել՝ նեղութի է։ Հող բառնալ տեսանել՝ նոյն է։ Հում միս ուտելն՝ մեծ զրոյց է։
Հոր փորելն՝ խիստ նեղութի է։

## Ձ

Ձեան լուանալ տես՛՛ աղէկ է։ Ձեան Ճրագ՝ որդի լինի։ Ձէթ եփելն՝ հիւանդութի է։ Ձիթենով օծանիլն՝ շնորհք է։ Ձիթապտուղ ժողովելն՝ բարի է։ Ձի նստիլն՝ մուրատ է և լաւ։ Ձու տեսանել կամ ժողովել՝ կռիւ է։ Ձոր տես՛՛ կամ անցանել՝ 'ի նեղուէ ազատիս։ Ձուկն 'ի ջրէն հանել՝ ամպ գայ կամ ձիւն կամ

ջերմ լինի։ Ձուկն ՚ի կրակին՝ երկրի նե֊
ղութիւն է։

Ղ.

Ղան կամ սուլթան տեսանել՝ անչափ աղէկ է։ Ղեկաւ գնալն՝ հետ մե֊ռելոց գնալ։ Ղամպար վառելն՝ բարի է։ Ղեսոյ տեսանել՝ չէ բարի։

Ճ

Ճանապարհ երթալն և յետ դառնալն՝ բարի է։ Ճանապարհ երթալն՝ ՚ի նե֊ղութենէ ազատիս։ Ճոպան կամ չուվան տեսանել՝ երկայն ճանապարհ է։ Ճառ գը֊րոց տեսանել և լսել՝ հոգս է։ Ճնճղուկ տես՛՛ կամ ունիլ՝ բարի է։ Ճրագ վառեալ տեսանել՝ ծածուկ գործք յայտնին։ Ճրագ անցեալ տեսանել՝ կործանումն է տան։

Մ

Մանուկ մերկացեալ կամ ծեր ալեւոր տե֊սանել՝ կենացյաւելումն է և շնորհ։ Մատանի կամ պատմուճան տես՛՛ կամ շինել տաս՝ իշխանութի է։ Մատանի կոտ֊րած՝ վնաս է։ Մատանի կորուսանել՝ կին կամ սիրելին մեռանի։ Մատանի այլոց առնուլ՝ անհոգութի է։ Մատանի երկու ունիլ՝ երկու կին առնու։ Մատանի ար֊ծաթի՝

ծածկի՝ ՚ի ներքութենէ աղատիս : Մատակ
յուղտ նստիլն՝ հիւանդութի է : Մարգա֊
րիտ տեսանել՝ մեծութե նշան է : Մարդոյ
լերդ ուտել՝ գանձ տեսանէ : Մարդոյ ոս֊
կըր ուտել՝ ՚ի զընդան մտանէ : Մեծահա֊
սակ զինքն տեսանել՝ փառք է : Մեծ փա֊
կեղ ուսովն արկեալ՝ մեծ շնորհ է : Մե֊
ռել տեսանել՝ կամ զազգականն՝ կամ ՚ի
մեռելէ իրք առնուլն՝ կամ մեռել կեն֊
դանանալն՝ մեծ և անցեալ զրոյցն յաւնէ :
Մեռած զինքն տեսանել՝ շատ ապրի :
Մեռելն թէ խօսի՝ զգուշ լեր , մի՛ հաւա֊
տար ումեք : Մեռել թաղելն՝ շփոթումն է :
Մեռել ՚ի գերեզմանի տեսանել՝ խափանի
չարն : Մեռել բազում տեսանել՝ թշնա֊
միք արձակին : Մեղր ուտելն՝ մեղք և
սրտնեղանք է : Միս աղի տեսանել կամ
ուտել՝ հիւանդութի է : Միրգ ուտելն՝
նոյն է : Մոմ վառած՝ ուրախութի , և որ֊
դի է : Մորեխն՝ հեծել է , և ձի նեղութի :
Մութն և մուկն՝ վնաս է և չար : Մոր֊
ուք զինքն տեսանել՝ շնորհք է : Մորուս
գէշ՝ զէն է . և փետելն խաղաղութի :

## Յ

Յաթոռ նստիլն՝ բարձրութի է : Յաւագ֊
երթալն՝ բարի է : Յաւաղան ձեռն



արկա

արկանելն՝ ՚ի մեծ մարդէ իբր տանուս։ Յաղբերէ ջուր խմելն՝ բարի է։ Յամպոց ձայթմունս լսելն՝ չէ բարի։ Յարջէ հալածիլն՝ ՚ի կռուոյ ազատիս. կամ յաւագէ պատրաստ կաց։

Յեկեղեցի երթալ տեսանել՝ ՚ի ծանրութէ ազատիս։ Յերկինս ելանել՝ մեծ պատիւ է։ Յերկինս ձեռն ՚ի վեր կալով՝ մահ է։ Յերազի իբր ուղելն՝ պատիւ է։ Յերազի երազ պատմելն՝ խիստ աղէկ է։ Յիւր երկրէն ելանել՝ ՚ի նեղութէ ազատի։ Յորս երթալն՝ բարի է։ Յուղտ նստիլն՝ պատիւ է։

## Ն.

Նախիր տեսանես որ ՚ի գիւղն գայ՝ աւագ է։ Նախիրն որ շուրջ գայ՝ խռովութի է։ Նապաստակ ունենալ՝ իւրն նման տղայ կու լինի։ Նաւորդ լինիլն՝ զրոյց ելանէ։ Նաւ ոսկոյ կամ արծաթի տեսանել՝ բարի է։ Նաւ նստիլ՝ շատ ժամանակ ապրի։ Նաւ երթալով՝ ՚ի հեռաստանէ շահ գայ։ Նաւ գանձով՝ նեղութի է։ Նաւ այրիլն՝ երկրի խռովութի է։ Նաւ կոտրած՝ մահու նշան է։ Նոր իբր տեսանել՝ յօտարութի երթայ։ Նուռն՝ յօտարաց շահ է։

## Շ.

Շապիկ սպիտակ տեսանել կամ ագանիլ՝ արդարութի է. սեւն՝ տրտմութի է։

աղտոտն՝ մեղք է ։ Շեղջ ցորենոյ տեսա-
նել՝ զամ է ։ Շէնք շինելն՝ բարութի է ։ և
քանդելն՝ վնաս ։ Շերբեթ խմելն՝ խելաց
յաւելումն է ։ Շիշ խաղալ առձիկ է և
չար ։ Շողն՝ փառք է ։ Շուք առնելն՝
մեծ պատիւ է ։ Շունք ընդ իրար կռուին՝
չէ աղէկ ։ Շունն հաչէ կամ խածնէ՝ լե-
զու է ։ և 'ի չար մարդէ պատրաստ կաց ։
Շունն՝ կմ թեւաւոր գազանք՝ թշնամիք են ։

## Ո

Ոսկի խնձոր տեսանես՝ պատիւ է ։ Ոսկին
կամ արծաթն՝ խիստ չար է ։ Ոչխար
տեսանել՝ ձմեռն է և ցուրտ ։ Ոչխար մոր-
թած՝ ձմեռն լաւ գայ ։ Ոչխար սև՝ սուգ
է և տրտմութի ։ Ոչխար 'ի ճանապարհի՝ հա-
րստութի է ։ Ոջիլ կոտրելն՝ մաշումն է ։
Ոսկր քերելն՝ լաւ է ։ Ուղտ տեսանես՝ պա-
րոն է ։ Ուղտ 'ի նստմանն՝ հաւատք է ։ կամ
նուաղութի ։ Ուղտ պեսեբեկ՝ չէ լաւ ։ Ուղտ
երկու կռուին՝ իշխանք կռուին ։

## Չ

Չամիչն՝ խիստ վնաս է ։ Չամանն՝ կռիւ
է և աղաղակ ։ Չանչն՝ տրտմութի է ։
Չարխս զինքն տեսանել՝ 'ի չարէ ազատի ։
Չիբն՝ աւելաւ չար է ։ Չոզանն՝ ճանա-
պարհ է ։ Չոր ծառն՝ մեռեալ մարդ է ։



Չոր

Չոր միսն՝ ուտիլ է և շահ։ Չուխայ սպի_տակ տեսանել՝ արդարութ̃ն է։ Չուխայ կա_նանչ՝ հարստութ̃ն է։ Չուխայ սև՝ տրտմութ̃ն է։

Պ

Պատարագ տեսանել՝ կռիւ է։ Պար_տէզն՝ բարի է և արդարութ̃։ Պարտէզ գործելն՝ բարի է։ Պաղ կարել տեսանել՝ խափանի չարն։ Պղպեղ տեսանել՝ կսկիծ է։ Պղպեղ ուտել՝ թշնամեաց պատրաստ կայ։ Պատկերն՝ խիստ աղէկ է. ոմանք ասեն թէ՝ կռիւ է։ Պսակ զարդարած տեսանել՝ նոյն է։ Պսակ արծաթի՝ հիւանդութ̃ն է։ Պսակ ՚ի փշոց՝ մեծ շահ է։

Ջ

Ջաղացք շինելն՝ մեծութ̃ է. և աւերելն՝ չքնութ̃։ Ջաղացքի աղունն և ջհանի սատակն՝ հիւանդութ̃ի են։ Ջուր տե_սանես՝ հետ անհաւատ մարդոյ խօսիս։ Ջայլամ հաւն (որ է տէվէղուշն) թէ տե_սանել՝ ՚ի նեղութ̃է ազատիս։ Ջուր ՚ի գետն ըմ_պելն՝ խիստ լաւ է. և աղբիւրի ջուրն՝ նոյն է։ Ջուր ՚ի տան քում տեսանել՝ չէ աղէկ։ Ջուր պղտոր տեսանել՝ կամ ըմպել՝ տրտ_մութ̃ է։ Ջուր ՚ի գնացման տես՟ բարի է։ Ջուր ՚ի գետակ առնուլն՝ վնաս է. իսկ յաղ_բերէ առնուլն՝ բարի է։ Ջուր շատ տե՟ կամ անցանել՝ հեծեծանք են։

## Ու

Ուսապատ մտաւորն՝ նեղումն է։ Ուէհան ծաղիկն՝ բարի է։ Ուռճիկ տեսանել՝ խիստ վատ է։ Ուսումն կանգնած տեսանել՝ մեծութիւն է. և պատիւ։ Ուսումն ՚ի ձեռին ունիլ՝ ճանապարհ է և երկիր։ Ուսա տե՞ մեծ հակառակուն է։ Ուղևոր ձգելն՝ թողութիւն է հոգւոյ և մարմնոյ՝ և ամ՛ բանի։

## Ս

Սագ տեսանելս՝ մեծ մարդ է։ Սալորն՝ առողջութիւն է։ Սաղաւարտն՝ անհոգութիւն է։ Սամիթ գալար տեսանել՝ լաւ է։ Սամիթ չոր՝ չէ լաւ։ Սանդուղ կանգնած տեսանել՝ մեծութիւն է. և բարի։ Սանկին և զրեհն՝ ծանրութիւն է։ Սանտր ածելն՝ զէն է։ Սարբը ջորի կամ՛ ձի տեսանել՝ մեծութեան հասանիս։ Սենեակ քակելն՝ ՚ի կնոջէ բաժանիլ։ Սերուն՝ բարի է։ Սիւնն՝ նեղուն և կռիւ է։ Սխտորն և սոխն և սապոնն՝ կակիծ են։ Սոխ և սագի միս ուտելն՝ հիւանդութիւն է։ Սուգն՝ ուրախութիւն է։

## Վ

Վախեալ կամ՛ վառեալ զինքն տեսանել՝ հարստութիւն է։ Վանք և աբեղայ տեսանել՝ նեղութիւն ամբոխ է։ Վառած ճրագ տեսանել՝ [illegible] է։ Վարդ տեսանել՝ կին առ–

տանու։ Վարդ քաղելն՝ բարի է։ Վար-տիսն՝ բարի է։ Վիշապ տեսանել՝ պարոն կամ աւագ է. ոմանք ասեն թէ ներղունի է։

Տ

Տաճար զարդարած տեսանել՝ բարի է։ Տաճար այրիլն՝ խռովութի է։ Տաճիկ տեսանել՝ արձակումն է թշնամեաց։ Տախտ գիպակով՝ բարի է։ Տանձ ուտելն՝ հիւանդութի է։ Տարեխն՝ ճանապարհ է։ Տիկն և տիկինն՝ տրտմութի է։ Տղայ ՚ի գիրկն առնուլ՝ ցաւ է և հիւանդութի։ Տուն շինելն՝ խիստ բարի է։ Տունն աւերել՝ չէ բարի. գանձի և ոսկւոյ զէն է։ Տուն իւր կամ զայլոցն աւիրած տեսանել՝ չէ լաւ. անի-րաւութի է։ Տուն իւր կամ զայլոցն ար-ծաթի տեսանել՝ միտս մաշու է։ Տունկ տնկանելն՝ ազգաց օրհնութի է։

Ց

Ցեխն որ է ջամուռ՝ միտս է և տրտմութի։ Ցեցն՝ լեղու է։ Ցիցն՝ չար լեղու է։ Ցից հանելն՝ ներղունի է. ոմանք ասեն թէ. աղէկ է։ Ցորեանն՝ ցնորք է։ Ցուլ բըռ-նելն՝ աղէկ է։

Փ

Փայտ տեսանելն կամ առնուլն՝ խիստ ա-ղէկ է։ Փոխինձ ուտելն՝ զէն է։ Փող-հա-

հարելն՝ թշնամիք կորնչին ։ Փող հարկա–
նելն՝ մեծութիւն է ։ և բախտի տիրանայ ։
Փուկայ խմելն՝ հիւանդութիւն է ։ Փուշ հա–
տանելն՝ թշնամեաց կորուստ է ։ Փուշն թէ
՚ի յափդ ժողովես՝ չար ժամանակ է ։ Փողը
մարդ տեսանել՝ շնորհք է ։

Ք

Քաղաք մտանել տեսանել՝ աղէկ է ։ Քաղցր իրք ուտելն՝ չէ լաւ ։ Քաղ
ցրը ձգելն՝ վնաս է ։ Քարինս ժողովելն՝
լեղու է ։ Քար ՚ի հիմն ձգել՝ թշնամի է ։
Քարի վերայ նստիլն՝ ղամ է ։ Քացախ
խմել տեսանել՝ խափանի չարն ։ Քղամիդ
հագնիլն՝ խնդութիւն է ։

Օ

Օձն թէ հետ իւրն խօսի՝ հանց բան
տանէ ։ որ ամէն մարդ և ամ զարմանայ ։
Օձն թէ սպանանէ՝ զիւր թշնամին յաղթէ ։
Օձն թէ ՚ի մահճի տեսանու՝ կին առնու ։
Օձն թէ խայթէ՝ ՚ի թշնամեաց զէն գայ ։
Օձն թէ յիւր վերայ յարձակի՝ ՚ի թշնա–
մեաց ահ գայ ։ Օձն թէ ՚ի փորն մտանու՝
՚ի թշնամեաց չար խօսք լսէ ։ Օձն թէ ՚ի
վերայ անկողնոյն սպանանէ՝ իւր կինն մե–
ռանի ։ Օձն թէ տեսանու և չկարէ՝ ՚ի թշ
նամեացն անհոգանայ ։ Օձն թէ յիւր


տան

տան մէջն տեսանէ՝ իւր կինն հետ իւրն Թշնամանայ։ Օձն թէ երկու կտոր տեսանէ՝ նա յիւր Թշնամեացն՝ իւրեանն շահ գայ։ Օշինդր տեսանել կամ խմել՝ կռիւ է։

Մորդ՝ ժողով երազ տեսանէ՝ զարհուրի և վախէ, յիշեսցէ զԴանիէլ մարգարէն՝ և զերեք մանկունքն՝ և զՍ. Թադէոսին հայ րապետն։ Եւ երեք ժամ վառէ յեկեղեցին. և եօթն ծունր կրկնէ. և զներդ գրեցեալ սուրբքս յիշէ, ամէն չար երազ՝ 'ի բարին կատարի աստուծով։

Լուսնի Երրորդոյ։

Առաջին.

Որն լուսնին՝ բարի է ամ իրաց. զ տղայ նոր սանեղծու. սերմանել. անկել. 'ի ճանապարհ ելթալ. հիմն արկանել. զի այսօր սկիզբն արար Նոյ տապանին. և մովսէս այսօր եհան զժողովուրդն յեգիպտոսէ. և գաբրիել այսօր ետ ողջոյն մարիամու. և սողոմոն այսօր սկիզբն արար տաճարին. հիւանդն ողջանայ. կորուսած գտանի. երազն 'ի բարին կատարի։



Եւ

## Երկու

Օրն՝ չէ բարի · զի նախասահմանեալն այսօր անկաւ · և կայէն այսօր սպան զհաբէլ՝ և շաղախեցաւ երկիր յարենէ նր̃ · որ ծնանի՝ հեզ և խոնարհ լինի , այլ շնացող · հիւանդն չարչրի · կորուսածն մինչև 'ի քառասուն օրն գտանի · տունկ դնելն · նաւ ուղղելն՝ աղէկ է · երազն երեք օրն կատարի ·

## Երեք

Օրն՝ բարի է ամ̃ իրաց · որ ծնանի՝ շնոր հաւոր լինի և պատերազմող · զի այսօր դշխոյն հեղինէ զխաչն եգիտ · և սողոմոն այսօր ծնաւ · գնել՝ վաճառել՝ բարի է · կո֊ րուսեալն գտանի · հիւանդն ողջանայ · փա֊ խուցեալն դառնայ · երազն 'ի բարին կ̃տարի ։

## Չորս

Օրն՝ պահպանութե̃ է · մի՛ գնեք · մի՛ վա֊ ճառեք · մի՛ 'ի դուրս ելանեք · զի այսօր քակեաց նաբուգոդոնոսոր զտաճարն · և մոգքն այսօր բերին զընծայսն · և հերով֊ դէս խաբեցաւ 'ի մոգուցն ։ որ ծնանի՝ շ֊ նորհաւոր լինի և մեծուն հասանի · հիւ֊ անդն մեռանի · երազն սուտ է ։

## Հինգ

Օրն՝ բարի է ամ̃ իրաց · մարդուն աղէկ գայ ·

գայ · սերմանել · անկել · 'ի ճանապարհ ել_
թալ · նաւ ուղղել · որ ծնանի՝ բախտաւոր
լինի · զի այսօր եմուտ Նոյ 'ի տապանն · և
սողոմոն զտաճարն շինեց · կորուսանն գտա_
նի · հիւանդն ողջանայ · երազն 'ի բարին
կատարի ։

## Վեց

Օրն՝ բարի է ա՟մ իրաց · մանկունս յու_
սումն տալ · զի այսօր եմուտ Տ՟րն առ դը_
պիրս · զա՟մ ինչ գործել բարի է · և այսօր
առաքեաց Տ՟րն զառաքեալսն 'ի քարոզութ՟ի ·
հիւանդն ողջանայ · որ ծնանի · բախտաւոր
լինի · կորուսանն մինչև 'ի քառասուն օրն
գտանի · երազն 'ի տարին կատարի ։

## Եօթն

Օրն՝ պահպանութ՟ի է · զի այսօր առաք_
եաց աստուած զադամ 'ի դրախտէն · որ
ծնանի՝ պիտակատ լինի ու գող · հիւանդն
խիստ նեղի՝ բայց ապրի · երազն սուտ է ։

## Ութ

Օրն՝ բարի է ա՟մ իրաց · զի այսօր եղև
սկիզբն թլփատութ՟ե · և լեզուքն այսօր
բաժանեցան · հիւանդն ողջանայ · կորու_
ստն գտանի · որ ծնանի՝ ձայնեղ լինի և ծե_
րանայ · երազն ութ օրն կատարի ։



Ինն

## Ինն

Օրն՝ բարի է · զի այսօր մկրտեցաւ քս̃ · որ ծնանի՝ յերկարակեաց լինի · գնել · վաճառել · ՚ի ճանապարհ երթալ · մանուկ մկրտել · թագաւոր տեսանել · առ աւագ ՚ի դատաստան մտանել · կորուսեալն գտանի · հիւանդն լաւանայ · երազն ՚ի բարին կատարի ։

## Տասն

Օրն՝ ՚ի ծնունդն է · մի՛ ինչ գործեր՝ չէ բարի · պատրաստ կաց յամ̃ իրաց · մի երդնուլ՝ և մի՛ երդումն տալ · մինչ մի՛ հարթել · որ ծնանի՝ խեղդամահ լինի · հիւանդըն ողջանայ · փախուցեալն գտանի · երազն երեք օրն կատարի ։

## Տասնմէկ

Օրն՝ աշխարհ ջրհեղեղաւ ջնջեցաւ · յամ̃ ինչ գործել՝ չէ բարի · մի՛ երդնուլ՝ և մի՛ երդումն տալ · զի այսօր եկուլ կէտն զյօնան · և մի՛ ՚ի ջուր մտանել · որ ծնանի՝ փութով մեռանի · մի՛ ՚ի ճանապարհ գնալ · զի այսօր ելաւ ադամ՛ ՚ի դրախտէն · հիւանդն յառնէ · երազն օրն կատարի ։

## Տասներկու

Օրն՝ չէ բարի · մի՛ երդնուլ՝ և մի՛ երդումն տալ · յամ̃ իրաց պատրաստ կաց՝ և

աղօթեան · զի այն օրն պաշտամուն է · հի-
ւանդն մեռանի · երազն երեք օրն կէրրի ·

### Լուսնի երեք ·

Օրն՝ բարի է ամ իրաց · գործել · հիմն արկանել · հարսանիս առնել · որ ծնանի՝ իմաստուն լինի · հիւանդն խօսի · երազն ՚ի բարին կատարի ·

### Լուսնի չորք ·

Օրն՝ հնազանդութիւն է ամ իրաց · մի՛ ինչ գործել · որ ծնանի՝ չարեաւ մեռանի · հիւանդն նեղութիւն կրէ · զի քրս յայն օրն խաչեցաւ · երազն քառասուն օրն կատարի ·

### Լուսնի հինգ

Օրն՝ բարի է ամ իրաց · որ ծնանի՝ զօրաւոր լինի · որ հիւանդանայ՝ յառնէ · զի քրս այն օրն աւերեաց զդժոխսն · շինել՝ անկել՝ վաճառել՝ բարի է · զոր ինչ գործեա՝ շնորհաւոր լինի · կորուսան գտանի · երազն օրն կատարի ·

### Լուսնի վեց

Օրն՝ բարի է յոյժ ամ իրաց · սերմանել · անկել · հարսանիս առնել · մանուկ ՚ի յուսումն տալ · առ աւագ մտանել · զի քրս յայն օրն պատուեցաւ ՚ի մոգուցն · որ ծնանի՝ գեղեցիկ լինի · շատակեաց և մեծատուն ·



կո-

կորուսան ոչ գտանի․ հիւանդն ապրի․
երազն երեք օրն կատարի․

## Տասնեօթն

Օրն՝ բարի է․ հիմն արկանել․ պատե_րազմել․ հիւանդն առողջ ելանէ․ երազն օրն կատարի․

## Տասնաութ

Օրն՝ բարի է․ հարսանիս առնել․ 'ի ճանապարհ երթալ․ զի քս̃ այսօր ազատեաց զհո_գին․ որ ծնանի՝ զրախօս լինի․ հիւանդն ողջանայ․ երազն բարի է․

## Տասնեինն

Օրն՝ բարի է ամ̃ իրաց․ սերմանել․ տնկել․ մանուկ յուսումն տալ․ յաւագ մտանել․ զի քս̃ յայն օրն պատուեցաւ․ որ ծնանի՝ բախտաւոր լինի և հանճարեղ․ բայց որբե_ցող և լեզուան վատ և չնացող․ զի սկիզբն կայենէն է և զաւակաց նր̃․ հիւանդն մե_ռանի․ 'ի թշնամեաց պատրաստ կաց․ երազն 'ի բարին կատարի․

## Քսան

Օրն՝ բարի է ամ̃ իրաց․ զի ած̃ յայն օրն երևեցաւ աբրահամու և օրհնեաց զնա․ սերմանել՝ շինել՝ վաճառել՝ 'ի ճանապարհ երթալ․ յաւագ մտանել՝ և ամ̃ ինչ գործել․



բարի

բարի է․ որ ծնանի՝ խոնարհ լինի և աղօթասէր․ բայց ՚ի հուր անկանի կամ ՚ի ջուր․ զի ա̃ծ յայն օրն այրեաց զադամ․ հիւանդն վտանգի․ երազն սուտ է ։

### Լուսնին ժէ

Օրն՝ չէ բարի․ մի՛ ինչ գործել․ զի պատահմունս չարաբերայի է․ մի՛ վաճառել՝ մի՛ գնել՝ մի՛ երդնուլ՝ և մի՛ երդումն տալ․ հիւանդն նեղի կամ մեռանի․ որ ծնանի՝ աղօթասէր լինի․ երազն սուտ է ։

### Լուսնին ժը

Օրն՝ մի՛ ինչ գործել մեզս՝ որ չփամթերակիս․ բայց հիմն արկանել՝ վաճառել՝ գընել՝ մանուկ տալ յուսումն՝ և ամ ինչ բարի է գործել․ որ ծնանի՝ յերկարակեաց լինի՝ և ատագաց սիրելի․ զի յայն օրն՝ հրամանն ետ տէրն գաբրիէլի, աւետիս տալ սր̃կուսին մարիամու․ հիւանդն լաւանայ․ երազն ՚ի բարին կատարի ։

### Լուսնին ժթ

Օրն՝ բարի է ամ իրաց․ զի ք̃ս աշակերտացն երևեցաւ․ որ ծնանի՝ բախտաւոր լինի․ առատամիտ և յաջողակ․ ՚ի ձանձըրհ երթալ․ գնել՝ վաճառել՝ բարի է․ փախուցեալն գայ․ կորուսան գտանի․ հիւանդն մահանիթ․ երազն յերևումն օրն կատարի ։

### Քսանևչորս

Օրն՝ չէ բարի · պատրաստ կաց յա՟մ ե-րաց · ոչ 'ի ճանապարհ գնալ · ոչ վաճառել և ոչ գնել · և ոչ առ ու տուր մտանել · որ ծնանի՝ անօգուտ լինի և անվաստակ · փախուցեալն դառնայ · զի յայն օրն աւերեցաւ Եր՟մ · երազն սուտ է · հիւանդն ողջանայ ·

### Քսանևհինգ

Օրն՝ պահպանութե՟ է ա՟մ իրաց · մի՛ երդ-նուլ՝ մի՛ երդումն տալ՝ և մի՛ ուրեք գը-նալ · զի չար է · և յայն օրն ծնանի նեռն · որ ծնանի՝ չէկ լինի · շատամօրուս և ցան-կացող · փախուցեալն դառնայ · հիւանդն մեռանի · երազն սուտ է ·

### Քսանևվեց

Օրն՝ բարի է ա՟մ իրաց գործել · բայց մի՛ երդնուլ · որ ծնանի՝ շուտ մեռանի · փոխ առնուլ · սերմանել · 'ի ճանապարհ եր-թալ · հարսանիս առնել · կորուսան գտա-նի · զի Քր՟. յայն օրն ծնաւ · հիւանդն վը-տանգի · երազն բարի է ·

### Քսանևեօթն

Օրն՝ բարի է ա՟մ իրաց · զի աբրահամ յայն օրն պատարագեաց զորդին իւր · և մանանայն՝ յայն օրն առաւօտ իջէր · որ ծնա-նի՝ կարգաւոր լինի և երկիւղած յԱ՟յ · կո-

րուստն գտանի · հիւանդն ողջանայ · փա-
խուցեալն դառնայ · երազն սուտ է ։

Քսանևութ

Օրն՝ բարի է ամ՛ ինչ գործել · մանուկ
յուսումն տալ · առ ատեան մտանել · հարսա
նիս առնել · զի յայն օրն տարան զընծայն
քն · որ ծնանի՝ գեղեցիկ և շնորհաւոր լի-
նի · կորուստն ոչ գտանի · հիւանդն ոչ
ապրի · երազն երեք օրն կատարի ։

Քսանևինն

Օրն՝ բարի է ամ՛ ինչ գործել · տնկել՝
շինել՝ հարսանիս առնել · որ ծնանի՝ բախ
տաւոր լինի և հանձարեղ · բայց արբեցող ·
լեզուաւ սիրելի , և գործովքն շնացող ·
հիւանդն մեռանի · երազն լաւ է ։

Երեսուն

Օրն՝ բարի է ամ՛ լուալ · կնքել · պսակել ·
հիմն արկանել · ՚ի ճանապարհ գնալ · զի
պանդխտելքն յայն օրն դարձան · հիւանդն
ողջանայ · կորուստն գտանի · բայց ՚ի նաւ
մի՛ նստել · որ ծնանի՝ արբեցող և բախտա-
ւոր լինի · երազն բարի է ։



Քան·

Ինքն զերանելն և օգտակարն՝ հաստատեցելոյ յա-
ւիտենէ բանակէր ՚ի ճանաչման երկնից՝ այլեւ-
բերեալ կարգաւ, ՚ի Նեղոսոյ ջրաբեղ Բանոյ։

—

Աստուածութիւն։

Չորս էրք առնեն զմարդն ախտս։ 1. Անկեալն չքաւորութեան։ 2. Անհաւանեալն ՚ի Նեղոյ ծառայութէ։ 3. Նախանձն դէպ առ այլս։ 4. Բազմութիւնն որդւոց։

Չորս էրք ծնանին ՚ի յափշտակէ։ 1. Գողութիւն։ 2. Սուտերդմնութիւն։ 3. Խաբէութիւն։ 4. Մարդասպանութիւն։

Չորս էրք ՚ի բոց ձգեն զագահութեան։ 1. Բաստութիւն հարստութեանց։ 2. Բնածութիւն առողջութեանց։ 3. Կենցաղավարելն ընդ աստուածածնս։ 4. Աչ ունելն զորդիս և զընտանիս։

Աղջումն։

Չորս էրք նշանակ պարտին յաղաչեցեալ Լէնելն։ 1. Սիրել այն որ աղաչէ։ 2. Սոյն վն աղաչէ։ 3. Ոյնչ հանել նէ թէ պարգեւիցէ։ 4. Ոյնչ նեթէ ոչ պարգեւիցէ։



Բ՛ղքա

Աղքատութիւն։

Չորս կերպ մարդիկ փութացեն անձնամբն ի ձեռն աղքատութեան։ 1. Խաղամոլք։ 2. Որկրամոլք։ 3. Շռայլք։ 4. Որք յանդգնեն առնել ինչ ընդդէմ քաղաքական իրաւանց։

Չորս իրք աղքատացուցանեն զմարդն։ 1. Կանայք։ 2. Խաղալ դրամով զխաղս։ 3. Չար ընկերն։ 4. Առնել դատս։

Չորս իրք ծնանին յաղքատութենէ։ 1. Գործել զչարութիւն։ 2. Անարգութիւն անձին։ 3. Ապականութիւն մարմնոյ։ 4. Խանգարումն ընտանեաց։

Ամօթահարութիւն։

Չորս իրք տանեն զամօթահարութիւն առ բեն ձան զայլս։ 1. Աղքատանալ։ 2. Ընդունիլ զնախատինս։ 3. Աղաչել զայլս։ 4. Լինել մերժեցեալ յընկերականացն։

Այր։

Չորս իրս պարտի հոգալ այրն վասն կնոջ իւրոյ։ 1. Միշտ լինել զբաղեցեալ ի գործս ինչ։ 2. Երկնչել յինքենէ։ 3. Պատկանաւորապէս կերակրել զնա։ 4. Չափաւորապէս զգեստաւորել։

Անասուն։

Չորս անասունք են՝ որք տառապեն վասն զայլս տան հարկան զօգտակարութիւն։ 1. Ոչխարն։ 2. Եզն։ 3. Հաւն։ 4. Մեղուն։



Ան_

Անգին.

Չորք են անգինք. 1. Գիտութիւն. 2. Առողջութիւն. 3. Ազատականութիւն. 4. Առաքինութիւն.

Անդառնալի.

Չորք են անդառնալիք. 1. Քարն յետ ելանելոյն ի ձեռաց. 2. Բանն որ ելանէ ի շրթանց. 3. Գիտողութիւն յետ որոյ գնաց. 4. Ժամանակն մինչ էանց.

Անխրատ տղայք.

՚Չորս երս տանեն անխրատ տղայքն. 1. Մաշանեն զժառանգութիւն հարց. 2. Արհամարհեն զխրատս. 3. Խառնակին ի մէջ մոլութեանց. 4. Ոչ ունին զերկիւղ զօգտան.

Անհարկելի.

Չորք են անհարկելիք առ ի լինել. 1. Առնել զի ծովն միշտ իցէ խաղաղ. 2. Երկինքն միշտ պարզ. 3. Ամառն առանց բու-սոյ. 4. Ձմեռն առանց ձեան.

Անյագենալի.

Չորք են անյագենալիք. 1. Հուրն. 2. Հողն. 3. Դժոխքն. 4. Կինն.

Անպատկանաւորք.

Ի Չորից անպատշաճութենէ՝ պարտ է հեռի պահել զինքն յամենայնէ. 1. Ի տանց որք են մօ-

ծառաւորք գետոյ։ 2. Յընկերակցութե դաւանանօղ արանց։ 3. Ի փառաւոր գըրանց։ 4. Յանդաստանաց՝ որք են յանցս ճանապարհաց։

Անօգուտ բանք.

Չորս իրք են, որք են անօգտակար չինի անելոյ։ 1. Ննջումն. 2. Մտածումն։ 3. Օտարի գործելոյ քննելն։ 4. Կրամսութին։

Աշակերտ.

Չորս իրս պարտ է առնել աշակերտին. 1. Պատուել զվարդապետն իւր։ 2. Լսել յոյժ զգաստ ի լսելն. 3. Նաղմեցս կրկնել զորս լուաւն։ 4. Առնուլ զխորհուրդ ի գիտնագունից։

Չորս իրք ի դէմ յուշոյ ծանօթանալի տան ըմբռնելու աշակերտին։ 1. Լսել մեծերմեցար։ 2. Ընթեռնուլ բարեպէս. 3. Ուսուցանել այլոց։ 4. Գրել զուսումն իւր։

Աշխատութիւն.

Չորս իրաց ոչ է պարտ հաւանել իմաց՝ նորոց աշխատողաց։ 1. Պերճաղանց զուարճանութե։ 2. Նախանձ գինու։ 3. Մեղսաւորաց։ 4. Իշխանութե։

Աչք.

Չորս իրք տան զինդուած աչաց։ 1. Գեղեցկութեան գինաց։ 2. Պէսպիսութիւն գու-

գունոց։ 3. Արտաքին կազմուածն։ 4. Պարզութիւնն երկնից։

### Ապաշխարութիւն։

Չորս են. հարկաւորք են ապաշխարողին։ 1. Խոստովանիլ բերանով։ 2. Զղջալ սրտիւ։ 3. Վճարել գործով։ 4. Յարատևել 'ի գործել զբարին։

### Առաջնորդ։

Չորս են. պատկանաւորք են առաջնորդքն մըոյ։
1. Հանապազորդութիւն 'ի պաշտամունս։
2. Համեստութի՟ 'ի կենցաղավարութիս։
3. Հոգացողութիւն 'ի կառավարութիս։
4. Բարեհաճութի՟ 'ի յանդիմանութիս։

### Առողջութիւն։

Չորս են. վնասեն առողջութե՟։ 1. Անկարգապես վարիլն։ 2. Աւելորդական կերակուրքն։ 3. Յոյժ վշտագնիլն 'ի ցրտութե՟։ 4. Ընդերկար աշխատիլն ծանրապես։

### Ատելութիւն։

Չորս են. ծնանին նախապէս զատելութի՟։ 1. Իրբաբար խօսիլն։ 2. Մեղանչելն։ 3. Ագահիլն։ 4. Բաժանիլն։

### Արդարութիւն։

Չորս են, որք ընկերեն զարդարութի՟ն։ 1. Դէրն։ 2. Ատելութին։ 3. Երկիւղն։ 4. Ագահասիրութիւնն։



Արժա

Արժանապատուութիւն.

Չորս են՝ փառաւորք ամբառնան զմարդն յարժանապատուութիւն. 1. Ստացուածքն. 2. Ուժեղութիւն. 3. Գիտութիւն. 4. Խորամանկութիւն.

Աքսորեցեալ.

Չորս են՝ օժանդակք են աքսորեցելոց. 1. Նկատել զկացութիւնս անկեալ տերանց. 2. Սպասել մինչև բարեգործութեանցն հասցուածն. 3. Ողոքել զայրոյն գրամս. 4. Սրբերազ մածանիլ ի չափաւոր չաշխատանաւն.

Բան.

Չորս բանք են, զորս յաճախագէս պարզակն հոգ տանել ի վերայ խորհրդոյ. 1. Խելք յորժ աստուածահաճութեան՝ ոչ կարէ յորդորել. 2. Խելք իմացականութեան՝ ոչ մերժէ օգնէ. 3. Խելք ճշմարտութեան՝ երբեմն պատրէ. 4. Խելք չարախօսութեան՝ բնաւ ոչ կարասանէ զերայն.

Բանականութիւն.

Չորս են են, որք առաւելագէս մերժեն զբանականութիւն հոգւոյն. 1. Ընկերք սէրն. 2. Ընդհանրութիւնն. 3. Ագահութիւն. 4. Անելութիւն.

Բարեխառնութիւն.

Չորս են առաջնորդ մեղ բարեխառնութեան.



1. Հե-

սաստիկ հողմունք • ծանրագնաց Թուի ա-ռաջիկայ տարիս՝ քան զհասարակն , և ըզ-սովորականն ։

Յայսմ ամի բազում աւազակք երևին • և՛ի մարդս ոչինչ բարեպաշտութ՟ի գտանի • զի որում երևակն ցուցանէ յիններորդում տան երկնից ։ Եւ զի է հայեցեալ քառան կիւնի հայեցողութ՟բ 'ի հրատէն՝ զինուորք վրիժեսցեն ընդ միմեանս , և փոփոխին 'ի տեղ-ւոջէ միոյ յայլ տեղիս ։

Եւ 'ի պատճառէ՝ զի ասացեալ հրատն գտանի յերկոտասաներորդում տան երկ-նից , նշանակէ զբազմաց դանակաւ և սրով սպանումն ։ Եւս՝ զի արեգակն գը-տանի յիններորդում տան երկնից՝ և կըց-եալ ընդ գլուխ վիշապին , ցուցանէ՝ Թէ Թագաւոր մի առնէ զճանապարհ • ցուցանէ ևս՝ զմահ հզօր արանց , և այլ մարդոց ։ Չքասցին Թագաւորքն՝ որք բռնութ՟բ կա-միցին Թագաւորել , և զայլ իշխանութիւն ընդ տէրութ՟բ ածել ։

Պարձեալ՝ լուսաբերն և փայլածուն բախտազուրկք և այրեցեալք , նշան է՝ որ վնաս ինչ հանդիպի ռամկաց 'ի Թագաւո-րէն , և Թագաւորին վնասի 'ի ռամկաց ։ 'Ի վախճանի՝ տասներորդ տան իշխօղն է անբախտ • և մինչ այրեցեալ ես գտանի յան

բարութէ: 1. Համեցողութիւն: 2. Եր-
կիւղն: 3. Յոյսն: 4. Սէրն:

Բարկութիւն:

Զորս երեք ծնանին ի բարկութենէ: 1. Աշխա-
տութի խելաց: 2. Տգիտութի ինքեան: 3. Ան-
արդար արարմունք: 4. Անիրաւ վճիռք:
Ի Զորս երեքս ծնանի բարկութիւն: 1. Ի ծա-
նակութեանց: 2. Հանարգութեանց: 3. Համբ-
րախտութեանց: 4. Հանդիպութեանց:
Զորս երեք դրժեն զբարկութիւն: 1. Խաղ-
ղականութիւն: 2. Սրբաժառութիւն:
3. Սովն: 4. Սճարումն:

Բազապատկանաց:

Զորս երեք ցոյց վնաս են մինչ բազացայելն:
1. Կործեցեալ մեղքն: 2. Համեցեալ
ատացուածքն: 3. Հատուկ հարկքն ան-
ձին: 4. Չարատութիւք առ ընծաւորն:

Բժիշկ:

Զորս երեք պատճառին բժշկին: 1. Խնձել
հոգունակութիւն զպատճառն հիւանդութէ:
2. Խազմեցս այց առնել հիւանդին: 3. Պիժա
նանակի խաւու մատլ զապեղանին: 4. Սխի
Թարել քաղցրագոյն կերակի:

Բղխահութիւն:

Զորս չորս նեբփործուխ առնէ բղխուխո-
հուբիւնն: 1. Աղաղեղացուցանէ դհոգին:



2. Տկա

2. Տկարացուցանէ զզգայութիւնս։ 3. Սպանանէ զստացուածս։ 4. Արագէ զծերութիւն։

Չորս երք են, որք բղխեն զեղխութիւնս։ 1. Օտարազգացն գինիք։ 2. Քաղցրա_ համ կերակուրք։ 3. Ընտանեկցութիւն ընդ կանանց։ 4. Պարապորդութիւն հանգստեան։

Չորս երք են, որք ծրծեն զեղխութիւնս։ 1. Ըմպել զատուկ ջուր։ 2. Ուտել չհամ կերակուր։ 3. Հեռի կալ ՚ի կանանց։ 4. Աշխատիլ հանապազորդ։

Բնութիւն, և բարք։

Չորս երք փոխարկեն զբարս և զբնութիւնս մարդոյն։ 1. Պատիւն։ 2. Սէրն։ 3. Քաղց րաբանութիւն կնոջ։ 4. Գինին։

Բռնակալ։

Հ Չորս փորձս փորձէ բռնակալն։ 1. Առ_ նէ բաժանումն ՚ի մէջ քաղաքացւոց։ 2. Լուանէ զխոհեմսն։ 3. Սնանկացուցանէ զփարթամս։ 4. Ջնջուցանէ զիշխանս։

Չորս երք արգելուն զհասարակութիւնս, և զբանակն բռնակալի։ 1. Միաբանութիւն քաղաքացւոց։ 2. Բազմութիւն փարթամաց։ 3. Համձայնեցումն խնամոնց։ 4. Համար_ ձակութիւն իշխանաց։

Հ Չորս երս անկցուցանեն բռնաւորն։ 1. Կաղմանապարդութիւն գործելեաց։ 2. Կոր գլուումն հպարտութեան։ 3. Տառապանք հնա_



զան_

զանդեղոց։ 4. Արհամարհումն աղանդնոց։

Չորս առաւելութիւնս գտանեն 'ի բանտարկեալս. 1. Վերածել զինչն յանհողորմ իրս։ 2. Ի համբերել լինել յաղաչանս։ 3. Իմանալ զքամ բառ կամաց իւրոց։ 4. Աչ յանդիմանե-ցեալ գոլ յումեքէ։

Չորս իրս օգտակարս են հաստատելոցն բանտ-կալոց։ 1. Պատուել զմեծամեծս։ 2. Զգուշացուցանել զոր։ 3. Խօսել սակաւայես։ 4. Կեալ առանձնաբար։

Բանուորք։

Չորս են բանուորք, որք եղէն ցոյց խոտա-կերաց և խորխորաց։ 1. Հերովդէս 'ի հրեա-տան։ 2. Ներոն 'ի Հռոմ։ 3. Ադիլա 'ի Փը-րանսիայ։ 4. Ալբուէլինոս 'ի Լոմպարտիայ։

Առաջինն սպան զինչն սրով։ Երկրորդն սպան ժողովուրդն։ Երրորդն մեռաւ յան-կարծակի։ Չորրորդն մեռաւ մահապեղի։

Չորս են գործք բանուորաց։ 1. Յափշտա-տակել զինչս։ 2. Մերժել զաղքատս։ 3. Մեծացուցանել զչարս։ 4. Արհա-մարհել զառաքինիս։

Չորս իրս նուաճեն զբանուորս։ 1. Պա-կասութիւն կերակրոց։ 2. Մեծագոյն առա-ռասպակութիւն։ 3. Յարատեւումն 'ի պա-տերազմի։ 4. Բառնալն 'ի նմանէ զորդոր իրաւունս։



Չորս

Չորս էրք պտղէն ջերմեռանդութեան, առ որս յարձէ հասանել. 1. Օգտակարութիւն ժողովրդեան. 2. Ազնուութիւն համբաւոյ. 3. Խաղաղութիւն հարստութեանց. 4. Յաջողութիւն կառավարութեան:

Գերազանցութիւն:

Չորս նորքէք եղեն գերազանցք ի չորից ազգաց. 1. Յուդայ Մակաբէ՝ ի Հրեայս. 2. Մեծն Կառլոս՝ ի քրիստոնեայս. 3. Սալատին՝ ի սարակինոսս. 4. Օգոստոս կայսրն՝ ի հեթանոսս:

Չորս չերդ նորքէք ծանուցեալ եղեն գերազանցք. 1. Սողոմոն՝ մինչ կոչեցաւ իմաստուն. 2. Արիստոտէլ՝ մինչ կոչեցաւ փիլիսոփայ. 3. Վիրճիլիոս՝ մինչ կոչեցաւ բանաստեղծ. 4. Սէն Պօղոս՝ մինչ կոչեցաւ առաքեալ:

Առաջինն՝ ուսուցանէ իմաստութիւն: Երկրորդն՝ փիլիսոփայութիւն: Երրորդն՝ բարձրագոյն ոճով: Չորրորդն՝ կատարեալ, և կենդանի հաւատով:

Գիտութիւն:

Չորս են, որք ներածեն զմարդն ի գիտութիւն. 1. Սէրն պատուոյ. 2. Հեշտութիւն ընթերցման. 3. Յանկութիւնն շահելոյ. 4. Ներշնչումն անձայինն:

Չորս են գլխաւորագոյն գիտութիւնք:



1. Աստ-

1 · Ըծառանական ։ 2 · Պատասատանական ։
3 · Բաղդաբական ։ 4 · Ձիւղերական ։

Առաջինն է կերակուր հոգւոյ ։ Երկրորդն՝ ձեռնտու լինի անկելոց ։ Երրորդն՝ փարթամացուցանէ զաղքատս ։ Չորրորդն՝ դարմանէ զհիւանդս ։

Գողանալ ։

Չորս երք ոչ չարէն փողոցելով լինել ՚ի մարդկանէ ։ 1 · Պիտութիւնն ։ 2 · Կամքն ։ 3 · Արհեստն ։ 4 · Խելքն ։

Գովութիւն ։

Չորս երք արժանիք են ձեռք գովութեան ։ 1 · Խնդրել զխորհուրդս ։ 2 · Առնել աշխատութեամբ իւրով ։ 3 · Պիտալ առ տառապեալս ։ 4 · Առնել զողորմութի ։

Գործ ։

Չորս գործս պարտ է ՚ի չէր արժանել մարդ նախրողէս ։ 1 · Կատարել սէր առ ընկերս ։ 2 · Քաղցրաբանութի առ ընտանիս ։ 3 · Ուսուցանել զաղքատս ։ 4 · Միշտ պատուել զծերս ։

Չորս գործք են յոյժ գովելիք ։ 1 · Առնել զխաղաղութի ։ 2 · Պահել զարդարութի ։ 3 · Կազդուրել զանկեալս ։ 4 · Օգնել կարօտելոց ։

Գործառութիւն ։

Չորս երք նշանակելիք են յամ գործառութե ։



1 · Ա

1. Արդեօք պատկանաւոր իցէ հարկաւո-րապէս։ 2. Արդեօք ճահ իցէ ըստ համեմա-տութեն։ 3. Արդեօք օգտակար իցէ յառա-ջադրութեն։ 4. Արդեօք կատարի ըստ ժամանակին։

Դունէհիկ։

Չորս են ատեբերէն չատաւել հանձնարեան գործեհեաց։ 1. Պխմաելն զպահւ արհնսաւ։ 2. Պխլուբադնութին կերպակրոց։ 3. Նուա-ձունն ազնուականաց։ 4. Հյածախայլութին նորադունեց։

Դատաստան։

Չորս են տարբերեն զդատաստանն։ 1. Պա-տիւն։ 2. Հմտութին առ ի դատել։ 3. Պատ-ժել զչարագործն։ 4. Ունել զբարերարութին։

Չորս են յատուկ դատաստանն։ 1. Ա-րեղութի։ 2. Առողջութի։ 3. Նրհկհուզիւ։ 4. Ողջախոհութի։

Դատաւոր։

Չորս են պարտքն դատաւորին։ 1. Մի՛ել զթածապէս։ 2. Պատասխանել խոհեմա-պէս։ 3. Նկատել մանրամապէս։ 4. Դա-տել յայտնապէս։

Դատաձայն։

Չորս են վնասք ի դատաձայնն։ 1. Մե-ծագոյն քաղցրութի ի բերանն, որով խօսէ։



2. Մա-

2 · Անուշաւէտ լեզուն ՚ի սրտի, որով թունա_
ւորէ ։ 3 · Սուտ ծիծաղն ՚ի յերեսն, որով
պատրէ ։ 4 · Անուշաւէտ գործն, որով կեղծէ ։

Դժուարութիւն ։

Զորս եւս առանձինն չորս դժուարութիւնք ։
1 · Մերահատուցանել զոր առնելոց են ՚ի
յայլոց ։ 2 · Լռել լսելով զնախատինս ։
3 · Ոչ գանգատել վն ընկալեալ անիրաւութեան ։
4 · Ոչ վայելել զհարկաւորս ունելով ։

Դրամն ։

Զորս չորս մարդիկ հասանեն դրանոց ։
1 · Խաւարեալք ։ 2 · Ագահք ։ 3 · Նենգա_
միտք ։ 4 · Հեշտասէրք ։

Զորս եւս վերահասանին առանց դրանոց ։
1 · Որհամարհութիւն ինքեան ։ 2 · Զղջա_
րութիւն ։ 3 · Սուլ ։ 4 · Հեզահոգութիւն ։

Դրօշակք ։

Զորս չափաւորութիւն պարտի ունել դրօշակքն ։
1 · Ողորմութիւն առ հեզս ։ 2 · Սէր հայ_
րենեաց ։ 3 · Մաքրութիւն սրտի ։ 4 · Համբա_
րերութիւն ՚ի պատերազմի ։

Նշք կուսի ։

Զորս եւս ցուցանէ ունել զկամբարութի
էրս ։ 1 · Ծածկել զխորհուրդս ։ 2 · Զգու_
շանալ զիւր ինչ ։ 3 · Ունել առաւել
քան զոր կարէ ։ 4 · Յամրապնդել զինքս այլոց ։

## Երկիր ։

՚Ի Չորս իրաց ընծայեցան վնաս ընդունի երկիր ։ 1 ․ ՚Ի ծառայէ՝ մինչ թագաւորէ ։ 2 ․ ՚Ի խելագարէ՝ մինչ յագեցեալ է ։ 3 ․ ՚Ի ատելի կնոջէ՝ մինչ ամուսնանայ ։ 4 ․ ՚Ի յաղախնոյ՝ մինչ լինի տիկին, և ժառանգ ։

## Երջանկութիւն ։

Չորս կերպ մարդիկք երջանիկք են զանազան կերպիւ ։ 1 ․ Որ ջերմեռանդագոյն ծառայէ այ ։ 2 ․ Որ հասու լինի պատճառացն իրաց ։ 3 ․ Որ կարէ պաշտպանել զինքն ՚ի դիպուածոց աշխարհի ։ 4 ․ Որ զգուշանայ ՚ի չարեաց այլոց ։

Չորս են երջանկութիւնք, որք փոխարինեն բազմաց աներջանկութիւնս ։ 1 ․ Բազմութիւն որդւոց ։ 2 ․ Բազմութիւն հարստութեանց ։ 3 ․ Տիրել ՚ի վր̃ հայրենեաց ։ 4 ․ Ունիլ զբազում բարեկամս ։

## Զարմացումն ։

Չորս իրք ՚ի մեծի զարմացման են յաշխարհի ։ 1 ․ Մ՚ինչ բռնաւոր որ ունի ՚ի ներքոյ տէրութեան իւրոյ զբազում ժողովուրդ ։ 2 ․ Մ՚ինչ ՚ի պատերազմի սակաւն յաղթէ զբազումս ։ 3 ․ Մ՚ինչ չքաւորքն ոչ խնդրեն զինչս հարստաց ։ 4 ․ Մ՚ինչ բազմութիւն մարդկան խաղամիտ լինի ՚ի բնաւ խաբէութիւնս ։

## Զգայութիւն ։

Չորս իրք նրբացուցանեն զզգայութիւնս ։

1 · Խղճին վկայութիւնը ։ 2 · Բարեխառ_
նեցեալ մտածութիւն ։ 3 · Կենցաղավարիլն
ընդ իմաստութեան ։ 4 · Շնորհելն զաւուրս ։

Չորս զգայունք են, առ որս ունին հարկ
առնել հարկաւորութիւն ։ 1 · Տեսանելիքն ։
2 · Լսելիքն ։ 3 · Շօշափելիքն ։ 4 · Ճա_
շակելիքն ։

Զօրագլուխ ։

Չորս իրք յոյժ օգտակարք են զօրագլխաց ։
1 · Բազմութիւն զօրաց ։ 2 · Բազմութիւն մարդ_
կանց ։ 3 · Առատութիւն զինուց և ռոճկաց ։
4 · Գիտել զչափս հակառակորդին իւրոյ ։

Չորս իրք հարկաւորք են զօրագլխաց ։ 1 · Տե_
ղեկութիւն կարողութեան թշնամեաց ։ 2 · Ընտրել
զայնպիսի գործիս՝ որք յարմարեն ՚ի պա_
տերազմի ։ 3 · Քաջալերել զզինուորս մեծ_
՚ի պատերազմ ։ 4 · Ճօձել կռուավարար զձե
ռըն ընդդէմ թշնամեաց ։

Զօրացումն ։

Չորս իրք զօրացուցանեն զմարդն ։ 1 · Բանա
կանութիւն ։ 2 · Ուժեղութիւն ։ 3 · Արիական
քաջութիւն ։ 4 · Տկարացեալ թշնամին ։

Ընծայ ։

Չորս գործս առնեն ընծայք և պարգևք ։
1 · Մերժեն զագահութիւն ։ 2 · Հալածեն
զմոլութիւն ։ 3 · Յաւելուն զազնուութիւն ։
4 · Խանգարեն զթշնամին ։

Ընկերակից։

Դ. Զորս երս ոչ հաճի մարդ առնել ընկերա-կից. 1. Ի հրամայելն ՚ի միում քաղաքի. 2. Ի կենակցիլն ընդ կնոջ խորում. 3. Ի շահիլն զօգուտ ինչ. 4. Ի յու-տելն յամենայն խորհս՝ մինչ քաղցեալ իցէ.

Դ. Զորս երս հարկաւորապէս պարտի առնել ընկերակցին. 1. Մինչ անկեալ է ՚ի տարա-կուսանս. 2. Մինչ նորապէս ընկալեալ է զպաշտօն ինչ. 3. Մինչ տառապեալ է ՚ի պատիժս. 4. Մինչ գնայ ՚ի ճանապարհ.

Թագաւոր.

Զորս երս լաւագոյնս են վասն Թագաւորի. 1. Հայրական սիրով հաւատարիլ զհպա-տակս իւր. 2. Պարգեւատութ շահիլ զբարեկամս. 3. Քաղցրաբարոյ լինել առ աղաչօղս. 4. Գթութ առնել զըս-տառապեալս չարագործաց.

Թշնամութիւն.

Զորս երս նախապէս ծնանին զԹշնամութ. 1. Խօսիլ լրբաբար. 2. Անզգամախոհութ. 3. Ագահութիւն. 4. Չարաչր առնելն.

Զորս երս են՝ որք հաճոյաբար առնեն զբարե-բարոն, տանին ՚ի Թշնամին. 1. Փոխ տալ զդրամս, և յետոյ խնդրել. 2. Խրատխօսութ լինել ումեք, և կամել թէ հաւատասցէ պար-տաւորն. 3. Խոստանալ զեր իմն, և յետոյ ոչ



ոչ

ոչ տալ: 4. Զյուսալն ումեք, և ՚ի նմանէ չընկալնուլ զվարձս:

Թշուառականք:

Չորս չորք մարդիկ են թշուառականք: 1. Որ միշտ է ՚ի մէջ մեղաց: 2. Որ կարէ առնել զբարի, և ոչ առնէ: 3. Որ ոչ գիտէ, և ոչ կամի ուսանել: 4. Որ գիտէ, և ոչ կամի ուսուցանել:

Ժամանակք:

Չորս են ժամանակք, կամ եղանակք տարւոյն: 1. Գարուն: 2. Ամառն: 3. Աշուն: 4. Ձմեռն:

Իղձ:

Չորս իրք նախապէս նուաճէն, և հշտանգէն զիղձս մարդկան: 1. Շահիլն զգրամս: 2. Բարձրանալն ՚ի յարժանապատուութիւն: 3. Կառավարելն զընտանիս: 4. Ունելն զզաւակս:

Չորս անյագենալի իրքս գտանին ՚ի մարդն: 1. Ցանկալն շահուց: 2. Ուսանելն զընբազդոյնս: 3. Բաղձալն ՚ի գիտել: 4. Լսելն ականջօք:

Իմաստուն:

Չորս իրք ոչ վայելեն լինել ՚ի բերան իմաստնոյն: 1. Գովել զոչ գովելին: 2. Ոչ գովել զգովելին: 3. Ներհակել ընդդէմ այնմ՝ զոր ոչ իմանայ: 4. Կռուել ընդ դրացւոյն անամօթաբար:

Իմացականութիւն.

Չորս իրք խոչընդոտեն զիմացականութիւն տա-նել յառաջ. 1. Մարմնական ցանկութիւն։ 2. Մեծագոյն ձախորդութիւն. 3. Նուա-ճումն երկիւղի։ 4. Չափազանց յաջողութիւն։

Լեզու.

Չորս իրք ծնանին 'ի չար լեզուէ. 1. Սերմա-նել զխռովութիւն. 2. Սատահամբաւել զբա-րի անունն. 3. Նենգաւորաբար թարգմա-նել. 4. Ցանել զչար վարդապետութի.

Չորս իրք ծնանին 'ի բարի լեզուէ. 1. Նե-րածումն սիրելութե. 2. Պաշտպանութի մարդկան։ 3. Սնուցումն կերպի ազգէլոյ։ 4. Ցորդիանք հեզութե.

Լսել.

Չորս յատկութիւնք պահանջին 'ի լսելն. 1. Լսել մտերմութբ. 2. Լռութբ. 3. Համբերութբ. 4. Հնազանդութբ.

Լսելիք.

Չորս իրք հեշտացուցանեն զլսելիս. 1. Քաղցրաձայնութիւն երգեցն. 2. Դարձա-րութբ խօսիցն. 3. Համեմատողական բար-բառոյն. 4. Հնչումն դրամոց.

Լոյս.

Չորս իրս պարտ է ունել ընթերցողն լուսոյն. 1. Անձնդիր լինել համբերութեամբ. 2. Մաժել խոհեմութբ զայն՝ զոր լսէ.



3. Ա–

3 · Անձնել ՚ի մահ զըղձալի իրս ։ 4 · Մոռա-
նալ փափագանելի զչարիս ։

Խաբէութիւն ։

Զորս երէ խաբէն վճարքն ։ 1 · Ձանձրութիւն շահելոյ ։ 2 · Տաղտկութիւն քանից ։ 3 · Անկաւութիւն խելաց ։ 4 · Խորամանկութիւն կնոջ ։

Խաղաղութիւն ։

Զորս գործս առնէ գլխաւորագոյն խաղաղութեանն ։ 1 · Համբերել զքաղաքացիս ։ 2 · Համատարածութեանն զդերբակուրս ։ 3 · Հնե ՚ի շահիլ զհարստութիւն ։ 4 · Արբեխացուցանէ զժողովուրդն ։

Զորս երս գործս առնել մարդ առ ՚ի չլու խաղաղութեան ։ 1 · Տեսանել ։ 2 · Լսել ։ 3 · Լռել ։ 4 · Համբերել ։

Զորս երէ օգտակարագոյն են այնոց, որ կամի պահել զխաղաղութիւն ։ 1 · Աչ առնուլ զիրս այլոց ։ 2 · Անձել զհամբերութիւն ։ 3 · Օգնել բարի գործակցաց ։ 4 · Դիմանալ իրս պահել զարդարութեն ։

Խոհեմութիւն ։

Զորս երէ են, որ առնեն զմարդն խոհեմ ։ 1 · Առաքինական ուսումն ։ 2 · Փորձառութիւն իրաց ։ 3 · Պիտէշերայրին մտածումն ։ 4 · Հետեւումն խոհեմ արանց ։

Զորս երս առաւացանէ խոհեմութեան ։ 1 · Ցիրէշել
զան

զանցեալս։ 2. Նորոգագրել զներկայս։ 3. Նախատեսանել զհանդերձեալս։ 4. Համբարել զառաքինութիւնս։

Զորս են չորք պատճառք զխոհեմութիւն։ 1. Անբեղութիւն։ 2. Մանկութիւն։ 3. Երկիւղն։ 4. Ճահաւորութիւն։

Զորս կերպ մարթէ ունել զգլխաւորութիւն մեծի խոհեմութեան։ 1. Իշխանայք՝ որ է գնել զապաշխարութիւնս։ 2. Պատուաւորք՝ որ է տալ զվճիռս։ 3. Բժիշկք՝ որ է բուժել զհիւանդս։ 4. Փարթամք՝ որ է կեր արկանել զփարթամութիւնս։

Զորս են չորք ախտաւորութեան հանգամանս խոհեմ արանց։ 1. Խօսել և գործել զդարձս իւր։ 2. Ուսանել զարդարութիւն։ 3. Արհամարհել զայլս։ 4. Հաւատալ ամենից ասողաց։

Զորս են չորք պատճառք են խոհեմ արանց։ 1. Սիրել կարգաւորաբար։ 2. Ատեալ զփարթամութիւն։ 3. Հեռանալ աւերածովք։ 4. Համախմբագաւանել զմեղս։

Խոնարհութիւն։

Զորս են չորք պատճառք խոնարհութեան նշանք։ 1. Երեսն։ 2. Դեղին ձայն։ 3. Ծաղրանք։ 4. Սեւամորթ։

Խորհրդատուութիւն։

Զորս են չորք օգտակարք են ալմէ, որ զայս զխորհուրդս և զխոհեմս։ 1. Լսել զխրատուս



եր–

երկպառակչաց կողմանց։ 2. Ուսանել զլուսաւորն ՚ի ձեռն հաւատարիմ գրոց։ 3. Խնդրել զչափաւոր վարձս։ 4. Տալ զխորհուրդ համաձայն օրինաց։

Չորս իրք յոյժ օգտակարք են նոցա։ 1. Հեռանալ ՚ի յաղմկութենէ։ 2. Խորշել զվնասակար ցանկութիւնս։ 3. Ուտել զթե-թեւ կերակուրս։ 4. Կարգաւորել զկեր նախ քան անցանելն։

Խոստովանութիւն։

Չորս իրք արգելուն զխոստովանութիւն։ 1. Հաւատալն ապրել ՚ի բազում ժամանակս։ 2. Ամօթն խոստովանելոյ։ 3. Երկիւղն վը-ճարելութեն։ 4. Յուսահատութիւն։

Խրատ։

Չորս իրք ոչ ընդունին զխրատ։ 1. Բար-կութիւն։ 2. Ագահութիւն։ 3. Ախորժումն մարմնոյ։ 4. Նախանձ։

Խոհականութիւն։

Չորս իրք պատճառեն այնմ, որ խօսակցի ընդ այլոց։ 1. Նախապատրաստել զոր ասե-լոց է։ 2. Տեսանել թէ ո՞ւմ է խօսելոց։ 3. Նկատել զժամանակն խօսելոյ։ 4. Ասել զյարմարեցեալ բանս։

Ծածկել։

Չորս իրք ոչ կարեն ծածկիլ։ 1. Հազն։ 2. Սէ-

2 · Սիրելն ։ 3 · Բարկանալն ։ 4 · Ցաւագնելն ։

Ծառայել ։

Չորս են առնեն, որ ծառայեն նոքօք ։
1 · Սիրելն ։ 2 · Երկնչելն ։ 3 · Շահելն ։
4 · Անպարծելն ։

Չորս երաց ծառայեն նոքօք ։ 1 · Բաղձալի դրյն բանից ։ 2 · Շահեցման գրանից ։ 3 · Պատժոյն ձախորդութեան ։ 4 · Օգնելոյ անձին ։

Ծերութիւն ։

Չորս են ծնանին ի ծերութէ ։ 1 · Տկարութ դղայութեանց ։ 2 · Լուսաղուանց ոստյ ։ 3 · Երկչոտութեն ։ 4 · Պարծեցողութ ։

Ծոմապահութիւն ։

Չորս են պարտ է առնել պահեցողին ։
1 · Չափաւորապէս ուտել ։ 2 · Փախչել ի մեղութեանց ։ 3 · Զինչել զերկնայինս խոս ։
4 · Տանել ողորմութ աղքատաց ։

Ծուլութիւն ։

Չորս են առբերեն յափշտակէս զծուլութէ ։
1 · Աթագոյն անեղիք ։ 2 · Բուանձնական հանդստութիւնք ։ 3 · Տրամական կերք ։ 4 · Ընդունայն մտածմունք ։

Չորս են հերծեն զծուլութիւն ։ 1 · Զմանավորել ընդ հեշտալի խոս ։ 2 · Ընկերակցել ուրախացելոց ։ 3 · Բաղձել ի խորախձանի ։
4 · Լսել երգեցս զերաժշտական քաղցրահնչութիւն ։

Կամակորութիւն։

Չորս չէրք մարդիք են յոյժ չարաչարք։ 1. Ինքնակամն՝ ՚ի տիրապետելն զանէրուն։ 2. Հեղձուածողն՝ ՚ի յոչ ճանաչելն զմոլորութիւն իւր։ 3. Մոլորեցեալն՝ ՚ի վատթարագոյնս՝ ոչ կամիլ բաժանիլ ՚ի նմանէ։ 4. Ներքուս ժառանգողն՝ յոչ յօժարելն հատուցանել։

Կառավարիչ։

Չորս գլխաւորագոյն իրք պատշաճին կառավարչի ցոյ։ 1. Օգնական լինել բարեաց։ 2. Լուծանել զչարս։ 3. Պատուել զառաքինիս։ 4. Կազդուրել զանկեալս։

Չորս իրս պարտի ունել կառավարիչն։ 1. Փորձառութիւն իրաց։ 2. Սիրել զհպատակս։ 3. Հաստատամտութիւն ՚ի յարարեալ իւրս։ 4. Սպասաւորել արդարութեան ՚ի բնաւ գործառութիւնս։

Չորս իրս պարտի ունել կառավարիչն երէրէ ցոյ։ 1. Պահել զհաւատարմութիւն ՚ի մէջ մարդկան։ 2. Տալ ատեան հարկաւոր իրաց։ 3. Ընտանեցել ընդ իւրաքանչիւրս։ 4. Պահել զարդարութիւն։

Կատարելութիւն։

Չորս իրք կազմեն զփորձն։ 1. Հմտութիւն արհեստին։ 2. Հեռանալ խոհեմագունից։

 3. Պահ

3. Պաշտպանել զեկեղեցականս։ 4. Ներքին տրտմութիւն։

Կարծառու։

Որք են՝ ոչ կարեն փոխել ի բազում ժամանակս. 1. Կռուասէր մարդն։ 2. Ընչասէր բռնակալն։ 3. Ընկրուաւոր ժառանգն։ 4. Չափաւորաց միտքն։

Կացութիւն։

Որք են՝ կարէ հաստատել տուն ի բարի կեցութե. 1. Ունելով զբարի։ 2. Սիրելով զմիր մարդասէ։ 3. Ջեռնամխելով ի սիրելութե։ 4. Ոչ մտածելով զանարգելի իրս։

Կեանք։

Որք են՝ երկարեն զկեանս. 1. Կեալ ժուժկալութեամբ։ 2. Ննջել ընդ այնմ՝ առ որս յօժարի։ 3. Լինել յառողջարար տեղւոջ։ 4. Ուրախ լինել յարաժամ։

Կին։

Որք են՝ պարտին գեղեցկապէս փայլել ի կին. 1. Պարկեշտութիւն ի դէմս, եւ ի յանդամս։ 2. Ողջախոհութիւն ի միտս։ 3. Համեստութիւն ի բանս։ 4. Հանճարեղութիւն ի գործառնութիւնս տան։

Որք են՝ առաւելապէս բաղձան կանայք. 1. Ունել զգեղեցիկ եւ զերիտասարդ այր։ 2. Ունել զբազում որդիս։ 3. Ունել զբա-զում

ղուն և զպատուական զգեստս։ 4. Ունիլ իշխողութիւն ՚ի վերայ ամ՟ ընտանեաց։

՚Ի Չորս իրս յոյժ զգուշասցին կանայք։ 1. Ո՛չ տեսանել զայրն սիրել զայլ կին։ 2. Ծուռն աղմկել ընտանեաց։ 3. Աջատակել կորստական որդւոցն։ 4. Ո՛չինչ մեռանելն նոցա տարաժամ։

՚Ի Չորս իրս հոգաբարձիլ պարտ է կնոջ։ 1. Սիրել զայր իւր։ 2. Աչ զայրացուցանել զնա։ 3. Սակաւուք բաւականանալ։ 4. Ունիլ զմեծ զգուշութիւն գեղ տան իւրոյն։

՚Ի Չորս յատկութիւնս պարտ է զննել նա, որ կամի ամուսնանալ։ 1. ՚Ի գեղեցկութեն դիմաց։ 2. ՚Ի մաքրութեն բարուց։ 3. ՚Ի հարստութեն ընչից։ 4. ՚Ի հարազատութեն տոհմի։

Կրթութիւն։

Չորս իրք ոչ կարեն պատշաճել լինել Բարոյ բարւոք կրթութեանց։ 1. Գիտել զքերականութիւն։ 2. Ճարտարել ուղղագրապէս։ 3. Բարբառել լսապէս։ 4. Կարդալ զոտանաւորս։

Կրօնաւոր։

Չորս իրք պատշաճեն կրօնաւորին։ 1. Սակաւիցս ելանել արտաքոյ վանաց։ 2. Պահել զհնազանդութիւն առ մեծաւորն։ 3. Փախչել ՚ի դատարկասութէ։ 4. Ջանասիրապէս լինիլ ՚ի յաղօթս։

Հանճարք։

Չորք իրք յոյժ հաճելիք են, որք գտանել պար-



դէն

որքն տասն են։ 1. Խնամատութիւն։ 2. Մերձաւանդութիւն։ 3. Խոնարհութիւն։ 4. Ողջմտութիւն։

Ը. Զորս եւս տաւել հաճի Ած։ 1. Ի միաբանութիւն եղբարց։ 2. Ի սէր ընկերաց։ 3. Ի հպատակութիւն ամուսնակցաց։ 4. Ի դարձումն մեղաւորաց։

Հայր.

Զորս բարիս պարտ է տանել հայրն որդւոյն։ 1. Տալ նմա զբարի ուսումն։ 2. Ուսուցանել նմա զարհեստ ինչ։ 3. Ածել զնա ենթ հրամանի իւրում։ 4. Ուսուցանել զնա սիրով։

Զորս եւս պարտ է տանել հայրն ընտանեաց։ 1. Ածել զնոսա ի Եկեղեցի չափաւոր երկիւղիւ։ 2. Տալ նոցա զպարէն ըստ կարողութեան իւրոյ։ 3. Ուսուցանել զբարի իրս։ 4. Ցուցանել զինչքն ուրախ ըստ ժամանակի իւրում։

Հասանել.

Զորս եւս են՝ որոց յոյժ ցանկան մարդիկ, և ոչ կարեն հասանել։ 1. Յոլովագոյն դրամոց. 2. Կատարեալ գիտութեն. 3. Հանապազորդական հանգստութեն. 4. Մշտական ուրախութեան.

Հաստատութիւն.

Զորս եւս տաւերեն հաստատութիւնն. 1. Երկիւղն ամօթահարութեն. 2. Կասկածն պատժոյ. 3. Գովութիւն անձին. 4. Յաւելումն դրամոց.

Հարկաւոր.

Զորս երբ փնտռեսցեն գող ասխա հարկաւորք, որք են չորք հարկաւորք. 1. Պատուել զամենեսեան բանիւ. 2. Խօսել զճշմարտութիւն. 3. Ոչ զայրացուցանել զոք. 4. Կենցաղավարել ընդ առաքինեաց.

Հարցումն.

Զորս երբ օգտակարք են՝ բարեպէս նկատելով այնմ, որ հարցանէ. 1. Ո՞վ է որ հարցանէ. 2. Որո՞յ հարցանէ. 3. Ո՞ն է՞ր հարցանէ. 4. Զի՞նչ է որ հարցանէ.

Հաւատ.

Զորս երբ ծնանէն ՚ի հաւատոյ. 1. Ճշմարտութիւն իրաց. 2. Խաղաղութիւն բարուց. 3. Սնուցումն հոգւոյ. 4. Պաշտումն Այ.

Հեղուկ.

Զորս հեղուկ նիւթք առաւել պիտանաւորք են վասն մարդկային կենաց. 1. Ջուրն. 2. Գինին. 3. Մեղրն. 4. Ձէթն.

Հեշտանալ.

Զորս երբ գլխաւորագոյն պատճառեն զհեշտ փառն. 1. Խաղաղութիւն ձայնի. 2. Գեղեցկութիւն կերպարանաց. 3. Համեղագոյն կերակուրք. 4. Անուշահոտ ծաղիկք.

՚Ի Զորս երբս չորս հեշտանայ մարդ. 1. ՚Ի խոհեմութիւն որդւոյն. 2. ՚Ի պայծառութիւն



հա-

հաստատութեն։ 3. Ի ժամանումն արժանա_ պատուուն։ 4. Ի վրէժառուն թշնամեաց։

Հիւանդ։

Չորս իրս պարտէ առնել հիւանդն։ 1. Հնա_ զանդիլ ճարտար բժշկին։ 2. Ոչ խնայել առա_ տանցս զդրամս վն հարկաւորաց։ 3. Հաւատալ_ այնմ բժշկին։ 4. Կեալ հանդարտապէս։

Հողմն։

Չորս են գլխաւոր հողմունքն։ 1. Արևե_ լեան։ 2. Արևմտեան։ 3. Հարաւային։ 4. Հիւսիսային։

Հպատակ։

Չորս իրք նախատիպ ցուցանեն հպատակելոյ, (այսինքն՝ ըրայէ էլէրլոյ։) 1. Հնազանդիլ իշ̃ն իւրեանց ՚ի յօրինաւոր իրս։ 2. Ջանալ_ վն բարեաց հասարակին։ 3. Օգնական լինիլ բարեգործաց։ 4. Կշտամբել զչարս։

Չորս կերպ մարդիկ բարւոք առնեն, մինչ_ ենթարկեն ինքեանց պայլը։ 1. Թագաւորն՝ զհպատակս իւր։ 2. Հայրն՝ զորդին իւր։ 3. Այրն՝ զկին իւր։ 4. Վարդապետն՝ զա_ շակերտն իւր։

Հպարտութիւն։

Չորս իրք յառաջ գան ՚ի հպարտութենէ։ 1. Ապերախտութիւն ընկալելոց բարեաց։ 2. Արհամարհումն ընկերին։ 3. Չարապէս խօսել։ 4. Կռուարարութ̃ն։

Որք են դերձեն չհաւատութեան։ 1. Աղքատութիւն։ 2. Արհամարհելն։ 3. Ընտրանալն։ 4. Հիւանդութիւն։

Որք են հպարտացուցանեն զմարդն։ 1. Ստացուածք։ 2. Կարողութիւն։ 3. Արժանապատուութիւն։ 4. Ազնուականութիւն։

Ձանձրութիւն.

Որք են տան զչանձրուն։ 1. Տունջենական անձրեն։ 2. Ծառախօսութիւն կոկորդարացից։ 3. Զմեռնային հողմն։ 4. Տառապանքն աշխատանքն։

Ձեռնարկել։

Ո՞րք են պարտ է խնայել նա, որ չէ բախել պատերազմաց զգուշանալ։ 1. Մի ընկերակցիլ ընդ նմա։ 2. Ընդդէմ նմա պատերազմիլ։ 3. Արձակ խօսեան պատերազմիլ։ 4. Ոչինչ զինուած կարէ ունել։

Ճանաչել։

Որք են ոչ կարեն ճանաչել։ 1. Խաւարումն հաւուց ի յոգին։ 2. Ծառին նաւի ի ծովս։ 3. Դանդաղեն օձի ի յանապատն։ 4. Կեանքն մարդոյ յերկրաւորդութեան իւրում։

Ճաշակելեք։

Որք են տան զօրանալ հեշտութիւն ճաշակելեաց։ 1. Բազդրահանմութիւն։ 2. Բարեխառնութիւն։ 3. Օգտակարարքն։



4. Արբ

4 · Ախորժանօք ուտելն ։

Ճոխարանութիւն ։

Որք երք տանէն զմարդն ճոխաբան ։
1 · Համարձակութիւն ։ 2 · Խելամտութիւն ։
3 · Շորաշխուսութիւն ։ 4 · Սովորութիւն ։

Մահ ։

Որք են որք համբարագոյն են տան զմահն ։
1 · Նախերութիւն ընդ աղքատուն ։ 2 · Պակաս-
սութիւն զգայութեանց ։ 3 · Հնանալն ի մեղս ։
4 · Ըստանարկելն հիւանդութ ։

Որք երք մաշացուցանեն զմարդն յառաջեան
գժամանակին ։ 1 · Վնեղեցիկ կինն ։ 2 · Տրտ-
մութիւն խմթանն ։ 3 · Խնունալի կերակուրն ։
4 · Ապականեալ օդն ։

Մանուկ ։

Որք յարկութեան գտանին ի մանկունս ։
1 · Փութալես զայրանալ ։ 2 · Արագապէս
ջնջել ։ 3 · Դիւրաւին մոռանալ ։ 4 · Ցոփա-
բարար խաղալ ։

Մարդ ։

Որք երք տանեղյակս գտանեն ի մարդն ։
1 · Գեղեցկութիւն մարմնոյն ։ 2 · Իմաս-
տութիւն հոգւոյն ։ 3 · Բարի համբաւն
վարուց ։ 4 · Դատաստութիւն խօսելոյ ։

Որք երք տանեղյակս օգնեն առ ի հա-
ջողեցուցանել զմարդն ։ 1 · Հետաքօտութիւն

շահելոյ ։ 2 · Չափաւորութիւն ննջելոյ ։ 3 · Համբերութիւն անիրաւութեանց ։ 4 · Հրաժարել ՚ի վշտացուցական իրաց ։

Չորս իրք պիտանացոյնք են մարդոյ յաշխարհի յայսմիկ ։ 1 · Ճանաչել զինքն իսկ ։ 2 · Տանիլ անիրաւութեանց ։ 3 · Խորու‑քապէս կառավարել զընտանիս ։ 4 · Աշտալ զերջանկութիւն ՚ի ձեռս կանանց ։

Չորս իրք տան զդժբաղդութիւն որդւոյ մարդոյն ։ 1 · Մեռանիլն որդւոց ։ 2 · Կորուստն ընչից ։ 3 · Յառաջադիմութիւն թշնամեաց ։ 4 · Նուազումն բարեկամաց ։

՚Ի Չորս իրաց ոչ կարէ փախչել մարդն ։ 1 · ՚Ի գալոյ ծերութեան ։ 2 · ՚Ի կորստենէ բարեկամաց ։ 3 · ՚Ի վշտալի պատահմանց ։ 4 · ՚Ի հասանելոյ մահուան ։

Չորս իրք առնեն զմարդն հաճոյակեր ։ 1 · Արբելն զգինի ։ 2 · Սիրելն զընկերս ։ 3 · Առնելն այլոց զայն՝ զոր կամի առնելն ինքեան ։ 4 · Ոչ կամելն առնել այլոց զայն՝ որ ոչ կամի լինելն իւր ինքեան ։

Չորս իրք պատշաճին խոհեմ մարդոյ ։ 1 · Պահել զարդարութիւն ։ 2 · Մեծացուցանել զբարիս ։ 3 · Կանգնեցուցանել զանկեալս ։ 4 · Խրատել զմոլորեալս ։

Չորս կերպ մարդիկ՝ անհամաձայնական են ։ 1 · Աղքատ հպարտն ։ 2 · Սաստասաց փառ‑թամն ։

թանն։ 3. Բղջախոհ ծերն։ 4. Բանսարկուն ի մէջ եղբարց։

Մարդկային բարք։

Չորս իրք ցուցանեն զբարս մարդոյն։ 1. Խոսակցութիւն։ 2. Տրամադրութիւն մարմնոյն։ 3. Իղձն հոգւոյն։ 4. Կերպն կերպարանացն։

Մարտիրոս։

Չորս կերպիւ մարտիրոսք գտանին առանց հեղման արեան։ 1. Կուսութիւն՝ ի տղայութէ։ 2. Ժուժկալութիւն՝ ի յաւատութէ։ 3. Խոնարհութիւն՝ ի յաջողութէ։ 4. Համբերութիւն՝ ի ձախորդութեան։

Մեծամեծ։

Չորս իրս մեծ հանդերձն մեծամեծ անցքէն։ 1. Հատանել զինչս այլոց։ 2. Հրամայել ի վերայ բազմաց։ 3. Շահել զբարութիւն։ 4. Արհամարհել զպատուասիրութիւն։

Չորս իրօք հեղգանան մեծամեծքն։ 1. Երթալ ի յորս։ 2. Ընդունել զպարգեւս։ 3. Խօսել զզարմանալիս։ 4. Կողոպտանել յայլոց։

Մեղք։

Չորս մեղք գտանին զարհուրագոյն ի մարդն։ 1. Սպանանել զընկերն։ 2. Բակել ջուր զայլոց։ 3. Բռնուլ անիրաւութեամբ զինչս օտա-



օտա-

տառապոց։ 4. Ի հրապարակի նախատել զոք։

Մոլութիւն։

Զորս են տաւել գործելն մոլութիւնք, որք գտանելն յորէն։ 1. Սուրանալ զանձ. 2. Պղատանել զհայրենիս։ 3. Սպանանել զծնողս։ 4. Պատրել զընկերն։

Զորս երէ ծածկեն մոլութիւնք. 1. Առատաձեռնութիւն՝ ի ծախսելն. 2. Ճոխաբանութիւն՝ ի խօսելն. 3. Համեստութիւն՝ ի բարս. 4. Խորամանկութիւն՝ ի գործս.

Զորս մոլութիւնս կերպարանեն ի չորս առաքինութիւնս։ 1. Խորամանկութիւն՝ ի խոհեմութիւն. 2. Կամակորութիւն՝ ի հաստատութիւն. 3. Ագահութիւն՝ ի ժուժկալութիւն. 4. Խստասրտութիւն՝ ի յարդարութիւն.

Մտացութիւն.

Զորս չորս հարթէք փութայիք ստանալ զընկալեալ բարերարութիւնս։ 1. Տղայն՝ զնոյն զարդացման. 2. Աղքատն՝ զնոյն եղանակաց յարժանապատուութեան. 3. Հպարտն՝ շաղախեալ ի յամբարտաւանութեան. 4. Բանտարկեալն՝ յետ ազատութեան.

Ցոյ.

Զորս երէ ծնանին ի չարաց։ 1. Սրբախոհէ մարմնոյ։ 2. Կեցուէ հոգւոյ։ 3. Խնեթեւէ աշխատանաց. 4. Կեանք երկարաւէ.



Նա

Նախանձ։

Զորս իրս ծնանին ի նախանձու։ 1. Տրտմութիւն՝ զոր ընկալնու վս նր։ 2. Կորուստն՝ որ ունի յայնմանէ։ 3. Բաժանումն մարդկանց։ 4. Աւերումն քաղաքի։

Կամ ո՞ր է՝ որ ծնուցանէ։ 1. Տառապակիր կեանքն։ 2. Տարաբախտութիւն։ 3. Պարծեցողութիւն։ 4. Աղքատութիւն։

Ե Զորս երեք ծնանի նախանձն։ 1. Ի ցանկութենէ պատւոյ։ 2. Ի ցանկութենէ շահուց։ 3. Ի յերջանկութենէ այլոց։ 4. Ի յառաջ-ելութենէ դրացւոյն։

Զորս իրս ճեղքեն զնախանձն։ 1. Ծնկումն խղճմտանաց։ 2. Լռամանումն աղքատաց։ 3. Սննդումն զգայութեանց։ 4. Պակաս-ումն զօրութեան։

Նիւթ։

Զորս նիւթս են, որք պարունակեն զմեզ երկ աշխարհի։ 1. Հողն։ 2. Ջուրն։ 3. Օդն։ 4. Հուրն։

Զորս են նիւթ, յորոց ծնանին ամ չարիս աշխարհի։ 1. Նախանձ։ 2. Ագահութիւն։ 3. Հպարտութիւն։ 4. Հեշտասիրութիւն։

Շահումն։

Զորս չերրորդ մարտիկս առեն չենթեանց շահել տառապելոյն որ շահին։ 1. Պեղատանքն։



2. Փառ

2. Փաստաբանքն ։ 3. Ոստիկանքն ։ 4. Բը-
ժիշկքն ։

Չորս չերրդ նորդեկ սաէն ընծայեցուց շա-
չաւս շահէլ ... [illegible] ։ 1. Վարպետն՝
ի կառավարելն ։ 2. Հողագործն՝ ի սեր-
մանելն ։ 3. Վաճառականն՝ ի վաճառելն ։
4. Պ ուժարարողն՝ ի խաղալն ։

Չորս էրրդ արհեստաւորք [illegible] ։
1. Տանել զձուս ի քաղաքի ։ 2. Պահել զձուր
ի ծոցի ։ 3. Սնուցանել զօձս ։ 4. Ըռնել
զբարի առաքինաց ։

Ողորմութիւն ։

Չորս չերրդէ ողորմութիւնք հաճելիք են այս ։
1. Տուրք աղքատաց ։ 2. Ներել անիրա-
ւութեանց ։ 3. Խրատել զմեղանչօղս ։ 4. Աղօթէ
զննջեցեալս ։

Որդի ։

ը Չորս պարտաւորութիւնս ունի որդին դէպ ա-
հայրն ։ 1. Պատուել զնա ։ 2. Հնազանդիլ
նմա ։ 3. Ոչ տրտմեցուցանել զնա ։ 4. Օգ-
նել նմա մինչ ծերասցի ։

Որկրամոլութիւն ։

Չորս էրք ծնծեն որկրամոլութիւնք ։ 1. Հը-
գունակութիւն շահելոյ ։ 2. Ընդդիմանալ
քաղցու ։ 3. Սպառնական աղքատութիւն ։
4. Յանկութիւն դրամոց ։



Չորս

Չորս էրք ամենէն գլխաւորն որչէրանց. 1. Ազ-
ձրութին երթալոյ 'ի գինետունս. 2. Ընկե-
րակցին որկրամոլից. 3. Անիծն զբաղում
եկամուտս. 4. Հանապազորդական հան-
գըստութին.

Որոգայթաւոր.

Չորս էրք յոյժ որոգայթաւորք էն 'ի մէջ այլոց.
1. Կեալ 'ի ներքոյ հրամանի բռնակալաց.
2. Հաւատալ հողմոց. 3. Լինել նախըն-
թաց 'ի պատերազմի. 4. Կենակցել ընդ
խելագարս.

Ունիլ.

Չորս էրս տատանել ամէն մարդ ժամ զոր
կարծէ. 1. Օ թշնամիս. 2. Օ մեղս.
3. Օ ամս. 4. Օ պարտս.

Չորս էրս ամէն մարդ տատանել ամչա ժամ
զոր կարծէ. 1. Խոնարհականութին. 2. Նաղութին.
3. Նարեկամն. 4. Տուփական ցանկութին.

Ուրախութիւն.

Չորս էրս ծնանի կարծատեւն ուրախութին.
1. Ագահել 'ի բանսի. 2. Ամուսնանալ
ընդ կնոջ. 3. Մտանել 'ի զինուորութին.
4. Հասանել արժանապատուութեան.

Չար կիրառութիւն.

Չորս գործք էնորք յոյժ չարագէտս 'ի լեր ար
կանեն. 1. Խնագուր անկիրառ 'ի Թէչորեն.



2. Ըն

2 · Ընծայ անձին ի կրօնս իւրում: 3 · Խնամա_ տունն առանց գործոյ: 4 · Փարթամն ա_ ռանց ողորմութեան:

Չորք գործք գտանին յաշխարհի յոյժ չա_ րաղէշ: 1 · Քրիստոնեայ վիճասէր: 2 · Աղ_ քատ հպարտ: 3 · Ծեր առանց կրօնից: 4 · Կին առանց ամօթոյ:

Չորք երբ են յաշխարհի, որք չարագէշ ի յեր_ կրին: 1 · Մեծատուր առանց առաքինութեան: 2 · Ժողովուրդ առանց օրինաց: 3 · Մարդ առանց կրթութեան: 4 · Տղայ առանց հնա_ զանդութեան:

Պատանեակ:

Հ · Չորք երբ տանեն պատանեակս: 1 · Խորհր_ դեն զհարստութիւն: 2 · Հեշտանան ի պատիւս: 3 · Ջանան բարեկամութեանց: 4 · Հրաժարին ի մեծաւորաց իւրոց:

Չորք երբ պարտին պատանեկաց: 1 · Լսել_ հանճարեղութեան: 2 · Պատասխանել խոհեմութեամբ: 3 · Ոչ մեծանալ ումեք: 4 · Ծառայել ամե_ նեցուն յօժարութեամբ:

Չորք երբ վայելչեն պատանեկաց: 1 · Պահել ի միտս զբանս ծերոց: 2 · Հնազանդել հա_ ւատարմաբար: 3 · Խօսիլ հանճարեղաբար: 4 · Պատուել զայնս, որք արդիւնաւորին:

Պատերազմ:

ՀԷ · Չորք երկոց տանին երկաւանի պատերազմի:

 1 · Ս_

1. Ս̃ա հաւատոյ: 2. Ս̃ա արդարութեան:
3. Ս̃ա պահելոյ զխաղաղութիւն: 4. Ս̃ա
գողջ ազատ:

Չորք էրք աոջղէն զերդն առնել չղատերացն:
1. Խոհեմութիւն գանձուց: 2. Փառասիրութիւն:
3. Ճանկութիւն: 4. Ճղոխութիւն զինուց:

Չորք էրք ներժէն չղատերացն: 1. Ս̃ ըն-
ժառութիւն: 2. Պակասութիւն կերակրոց:
3. Սակաւութիւն դրամոց: 4. Ձանձրութիւն
պատերազմելոց:

զՉորս վնասակարութիւնս վարժս առնէ պա-
տերազմն: 1. Դատապարտեցուցանէ զզօրացն:
2. Յաւելու զնուազուն կերակրոց: 3. Սու-
պէ զմարդիկ հեռանալ ՚ի հայրենեաց:
4. Պատճառէ զոմն:

Պարտաւորութիւն:

՚ի Չորս վարժս նախաջն պարտաւորէն մա-
տէրք: 1. Մեծացուցանել զառաքինիս:
2. Պատժել զչարագործս: 3. Պատուել
զառաքինութիւն: 4. Օգնել կարօտելոց:

Պատիժք:

Չորս են վերջինք պատժից հատուցանողէն:
1. Մահն՝ մի ժխորահարութեան: 2. Երկ-
րորդն՝ վասն անխղճելոց ցանկութեան:
3. Երրորդն՝ առ ՚ի յափշտակել զինչս:
4. Չորրորդն՝ առ ՚ի հաշտել:

Սէր:

Սէր։

Զորս ելս ծնանի ՚ի սիրոյ։ 1. Պատուել զնա։ 2. Սիրել զընկերն։ 3. Օգնել կարօտելոց։ 4. Խրատել զմոլորեալս։

Սիրելութիւն։

Զորս են առաջնանք սիրելւոյ։ 1. Ծնաւղելն։ 2. Խօսակցիլն։ 3. Շօշափելն։ 4. Փաւանդելն։

Սպասաւոր։

Զորս ելս գտանել պիտոյն ՚ի բարի սպասաւորն։ 1. Համբերողութիւն ՚ի ծառայելն։ 2. Երագութիւն ՚ի սպասաւորելն։ 3. Քաղցրաբանութիւն ՚ի խօսիլն։ 4. Հաւատարմութիւն ՚ի յաւետորելն։

Ստացուած։

Զորս ելս ծնուցանէս հողագործն զստացուածս ՚ի մարդկանէ։ 1. Հրկիզութիւն։ 2. Աւազակացն։ 3. Հեղեղն։ 4. Կարկուտն։

Սքանչելիք։

Զորս ՚ի ծագոյն սքանչելիս գոն յաշխարհի։ 1. Արեգակն՝ որ ՚ի միում աւուր շրջապատէ զբոլոր աշխարհն։ 2. Ծովն՝ որ է հաստատ և առանց շարժման միաւորեալ ընդ երկրի։ 3. Զանազանութիւն այնքան զանազան կերպարանաց, որ եղեալ է ՚ի ներքոյ միոյ կերպարանի։ 4. Այնքան բազմութ

 մարդ-

մարդկանց ունելով զզանազան կենցաղավա-
րութիւն՝ հասանին ՚ի մի վախճան, որ է մահն։

Վաճառական։

Չորս են պարտ ունել վաճառականին։ 1. Մնիլ ուշիմ ՚ի գնելն։ 2. Համձարեղ ՚ի վաճառելն։ 3. Հաւատարիմ ՚ի յաւե-տրելն։ 4. Քաղցրախօս ՚ի սակարկելն։

Վէճ։

Չորս են ունել պարտ նոյն որ կամի վիճել և հաղթահարել։ 1. Խոնարհութիւն ՚ի յառա-ջադրելն զդիտաւորութիւն։ 2. Խնամութիւն ՚ի պատասխանելն։ 3. Ողջախոհութիւն ՚ի վիճելն։ 4. Առատաձեռնութիւն ՚ի ծախելն զդրամս։

Վիշտ։

Չորս են տան մարդոյ ընծայեալ վիշտ։ 1. Հողածութիւն որդւոց։ 2. Կորուստ ընչից։ 3. Անկնունելի գիտութիւն թշ-նամեաց։ 4. Կուսանձութիւն բարեկամաց։

Վնաս տանց զանելոյ։

Չորս են էն որք բառնին ՚ի մարդկանէ, և ընդ այդ ոչ կարեն դարձուցանել։ 1. Կուսութիւն՝ մինչ աղախինն։ 2. Կեանքն՝ մինչ բառնի։ 3. Համբաւն՝ մինչ աղաւաղանաց։ 4. Ժամանակն՝ մինչ հասանի։

Վնաս թարց օգտի։

Չորս են անուել վնասնեն, և են անձից օգուտ։ 1. Նշխա

1 · Իշխանողութիւն Թարց որդեծնութիւն ։ 2 · Ստեղական տրտմութիւն · 3 · Ընդունայն մտածմունք · 4 · Խածատող նախանձ ։

Տառապանք ։

Ի Չորս տեսակս փառաւորէ նորա ։ 1 · Ի համանիլ արժանապատուութեան ։ 2 · Ի փախչել յաղքատութենէ ։ 3 · Ի հրաժարել նախատանաց ։ 4 · Ի հարստացուցանել զորդիս իւր ։

Տիրել ։

Չորս կերպ մարդիկ ունին ընծայութեան յանձնութեն տիրելոյ ։ 1 · Աղքատն՝ առ ի կողոպտել զինչս փարթամաց ։ 2 · Փարթամքն՝ առ ի պաշտպանել ։ 3 · Անարգեալքն՝ առ ի վրէժխնդրել ։ 4 · Արիքն՝ առ ի պաշտպանել զքաղաքն ։

Առաջինքն՝ ժանտանիք են քաղաքացւոց ։ Երկրորդքն՝ կարեն համբերել կերպիւ իւիք ։ Երրորդքն՝ վնասեն բազմիցս ։ Չորրորդքն՝ օգտակարագոյնք են ։

Տիրել անիրաւաբար ։

Չորս կերպ մարդիկ անիրաւաբար տիրեն ի մերոյ ։ 1 · Փարթամք ։ 2 · Խաբեբայք ։ 3 · Հպարտք ։ 4 · Համարձակք ։

Չորս անպատշաճութիւնք ծնանին յանիրաւտիրելութենէ ։ 1 · Կեղծաւորեալ պատիւ ։



2 · Ա–

2 · Ոտահարել նախանձ ։ 3 · Բոլորութիւն իշխանաց ։ 4 · Պատիժ տիրապետողաց ։

Տղայանալ ։

Զորս իրս տղայացուցանեն զծերս ։ 1 · Միր— ուքն ։ 2 · Անձնասիրութիւն ։ 3 · Կեղուն ։ 4 · Ցանկութիւն ։

Տուն ։

Զորս իրս դարձուցանեն բաղձեալ զորդն 'ի տուն երբ ։ 1 · Սէր կնոջն ։ 2 · Վայելչութ տանն ։ 3 · Ոչ գտանելն ընկերակիցս ։ 4 · Վատագոյն ժամանակն ։

Զորս իրս արտաքսեն զորդն 'ի տանէ ։ 1 · Բռնաւել գործշահութիւն ։ 2 · Մատ— կագոյն ծուխն ։ 3 · Կաթիլն անձրևաց ։ 4 · Բարկութիւն կնոջ ։

Տուրք առանց ձեռաց ։

Զորս իրս տայ մարդ առանց ձեռնտու բերելն ։ 1 · Գիտութիւն՝ մինչ ուսուցանէ ։ 2 · Խրատն՝ մինչ լուսաւորէ ։ 3 · Վայելչական արա— րողութիւն՝ մինչ առնէ ։ 4 · Բաղդատորա— նութիւն՝ մինչ 'ի կեր արկանէ ։

Տրտմութիւն ։

Զորս իրս են 'ի Քծաստանի տրտմութեան ։ 1 · Ծառայել ապերախտին ։ 2 · Ըղձել առանց լուսոյ գոլ ։ 3 · Բանել զդուռն առանց ընկալելոյ դիմաց ։ 4 · Սպասել այնմ որ յապաղէ 'ի գալ ։

Չորս երս տան ընծայողն վերջին հաղորդոյ առա-ւել յան օգուտ ենն։ 1. Նմանեցուցանել ընդ-յիմար ընտանեաց։ 2. Անիլ զարագումչար որդիս։ 3. Ի միում ժամու կորուսանել զառագումժամանակաց չարչեցեալն։ 4. Իմ-բերել ՚ի ներքոյ հրամանաց։

Տրանջալ։

Չորս ներպ մորթելն տան, որք անմեռանեալ տրտնջան։ 1. Նա՝ որ տրանջայ զինչ, թէ մեռ եր ոչ տարար զինչն այնպէս, որ կամէրն։ 2. Որ տրանջայ զբաժանեն գոլով ՚ի յաշխա-տանս։ 3. Որ տրանջայ զայլոց ՚ի պատահ-մունս։ 4. Որ տրանջայ զինքենէ, մտած-ելով զկորուսանելն զխորդուն։

Փառասիրան։

Չորս երս պարտի ունել փառասէրն։ 1. Խաւել համբերութն հանապազորդին իւ-րոյ։ 2. Խոնարհաբար ներել զկնալեալն։ 3. Ի պատարագի ունել զպատկանաւոր պատասխանն։ 4. Երբեցուցանել զպատ-ճառն առաջադրեցեալ։

Փոփոխումն։

Չորս երս փոփոխելն բաղում ամբօքն։ 1. Նմին կինոջ։ 2. Խաւերն յաջողակ իրաց։ 3. Կրցնն երեւաց մի գործեցելոց։ 4. Հողն հո-սանուա։

## Քահանայ։

Չորս իրք վայելուչ են քահանայի միոյ։ 1. Նախատեսանել զայն ժամերգութիւն զոր առնելոց է ի վաղիւն։ 2. Կրթել զինքն յուսումնասիրութիւն ի մի մասն գրքերոյ։ 3. Ունենալ աշակերտաց իւրոց զդժուարին իրս։ 4. Լինել քաղցրաբարոյ ընդ նմա։

Չորս իրք վնասակարեն զքահանայն, զի նորեգէս առնէ զնա։ 1. Նախանձութիւն ունկնդրողաց։ 2. Նախանձութիւնն եկամտից։ 3. Ճառանութիւն առաւել գիտուն։ 4. Պատիւն որ շահի ի նոցանէ։

## Քարոզիչ։

Չորս իրս պարտի առնել քարոզիչն։ 1. Համանուցանել ժողովրդեան զծգտակարգդն իւր։ 2. Աշխատել զնիւթն, զորմէ ընձեռէ։ 3. Աշ կրելել քաղցրս զայն զոր մատուցանէ։ 4. Ի կիր արկանել զհամառօտութիւն։

## Օգտակար խրատ։

Չորս իրաց խուսելի է օտարաշխարհիկս։ 1. Ի կենցաղավարելոյ ընդ անձին։ 2. Ի վերջտանելոյ զն իւրաքանչիւր իւրոց, որք ոչ են ըստ հաճոյ սիրոյ։ 3. Ի ցաւելոյ առաւել զն անցելոց իւրոց։ 4. Ի կամելոյ զայն՝ որ ոչ է հնար ունել։



Աշ

## Սոփնայ Հ՜ Հեւրայէի ասացեալ Նշմաժեւ վարդապետէ.

Տին է գըրեալ յօրէնքըն	հին,
մատամբըն սուրբ Ա՜ծոյ	ին.
Թէ պիտա պահես ըղկիրա	կին,
և մի՛ գործեր ինչ ՚ի նը	մին,
Եթէ պահէք ըղ կիրա	կին,
հօտք ու անդաստանք ձեր բազմաս	ցին.
Թէ հակառակ կենայք նը	մին,
ամէն բարիք ձեր խաւա	րին:
Բամբալ ազգաց ազգ մարդկայ	ին,
ամէնն ունին ըղ կիրա	կին.
ուրբաթ տաճկին՝ շաբաթ հրէ	ին,
որ հինգշաբթի՝ կըռապաշ	տին:
Մդըն հրէից յօրէնքըն	հին,
համց պիտա պահէ ըղ կիրա	կին.
որ թէ սպանէ զնա թըշնա	մին,
նա ձեռքըն ՚ի վեր չըհերէ նը	մին:
Սամէկք մարդկան հայոց ազ	գին,
որք ոչ պահէք ըղ կիրա	կին.
ոչ էք նըման դուք կռապաշ	տին,
և ոչ տաճկին և ոչ հրէ	ին:
Այս է օրէնք քրիստոնէ	ին,
տանել շամեալ ՚ի կիրա	կին.

տալ պարապեալ ժամանակ ղին ,
ականջ դընել քահանայ ին :
Քահանայք դու՛ք որ յաշխար հին ,
երեսփոխան էք քրիստո սին ;
Թէ ժողովուրդն անօրի նին ,
արիւն նոցա 'ի ձէնջ խնդ րին :
Նուարդ խրատեա զամենե սին ,
որ զինչ պահեն ըզ կիրա կին .
Թէ չըլըսեն բանից քոյ ին ,
դու մի' երթար 'ի տունս նո ցին :
Նամ նոցա զօրէնքն յայտ նի ,
որ ահն 'ի սիրտ նոցա անկ ցի .
Նա անաստուած է և անհա գի ,
որ չը պահէ ըզ կիրա կի :
Յուսէ' զօրէնք հրէից ազ գին ,
մանկաղայեան նահատա կին .
որ անօրէնք խոզն անտա ռին ,
Թէ զինչ գործեաց հրէից ազ գին :
Սուսեր առեալ կատարե ցին ,
զոլոր մարդիկ հրէից ազ գին .
Նոքա 'ի վեր ձեռք չըբե րին ,
Թէ կու պահեմք ըզ կիրա կին :
Իսկ որ չը պահէ ըզ կիրա կին ,
Նախատ լինի հրէից ազ գին .
որ ոչ պահէ ըզ կիրա կին ,
Ծուղու զօրէնք ըն քրիստո սին :
'հատուած չունի ամենե ւին ,

որ չը պաշտէ ըզ կիրա ... կին.
և կամ չերթայ ժամատե ... ղին,
քան զհրեայն այլ պիղծ կը ... չին:
Նողուկ ու վայ է այն մար ... դուն,
որ չը պաշտէ ըզ կիրա ... կին.
ոչ Թուրք՝ ոչ հայ է այնպի ... սին,
այլ անաստուած բոլորո ... վին:
Ողջըն հրեից յօրէնքըն ... հին,
շատ կիրակիք կու պաշտէ ... ին.
Ի յեօթն աւուրն ըզ մինն օ ... րին,
զմէկ շաբաթուն շաբաթ նը ... մին:
Ի յեօթն ամսոյն ըզմէկ ա ... մսին,
Ի յեօթ տարւոյն ըզմէկ տա ... րին.
Ձեզ յեօթն աւուր մին կիրա ... կին,
զայն այլ չը պաշտէք բոլորո ... վին:
Դուք տես ըղուէր հրեից աղ ... գին,
կին մի չը պաշտեց ըզկիրա ... կին.
կրակ վառեց վառըն ցըր ... տին,
ամէնքըն ըզնա քարկոծե ... ցին:
Նա որ վառեց վառըն ցըր ... տին,
մեծ մահ անկաւ ամէն աղ ... գին.
մինչ որ զայն կինն քարկոծե ... ցին,
ապա եթող մահն ըզնո ... սին:
Եւէ կրակ արար անաւի մին ... կին,
տէր բարկացաւ բոլոր աղ ... գին.
որ չը պաշտէ ըզկիրա ... կին,
քարկոծելոց է այնպի ... սին:

 Օ այս

Օ՜ այս օրինակ գրէք ան ձին ,
պինտ պահեցէք ըղկերա կին .
զի բարեկութիւնն աստուածայ ին ,
չը սատակէ զամենե սին :
Նուէք զոգամ հայր մեր Նախ նին ,
որ չը լըսեց պատուիրա նին .
վէց հազար ամ չարչարե ցին ,
այնպէս և դուք մի լըլա գին :
Թէ չը պահէք ըղկերա կին ,
պէս պէս պատիժ ձեզ հաս նին .
այս կեանքս և օր դատաստա նին ,
բարեկութիւն մեծ գայցե նո ցին :
Ո՛վ չը պահէ ըղկերա կին ,
դուստր և որդիքն իւր կոտո րին .
հօրք է անդաստանք պատուհա սին ,
և պարտական հըրոյ լի նին :
Նոյն տէրն ասաց յօրէնքըն հին ,
Թէ չը պահէք ըղկերա կին .
Ես ըղտարին բոլորո վին ,
կըրակ ածնեմ ձեզ միջա կըր կին :
Քրիստոս խաչեալ վասըն քոյ ին ,
և աւերեաց դըրժողքըն հին .
դու չպահելով ըղկերա կին ,
քեզ նոր դըրժողք չինես կըր կին :
Ո՛վ չը պահէ ըղկերա կին ,
չար բարեկութիւն գանձէ յան ձին .
վասըն գործոյ կերակէ ին ,


գան

զան դէս դէս ցաւք անդատա      նէն։
Վարկուա մորեխ ի երաշտու      թի,
Ջորեակ դալուկ և ժանդ հա      ցին.
անատանց ցաւք և կոտո      րին,
մահ տարաժամ մաւրացկու      թիւն։
Ո՛չ և փախուստ և խռովու      թիւն,
սասանութիւն և շարժ երկ      րին.
Թալան ու քանդ աւերու      թիւն,
հեղեղք յորդք և սաստու      թիւն։
Լալումն ողբումն և ցաւ ան      ձին,
սուտ և յայն կեանքըն լինի      ցին.
որք ոչ պահէն ըզ կերա      կին,
կրակով անձինք նոցա այ      րին։
Պարապ կացեր 'ի կերա      կին,
գընա 'ի ժամ յեկեղե      ցին.
լսէ զքարոզ քահանայ      ին,
խոստովանեա զյանցանս քո      ին։

Մանկական հանճարեղութիւնք հնարեցեալ ՚ի նորաւանութ-
ամանց՝ առ ՚ի հեռի կալ ՚ի ձանձրացելոյ խաղուց։

Վայելուչ տղայական խաղ. Որով 3 իրք՝ յերից անձանց թաքուցեալք, չորրորդն ասասցէ՝ ով ունի՛ն բռունց ձեռին իւրոյն։

Իցեն 3 անձինք. Արամ, Հայկ, և Տիգրան խաղացողք. իսկ Արշակ չորրորդ անձըն՝ խաղի գուշակող։

Իցեն և ՚ի մէջ խաղացողացն 3 իրք. թէ փայտեայ, և թէ քարեայ. կամ յայլ ինչ նիւթոյ իցէ իրն գաղելի։

Դնեմք թէ՝ իցէ մին Լեմոն, մին Խաւրինձ, մին Խնձոր. կամ այլ ինչև իցէ՝ ըստ հաճոյից։

Իցեն և ՚ի մէջ խաղացողաց 24 մանր քար՝ կամ սիսեռն. և կամ այլ մանր ինչ՝ որ համարի։ Յետոյ Արշակ որ է գուշակողն՝ ՚ի մտի իւրում դնիցէ և պահիցէ զանուանս երից գաղելի իրաց՝ այսպիսի այբուբենի գրովք։

Ա. Բ. Գ. իսկ՝ զերիս խաղացող անձինս՝ ՚ի մտի իւրում ձևիցէ այսու կարգաւ. 1. 2. 3. Որ է առաջին, երկրորդ, և երրորդ անձն. զոր՝ Արամ, Հայկ, և Տիգրան. կամ ով որ և իցէ։

Նա յառաջ քան զթղթուցանել երից ի-


րացն

րանցն յերից անձանց՝ Արշակ որ է գուշա-կօղն, 'ի մէջ եղեալ 24 համարելի մանր քա-րանցն՝ տացէ Առաջնոյն 1 քար. Երկրոր-դին՝ 2. Երրորդին 3 քար տացէ:

Ապա՝ Գուշակօղն տացէ երից անձանցն զայս պատուէր. մի որ 'ի ձէնջ Թաքուցանէ Ա., տացէ 'ի մէջ մնացեալ 18 քարանցն զայնքան քար՝ որքան ինքն ունի: Որ զա-ռէ Բ., երկիցս այնքան քար տացէ՝ որքան ինքն 'ի ձեռին իւրում ունի: Իսկ որ առ-նու Գ., չորս անգամ այնքան քար կալցէ որքան ինքն ունի. և զմնացեալ քարինս թողցեն 'ի յայտնի որ լինի անխախտ մինն յայս թուոց. 1. 2. 3. 5. 6. 7:

Յետոյ՝ ինքն Արշակ զերիս իրան և զե-րիս անձինան բարւոք զմտաւ ածեալ և տպեալ կարգաւ 'ի միտ իւրում, հեռանայ-ցէ սակաւ ինչ՝ մինչև երկերեան անձինքն թաքուսցեն զերիս իրան ըստ համեցից իւ-եանց. և կոչեսցի ինքն 'ի տես Օ 'ի մէջ եղեալ քարինան և 'ի գուշակումն մնացեալ քարանցն՝ թէ ով զինչ թաքոյց:

Եթէ Արշակ դառնայ և տեսանէ զ'ի մէջ մնացեալ քարինսն, թէ մին քար է մնացեալ. առաջինն ունի Ա., երկրորդն ունի Բ., երրորդն ունի Գ.:

Իսկ մնացեալ քարանց գուշակումն՝ տես առ 'ի յաղիւսակի իւրում:

| Քառերն ։ | Անձերն ։ | Իրք ։ |
|---|---|---|
| 1 | 1 | Ա. |
| | 2 | Բ. |
| | 3 | Գ. |
| 2 | 1 | Բ. |
| | 2 | Ա. |
| | 3 | Գ. |
| 3 | 1 | Ա. |
| | 2 | Գ. |
| | 3 | Բ. |
| 5 | 1 | Բ. |
| | 2 | Գ. |
| | 3 | Ա. |
| 6 | 1 | Գ. |
| | 2 | Ա. |
| | 3 | Բ. |
| 7 | 1 | Գ. |
| | 2 | Բ. |
| | 3 | Ա. |

Հարց և պատասխանի տասնմեկեան ի մէջ
Հայկեան և Պարսից.

Վա խորհած թուոյ խնդրելոյ՝ այլ և այլ օրինակաւ.

## Օրինակ Լուսոյ Բուույ.

| | |
|---|---|
| Հարկ. | Պօղ. |
| Խորհեալց. | Խորհեցայ. 4. |
| Սրբագործեալ. | Մարէ. 12. |
| Կիսեալ. | Կեսեցէ. 6. 6. |
| Հաստատելոց կիսածդ. | Մայր. |

Զմին կիսած բաժինն եռապատկեալ.
Նասապատկեցէ. 18.
Զերկան ընծեակս ուռի բազմոցուցածդ.
Զերեսուն.
Աւրեմն քո առաջին խորհած թիւն էր. 4.
Մայր ... էր.
Զի յայսմ կերպի՝ որքան ընծեակ, այնքան երկեակ համարի.

## Օրինակ Ճաշու Բուույ.

| | |
|---|---|
| Հարկ. | Պօղ. |
| Խորհիր. | Խորհեցայ. 3. |
| Սրբգոլ բազմացի. | Նայն. 9. |



Կա

Կիսե՛ ։ Կիսեցի · 5 · 4 ։
Կիսածդ հաւասար է ։ Ոչ՛ ։

Ապա հայց ՚ի նոր պահէ զի վայն Բի ։
Կիսածիդ մեծ բաժինն երեք պատկեա՛ ։
Եռեքպատկեցի · 15 ։
Ո՞րքան լինի ունիս ։ Մի՛ վայն ։
Ուրեմն քո խորհածն էր 3 ։ Այո՛ ։
Ո՛չ է որքան լինի՝ այնքան երկու · և մին
համարին՝ որ ՚ի միտս պահեցի ։

—

## Այլ ձեւով խորհելոյ ։

| | |
|---|---|
| Խորհեա՛ ։ | Խորհեցայ · 3 ։ |
| Կրկնեա՛ ։ | Կրկնեցի · 6 ։ |
| Դիր ՚ի վերայ 4 եւս ։ | Դրի · 10 ։ |
| Հնգով բազմեցո՛ ։ | Բազմացի · 50 ։ |
| Կցեա՛ զհեան 12 ։ | Կցեցի · 62 ։ |
| Տասնով բազմեցո՛ ։ | Արարի · 620 ։ |
| Քանի՞ է ողջն ։ | Վեցհարիւր · 20 ։ |

Այս յետոյ լսելեայն՝ մնացս բառնամ 320
՚ի 620 թուոցն, մնան 300 · ուրեմն խորհած-
թիւն էր 3 ։

Այսպէս և ՚ի շուրջս թիւս է · զի որքան
հարիւր երկան, այնքան մէկ մէկ թիւ ի-
մացեալ լինի փոխան հարիւրոցն · բայց յետ
բառնալոյն ՚ի նմանէ զթիւն 320 ։



Դա-

—

Գուշակումն խորհած աւուր շաբաթուն։

Խորհիր։ Խորհեցայ․ Ուրբաթ։
Տուր թիւն կրկնեա՛։ Կրկնեցի․ 12։
Աւելագիր արա՛ 5 թիւ։ Արարի․ 17։
Բազմացո՛ հնգով։ Եղեւ․ 85։
Բազմացո՛ տասամբ ևս։ Եղեւ․ 850։
Քանի՞ հարիւր ունիս։ Ութ։ 800։

Այս ծածուկ մնացս 200 կամ 250 դուրս հանեմ, մնան 600․ ուրեմն վեցերորդ օրն, այսինքն՝ Ուրբաթն է քո խորհած օրն։

Նմանապէս և յայսմիկ քանի հարիւր որ ելանէ, ՚ի բաց բառնալի է ՚ի նոցանէ ըզթիւն 250, ըստ վերոգրեալ խրատուդ։

—

Տղայական ճարտարութիւնք։

Երամ մի հաւ արածէր ՚ի դաշտի․ և յանցանել ընդ այն այլ միս հաւու, ողջունեալ զնա՝ ասաց․ բարեւ ձեզ հարիւր հաւ։ Եւ նորա ասացին․ մեք ոչ եմք հարիւր հաւ․ այլ՝ մեք, և քան զմեզ, և քան զմեր կէսն, և կիսոյ կէսն, և դու ևս ընդ մեզ, ապա լինիմք հաւ։ Արդ՝ քանի՞ հաւ էին ՚ի դաշտին․ 36։

Քառասուն մարդ գնացին ՚ի բաղանիս։ Բաղնեպանն էառ ՚ի նոցանէ 40 ըստակ․ բայց՝ երեք տեսակ մարդ էին բաղանիս գնացօղքն։ Մին տեսակ մարդն՝ հատոյց կէս կէս ըստակ․ միւնն՝ մին մին ըստակ․ և մին տեսակն՝ երկու երկու ըստակ։ Եթէ կամիս իմանալ թէ, յամէն տեսակէ քանի մարդ կային ՚ի բաղանիսն․ էին 20 մարդ՝ կէս կէս ըստակ տըւօղ․ 10 մարդ՝ մէկ մէկ ըստակ տըւօղ․ և 10 մարդ՝ բ̅ բ̅ ըստակ տըւօղ։

Մին մարդ ունէր իւրն հետ մին գառն, մին գայլ, և մին խուրձ խոտ․ իբրև էհաս ՚ի գետափն, ընդ գետն անվնաս անցոյց զնա այսու սարքաւ։ Յառաջ անցոյց զգառն միայն, յետոյ զխոտն միայն․ և եբեր յայս կողմն գետոյն զգառն․ Թողեալ աստ գառն՝ անցոյց զգայլն միայն․ ապա եկն՝ և զգառն վերստին անցոյց։

Ծեր ումն օրհնեաց զմանուկ մի և ասէ․ ապրիս՝ որքան ապրեցար․ և այլ այնքան կեցցես․ երկիցս եւս այնքան։ Նաև աստուած յաւելցէ քեզ զմինն ՚ի տարեացս իմոց՝ որ լինիցիս հարիւրամեայ։ Արդ՝ եթէ կամիս իմանալ թէ որքան ամեայ էր մանուկն այն․ էր ութ ամեայ և երեք ամսեայ։



Մին

Մին մարդ՝ ունի մին ութ լտրանոց տաման լի՛ գինով . կամի կիսել զայն գինին . և ունի երկու այլ ուրիշ աման . մէկն 3 լտրանոց , և մէկն 5 լտրանոց ։ Այս երկու ամանաւս զայն ութ լիտր գինին այսպէս կիսես

Առաջ լից 3 լտրանոցն՝ և թափե 'ի հինգ լտրանոցն . դարձեալ լից երեքանոցն և թափե 'ի հնգանոցն . և մնայ յերեքանոցումն՝ մէկ լիտր . թափեա զհնգանոցն որ լի է 'ի մէջ ութանոցին . և զմի լիտրն որ մնայ յերեք լտրանոցն՝ լից 'ի հնգանոցն . յետոյ լից միւսանգամ 3 լտրանոցն՝ և թափե 'ի հնգանոցն . և լինի 4 լիտր 'ի հնգանոցն ! և 4 յութանոցի մէջն ։

Որ֊անի մի խիղ հանելուկ՝ տաղեր 'ի գիրոյս ։

Նմին ։

Մանուկ մի քաջ ազնիւ հա — սակ ,
կապեր կրծոցն դաստա — ռակ .
է նա բարի անմեղ ա — սակ ,
և քրիստոսի խիղճն օրի — նակ ։

Նմին ։

Բանհնարեան ազնիւ ար — կին ,
խիղճն ծնանի ըղձմայրն օ — ձին .
փոքու մարմն թէ քեզ պի — տին ,
դու լաւ սիրե ըղ որսորդ — նին ։

Ր.ձծ.

Օ ամէն ջրջի խնչն 'ի քա — ըեր,
՝ուռնի ծաղկու մաղէ կըր — ծեր.
գինւոյ ունի աղվոր տը — կեր,
ւօծակ ձըրի գանկի կո — թեր.

Ս՝ուէ.

Պ յասմուծոյ ըանն է նմա — ներ,
հերն վայելուչ և գուուզ է — կեր.
էնա ըարի ւաղվոր ըն — կեր,
ըայց զօձն ունէ զինչ ըզխո — տեր.

Խ-ւղ.

Օ էա մրակեց հագնի խո — շոր,
՝ւինքն 'ի ըընէ մաղեղնա — ւոր.
զըրմէ տանն թէ չէ' աղ — վոր,
զի քըրխտոսի կայ նենգա — ւոր.

Ր.ջՀ.

Ը ըխուկ մի կայր զէտ ըղ Փը — ըեր,
՝ւինքըն խաւար մուշտակ ու — ներ.
խաղայր քաջօղ կէնայր ւյաւ — ներ,
'ի հետ տանծին զաչերն ա — ծեր.

.Ս-շբ.

Ս՝ատուած չարար՝ եղև նա — նոր,
շատ հիացոյ ես վասն այ — նոր.
թէպէտ նըմնէ 'ի փայտ . — շոր,
ըղնա սիրէ խնտա ձիա — ւոր.

Ր.Հ

Ռուէս:

Օհա ըղ այսր խիստ է 'ի յար,
սիրէ զմօրթին ւառէ զըան ջար:
ամէնչ կարդամ զհըրձ քեզ ձառ,
խելօքըն ծովէ գետ խի կար:

Կաքաւ:

Որպէս տիկին ուշիկ դը նայ,
պարանի հետ ըն քայլ կու գայ:
բազմի յուսկի բարձի վր րայ,
որպէս տանէ գետ ըղըա ղայ:

Սագ:

Ի սուլտանի մեծ քարխա նան,
կայր մին ուստա խիստ անմը ման:
տանից հօրի և մարու քան,
գործեր բարակ գործ անխա կեան:

Սաքէ:

Պայր 'ի յայգին որպէս ըղ գող,
ւագած ուտէր ինքըն խա ղող:
գիրացեր է գետ ըղ գեր գող,
բայց ինքըն չարժէ քան մէկ մի փող:

Սագ:

Ճանց գեղեցիկ հաւ խմաս տուն,
որ չէ տեսեալ հանգեղ գի տուն:
երբ գողըն գայ մըանէ 'ի տուն,
նա ղաղաղակ բառնայ 'ի բուն:

## Սէրամորէ.

Սուր բուրաստան կայ ու պար տեղ,
ու շատ գալար ու կանանչ սեղ.
անդ կուժեմ շրտայ քար տեղ,
իւր անձն ամէն ոսկի ար բեղ.

## Նըրբուստէլ.

Նէսի փոքրիկ մանողը նակ,
ունէր պլուղ իւր կընկը ղակ.
յուսաւսրաւն ըսկընցը մի նակ,
պաշտէր անդշ բաղցր եղա նակ.

## Նռնենի.

Օ էա զշաՀէն Հանց սուր եր թայ,
Հաճեայ կայրէ գարտակ գաւ նայ.
զէա զասորի երեց կար գայ,
ուտէ չորթան և թարխա նայ.

## Խաղող.

Օ արմանքով աստմ քեղ սիրե լի,
կլին մի ծընաւ գըռուղ ող գի.
տըղան ունի ալէք ծե րի,
երբ ծերանայ զառնայ սև ի.

## Գինէ.

Սղէուրն Հրոյ Նըլման ան սայ,
ու Հանց պայծառ քան զըուալըն կայ.
քան զծիրանի ծով կու ծը փայ,
շատոց արիւն Հեղեալ է նա.



Նուռ

Այլ եւ կերպ զբօսանաց առ ՚ի փոփոխել զկազմած բառն , ըստ որոյ խորագրին տե՛ս զկնի ստորագրելոցս ։

Ա.

Ինձ շատ կամքայ չափես ՚ի ձախ .
գտցես ՚ի յաջ գայ խնամ յա ճախ ։

---

Բ.

Բամնել ժամն բան շաղկա պած .
գիշ ընդգիւտ վիճակին փա կած ։

---

Գ.

Կամքըրդ մշակ ծառայ գա տես .
կանխեալ զանձնօրն վայե լես ։

---

Դ.

Խոպան մըրգոխ լաւ ըստ կա ծով .
ըստ առաջին խաչի Թըռչնոյ կա ռով ։

---

Ե.Օ.

Սաղմոս առա՛ մշտահա ձայն .
առաջադաշ առ Ճըշա ձայն ։

---

ԼԲ.

Փրփրացաւ ցաւ ցա ւօք .
քարացաւ առար ցա ւօք ։

---

Ծանիր սիրելի իմ, զի եթէ կամիցիս զբօսնուլ սովոր և կարգալ առաջի ու-րուք, յամենայն տան տառարուին հարց թէ կալած գիրն կա՞յ ՚ի նմա՝ թէ ոչ. և յորում տանէ թէ՝ կայ, ՚ի վեր նորին եղած թիւն ժողովեա ՚ի միասին. և համարեա սկսեալ ՚ի Այբէն, ուր թիւն դադարի՝ կալած գիրն այն է.

Բայց գիտասցիր՝ զի թէ յառաջին տունըն միայն կայ տանէ, այն Գ է. և թէ ՚ի վերջին տունն միայն կայ տանէ, անդ շփոթումն է. զի ՚ի վերջին տունն՝ Է գիր կայ, որ չկայ ՚ի միւս այլ տունսն, այսինքն՝ Բ և Ծ.

Որովհետեւ տպագրեալ են ՚ի թուոյ երկուտասնեկից գրոյն Ծ և Գ, բաւական է զի մի՛ կալցեն զայնս. զի անշփոթ մնասցեն այլքըն. Իսկ թէ յամենայն տան միջին կայ տանէ, այն Այբն է.

---

Ծանիր և զինչ սորինն հետևեալ բոլորակացս զկիրառութի. զի իՓ տունք են տաքա, որք և ասին Ննջմանք. որոց խորհրդանշերն՝ ՚ի վերայ միոյ միոյ նորոց տպարեալ է. որք են այսոքիկ.

Հասաս. Ծղյս. Աէր. Աբախչէն. Ջախու. Շաղիկ. Հաղաւ. Պաւարի. Մասանի.

Խամալի · Մեղր · Ջուր · Գինի · Հաց · Աղ ·
Արմաւենի · Ձիթենի · Մարդ · Համասփիւռ · Խորոքիօն · Անթառամ · Մանուշակ · Շուշան · Նօնօֆար · Ոսկի · Արծաթ · Ալընդին · Կլայեկ · Պղինձ · Երկաթ · Արճիճ ։

Արդ՝ մինչ կամիցիս դու առաջի ուրուք հայել ՚ի բոլորականն , նախ զամ զոր տառ գրեսցես՝ ընթերցցիր առաջի նր · զի իմասցէ թէ որքան բան ՚ի սմա գոյ՝ այնպէս կալցի զոր և կամիցի։ Եւ սկսեալ յառաջին բոլորակէն՝ ընթերցցիր կարգաւ։ Եւ յամէն բոլորակի տառաթիւն՝ հարց թէ կայ՞ կալած բանն ՚ի նմա թէ ոչ · և յորում ասիցէ թէ՝ կայ , ՚ի միջի նորին եղած թիւն ժողովեալ ՚ի միասին , երթ ՚ի բնաբանսն · որք կարգաւ համարեցեալք են յիւրաքանչիւր բնաբանի վերայ։ Եւ այսպէս լուծցէ ՚ի կիր արկեալ՝ աշխատանք շինողին մի՛ ՚ի զուր լինիցին։

Եւ յիրաւի՝ զի թէպէտ տղայականք են այսոքիկ , բայց և մեք ոչ սակս չափահասիցն , այլ վն նոցին ածաք զսոսա ՚ի լոյս · զի պարապելով ՚ի սոսին՝ յետս քարշիցին ՚ի վնասակար խաղուց · և ընդ գրոյն լիցի դատարկութիւն նոցին · որով հետև տղայական բարուցն՝ այսպիսիք են ախորժելիք։



Յոր



Յորժամ կարդաս զայս նախա գոյն ,
մի՛ դու խոհեմ իմաստնա գոյն .
բարուք պահեա՛ մըտաւա գոյն ,
Թէ կա՞յ թէ ոչ կալած մօր գոյն ։

 Օրէ



Օրինակեալ հետևս տես,
և այս աշամ երկրորդս տես.
զայս ևս խակցին պահեամ նոյն տես,
զի առոյգ գայցէ հաշուին ճան գտես:



ճը



Հըմուտ ըլլալ քըզ 'ի կիր առ ման,
բոլորակիս երրորդ ծըր ման.
որդ անթերի 'ի յիշեց ման,
քեզ առ պաշտեմ թարց մոռաց ման:

 Լ.խոր



Ի՛ խորժելի չորրորդ՝ կար — գող,
մինչ դու հրձուիս բոլոր — կող.
տեղեկութիւն խորին մը — տող,
այնպէս և զայս պաշնեմ բար — ւող,

182 — Ն.



Նորոգ բանիս որ տըպե ցաւ,
բոլորակիս որ ծըրե ցաւ.
ըղըօմնըշդ խեկ աղա գաւ,
'ի յաշխատանս ճըշ նայե ցաւ:



Հա

Ա.

Հաւատողն սուրբ՝ անկեղծա ւոր՝
բարի գործովք՝ ՚ի սուրբ սըր տէ .
Հաճոյ յաստուած՝ զուծօղն աս նէ՝
բայց զայն յաւէտ՝ որ միշտ սեր տէ :

Բ.

Յոյսն է բարւոյգ՝ ակընկա լուծն՝
անճառ խոստմանցն՝ յաւիտե նից .
որ անսըրկելոյ՝ յուսով յու սայ՝
լինի արժան՝ նմա ամե նից :

Գ.

Սէրն է գլխոյ՝ ամենե ցուն՝
որ թարց որոյ՝ կարէ ոչ կեալ .
եթէ սիրես՝ զընկերըն ըստ քեզ՝
զանձն ՚ի քեզ՝ խնամ ընա կեալ :

Դ.

Արախչինդ այդ՝ որ կայ ՚ի գլուխդ՝
է քեզ ընծայ՝ ՚ի սաղի մայ .
յերուսաղէմ՝ յորժամ գը նաս՝
և զիա մեզ բեր՝ և մաչհրա մայ :

Ե.

Իզ չախուդ զայդ՝ նաղշուն ներ կեալ՝
պահեա ՚ի քեզ՝ դու յիշատակ բով .
զի մեզ բերցես՝ յորժամ ՚ի տէ՝
կարապետու՝ զայցես բա բով :



Ըա

Ա.

Շապիկն անձինդ՝ է օրինակ՝
մեռանելուն քում պատանաց.
մեռ և դու՝ զախտըն հոգւոյդ՝
պահպանութե՝ անտառն օրինաց:

Բ.

Ուրար մարդոյն՝ պարկեշտութեամբ՝
ըղձերկութի՝ անձին ծածկէ.
մի՛ պղծնակեր՝ լինիր. քարուք՝
որ ըղձհոգին՝ զարդուց մերկէ:

Գ.

Գօտիդ արկեալ՝ ընդ մէջ անձինդ՝
է նշանակ՝ արիութեան.
արի և դու՝ ըմբիշ հանդոյն՝
մարտիր ուժգին՝ ընդ մոլութեան:

Դ.

Սատանին է՝ քեզ զարդ պատուոյդ՝
նաև պարգև՝ իշխանական.
ուրեմն և դու՝ զիշխան հոգիդ՝
մի՛ տանիցես՝ ծառայական:

Ե.

Բազպանքն են՝ իբր իմն ազնիւ՝
քոյդ օրինակ՝ մնալոյ կրօնին.
զի փակիցես՝ ընդ դէմ չարեաց՝
և բանայցես՝ միշտ առ բարին:



Սերըն

ԺԲ.

Մեղըն է աղխիւ՝ ձաշակ հա   մեղ՝
զոր խմառորից՝ գող առա   կեն .
Եթէ ոեղեալ՝ լեցխ վար   ժեալ՝
յամեն կարեաց՝ ըղձեղ փոր   կեն ։

ԺԳ.

Բուր աղբերաց՝ զաղտըն մարմ   նոյ՝
մաքրապարգեալ՝ առ լուա   նայ .
Ջուրբ արտասուաց՝ ախտըն հոգ   ւոյ՝
'ի բաց մերժեալ՝ պայծառա   նայ ։

ԺԴ.

Գինի ուրախ՝ առէ ա   նա՝
որբայն զուարթ՝ սուրբ մարգա   րէն .
մ' շատ խըմեր՝ արբած գո   րով՝
որդ պատիժն՝ է փոխա   րէն ։

ԺԵ.

Ճաշն ընդմարմին՝ ըն բուծա   նէ՝
բանն ընդհոգին՝ կեցուցա   նէ .
ըստ շնորհաւուցն՝ սուրբ նեբսէ   սի՝
զոր երգելով՝ մեզ ցուցա   նէ ։

ԺԶ.

Ո՛չն համեմիչ՝ է կերակ   րոց՝
որ 'ի հոտիլն՝ ոչ ինչ օգ   տէ .
Նոյնպէս և գեղջ՝ թէ թիւրի   ցին՝
զոր աքըն խակ մեր՝ վրձուաձա   տէ ։



Մ.Ր

Ճ.Օ.

Սրմանէնին՝ և բարձրա գոյն՝
որ 'ի քառասուն՝ տարւոջ ա ճի.
նոյն թիւ աւուրք՝ 'ի մօրն որ գանդ՝
մեր ընդ մարմնոյն՝ հոգեն աճի:

Ճ.Ւ.

Ձիթենին է՝ բոլոր տա րին՝
մշտադալարթ՝ տերև կա նաչ.
լինիր և դու՝ զտերև հո գւոյդ՝
անթափ պահմամբ՝ յարմա նաչ:

Ճ.Ր.

Սորդն է իշխան՝ ամրեց ծառ հանց՝
հասոյլ անդոյշ՝ քան զամե նայն.
զանուշութիւն՝ վարուցդ և դու՝
աւ բուրեցո՝ քեզն ամե նայն:

Ճ.Ց.

Համասփիւռն է՝ ծաղիկ պայ ծառ՝
որ աշխարհի՝ օծնէ պահ պան.
ծաղիկ հոգւոյդ՝ դարման կալ՝
օծնէ քամաղ կալ զայն ւբո պան:

Ւ

Ւրաբինն է ծաղիկ դրախ տին՝
զոր հրեշտակն՝ եբեր կու սին.
եթէ լինիս՝ և դու մա քուր՝
արժանանաս՝ նորուն տե սին:


Ոս

ԽԱ.

Անթառամն է՝ ծաղիկ դե ղին՝
փոքրագունեղ՝ միշտ գունա ւոր.
նըման նոցա՝ որք փոքր են յաշխ՝
իսկ առ աստուած՝ միշտ փառա ւոր։

ԽԲ.

Մանուշակն է՝ կապուտա գոյն՝
նախածաղիկ՝ գարնան գու շակ.
առ հանդերձեալ՝ կենաց գար նան՝
քեզ տաս ձարեան՝ և գու թը շակ։

ԽԳ.

Շուշան ծաղիկն՝ է համա տիպ՝
լուսազգեստեցն՝ երանե լեաց.
որք և փայլեն՝ յարքայու թեան՝
ըստ սուրբ գրոց՝ հաւատա լեաց։

ԽԴ.

Նոնոֆարն է՝ եղեգնա ձև՝
՚ի ջրրաշխըղ՝ տեղիս բու սեալ.
՚ի ջրոյ ախտից՝ մաքուր կա ցեր՝
զանձն աստուծոյ՝ բարուք ու սեալ։

ԽԵ.

Սոխին ասի՝ ՚ի մէջ եօթ նից՝
հրաշալեաց՝ անուանա կան.
հոգի մարդոյն՝ միայն ա սի՝
՚ի մէջ ըզգայնոց՝ անմահա կան։

## ԽԶ.

Արծաթն ՚ի վաշխ՝ եթէ տա ցի՝
կամ որ լինի՝ արծաթա սէր ·
սուրբ լեառն արժան՝ նա չէ՛ կաց ման՝
սաղմոսերգուն՝ որպէս ա սէր ։

## ԽԷ.

Սընդիկն է նիւթ՝ փայտ շարժա կան՝
որ ոչ մնայ՝ միշտ հաստա տուն ·
նըման փոփոխ՝ աներկմիտ մարդ կան՝
որոց հաւատք՝ չեն հաստա տուն ։

## ԽԸ.

Սլայեկն է՝ աղաւոյն որ բոյն՝
կերկրեն պատանեաւ՝ նոր նորոգ ման ·
նոյնպէս և դու՝ զհոգիդ որ բեալ՝
արամ դարձեալ՝ լուսոյ նը ման ։

## ԽԹ.

Պղինձն առաւ՝ առեալ լի նի՝
՚ի սէր անկեղծ՝ քոյդ ընկե րին ·
զոր թէ ոքք ոչ՝ սեւըն սի րին՝
հնչմամբ սուտկաւ՝ նոքա ըն րին ։

## Ծ.

Երկաթն է կարծր՝ և ժանկա սէր՝
քարասրտակից՝ գոլ օրի նակ ·
ժանկոտ անձանց՝ զաղկր գոր ծոց՝
և անզղջից՝ գոլ հանգու նակ ։

# ԻԲ.

Բ.րծիծն է թռչ՝ կապար ա        նարգ՝
որ 'ի պարզիլն՝ ոչ դիմա        նայ .
նոյնպէս տըկար՝ անձն 'ի մեղչ        ՛ան՝
վաղվաղակի՝ փոյթ ուրա        նայ .

Մ էրք ընտրանեաց .

Այնպիսիքս որք աստ եղան ,
չեն հաստատուն մըտաց մարդկան .
Բ.ժլ տըղայոց կամ ջամեցան ,
մինչ 'ի հասցեն չափ այրական .

Լու ոչ 'ի սկիզբն սորին ասացաւ , թէ
լա՛ ասէն է սա . որոց եօթն՝ են 'ի վե՛ր իրաց
ազանելեաց և կրելեաց . եօթն՝ են 'ի վե՛ր
կերակրելեաց և ըմպելեաց . եօթն՝ են 'ի վե՛ր
ծաղկանց հոտոտելեաց . եօթն՝ են 'ի վե՛ր է-
հրահանգեաց . Իսկ առաջին երեքն՝ յայտնի են .
որք չորս անգամ եօթն , և մի երեք լինին .
որոց բաժանումն և իրքն՝ խոհական մտաց
ոչ է տարադէպ . Այլ և անքին՝ գրեթէ
հայրին 'ի հոգևորականն կոյս . զի եղբակա-
ցուն դիտաւորութ իրի իմիք՝ եթէ չիցէ սա
կայանն 'ի հոգևորն , իրն այն ըունայն է .

Աստի սիրով նեղել իմընդ        րի ,
'ի հարց ւեղբայրցդ ամենայ        նի .
մեր զինջանիլ տըկար կա        րի ,
և մի՛ հեղնել պարսաւա        կի .



Ը-

## Յաղագս բարուց ոմանց կենդանեաց:

Առիւծն է ազատական, հաճոյական, ընտանեական, յաղթասէր, հզօր, արդար, դժոխ, հպարտ և գիշատող:

Փիղն կամ փիլն է խոհեմ, դաւաճան և նախանձայոյզ:

Ուղտն է վրէժխնդրու և դժարացող:

Երիվարն կամ ձին է փոփոխական, մեծամիտ, ներբագինող, արշաւող և անապարծ:

Շունն է աղտեղի, խոտելի, ծոյլ, հլու, ըղձախոհ, համբերող, անզգայ և երկայնակեաց:

Վարազն՝ որ է վայրի խոզն, դժնեայ և արիւնահեղ:

Խոզն է վաւաշոտ, երկրասէր, անյագ, խուլ, աղտեղի և ըղձախոհ:

Էշն է ամբարտաւան, չարասիրտ, քընքուշ, դուող, նենգաւոր, վստահ, և երբեմն երկչոտ:

Արջն է որկրամոլ, կլանող, խստաբարոյ, ըղձախոհ, կատաղի, վայրաբնակ, խորամանկ, նենգաւոր, կեղծաւոր և չարաշահ:

Գայլն է անհաշտ և յափշտակող:

Աղուէսն է խափշիկ, նենգաւոր, չարագործ և դարանող:

Կապիկն է նենգժոտ, խաբեբայ, բղջախոհ, բամբասաւոր, ոխակալ, հեգնօղ և ստայօղ:

Շունն է բարկացօղ և ագահ:

Կատուն է գող, գաղտաւ, փորբրահօղի և վնասագործ:

Մուկն է քսու և վնասօղ:

Նապաստակն է երկչոտ և զաղիր:

Կորամն է զզուելի և վայրահեծու:

Օձն է խորամանկ և եղբայրատեաց:

Կարիճն է չարալեզու և կշտամբօղ:

Ճանճն է զզուելի և անամօթի:

Սիրամարգն է փառամոլ:

Բադիկն է բութ և ուսումնատեաց:

Բծիծն է անձարիչ և կլանօղ:

Ջայլամն է ծոյլ և ագահ:

Ձիւնն է ատարաու և բաղձանկուլ:

Բզուանն է անհերես և լեզուագար:

Բնծեղն որ է Կաչաղակն, լեզուագար և չաղբորթօղ:

ԽԱՂԱՑ ՀԵՏԵՒԵԼ ՈՒԹՆ ԿԱՐԳ ԱՇԽԱՐՀԻՑ։

Օ հետեւեալ ութն կարգ ախտից զաղիւսակս՝ պատրաստես ՚ի կէս տանուլ պարտիս ՚ի գուշակել զխաղած անուանն ունելոց։ Նախ՝ ցուցցես նմա զառաջին երեսն թղթոյն, յորում գրին 64 անուանք ՚ի մէջ ութնեակ ախտոյ. և առեցես՝ զի գոյցէ ՚ի նոսա և հայցէ ըստ առաջին զանուանն իւր, և կամ զայլ իմն անուն, և միայն առիցէ քեզ ՚ի քանի երորդ ախոջ լինին։ (ՏԵՍ ՊԱՏԿԵՐՍ ԹԻՒ ԱՌԱՋ՝ ՚Ի ՆԵՐՔՈՅ ՏԵՂ ԼԻՆԻԼ։)

Բայց ոչ որոշեալ այսու միայն ունիս կարես գուշակել զոր. պատրաստես ՚ի հարկէ զնոյն առ միւս երեսն, ուր նէև զառանին նոյն անուանք, բայց այլով կարգաւ գրեալ. և առեցես նմա, զի և առա գոյցէ ըղձացած անուանն. և առիցէ քեզ ՚ի քանիերորդ ախոջ լինին։ (Ի ՆԵՐՔՈՅ ԹԻՒ ԱՌԱՋ՝ ՚Ի ՀՆԳԵՐՈՐԴ ՏԵՂԻ ԼԻՆԻԼ ԱՌԱՋ։) Եւ յաւելն զայս՝ պարտիս մերադարձուցանել զոր ՚ի յառաջին երեսն, և գտանել ըղձացած անուանն նորին ՚ի հինգերորդ տողն չորրորդի ախոյն. քանզի յետին երեսի ամենայն ցուցանեն զառաջս առաջին երեսի ախոյն։

Եւ զայն եղանակ ունիլ պարտիս՝ եթէ կամիցիս գուշակել ՚ի խաղս՝ նաև զձին, զփիղս, և զնաւուանս զառերոց, առ ՚ի զբօսնուլ ուրախութեամբ։

| Առաջին | Երկրորդ | Երրորդ | Չորրորդ |
|---|---|---|---|
| Վարդան | Յովհաննէս | Իսահակ | Սարգիս |
| Խաչատուր | Թովմաս | Դաւիթ | Եսայի |
| Մարգար | Երեմիա | Ածատուր | Գէորգ |
| Գրիգոր | Ստեփան | Ալէքսան | Փիլիպպոս |
| Յարութիւն | Կարապետ | Մինաս | Մեսրոպ |
| Յակոբ | Պօղոս | Գասպար | Զաքարիա |
| Աթանաս | Աւետիք | Մանուէլ | Մովսէս |
| Յովսէփ | Պետրոս | Պաղտասար | Հայրապետ |

| Հինգերորդ | Վեցերորդ | Եօթներորդ | Ութերորդ |
|---|---|---|---|
| Սամուէլ | Անանիա | Նիկողոս | Մնացական |
| Անդրէաս | Կիրակոս | Շմաւոն | Աբէլ |
| Եղիա | Ղուկաս | Ղազարոս | Եզեկիէլ |
| Մատթէոս | Թադէոս | Մելքոն | Սուքիաս |
| Ներսէս | Սիմոն | Ազարիա | Վարդգէրէս |
| Բարսեղ | Մկրտիչ | Զօրաբաբէլ | Սրապիոն |
| Աբրահամ | Միքայէլ | Յոնան | Թորոս |
| Առաքէլ | Ռափայէլ | Աբգար | Մակար |

| Առաջին | Երկրորդ | Երրորդ | Չորրորդ |
|---|---|---|---|
| Վարդան | Խաչատուր | Մարգար | Գրիգոր |
| Յովհաննէս | Թովմաս | Երեմիա | Ստեփան |
| Իսահակ | Դաւիթ | Աստուածատուր | Ալէքսան |
| Սարգիս | Եսայի | Գէորգ | Փիլիպպոս |
| Սամուէլ | Անդրէաս | Եղիա | Մարտիրոս |
| Անանիա | Կիրակոս | Ղուկաս | Թաթէոս |
| Նիկողոս | Անտոն | Ղազարոս | Մելքոն |
| Մնացական | Աբէլ | Եզեկիէլ | Սուքիաս |

| Հինգերորդ | Վեցերորդ | Եօթներորդ | Ութերորդ |
|---|---|---|---|
| Յարութիւն | Յակոբ | Աթանաս | Յովսէփ |
| Կարապետ | Պօղոս | Աւետիք | Պետրոս |
| Մինաս | Գասպար | Մանուէլ | Պաղտասար |
| Մեսրոպ | Զաքարիա | Մովսէս | Հայրապետ |
| Ներսէս | Բարսեղ | Աբրահամ | Առաքել |
| Սիմոն | Մկրտիչ | Միքայէլ | Ռափայէլ |
| Ազարիա | Զօրաբաբէլ | Յովնան | Աբգար |
| Վարդերես | Սրապիոն | Թադէոս | Մակար |

| Առաջին | Երկրորդ | Երրորդ | Չորրորդ | Հինգերորդ |
|---|---|---|---|---|
| Յունվ. | Փետրվ. | Մարտ | Ապրիլ | Մայիս |
| Յունիս | Յուլիս | Օգոստ. | Սեպտ. | Հոկտ. |
| Նոյեմբ. | Դեկտ. | Երկշբ. | Եռշբ. | Չորշբ. |
| Հնգշբ. | Ուրբաթ | Շաբաթ | Կիրակի | Գիշեր |
| Գիւղ | Երկիր | Քաղաք | Աշխարհ | Ցերեկ |

| Առաջին | Երկրորդ | Երրորդ | Չորրորդ |
|---|---|---|---|
| 1 | 9 | 17 | 25 |
| 2 | 10 | 18 | 26 |
| 3 | 11 | 19 | 27 |
| 4 | 12 | 20 | 28 |
| 5 | 13 | 21 | 29 |
| 6 | 14 | 22 | 30 |
| 7 | 15 | 23 | 31 |
| 8 | 16 | 24 | 32 |

| Հինգերորդ | Վեցերորդ | Եօթներորդ | Ութերորդ |
|---|---|---|---|
| 33 | 41 | 49 | 57 |
| 34 | 42 | 50 | 58 |
| 35 | 43 | 51 | 59 |
| 36 | 44 | 52 | 60 |
| 37 | 45 | 53 | 61 |
| 38 | 46 | 54 | 62 |
| 39 | 47 | 55 | 63 |
| 40 | 48 | 56 | 64 |

| Առաջին· | Երկրորդ· | Երրորդ· | Չորրորդ· | Հինգերորդ· |
|---|---|---|---|---|
| Յունվ" | Յունիս | Նոյեմբ" | Հինգշ" | Գիւղ |
| Փետրվ" | Յուլիս | Դեկտ" | Ուրբաթ | Երկիր |
| Մարտ | Օգոստ | Երկշ" | Շաբաթ | Քաղաք |
| Ապրիլ | Սեպտ" | Երեքշ" | Կիրակի | Աշխարհ |
| Մայիս | Հոկտ" | Չորեքշ" | Գիշեր | Ցերեկ |

| Առաջին· | Երկրորդ· | Երրորդ· | Չորրորդ· |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 9 | 10 | 11 | 12 |
| 17 | 18 | 19 | 20 |
| 25 | 26 | 27 | 28 |
| 33 | 34 | 35 | 36 |
| 41 | 42 | 43 | 44 |
| 49 | 50 | 51 | 52 |
| 57 | 58 | 59 | 60 |

| Հինգերորդ· | Վեցերորդ· | Եօթներորդ· | Ութերորդ· |
|---|---|---|---|
| 5 | 6 | 7 | 8 |
| 13 | 14 | 15 | 16 |
| 21 | 22 | 23 | 24 |
| 29 | 30 | 31 | 32 |
| 37 | 38 | 39 | 40 |
| 45 | 46 | 47 | 48 |
| 53 | 54 | 55 | 56 |
| 61 | 62 | 63 | 64 |

| Առաջին։ | Երկրորդ։ | Երրորդ։ | Չորրորդ։ |
| --- | --- | --- | --- |
| Մարիամ | Սրբուհի | Դշխոյ | Թագուհի |
| Եւա | Հեղինէ | Մարթա | Վարդուհի |
| Սառա | Աննեա | Աննա | Նուրի |
| Սողոմէ | Տիրուհի | Նօնօֆար | Սիմա |
| Մարգարիտա | Փեփրոնիէ | Թերեզիա | Օլիմպիա |
| Կատարինէ | Խնկենի | Մելքէ | Նարկիզ |
| Անթառամ | Բերսաբէ | Եղիզ | Կեօհէր |
| Բրաբիոն | Քաղցրենի | Ելմաս | Նազլու |

| Հինգերորդ։ | Վեցերորդ։ | Եօթներորդ։ | Ութերորդ։ |
| --- | --- | --- | --- |
| Հռիփսիմէ | Պրիճիթա | Գայիանէ | Վառվառէ |
| Եղիսաբեթ | Ռուշան | Մանանուշ | Ջանազան |
| Սանդուխտ | Հիւրիւ | Իսկուհի | Եփրոսինէ |
| Եաքութ | Քանէմ | Թուրվանտա | Սուլթան |
| Խոնարհ | Յուղիտա | Ասանեթ | Մարիանէ |
| Խանըմ | Կիւլ | Նարդուհի | Ջարդար |
| Ակատա | Լուսիկ | Լուկիա | Եպրաքսէ |
| Ուսանիան | Արեգնազան | Մանանուշ | Թամամ |

| Առաջին. | Երկրորդ. | Երրորդ. | Չորրորդ. |
|---|---|---|---|
| Մարիամ | Եւա | Սառա | Սողոմէ |
| Սրբուհի | Հեղինէ | Ակնէա | Տիրուհի |
| Դշխոյ | Մարթա | Աննա | Նունուֆար |
| Թագուհի | Վարդուհի | Նուրի | Սիմա |
| Հռիփսիմէ | Եղիսաբեթ | Սանդուխտ | Եղբուրթ |
| Գրիձիթա | Շուշան | Հիւրիա | Քաղէմ |
| Գայիանէ | Մանանուշ | Խոսրուհի | Թուրխանա |
| Վառվառէ | Ջանազան | Եփրոսինէ | Սուլթան |

| Հինգերորդ. | Վեցերորդ. | Եօթներորդ. | Ութերորդ. |
|---|---|---|---|
| Մարգարիտա | Կատարինէ | Անթառամ | Բերոնիան |
| Փեփրոնիկէ | Խնկենի | Բերսաբէ | Քաղցրենի |
| Թեկղեղիա | Մելքէ | Եղիգ | Եսմա |
| Օլիմպիա | Նարկիզ | Ակօշէր | Նազլու |
| Խոնարհ | Խանում | Ակասա | Ոսկիան |
| Յուղիտա | Կիւլ | Լուսիկ | Արեգնազան |
| Ամանեթ | Նարգուհի | Լուկիա | Մանանուշ |
| Մարիանէ | Զարդար | Եպրաքսէ | Թամամ |

# ՑԱՆԿ

Ըստ կարգի իւրաքանչիւր բանից.


[illegible] . . 3

[illegible] . 53

[illegible] . . 76

[illegible] . . . . . . 106

[illegible] . . . 115

[illegible] . . . . 160

[illegible] . . 165

[illegible] . . 168

[illegible] . . . 170

[illegible] . . 172

[illegible] . 176

[illegible] . . . . . . . . 177

[illegible] . . . . . . . 179

[illegible] . . . . 184

[illegible] . 191

[illegible] . 193

[illegible] . . . . 194

